17893
17894

371.[illegible]
12-95

~~559 26/III 18~~
~~878 5/II 38~~ – 8
313 25/II 39
72

2001

ԺԱՆ ԺԱԿ ՌՈՒՍՕ

Է Մ Ի Լ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

Արտատպուած «Հումայ» ամսագրից

Գերմաներէնից Թարգմանեց
ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ

1002
5879
ТИФЛИССКАГО СОБРАНІЯ
БИБЛIОТЕКА

ԹԻՖԼԻՍ

Дозволено Цензурою. Тифлисъ, 16 Іюля 1905 г.

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

1. Այժմ կանգնած ենք կեանքի երկրորդ սահմանագծի վրայ, որով իսկապէս վերջանում է մանկութիւնը. որովհետև մանուկ (infans) և պատանի (peur) նոյնանիշ բառեր չեն: Առաջինը պարունակւում է երկրորդի մէջ և infans նշանակում է «ինչ որ չի կարող խօսել». այդ պատճառով Valerius Maximus-ի մօտ գըտնում ենք puerum infantem արտայայտութիւնը: Բայց ես այսուհետև էլ այդ բառը մեր լեզուի գործածութեամբ առաջ կբերեմ մինչև այն հասակը, որի համար ուրիշ բառեր կան:

2. Երբ մանուկներն սկսում են խօսել, առաջուանից աւելի քիչ են լալիս: Այս բնական առաջադիմութիւն է. մի լեզուին փոխարինում է միւսը: Երբ արդէն կարող են խօսքերով ասել, թէ իրենց մի որևէ տեղը ցաւում է՝ ինչո՞ւ պէտք է աղաղակով արտայայտեն այդ, եթէ միայն ցաւն այնքան մեծ չէ, որ խօսքով կարելի լինէր արտայայտել: Եթէ նրանք այնուհետև էլ շարունակում են լալ՝ այդ արդէն շրջապատողների մեղն է: Երբ Էմիլը մի անգամ ասում է. «այս ինչ տեղս ցաւում է», պէտք է շատ մեծ ցաւ զգայ, որ լաց էլ լինի:

3. Եթէ մանուկը թոյլ ու զգայուն է և բնական հակումն ունի առանց պատճառի լաց լինելու, ես կխցեմ նրա արտասուքների աղբիւրը՝ թոյլ չտալով որ դրանք որևէ ազդեցութիւն ունենան: Երբ նա լայ, չեմ գնայ մօտը, բայց հենց որ լռեց, իսկոյն կշտապեմ նրա մօտ: Այնուհետև մանուկն ինձ իր մօտ կկանչէ լռու ժամանակը կամ առ առաւելն՝ միայն մի անգամ կաղաղակէ: Մանուկներն արտաքին նշանների միտքը դատողութեան են ենթարկում՝ նայելով թէ այդ նշաններն ինչ ազդեցութիւն են ունենում նրանց զգայարանների վրայ. նրանց համար ուրիշ պայման չկայ. ինչքան էլ որ սաստիկ ցաւելիս լինի երեխայի որևէ տեղը, շատ հազիւ կպատահի, որ նա լաց լինի՝ եթէ մենակ է և եթէ յոյս չունի, որ կլսեն իր ձայնը:

4. Երբ մանուկը վայր է ընկնում, գլխի որևէ տեղն ուռչում է, քթիցն արիւն է գալիս կամ մատը կտրում է, ես իսկոյն

յուզուած կերպարանքով չեմ վազում նրա մօտ և խնամում նրան, այլ հանգիստ եմ մնում, առ սակաւն մի կարճ ժամանակ: Չարիքն արդէն հասել է և կարիքը ստիպում է, որ նա այդ ցաւը տանէ. իմ անհանգիստ հոգսը նրան աւելի ևս կվախեցնի և նրա զգայունութիւնն աւելի կգրգռի: Երբ վիրաւորւում ենք, իսկապէս հարուածն այնքան չէ տանջում մեզ, որքան երկիւղը: Ուրեմն առ սակաւն ես նրան երկիւղ չեմ ներշնչի. եթէ մանուկը տեսնէ, որ ես սաստիկ յուզուած եմ, աշխատում եմ մխիթարել իրեն և ողբում եմ, իրեն կորած կհամարէ. իսկ եթէ տեսնէ, որ ես սառնարիւն եմ մնում, ինքն էլ շուտով սառնարիւն կդառնայ և իրեն փրկուած կհամարի վերահաս չարիքից: Այդ հասակումն է սովորում մարդ արիասրտութեան առաջին ուսումը և վարժուելով համբերել թեթև ցաւերին, աստիճանաբար սովորում է՝ տանել նաև մեծ ցաւերը:

5. Ես ամենևին երկիւղով հսկողութիւն չեմ անի, որ Էմիլն որևէ վնաս չպատահի. ոչ, ինձ համար մինչև անգամ հաճելի չէր լինի, եթէ նա երբէք վնասուած չլինէր և մեծանար՝ առանց ցաւ ըմբռնած լինելու: Առաջին բանը, որ նա պէտք է սովորի և անհրաժեշտ կերպով իմանայ—ցաւ, վիշտ կրելն է: Կարծես թէ երեխաները միայն նրա համար փոքր և թոյլ են, որպէս զի այս նշանաւոր ուսումն անվտանգ անցնեն: Եթէ մանուկն իր հասակի չափ բարձրութիւնից ընկնի, ոտքը չի կոտրի. եթէ ինքն իրեն փայտով խփէ, ձեռքը չի կոտրի. եթէ սուր գործիք ձեռքն առնի, շատ պինդ չի բռնի և շատ խորը չի կտրի: Դժուար թէ պատահի, որ մենակ թողնուած երեխան իրեն սպանի, կամ թէ ծանր վնաս պատճառէ՝ եթէ անմտութեամբ բարձր տեղ չդնենք նրան, կրակի մօտ մենակ չթողնենք կամ թէ վտանգաւոր գործիքները նրան այնքան մօտ չդնենք, որ ձեռքը հասցնէ: Ինչ ասես ժողովում են երեխաների շուրջը՝ իբրև թէ նրանց ամեն տեսակ ցաւից պաշտպանելու, մինչև որ իբրև չափահաս մարդ նրանք առանց արիասրտութեան և փորձառութեան իրենց բաղդին են թողնւում և ամեն մի փոքրիկ խոցուած մահացու վէրք են համարում և արեան առաջին կաթիլը տեսնելիս՝ ուշաթափւում են:

6. Մեր սովորեցնելու չափազանց եռանդը մանուկներին ուզում է միշտ սովորեցնել այն, ինչ որ նրանք իրենք իրենց աւելի լաւ կսովորէին և միևնոյն ժամանակ մոռանում ենք այն, ինչ որ միայն մենք կարող էինք սովորեցնել նրանց: Կայ արդեօք մի աւելի յիմար բան, քան այն հոգացողութիւնը, որ տեղի է ունենում երեխաներին ման գալ սովորեցնելու համար. կարծես թէ

պատահել է, որ դայեակի անհոգութեան պատճառով չափահաս մարդը չկարողանայ ման գալ: Իսկ ընդհակառակը՝ որքան մարդիկ իրենց ամբողջ կեանքում վատ են ման գալիս, որովհետև նրանց վատ են սովորեցրել:

7. Էմիլը չի ունենայ այն բոլոր միջոցները, որով արհեստական կերպով ման գալ են սովորեցնում, այլ միայն քարշատակ տեղերում պէտք է օգնել նրան և շուտով վրայից անցկացնել, հենց որ կարողանայ մէկ ոտքը միւսից առաջ դնել: Սենեակի փչացած օդի մէջ թառամեցնելու փոխարէն, ամեն օր նրան մարգագետին կտանեն. այնտեղ կարող է վազել, խաղալ և օրական հարիւր անգամ վայր ընկնել. աւելի լաւ, այդպիսով կսովորի աւելի շուտ կրկին վեր կենալ: Ազատութեան հաճելի զգացմունքը շատ վնասներ է դարմանում: Իմ սանը շատ անգամ կջախջախուի, բայց դրա փոխարէն միշտ զուարթ կլինի. ձեր սաներն աւելի քիչ են ջախջախւում, բայց դրա փոխարէն նրանք միշտ արգելուած, անազատ և տխուր են լինում: Ես կասկածում եմ, որ դրանց դրութիւնն աւելի լաւ լինի:

8. Երեխաների ուժերի զարգացման առաջադիմութիւնն էլ հետզհետէ աւելորդ է դարձնում նրանց լաց ու կոծը: Քանի որ նրանք հետզհետէ աւելի են կարողանում ինքնուրոյն գործել, այնքան էլ սակաւ են դիմում ուրիշների օգնութեանը: Ուժերի հետ միասին զարգանում է և նրանց հասկացողութիւնը, որ կարողութիւն է տալիս նրանց՝ այդ ուժերը կառավարելու: Այս երկրորդ աստիճանի վրայ է սկսւում իսկապէս մարդու անհատական կեանքը, այստեղ է նա ինքն իրեն գիտակցում: Յիշողութիւնը կեանքի միութեան զգացմունքը փոխանցում է նրա գոյութեան բոլոր երևոյթների վրայ. նա ճիշտ որ միևնոյն էութիւնը կլինի և հետևապէս արդէն ընդունակ՝ երջանիկ կամ թշուառ լինելու: Ուրեմն կարևոր է, որ նա այժմեանից արդէն իբրև բարոյական էակ նկատուի:

9. Թէև մօտաւորապէս որոշում են մարդկային կեանքի ամենամեծ տարիքը և ամեն հասակի համար հաւանական ենթադրութիւններ անում՝ այդ տարիքին մօտենալու համար, բայց ոչինչ այնքան անստոյգ չէ, որքան իւրաքանչիւր անհատի կեանքի տևողութիւնը. շատ քչերին է յաջողւում հասնել որոշուած ամենամեծ տարիքին: Կեանքն ամենից շատ վտանգուած է իր սկզբի տարիներում. որքան մարդ քիչ է ապրել, այնքան աւելի քիչ յոյս պէտք է դնէ կեանքի վրայ: Լոյս աշխարհ եկած մանուկներից առաւելն կէսն է հասնում չափահասութեան և հաւանական է, որ քո սանը նոյնպէս չի հասնի այդ հասակին:

10. Ի՞նչ պէտք է մտածենք ուրեմն այն բարբարոսական
դաստիարակութեան մասին, որ ներկան զոհում է տարակուսելի
ապագային, որ երեխային ծանրաբեռնում է ամեն տեսակ շղթա-
ներով և առաջուց թշուառացնում նրան, որպէս զի վերջը, չգի-
տեմ մի ինչ որ կարծեցեալ երջանկութիւն ապահովէ նրա համար,
որին հաւանականօրէն նա երբեք չի հասնի: Եթէ ես այդ դաս-
տիարակութիւնն իր նպատակների վերաբերմամբ նոյն իսկ խելացի
կարողանայի համարել, ինչպէս պէտք է առանց սրտմտու-
թեան նայենք այն խեղճ դժբաղդների երեսին, որոնք անտանելի
լծի տակ են և տաժանակիր աշխատանքների դատապարտուած-
ների նման պէտք է բանի աշխատեն չարունակ՝ առանց ապահով
լինելու, որ այդքան ջանքերը կարող են նրանց երբեւիցէ օգուտ
տալ: Ուրախութեան տարիներն անցնում են արտօսրներով, պա-
տիժներով, սպառնալիքներով և ստրկութեամբ: Դժբաղդ երե-
խային չարչարում են հենց իր բարեկեցութեան համար և չեն
տեսնում իրենց առաջ բերած մահը, որ հենց այդ տխուր նախա-
պատրաստութիւնների միջոցին կտանէ նրան: Ո՞վ գիտէ՝ թէ ո՞ր-
քան երեխաներ են զոհ գնում իրենց հօր կամ ուսուցչի անհան-
ճար խելացիութեանը: Դրանք երջանիկ են, որ ազատւում են նրա
խստութիւնից և նրա պատճառած բոլոր չարիքներից նրանք այն
միակ օգուտն են ստանում, որ առանց ափսոսալու են թողնում
այն կեանքը, որ միմիայն չարչարանք պատճառեց դրանց:

11. Մարդի՛կ, մարդկօրէն վարուեցէ՛ք. այս է ձեր առաջին
պարտականութիւնը: Մարդկօրէն վարուեցէք կեանքի բոլոր աստի-
ճանների վրայ և այն բոլորի համար, ինչ որ օտար չէ մարդուն: Բացի
մարդկութիւնից ուրիշ ի՞նչ իմաստութիւն ունիք, Սիրեցէք մանուկ-
ներին, նպաստեցէք նրանց խաղերին, զուարճութիւններին, նրանց
հրապուրիչ ներքին ձգտումներին: Ո՞վ ձեզնից երբեմն կարօտով
յետ չէ նայել դէպի այն հասակը, երբ շրթունքների վրայ միշտ
ժպիտ է երեւում, իսկ հոգու մէջ միշտ խաղաղութիւն է տիրում:
Ինչո՞ւ էք ուզում յափշտակել այդ անմեղ փոքրիկներից այն կար-
ճառօտ, թռուցիկ ժամանակի վայելչութիւնը, այդպիսի մի թանկա-
գին գանձի, որ նրանք չեն կարող ի չարը գործ դնել: Ինչո՞ւ էք
ուզում դառնութեամբ լցնել այդ առաջին, շուտով անցնող տա
րիները, որ ինչպէս ձեզ, նոյնպէս և նրանց համար՝ այլեւս ան-
դառնալի են: Դո՛ւք, հայրե՛ր, գիտէ՞ք արդեօք այն վայրկեանը, երբ
մահը վրայ կհասնի ձեր զաւակներին: Ցանդիմանութեան տեղիք
մի՛ տաք՝ յափշտակելով նրանցից այն սակաւաթիւ վայրկեանները,
որ բնութիւնը շնորհել է նրանց. հենց որ նրանք կարողանան
զգալ իրենց գոյութեան զուարճութիւնը, հոգացէ՛ք, որ նրանք

վայելեն այդ. հոգացէք, որ երբ էլ Աստուած նրանց իր մօտ կան-
չէ, նրանք կեանքը չթողնեն, առանց ճաշակած լինելու նրա քաղց-
րութիւնը:
12. Ո՞րքան ձայներ կբարձրանան իմ դէմ: Հեռուից արդէն
լսում եմ այն կարծեցեալ իմաստութեան աղաղակը, որ շարունակ
մեզ դուրս է մղում նոյն իսկ մեզնից, որ ներկան միշտ առ ոչինչ
է համարում, որ առանց հանգստանալու շտապում է մի ապագայի
յետեւից, որ մեր արած ամեն մի քայլով մեզնից հեռու է փախչում և
մեզ երկար ժամանակ առաջ է մղում, որտեղ որ մենք կանք, մին-
չև որ վերջապէս մեզ այնտեղ է տանում, ուր մենք երբեք չենք
կարող լինել:
13. Ինձ պատասխանում են՝ թէ հենց այդ ժամանակ պէտք
է ուղղել մարդուս վատ հակումները. մանկական հասակում, երբ
ցաւալի փորձանքներն աւելի պակաս զգալի են, պէտք է շատաց-
նել դրանց թիւը, որպէս զի խոհականութեան հասակում աւելորդ
լինեն: Բայց ո՞վասաց ձեզ, թէ դուք կարող էք ամեն բան անել,
ինչպէս որ կարծում էք, և թէ այն բոլոր սիրուն ուսմունքները,
որով ծանրաբեռնում էք թոյլ մանկանը, մի օր նրա համար աւե-
լի վնասակար չեն լինի, քան օգտակար: Ո՞վ ասաց ձեզ՝ թէ այդ-
պէս առատօրէն տառապանք պատճառելով նրան՝ մի որեւէ բան
էք խնայում նրա համար: Ինչո՞ւ էք նրան աւելի շատ չարիքչ պատ-
ճառում, քան կարող է տանել նրա դրութիւնը՝ առանց վստահ
լինելու, որ այդ չարիքն ապագայում նրա համար բարիք կլինի և
ինչպէս էք ուզում ապացուցանել ինձ, որ այն չար հակումները,
որից կարծում էք թէ պէտք է փրկէք նրան, չեն առաջանում ա-
ւելի ձեր սխալ հասկացած հոգացողութիւնից, քան թէ բնութիւ-
նից: Տարաբա՛ղդ նախազգուշութիւն, որ մի էակ թշուառացնում
է ներկայի համար՝ հիմնուելով այն յոյսի վրայ, թէ մի օր կերջան-
կացնէ նրան: Երբ այս գռեհիկ իմաստութիւնը շփոթում է միմեանց
հետ ազատութիւնն ու սանձարձակութիւնը և երջանկութեան հա-
մար դաստիարակուող երեխային փչացնել է ձգտում, մենք ցոյց
տանք այդ երկուսի տարբերութիւնը:
կտանք այդ երկուսի տարբերութիւնը, չմոռանանք այն, ինչ
14. Ցնորքների մէջ չընկնելու համար, չմոռանանք այն, ինչ
որ համապատասխանում է մեր դրութեանը: Մարդկութիւնն իր
տեղն ունի իրերի դասաւորութեան մէջ. մանկութիւնն իր տեղն
ունի մարդկային կեանքի դասաւորութեան մէջ. այսպէս պէտք է
զննել մարդուն՝ մարդու և մանկանը՝ մանկան մէջ: Այն ամենը,
ինչ որ կարող ենք անել մարդուս բարեկեցութեան համար, հե-
տեւալն է. պէտք է ամեն մէկի համար որոշ տեղ սահմանել ու
հաստատել և մարդկային կրքերը կանոնաւորել ըստ մարդուս

կոչման: Մնացածը կախումն ունի մեզնից դուրս գտնուող պատճառներից, որոնք մեր իշխանութեան ներքոյ չեն:

15. Մենք չգիտենք՝ թէ ո՞րն է զուտ երջանկութիւնն ու զուտ դժբաղդութիւնը: Այս կեանքում ամեն բան խառն է. աշխարհիս վրայ ոչ մի անխառն զգայութիւն չենք ճաշակում և ոչ երկու վայրկեան անգամ միևնոյն դրութեան մէջ մնում: Մեր հոգու տրամադրութիւնները, ինչպէս և մեր մարմնի դրութիւնները մի յարատև հոսանք են կազմում: Չարն ու բարին ամենքի համար ընդհանուր է, սակայն տարբեր չափով: Ամենից երջանիկը նա է, ով ամենից քիչ չարիքի է հանդիպում, իսկ ամենից թշուառը նա է, ով ամենից քիչ զուարճութիւն է զգում: Մեզ միշտ աւելի տանջանք է վիճակւում, քան վայելչութիւն. այս տարբերութեան վերաբերմամբ ամենքս հաւասար ենք: Այսպիսով այս աշխարհի վրայ մարդու երջանկութիւնը մի բացասական դրութիւն է միայն. մարդ պէտք է չափուի՝ ըստ իր կրած տանջանքների ամենասակաւ գումարի:

16. Իւրաքանչիւր ցաւի զգացմունք անբաժան է դրանից ազատուելու ցանկութիւնից. զուարճութեան մասին մեր ունեցած իւրաքանչիւր մտածմունքից անբաժան է զուարճութիւն վայելելու ցանկութիւնը. բայց ամեն մի ցանկութիւն զրկանք է ենթադրում և մեր զգացած բոլոր զրկանքները ցաւալի են. այսպիսով ուրեմն մեր թշուառութիւնը կայանում է մեր ցանկութիւնների և կարողութիւնների մէջ եղած տարաձայնութեան մէջ: Այն զգացող էակը, որի կարողութիւններն ու ցանկութիւնները համաձայն լինին, անպատճառ երջանիկ կլինի:

17. Ինչո՞ւմն է կայանում ուրեմն մարդկային իմաստութիւնը, կամ թէ իսկական երջանկութեան ճանապարհը: Ո՛չ հենց մեր ցանկութիւնների սահմանափակման մէջ, որովհետև եթէ նրանք մեր կարողութեան ենթակայ լինէին, մեր ընդունակութիւնների մի մասն անգործ կմնար և մենք լիապէս չէինք վայելի մեր գոյութիւնը. բայց և ո՛չ նոյնպէս մեր ընդունակութիւնների աճման մէջ, որովհետև եթէ մեր ցանկութիւնները յանկարծ համեմատաբար աւելի մեծ ծաւալ ստանան, մենք առաւել ևս թշուառ կլինենք: Մեր ընդունակութիւնների սահմանից դուրս եղող ցանկութիւնների սահմանափակման ու կարողանալու և կամենալու կատարեալ հաւասարութեան մէջն է մարդկային իմաստութիւնը: Այն ժամանակ միայն, երբ բոլոր ուժերն էլ գործունէութեան մէջ են, հոգին հանդիստ կմնայ և մարդ յարմար վիճակի մէջ կլինի:

18. Այդպէս է տնօրինել հենց սկզբից բնութիւնը, որ ամեն բան ըստ կարելոյն լաւ է անում: Բնութիւնն առաջուց տալիս է

նրան իր պահպանութեան համար կարևոր ցանկութիւնները և դրանց բաւականութիւն տալու համար՝ բաւականաչափ ընդունակութիւններ: Մնացած բոլորը, այսպէս ասած, նրա հոգու խորքումն է պահել՝ որպէս զի այդտեղ ըստ պահանջին զարգանան: Կարողանալն ու ցանկանալը միայն սկզբնական դրութեամբ կարող են հաւասարակշռութեան մէջ լինել. միայն այդ դրութեամբ մարդս դժբաղդ չէ: Հենց որ նրա ձգտող ուժերը սկսում են գործել, արթնանում է դրանցից ամենագործունեան, երևակայութեան ուժը և դրանց առաջը կտրում: Նա ընդարձակում է մեզ համար կարելիութեան չափը՝ բարւոյ կամ չարի սահմանի մէջ, գրգռում և խնամում է ցանկութիւնները՝ բաւականութիւն ստանալու յուսով: Բայց նպատակը, որ սկզբում մեր ձեռքին էր երևում, աւելի արագ է թռչում, քան կարելի է հասնել նրան. երբ մենք կարծում ենք՝ թէ արդէն չօշափում ենք նրան, կերպարանափոխւում է և մեզնից չափ հեռու երևում: Այն տարածութիւնը, որ արդէն անցել ենք և այլ ևս չենք տեսնում, ոչինչ ենք համարում. իսկ այն, որ դեռ պէտք է անցնենք, անդադար հեռանում և երկարանում է: Այսպէսով մարդ ուժասպառ է լինում՝ առանց նպատակին հասնելու և որքան աւելի հեռու պահենք մեզ վայելչութիւնից, այնքան առաւել կհեռանայ մեզնից երջանկութիւնը:

19. Ընդհակառակը, որքան մարդ չի հեռացել իր բնական կոչումից, այնքան ևս փոքր է նրա ընդունակութիւնների և ցանկութիւնների մէջ եղած անջրպետը և այդ պատճառով էլ նա այնքան ևս քիչ հեռու է երջանիկ դրութիւնից: Երբէք նա աւելի պակաս թշուառ չէ, քան երբ ամեն բանից զրկուած է երևում. որովհետև թշուառութիւնը չէ կայանում իրերից զրկուելու, այլ այն պահանջի մէջ, որ մենք զգում ենք դէպի այդ իրերը:

20. Իսկական աշխարհն իր սահմաններն ունի, իսկ երևակայութեան աշխարհն անսահման է. եթէ մէկը չենք կարող ընդարձակել, միւսը սահմանափակենք. որովհետև այդ երկուսի անջրպետից են առաջանում այն ամեն ցաւերը, որ մեզ իսկապէս դժբաղդացնում են: Եթէ վերցնենք ուժը, առողջութիւնն ու մարդուս իր մասին ունեցած լաւ կարծիքը, այն ժամանակ այս կեանքի բոլոր բարիքները միայն երազ կլինեն. եթէ վերցնենք մարմնական ցաւերը և խղճի խայթը, այն ժամանակ մեր բոլոր չարիքները երևակայական կլինեն: Այդ մի սովորական առօրեայ սկզբունք է, կասեն ինձ. այո. բայց նրա փորձնական գործադրութիւնը սովորական չէ, իսկ այստեղ խօսքը միմիայն դրան է վերաբերում:

21. Ի՞նչ ենք ուզում արտայայտել՝ մարդս թոյլ է ասելով: Թոյլ բառը ցոյց է տալիս այն էութեան մի յարաբերութիւնը, որի

վերաբերմամբ գործ ենք դնում այդ խօսքը: Այն էակը, որի ուժերը գերազանց են իր պահանջներից, եթէ նոյն իսկ մի միջատ, մի որդ էլ լինի, ուժեղ էութիւն է. իսկ նա, որի պահանջները գերազանց են իր ուժերից, եթէ նոյն իսկ փիղ, առիւծ, աշխարհակալ, հերոս, նոյն իսկ Աստուած լինի — թոյլ էութիւն է: Ապստամբ հրեշտակը, որ իր բնութիւնը չճանաչեց, աւելի թոյլ էր, քան երջանիկ մահկանացուն, որ իր բնութեան համեմատ ապրում է խաղաղ: Մարդս շատ ուժեղ է, եթէ բաւականանայ լինել այն, ինչ որ է. Նա շատ թոյլ է, երբ ուզում է մարդկութիւնից բարձրանալ: Ուրեմն մի՛ երեւակայէք ձեր ուժերն ընդարձակելու մասին, երբ ձեր ընդունակութիւններն աւելանում են. ընդհակառակը դուք կըչացնէք նրանց եթէ ձեր հպարտութիւնը նրանցից աւելի հեռու գնայ: Չափենք մեր շրջագծի շառաւիղը և մնանք նրա կենդրոնումը, ինչպէս միջատն իր հիւսուածքի մէջ. այն ժամանակ միշտ գոհ կլինենք և մեր թուլութեան մասին չենք գանգատուի, որովհետև երբէք թուլութիւն չենք զգայ:

22. Բոլոր կենդանիներն ունեն ճիշտ միայն իրենց գոյութիւնը պահպանելու համար կարևոր ընդունակութիւնները. միմիայն մարդս ունի կարևորից աւելին: Արդեօք տարօրինակ չէ, որ հենց այդ աւելին է նրա թշուառութեան պատճառը: Ամեն երկրում մարդու ձեռքերն աւելի թանկ արժեն, քան նրա սնունդը: Եթէ մարդս խելացի լինէր և այդ աւելորդը բանի տեղ չդնէր, կարևորը միշտ կունենար, որովհետև երբէք կարևորից աւելին չէր ունենայ: Մեծ կարիքները, ասում է Ֆաւօրինուսը, առաջանում են մեծ ստացուածքներից և յաճախ չունեցածը ձեռք բերելու ամենալաւ միջոցն է ունեցածից զրկուելը: Աւելի բաղդաւոր լինելու համար մեր թափած ջանքերն ընդհակառակն աւելի թշուառացնում են մեզ: Իւրաքանչիւր մարդ եթէ միայն ապրել ուզենար, բաղդաւոր կապրէր և միևնոյն ժամանակ բարի մարդ կլինէր, որովհետև չար լինելուց ինչ օգուտ կունենար:

23. Եթէ մենք անմահ լինէինք, շատ թշուառ էակներ կըլինէինք: Մեռնելը թէև ծանր է մեզ համար, բայց քաղցր է յուսալ, որ միշտ չպէտք է ապրենք և որ մի աւելի լաւ կեանք վերջ պէտք է դնէ այս կեանքի չարչարանքներին: Եթէ երկրիս վրայ անմահութիւն առաջարկէին մեզ, ո՞վ կընդունէր այդ անհաճոյ ընծան *): Էլ ինչ ապաւէն, ինչ յոյս և ինչ մխիթարութիւն կմնա մեզ բաղդի հարուածների և մարդկանց անարդարութիւնների դէմ: Անգէտ, կանխատեսութիւն չունեցող մարդը շատ չէ զգում կեանքի ար-

*) Հասկանալի է, որ այստեղ խօսքս ամեն մարդու չէ վերաբերում, այլ միմիայն մտածողներին:

ժէքը շատ չէ զգում և դրա կորստեան համար շատ չէ վախենում. լուսաւորուած մարդն աւելի բարձր արժէք ունեցող բարիքներ է ճանաչում և դրանց գերադասում կեանքի արժէքից: Միայն կիսակրթութիւնն ու անձնապաստան իմաստութիւնն է մեր հայեացքն ուղղում դէպի մահը և այդպիսով մահը մեզ համար դառնում է ամենավատ չարիքը: Իսկական մարդու համար մեռնելու կարևորութիւնն է միայն պատճառը՝ որ տանում է կեանքի չարչարանքը: Եթէ հաստատ չգիտենայինք, որ մի օր պէտք է կորցնենք մեր կեանքը, նրա գոյութիւնը պահպանելու համար այնքան բան չէինք տայ:

24. Մեր հոգեկան ցաւերը բոլորն էլ երևակայական են, բացի միմիայն չարագործութիւնից և այդ էլ մեզնից կախումն ունի. մարմնական ցաւերը կամ հիւծւում են, կամ մեզ են մաշում: Դրանց դէմ մեր փրկութեան միջոցն է ժամանակը կամ մահը. բայց մենք այնքան աւելի ենք տառապում, որքան քիչ ենք հասկանում տառապանքը և մեր հիւանդութիւնները բժշկելով՝ աւելի մեծ չարչարանք ենք պատճառում մեզ, քան թէ կարող էր պատճառել այդ հիւանդութեան հանդուրժելը: Ապրի՛ր բնութեան պահանջի համեմատ, եղիր համբերող և հեռու կաց բժիշկներից. այդպիսով թէև մահից չես ազատուի, բայց մի անգամ միայն կզգաս մահը. այն բժիշկներն օրըստօրէ քո շփոթուած երեւակայութեան առաջն են մղում մահուան պատկերը, իսկ նրանց խաբեբայական արուեստը, փոխանակ կեանքիդ օրերն երկարացնելու, զրկում է քեզ դրանց հաճոյքը վայելելուց: Ես միշտ հարց եմ առաջարկում՝ թէ արդեօք այդ արուեստն ինչ իրական օգուտ է տալիս մարդուն: Հարկաւ՝ այդ արուեստով բժշկուածներից մի քանիսը կմեռնէին, բայց այն միլիոնաւոր մարդիկը, որոնց սպանում է այդ արուեստը, կապրէին: Մարդ, եթէ խոհականութիւն ունիս, այս վտանգին մի՛ ենթարկուի, որտեղ բազմաթիւ կարելիութիւններ հակառակ են քեզ: Տառապի՛ր, մեռի՛ր կամ առողջացի՛ր. բայց ամենից առաջ՝ ապրի՛ր մինչև կեանքիդ վերջին ժամը:

25. Ամեն բան, ամեն բան յիմարութիւն և հակասութիւն է մարդկային կազմակերպութեան մէջ: Որչափ մեր կեանքը կորցնում է իւր արժէքը, այնքան ևս աւելի ենք անհանգստանում նրա համար: Ծերունիներն աւելի են տխրում և ափսոսում կեանքի համար, քան երիտասարդները. նրանք չեն ուզում զրկուել այն նախապատրաստութիւններից, որ տեսել են կեանքը վայելելու համար և սաստիկ ծանր է մեռնել՝ ապրել սկսելուց առաջ: Առ հասարակ ընդունուած է, որ մարդս կենդանի ձգտումն ունի իւր գոյութիւնը պահպանելու համար և իրօք՝ մարդս ունի այդ ձգտումը, բայց չենք տեսնում, որ այդ, ինչպէս մենք ենք զգում, մեծ մասամբ

մարդկանց գործն է։ Բնութեան շնորհիւ մարդս իւր գոյութիւնը պահպանելու համար՝ այնչափ է հոգում, որչափ դրա համար միջոցներ ունի իւր տրամադրութեան տակ. հենց որ այդ միջոցներից զրկւում է, հանգստանում և մեռնում է, առանց զուր տեղը չարչարուելու։ Հրաժարման առաջին օրէնքը բնութիւնն է տալիս մեզ։ Վայրենիները շատ քիչ են հակառակւում մահուան, ինչպէս անասունները, և համարեա թէ առանց գանգատուելու համբերութեամբ մեռնում են։ Եթէ այս օրէնքը խախտուել է, առաջանում է մի ուրիշը, որ իւր ծագումը խոհականութիւնից է առնում. բայց շատ քչերն են կարողանում նրանից չահուել և այս արհեստական հրաժարումն այնպէս կատարեալ և առանց բացառութեան չէ, ինչպէս առաջինը։

26. Նախազգուշութիւնը, այո՛, Նախազգուշութիւնն է մեր բոլոր թշուառութեան իսկական աղբիւրը. Նախազգուշութիւնն է մեզ չարչնակ մեզնից դուրս մղում և յաճախ դէպի այն կողմը մատնացոյց անում, ուր երբէք չենք կարող գնալ։ Ի՞նչ խելացնորութիւն է, որ մարդուս նման մի անցաւոր էակ աչքերը միշտ յառում է դէպի այն հեռաւոր ապագան, որ շատ հազիւ է վրայ հասնում, իսկ ապահով ներկային անփոյթ է վերաբերւում. և այդ խելացնորութիւնն այնքան աւելի ճակատագրական է, որքան որ մարդուս հասակի հետ աւելանում է. ծեր մարդիկը, որ չարունակ կասկածոտ, զգոյշ և ժլատ են, աւել սիրով զրկւում են իրենց այսօրուայ կարևոր բանից, քան թէ կամենում են հրաժարուել անպէտք բանից՝ հարիւր տարուայ ընթացքում։ Այսպէս փաթաթւում և կախւում ենք ամեն բանից. ժամանակները, վայրերը, մարդիկն ու իրերը, ամեն բան, ինչ որ կայ և պէտք է լինի, ամեն մէկիս համար նշանակութիւն ունի. մեր սեպհական էութիւնը դեռ միայն մեր անձի ամենաչնչին մասն է կազմում։ Իւրաքանչիւրը տարածւում է, այսպէս ասած, ամբողջ երկրի վրայ և ամբողջ երկրի տարածութեան վրայ տպաւորութիւններ է ընդունում։ Միթէ զարմանալի է ուրեմն, որ մեր տառապանքները բազմապատկւում են այն բոլոր կէտերում, ուր մեզ կարող են վնասել։ Ո՞րքան իշխաններ ողբում են այն երկրի կորուստը, որ իրենք երբէք չեն տեսել. ո՞րքան վաճառականներ կան, որոնց եթէ Հնդկաստանում դիպչես, Փարիզում աղաղակ կբարձրացնեն։

27. Միթէ՞ բնութիւնը մեզ այնքան հեռու է մղում մեզնից։ Միթէ նրա դիտաւորութիւնն է, որ մեզնից ամեն մէկն ուրիշից տեղեկանայ իւր վիճակի մասին և յաճախ ամենից վերջն ինքն իմանայ, այնպէս որ շատերը մեռել են երջանկութեան կամ թշուառութեան մէջ՝ առանց այդ մասին որևէ տեղեկութիւն ու-

նենալու։ Առաջս կանգնած է մի թարմ, աշխոյժ, պնդակազմ և առողջ մարդ, նրա ներկայութիւնն ուրախութիւն է պատճառում, նրա աչքերը փայլում են գոհունակութիւնից և առողջութիւնից. երջանկութեան պատկերն է կրում նա։ Եւ ահա մի նամակ են բերում փոստից. երջանիկ մարդն ուշադրութեամբ զննում է իր հասցէն կրող նամակը, բաց է անում և կարդում։ Վայրկենաբար փոխւում է նրա կերպարանքը, նա գունատւում և ուշաթափւում է։ Նորից ուշքի գալով՝ սկսում է լալ, հառաչել, մոլեգնել, մազերը փետել և օդը լցնել իր ողբերով. սարսափելի ջղաձգութեան է ենթարկւում։ Խելագա՛ր, ինչ արեց քեզ այդ թուղթը, ո՞ր անդամդ դուրս կտրեց, ինչ չարագործութեան դրդեց քեզ, ինչ փոփոխութիւն առաջացրեց քո մէջ՝ քեզ այդպիսի դրութեան մէջ գցելու համար։

28. Եթէ նամակը կորչէր, եթէ մի գթասիրտ ձեռք կրակի մէջ ձգէր այդ, այս երջանիկ և միևնոյն ժամանակ դժբաղդ մարդու վիճակն իմ կարծիքով մի տարօրինակ հանելուկ կլինէր։ Չէ՞ որ նրա դժբաղդութիւնն իրողութիւն էր. ճիշտ է, բայց նա չէր զգում այդ։ Ուրեմն որտեղ էր այդ դժբաղդութիւնը։ — Նրա երջանկութիւնն երևակայական էր։ Ես հասկանում եմ. առողջութիւնը, ուրախութիւնը, հոգեկան անդորրութիւնը դեռ երազներ են միայն։ Մենք այլ ևս այնտեղ չենք ապրում, որտեղ որ ենք. մենք դեռ ապրում ենք այնտեղ միայն, որտեղ որ մենք չկանք։ Ի՞նչպէս կարելի է մահից այնքան վախենալ, քանի որ այն, ինչի մէջ որ մենք ապրում ենք, մնում է դեռ։

29. Ո՛վ մարդ, սահմանափակիր գոյութիւնդ քո ներքին աշխարհով և այլևս թշուառ չես լինի։ Մնա՛ այն տեղ, որ յատկացրել է քեզ բնութիւնն էակների շարքում. այնտեղ ոչինչ բան կարող չէ քեզ ընկճել. մի՛ հակառակի կարևորութեան խիստ օրէնքին, մի՛ սպառի այն ուժերը, որ երկինքը չէ՛ տուել քեզ՝ գոյութիւնդ ընդարձակելու կամ երկարացնելու, այլ միմիայն պահպանելու՝ այնքան ժամանակ, որքան նրան հաճելի կլինի այդ։ Քո ազատութիւնն ու իշխանութիւնը հասնում է մինչև քո բնական ուժերի սահմանը, ո՛չ աւելի. մնացած բոլորը միայն ստրկութիւն, խելագարութիւն և պատրանք է։ Նոյն իսկ իշխանութիւնը ստրկական է, եթէ հիմնւում է մարդկանց կարծիքների վրայ, որովհետև դու կախումն ունիս նրանց նախապաշարումներից, որոնց վրայ իշխում ես նախապաշարումներով։ Նրանց ըստ քո ցանկութեան առաջնորդելու համար, քեզ էլ պէտք է առաջնորդես ըստ նրանց ցանկութեան։ Հենց որ նրանք փոխեցին իրենց մտածելու եղանակը, դու էլ պէտք է, կամենաս թէ չկամենաս միևնոյն է, փոխես գործողութեանդ եղանակը։ Քեզ շրջա-

պատողները պէտք է միայն կարողանան կառավարել՝ կամ քո կառավարած ժողովրդի կամ քեզ կառավարող սիրելիներիդ կարծիքները, կամ թէ քո ընտանիքի կամ քո սեպհական կարծիքները. այդ վէզիրներն ու պալատականները, քահանաներն ու զինուորները, սեննեկապաններն ու չաղակրատ նաժիշտները և վերջապէս նոյն իսկ մանուկները, եթէ Թէմիստոկլէս էլ լինիս հոգուով, *) դարձեալ երեխայի պէս կառաջնորդեն քեզ՝ լէգէոններիդ մէջ։ Արա, ինչ որ կամենաս. երբէք իսկական ազդեցութիւնդ քո իսկական ուժերից աւելի չի կարող լինել։ Երբ մարդ ստիպուած է լինում ուրիշի աչքերով տեսնելու, ստիպուած կլինի նաև նրա կամքով կամենալու։ Հպարտութեամբ ասում ես. իմ ժողովուրդներն իմ հպատակներն են։ Շատ լաւ, բայց դու ինչ ես։—Քո նախարարների հպատակը։ — Իսկ ինչ են քո նախարարները։ — Իրենց պաշտօնեաների և սարփածու կանանց ծառաները, իրենց սպասաւորների սպասաւորները։ Ամեն բան վերցրու, ամեն բան յափշտակիր և ապա լիքը բռնով փողերդ դէն ածա, մարտկոցներ շինիր, կախաղաններ և գլխատման անիւներ պատրաստիր, օրէնքներ տուր, կարգադրութիւններ արա, չատացրու լրտեսներիդ, զինուորներիդ, դահիճներիդ, բանտերիդ ու շղթաներիդ թիւը. այս բոլորն ինչ օգուտ է բերում ձեզ, խեղճ մարդիկ —դրանով աւելի լաւ չեն ծառայի ձեզ, աւելի քիչ չեն գողանայ ձեզնից և խաբի ձեզ ու աւելի անսահման իշխանութիւն չէք ունենայ։ Դուք միշտ կասէք. ես կամենում եմ, բայց միշտ կանէք այն, ինչ որ ուրիշներն են կամենում։

30. Նա է միայն իւր կամքը կատարում, ով իւր կամքը կատարելու համար օտար ձեռքի օգնութեան չէ դիմում. սրանից հետևում է, որ բոլոր բարիքներից առաջինը՝ ոչ թէ ակնածութիւնն է, այլ ազատութիւնը։ Ճշմարիտ ազատ մարդը կամենում է միայն այն, ինչ որ կարող է և անում է, ինչ որ իրեն դուր է գալիս։ Այս է իմ հիմնական միտքը։ Պէտք է միայն այդ բանը յարմարեցնել մանկութեանը. դաստիարակութեան բոլոր կանոնները կարելի է դրանից դուրս բերել։

31. Ընկերութիւնը մարդուն աւելի թուլացրել է՝ ոչ միայն նրանով, որ յափշտակել է նրանից իւր սեպհական ուժերի վրայ

*) Այս փոքրիկ երեխան, ասաց Թէմիստոկլէսն իւր բարեկամներին, Յունաստանի իշխողն է, որովհետև նա իշխում է իւր մօր վրայ, նրա մայրն իշխում է ինձ վրայ, ես իշխում եմ աթենացիների վրայ, իսկ աթենացիներն իշխում են Յունաստանի վրայ։ Ո՜հ, ինչպիսի փոքրիկ կառավարիչներ կարելի էր գտնել յաճախ մեծամեծ պետութիւնների մէջ, եթէ իշխաններից սկսելով՝ աստիճանաբար իջնէինք և գտնէինք այն ձեռքը, որ գաղտնի կերպով առաջին հարուածն է տալիս։

ունեցած իրաւունքը, այլ առհասարակ նրանով, որ այդ ուժերն անբաւարար է դարձրել նրա համար։ Այդ պատճառով և մարդու թուլութեան հետ չատանում են նաև նրա ցանկութիւնները և հենց դրանումն է կայանում մանկութեան թուլութիւնը՝ համեմատած այրական հասակի հետ։ Եթէ չափահաս մարդը զօրեղ էակ է, իսկ երեխան թոյլ, պատճառն այն չէ, որ առաջինն աւելի մեծ ոյժ ունի քան վերջինը, այլ որովհետև առաջինը բնութիւնից տուած չնորքով կարող է ինքն իրեն բաւականութիւն տալ, իսկ մանուկը՝ ոչ։ Ուրեմն չափահաս մարդն աւելի կամք պէտք է ունենայ, իսկ երեխան աւելի քմահաճութիւն. քմահաճութիւն ասելով ես հասկանում եմ այն բոլոր ցանկութիւնները, որ իսկական կարիքներ չեն և միմիայն ուրիշների օգնութեամբ կարող են բաւականութիւն ստանալ։

32. Այս թոյլ դրութեան պատճառն արդէն ասացի։ Բնութիւնն այստեղ ծնողների հակամիտութեան շնորհիւ նախազգուշութիւններ է ձեռք առել. բայց այդ հակամիտութիւնը կարող է չափազանցացրած, անճիշտ և եղծուած լինել։ Այն ծնողները, որոնք քաղաքացիների ընկերութեան մէջ են ապրում, իրենց զաւակին էլ, ժամանակից առաջ, նոյն ընկերութեան անդամ են դարձնում։ Նրանք իրենց երեխայի համար աւելի կարիքներ են առաջացնում, քան թէ նա ունի իսկապէս և այդպիսով նրա թուլութիւնը չեն նուազեցնում, այլ ընդհակառակը՝ աւելացնում են, որովհետև նրանից այնպիսի բաներ են պահանջում, որ բնութիւնը չէ պահանջել։ Նրանք մանկան ունեցած չնչին ոյժը իրենց կամքին են ստորադրում, որպէս վի իրենց ծառայեցնեն։

33. Խոհական մարդը գիտէ, թէ ինչպէս պէտք է պահպանէ իւր դիրքը, բայց երեխան չգիտենալով այդ, չի կարող հաստատուն կերպով պահպանել։ Մանուկը մեր ձեռքի տակ հազարաւոր միջոցներ ունի՝ իւր դիրքը փոխելու համար. դաստիարակների գործը պէտք է լինի պինդ պահել նրան և այդ գործը դիւրին չէ։ Նա Նա պէտք է ոչ անասուն լինի, ոչ էլ մարդ, այլ երեխայ. Նա պէտք է զգայ իւր թուլութիւնը, բայց չպէտք է վնասուի դրանից, պէտք է պէտք է կախումն ունենայ, բայց չպէտք է ծառայէ. պէտք է խնդրէ, բայց չհրամայէ։ Նա ուրիշներին ստորադրւում է միայն իւր կարիքների շնորհիւ, որովհետև ուրիշները նրանից աւելի լաւ են տեսնում, ինչ որ նրան օգտակար է, ինչ որ նրա գոյութեանը կնպաստի կամ թէ վնասակար կարող է լինել նրա համար։ Ոչ ոք, նոյն իսկ հայրը, իրաւունք չունի երեխային մի այնպիսի բան որ նրան ոչ մի բանով օգուտ չի բերի։ հրամայելու,

34. Քանի որ դեռ մարդկային նախապաշարմունքներն ու

կարգադրութիւններն ազդեցութիւն չեն ունեցել մեր բնական
հակումների վրայ՝ մանուկների, ինչպէս նաև չափահասների, եր-
ջանկութիւնն իրենց ազատութեան գործադրութիւնն է. բայց այդ
ազատութիւնն երեխաների համար սահմանափակուած է՝ իրենց
թուլութեան շնորհիւ: Նա անում է այն, ինչ որ կամենում է՝ եր-
ջանիկ է, եթէ ինքն իրեն բաւականութիւն է տալիս. այդպէս է
մարդս բնական դրութեան միջոցին: Նա անում է այն, ինչ որ
կամենում է, երջանիկ չէ, եթէ նրա կարիքները գերազանցում են
իւր ուժերին. այդպէս է երեխան: Նոյն իսկ բնական դրութեան
մէջ երեխաները միայն թերակատար ազատութիւն են վայելում,
ինչպէս որ չափահաս մարդիկը՝ քաղաքացիական ընկերութեան
մէջ: Սակայն մեզնից ամեն մէկը, որովհետև առանց ուրիշների
այլ ևս չի կարող ապրել, այս նկատմամբ էլ կլինի կրկին թոյլ ու
թշուառ: Մենք ստեղծուել ենք չափահաս մարդիկ լինելու համար.
օրէնքներն ու ընկերութիւնը մեզ կրկին դէպի մանկական դրութիւնն
են յետ տարել: Հարուստները, մեծամեծները, թագաւորները,
բոլորը մանուկներ են, որոնք մի անգամ տեսել են՝ թէ ինչպէս
մարդիկ եռանդով շտապում են իրենց թշուառութիւնը թեթևաց-
նելու և հենց դրանից էլ երեխայական ունայնասիրութիւն են
ունենում և հպարտանում են իրենց ցոյց տրուած այն հոգացո-
ղութեան համար, որ չէր շնորհուի դրանց, եթէ կատարեալ մար-
դիկ լինէին:

35. Այս խորհրդածութիւնները ծանրակշիռ են և ներկա-
յացնում են ընկերական կազմակերպութեան հակասութիւնների
լուծման բանալին: Կախումն ունենալն երկու տեսակ է լինում.
առաջին՝ իրերից կախումն ունենալը, որ բնութիւնից է ծագում և
երկրորդ՝ մարդկանցից կախումն ունենալը, որ ընկերութիւնից է
առաջանում: Իրերից կախումն ունենալը, որ ոչ մի բարոյական
նշանակութիւն չունի, մեր ազատութեանը վնաս չէ հասցնում և
մոլութիւններ չէ ստեղծում. իսկ մարդկանցից կախումն ունենալն
ընդհանրապէս անկանոն *) բան է և բոլոր մոլութիւնների առա-
ջացման պատճառը. այդ յարաբերութիւնից փոխադարձաբար ան-
բարոյականանում են՝ թէ տէրը և թէ ստրուկը: Եթէ ընկերու-
թեան մէջ գոյութիւն ունեցող այս չարիքի դէմ մի որևէ միջոց
կայ, այդ այն է, որ մարդկանցից վերացուի այդ օրէնքը և խսկա-
կան ուժով զինուի ընդհանուր կամքը, որ ամեն անհատական

*) Իմ «պետական իրաւունքի սկզբունքներ»-ում ցոյց է տրուած, որ ոչ մի
անհատական կամք չի կարող կանոնաւոր լինել ընկերական կազմակերպու-
թեան մէջ:

կամքի գործունէութիւնից բարձր է: Եթէ ժողովուրդների օրէնք-
ները, բնական օրէնքների նման, այնպէս անխախտ լինէին, որ ոչ
մի մարդկային ոյժ կարող չլինէր խախտել, այդ դէպքում մարդ-
կանցից կախումն ունենալը կրկին իրերից կախումն ունենալ կը
դառնար. ազատ պետութեան մէջ բնական դրութեան բոլոր ա-
ռաւելութիւնների հետ կարելի էր միացնել ընկերական դրութեան
առաւելութիւնները, կարելի էր մարդկանցը մոլութիւններից հե-
ռու պահող ազատութեանն աւելացնել նաև բարոյականութիւնը,
որ մարդուն առաքինութեան աստիճանին է բարձրացնում:

36. Արեմն երեխային այնպէս պահիր, որ նա կախումն
ունենայ միմիայն իրերից. այդ դէպքում նրա դաստիարակութեան
առաջադիմութեան գործում դու կհետևես բնութեան կանոնին:
Նրա անմիտ ցանկութիւնների դէմ առաջ բեր միմիայն բնական
արգելքներ կամ պատիժներ, որոնք առաջանում են նոյն իսկ գոր-
ծողութիւններից և որոնց յարմար առթիւ կյիշէ նա. այդքանը
բաւական է չարութիւն անելուց յետ կանգնեցնելու նրան, նոյն
իսկ առանց յատուկ արգելքի: Նրա համար միմիայն փորձն ու
անզօրութիւնը պէտք է բռնեն օրէնքի տեղը: Նրա ցանկութիւն-
ներին բաւականութիւն պէտք է տաս՝ ոչ թէ նրա համար, որ նա
պահանջում է, այլ որովհետև կարիք ունի: Նա չպէտք է իմանայ՝
թէ ինչ է հնազանդութիւնը, երբ մի որև է բան է անում, նոյն-
պէս և չպէտք է գիտենայ՝ թէ ինչ է նշանակում հրամայել, երբ
նրա համար են մի բան անում: Նա իր ազատութիւնը պէտք է
զգայ՝ թէ իւր և թէ քո գործողութիւնների միջոցին հաւասարա-
պէս: Նրա թերակատար ուժերին օգնութեան հասիր միայն այն
չափով, որչափ կարևոր է, որ նա ազատ լինի, բայց ոչ հրամայող.
քո ծառայութիւնները նա պէտք խոնարհութեամբ ընդունէ և
կարօտով սպասէ այն վայրկենին, երբ կարիք չի ունենայ քո օգ-
նութեանը և ինքն իրեն գործ անելու պատիւը կվայելէ:

37. Մարմնին ոյժ տալու և աճեցնելու համար բնութիւնը
միջոցներ է գործ դնում և մենք երբէք չպէտք է այդ միջոցների
հակառակ գործենք: Երեխային չպէտք է ստիպենք, որ հանդարտ
նստի, երբ նա մանգալ է ուզում և չպէտք է հարկադրենք, որ
ման գայ, երբ իւր տեղն է ուզում մնալ: Եթէ երեխաների կամ-
քըն ապականուած չէ մեր շնորհիւ, առանց նպատակի՝ ոչինչ չեն
կամենում նրանք: Նրանք պէտք է թռչկոտան, վազեն ու ազա-
տակեն, երբ ցանկանան: Նրանց բոլոր շարժողութիւններն իրենց
ամրապնդուելու ձգտող մարմնի կազմութեան կարիքներն են. բայց
չպէտք է նրանց վրայ վստահութիւն ունենալ այն դէպքում, երբ
այնպիսի պահանջներ են անում, որ իրենք անձամբ չեն կարող

կատարել և ուրիշները պէտք է անեն նրանց համար։ Այս դէպքում հոգացողութեամբ պէտք է զանազանել՝ ճշմարիտ, բնական կարիքը քմահաճոյքի պահանջներից, որոնք նոր են սկսում առաջանալ և որոնցից ծագում են կեանքի զեղումները, որոնց մասին արդէն խօսեցի*)։

38. Արդէն ասացի, թէ ինչ պէտք է անենք երբ երեխան լալիս է՝ այս կամ այն բանը ստանալու համար։ Այստեղ աւելացնում եմ միայն, որ երբ նա կարող լինի արդէն իր ցանկացածը խօսքերով պահանջել, բայց կամեցածը շուտով ձեռք բերելու կամ թէ նրան զլացուած իրն անպատճառ ունենալու համար՝ իր պահանջին ոյժ տալու նպատակով արտասուք է թափում, պէտք է անհրաժեշտ կերպով մերժել այդ պահանջը։ Եթէ նա որևէ կարիք է արտայայտում, դու պէտք է իմանաս այդ և իսկոյն կատարես նրա պահանջը. իսկ եթէ որևէ բան կզիջանես նրան՝ ի նկատի ունենալով միայն նրան՝ արտասուքները, այդ նշանակում է; որ խրախուսում ես նրան՝ արտասուք թափելու և սովորեցնում ես՝ քո բարի կամքի մասին կասկածելու և հաւատալու, որ թախանձանքն աւելի ազդեցութիւն կարող է ունենալ քեզ վրայ, քան բարեացակամութիւնը։ Եթէ երեխան քեզ բարի չհամարէ, շուտով ինքը չարաբարոյ կլինի. եթէ թոյլ կարծէ քեզ, շուտով յամառ կդառնայ. ուրեմն ինչ որ չպէտք է մերժել, պէտք է միշտ իսկոյն կատարել։ Մերժելու ժամանակ որոշ չափ պահպանիր, բայց մի անգամ մերժածն երբէք էլ մի կատարի։

39. Առանձնապէս զգուշացիր երեխային դատարկ քաղաքավարական ձևեր սովորեցնելուց, որպէս զի նրանցով նա հանգամանքը ներածին պէս կարող չլինի հմայիչ խօսքեր արտասանելով՝ բոլոր շրջապատողներին իւր կամքին հնազանդեցնել և իւր կամեցածը նոյն վայրկեանին ստանալ։ Հարուստների անհեթեթ դաստիարակութեան միջոցին երբէք չենք վրիպում երեխաներին քաղաքավարական իշխանասիրութիւն ըմբռնել տալու համար այնպիսի դարձուածքներ պատուիրել, որ ոչ ոք կարող չլինի նրանց դիմադրել. նրանց զաւակները խնդրելու եղանակ չունեն՝ ոչ խօսակցութեան չեչտի և ոչ ձևի վերաբերմամբ. խնդրելու ժամանակ նրանք նոյնչափ յանդուգն, այո, առաւել յանդուգն են, քան հրամայելու միջոցին. կարծես թէ այս դէպքում աւելի ես ապահով են, որ հնազանդութիւն կգտնեն։ Իսկոյն նկատում է, որ նրանց բերանից դուրս եկած՝ «ուզում եմ այդ ինձ տալ»-ը համահաւասար է «պէտք է տաս ինձ» խօսքերին և որ «խնդրում

*) Տես. § 22.

եմ» խօսքը նրանց համար նշանակում է. «հրամայում եմ»։ Սքանչելի քաղաքավարութիւն, որ նրանց համար այլ նշանակութիւն չունի՝ բացի խօսքերին ուրիշ նշանակութիւն տալուց. նրանք երբէք ուրիշ կերպ չեն կարող խօսել՝ բացի հրամայական չեչտ գործածելուց։ Ես, իմ կողմից, աւելի քիչ երկիւղ եմ կրում Էմիլի կոպտութիւնից, քան անամօթութիւնից և այդպիսով ինձ համար աւելի սիրելի է, որ նա «արա՛ այս բանը» խնդրելու եղանակով ասէ, քան թէ «խնդրում եմ» բառը հրամայական չեչտով։ Ինձ համար նշանակութիւն ունի ոչ թէ նրա գործածած դարձուածքը, այլ դրա հետ կապակցուած միտքը։

40. Հաւասարապէս պէտք է խուսափել՝ թէ չափազանց խստութիւնից և թէ չափազանց ներողամտութիւնից։ Եթէ թոյլ տաս, որ երեխաներն իրենց վնասեն, վտանգի կենթարկես նրանց առողջութիւնը և կեանքը, իսկապէս կթշուառացնես նրանցը. իսկ եթէ մեծ երկիւղով նրանց ամեն մի անհանգստութեան առաջն առնես, աւելի մեծ թշուառութեան հիմքը դրած կլինիս, քնքոյշ և զգայուն կդարձնես նրանցը և կհանես մարդկային դրութիւնից, որին նրանք մի օր կրկին պէտք է վերադառնան, չնայելով քո գործ դրած ջանքերին։ Երեխաներին միքանի բնական չարիքներից ազատ պահելու համար ինքներդ այնպիսի չարիքներ էք հասցնում նրանց, որ բնութիւնը չէ որոշել նրանց համար։ Ինձ կասեն, որ ես այն վատ հայրերի նման եմ վարւում, որոնց երեսովն եմ տուել, թէ իրենց զաւակների երջանկութիւնը զոհում են՝ ի նկատի ունենալով մի հեռաւոր ժամանակ, որ շատ կարելի է՝ երբէք չի հասնի։

41. Ո՛չ երբէք, որովհետև այն ազատութիւնը, որ ես տալիս եմ իմ սանին, լիովին փոխարինում է այն աննշան անյարմարութիւններին, որոնց ենթարկւում է նա իմ գիտութեամբ։ Ես տեսնում եմ փոքրիկ ստահակներին ձիւնի մէջ խաղալիս, ցրտից սառած և կապտած-կարմրած. նրանք հազիւ են մատները շարժում։ Իրենց ցանկութիւնից է կախուած միայն, որ եթէ ուզենան՝ նորից կտաքանան, բայց նրանք չեն անում այդ. եթէ մենք ստիպէինք նրանց տաքանալ, նրանք բռնութեան խստութիւնն աւելի կզգային, քան թէ ցրտի սաստկութիւնը։ Ուրեմն ինչի՞ մասին է գանգատը։ Միթէ ես անբաղդացնում եմ քո մանկանը, երբ նրան թոյլ եմ տալիս ենթարկուել այնպիսի անյարմարութիւնների, որոնց ինքը սիրով տանում է։ Ես նրան ամենալաւ բարիքն եմ պատճառում ներկայիս համար՝ ազատ թողնելով նրան, նմանապէս և ապագայի համար՝ իր կրելիք չարիքների դէմ զինելով։ Միթէ կարծում ես, որ եթէ ընտրութիւնն իրեն մնար, երեխան մի րոպէ

անդամ կտատանուէր՝ իմ կամ քո սանը լինելու համար։

42. Կարո՞ղ ես մի որևէ էակի համար՝ իւր բնական կոչումից դուրս որևէ երջանկութիւն կարելի համարել և եթէ մարդուն ազատենք իւր ցեղին յատուկ բոլոր չարիքներից, մի՞թէ այդ չէ նշանակում՝ հեռացնել նրան իւր կոչումից։ Այո, ես պնդում եմ, որ մարդս մեծ բարիքների արժէքն իմանալու համար, պէտք է ճանաչէ փոքրիկ չարիքները, այդպէս է նրա բնութիւնը։ Եթէ մարդուս մարմինը չափից դուրս լաւ դրութեան մէջ լինի, հոգին կապականուի։ Այն մարդը, որ չգիտէ՝ թէ ինչ է ցաւը, չի կարող իմանալ նաև մարդկային խանդակաթ յուզումները և կարեկցութեան բերկրութիւնը. Նրա սիրտը ոչ մի բանով չի գթաշարժուի, անընկերասէր և իւր նմանների մէջ իբրապէս գոյութիւն չունեցող մի բան կլինի։

43. Գիտե՞ս արդեօք թէ որն է ամենատապահով միջոցը՝ զաւակդ թշուառացնելու համար։ Միմիայն ամեն բան ստանալու սովորութիւնը. որովհետև նրա ցանկութիւնները հեշտութեամբ բաւականութիւն ստանալով՝ անդադար աճում են, իսկ վաղ թէ ուշ անկարելիութիւնը կստիպէ քեզ՝ նրա ցանկութիւնը մերժել և այդ անսովոր մերժումը նրա համար աւելի ցաւալի կլինի, քան թէ նոյն իսկ պահանջածից զրկուիլը. Առաջ երեխան պահանջում է միայն ձեռքիդ բռնած փայտը, բայց շուտով կուզէ նաև ժամացոյցդ, յետոյ օդի մէջ սաւառնող թռչունը, երկնքում փայլող աստղը, այո, ամեն բան, ինչ որ տեսնում է. ինչպէս պէտք է այդ բոլոր պահանջներին բաւականութիւն տաս, եթէ Աստուած չես։

44. Մարդս բնութիւնից արդէն հակումն ունի՝ իրենը համարել այն բոլորը, ինչ որ իւր իշխանութեան ներքոյ է գտընւում։ Այս մտքով Հօբբէի ասածը որոշ չափով ճիշտ է. եթէ մեր ցանկութիւնների հետ բազմապատկենք նաև դրանց բաւականութիւն տալու միջոցները՝ մեզնից իւրաքանչիւրն ամեն բան իւր իշխանութեան ներքոյ կունենայ։ Ամբողջ աշխարհի իշխանի հետ այս յարաբերութեան մէջ է գտնւում այն երեխան, որ ամեն բան ստանում է, եթէ միայն ցանկանում է. նա բոլոր մարդկանց իւր ստրուկներն է կարծում և երբ մենք ստիպուած ենք լինում վերջապէս մի բան մերժել նրան, այդ մերժումը նա գժգոհութեան գործողութիւն, որովհետև իւր բոլոր հրամաններն իրագործելի է համարում։ Այն բոլոր պատճառները, որ առաջ ենք բերում դեռ ևս կանոնաւոր մտածելու անկարող մի հասակի մէջ գտնուող երեխային հասկացնելու համար, նրան միայն պատրուակ են թւում. նա ամեն տեղ չար կամք է նկատում.

կարծեցեալ անարդարութեան զգացմունքը նրա սիրտը կոչտացնում է, նա ատելութիւն է տածում դէպի իւրաքանչիւրը և առանց շնորհակալ լինելու իրեն ցոյց տուած հաճոյականութիւնների համար, վայրանում է ամեն մի ընդդիմադրութեան միջոցին։

45. Ի՞նչպէս կարելի է ընդունել, որ այսպիսի մի զայրացող և դիւրագրգիռ կրքերով մաշուած երեխան երբևիցէ երջանիկ լինի։ Նա երջանի՞կ. ոչ, նա բռնակալ կլինի և միևնոյն ժամանակ ամենացած ստրուկն ու բոլոր արարածներից ամենաթշուառը։ Ես տեսել եմ այդպէս դաստիարակուած երեխաներ, որոնք պահանջում էին, որ մէկ անգամից տունը գլխիվայր դնեն, եկեղեցու աշտարակի վրայ շինուած թիթեղեայ աքաղաղն իրենց տան, զօրագունդն անցնելու միջոցին կանգնեցնեն, որպէս զի իրենք կարողանան աւելի երկար ժամանակ լսել թմբուկների ձայնը և հենց որ անմիջապէս չէին վազում նրանց կամքը կատարելու, սաստիկ աղաղակ էին բարձրացնում և ոչոքի չէին ուզում լսել։ Իզո՜ւր էին ամեն կողմից շտապում նրանց հաճոյանալու համար. Նրանց ցանկութիւնները գրգռուած էին հեշտութեամբ բաւականութիւն ստանալու միջոցով, նրանց սիրտը կարծրանում էր անկարելի բաներ պահանջելով և ամեն տեղ հակառակութիւն, արգելքներ, ընդդիմադրութիւն և վշտեր էին տեսնում։ Շարունակ տրտնջալով, շարունակ յուզուած և կատաղած էին անցկացնում նրանք իրենց օրերը՝ լալով ու ողբալով. մի՞թէ դրանք երջանիկ էակներ կարող էին լինել։ Թուլութիւնն ու իշխանութիւնը միացած՝ միմիայն խելագարութիւն և թշուառութիւն են առաջացնում։ Երես տուած երեխայի մէկը հարուածում է սեղանը, միւսը ծովի ջուրն է մըտրակում. մինչև գոհ սրտով ապրելը՝ դրանք դեռ շատ կհարուածեն ու կխփեն։

46. Եթէ իշխանասիրութեան և հրամայելու տենչանքի այս մտքերը նրանց թշուառացնում են արդէն մանկական հասակում, որքան առաւել ևս կթշուառանան նրանք, երբ մեծանան և նրանց ուրիշ մարդկանց հետ ունեցած յարաբերութիւնները հետզհետէ ընդարձակուեն և բազմապատկուեն. դրանք սովոր լինելով ամենքին իրենց կամքին հպատակեցնել, ինչպիսի անսպասելի հարուած կզգան, երբ աշխարհ մտնելով տեսնեն, որ ամեն բան հակառակում է իրենց և ինչպէս կճնշուեն այն աշխարհի ծանրութեան տակ, որ կարծում էին թէ ըստ իրենց ցանկութեան կըշարժեն։ Նրանց յանդուգն էութիւնը, նրանց մանկական ունայնասիրութիւնը միմիայն վիրաւորանք, արհամարհանք և ծաղր են առաջացնում. նրանք պէտք է ամեն րոպէ խոնարհուեն. դառն փորձերը շուտով ցոյց կտան նրանց, որ ոչ իրենց դիրքն են ճա-

նաչում, ոչ ուժերը. Նրանք ամեն բան չեն կարողանում անել և այդ պատճառով կարծում են՝ թէ բոլորովին ոչինչ չեն կարող անել։ Այսչափ շատ անսովոր արգելքները յետ են մղում նրանց, այսչափ շատ հեգնութիւնը ճնշում է նրանց. նրանք դառնում են երկչոտ, անարի, շողոքորթ և նոյն չափով յետ են գնում, որչափով որ առաջ էին գնացել իրենց ուժերից վեր։

47. Վերադառնանք ուրեմն կրկին մեր հիմնական կանոնին։ Բնութիւնը ստեղծել է երեխաներին, որպէս զի նրանց սիրենք և օգնենք. բայց մի՞թէ նա ստեղծել է դրանց, որ նրանցից երկիւղ կրենք և գլուխներս խոնարհեցնենք նրանց առաջը։ Մի՞թէ բնութիւնը նրանց յարգանք ներշնչող կերպարանք, խիստ հայեացք, կոշտ ու սպառնացող ձայն է տուել, որպէս զի երկիւղալի լինեն։ Ես հասկանում եմ, որ առիւծի մռնչիւնը կենդանիներին սարսափ է ազդում և որ նրանք դողում են՝ տեսնելով նրա սարսափելի բաշը. բայց մի՞թէ մի աւելի խայտառակ, զզուելի ու ծաղրելի տեսարան կարող է լինել, քան այն պատուարժան անձանց խումբը, որ իրենց գլխաւորի առաջնորդութեամբ, պաշտօնական զգեստներով՝ խանձարուրի մէջ կապած երեխայի առաջ ծունկ են խոնարհում, ճոռոմաբան ճառեր արտասանում և այդ երեխան պատասխանելու փոխարէն՝ միայն ոռնում և լորձունք է թափում։

48. Եթէ վերցնենք մանկութիւնն ինքն ըստ ինքեան, մի՞թէ աշխարհիս երեսին կայ մի աւելի թոյլ ու թշուառ էակ, մի էակ, որ աւելի կարիք ունենար իւր շրջապատողների գթասրտութեան, կարեկցութեան, հոգացողութեան և պաշտպանութեան, քան մանուկը։ Մի՞թէ այնպէս չէ թւում, որ նա միայն նրա համար է այնպիսի քաղցր կերպարանք և սրտաշարժ դէմք ցոյց տալիս, որ բոլոր իրենց մօտեցողները ցաւակից լինեն իւր թուլութեանը և շտապեն օգնութեան հասնելու։ Ուրեմն ինչ կարող է աւելի վիրաւորական և հակաբնական լինել, քան իշխանասէր ու անհնազանդ երեխան, որ հրամայում է իւր բոլոր շրջապատողներին և անամօթաբար հրամայական չեշտով է խօսում այն մարդկանց հետ, որոնք եթէ նրան ձեռքից թողնէին, բոլորովին կոչնչանար։

49. Բայց միւս կողմից էլ ո՞վ չէ տեսնում, որ սկզբնական հասակի թուլութիւնը երեխաներին այնքան շատ թշուառութիւնների հետ է կապակցում, որ տմարդութիւն կլինէր դրան աւելացնել նաև մեր քմահաճոյքը և նրանց այդ սահմանափակ ազատութիւնից էլ զրկելը. նրանք իրենց ազատութիւնը շատ քիչ կարող են ի չարը գործ դնել. նրանց ազատութիւնից զրկելը թէ մեզ և թէ նրանց՝ շատ քիչ օգուտ կբերի։ Եթէ մեծամիտ երեխան

ծիծաղ է պատճառում մեզ, երկչոտ մանուկն էլ մեր ցաւակցութիւնն է շարժում։ Երբ խոհականութեան զարգացման հետ քաղաքացիական կեանքի ստրկութիւնն է սկսւում, ինչո՞ւ պէտք է մենք մեր անձնական ստրկութեամբ ծառայութիւն մատուցանենք նրան։ Գոնէ կեանքի մի րոպէն ազատ թողնենք այս լծից, որ բնութիւնը չէ մեր վզին դրել. երիտասարդութեանը թողնենք բնական ազատութեան վարժութիւնը, որ մեզ գոնէ մի առ ժամանակ փրկում է այն մոլութիւններից, որ իւրացնում ենք ստրկութեան միջոցին։ Երանի՛ թէ այն խստապահանջ դաստիարակները, իրենց զաւակների կամքին ենթարկուող այն հայրերը, իրենց չնչին առարկութիւններով գան և իրենց դաստիարակութեան եղանակները դրուատելուց առաջ՝ ծանօթանան բնութեան դաստիարակութեան հետ։

50. Խօսենք կրկին փորձի մասին։—Ես արդէն ասացի, որ քո զաւակը ցանկացածը պէտք է ստանայ՝ ո՛չ թէ նրա համար, որ պահանջում է, այլ որովհետև կարիք ունի. նա ոչինչ չպէտք է անէ միմիայն հնազանդուելու համար, այլ պէտք է անէ կարիքից ստիպուած. հնազանդուել և հրամայել բառերը պէտք է ջնջուեն նրա բառարանից և առաւել ևս պարտականութեան ու պարտաւորութեան գաղափարները. իսկ ոյժ և կարիք, անզօրութիւն և բռնութիւն բառերը պէտք է մեծ տեղ բռնեն այնտեղ*)։ Դեռ ևս խոհականութեան հասակին չհասած՝ չի կարելի գաղափար ունենալ բարոյական էութեան կամ թէ ընկերական յարաբերութիւնների մասին. պէտք է ըստ կարելոյն խուսափել այնպիսի բառերից, որոնք այդպիսի միտք ունեն, որպէս զի երեխան հենց ըսկզբից այդ բառերի հետ սխալ գաղափարներ չկապակցէ, որոնց արմատախիլ անելու համար ապագայում ոչ միջոց և ոչ կարո-

*) Պէտք է նկատել, որ ինչպէս պատիժը յաճախ կարիք է, այնպէս էլ զուարճութիւնն երբեմն կարևոր պահանջ է։ Երեխաները միայն մի պահանջ ունեն, որ երբէք չպէտք է կատարել. այդ պահանջն այն է, որ մենք հնազանդուենք նրանց։ Այստեղից հետևում է, որ նրանց պահանջները լսելիս առաւելապէս ուշադրութիւն պէտք է դարձնենք պահանջի շարժառիթների վրայ։ Պէտք է թոյլ տալ նրանցն այն, ինչ որ միշտ կարելի է. պէտք է թոյլ տալ ամեն բան, որ կարող է նրանցն իսկական զուարճութիւն պատճառել. պէտք է մերժել այն բոլորը, ինչ որ նրանք պահանջում են քմահաճ կերպով կամ թէ պահանջում են, որպէս զի մի որոշ հեղինակութիւն բանեցնեն։

ղութիւն կունենանք: Նրա գլուխը մտած առաջին սխալ գաղափարը նրա մոլորութեան և մոլութեան սաղմը կլինի. այս առաջին քայլի վրայ պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել: Քանի դեռ միայն զգայարաններին ենթարկուող իրերն են նրա վրայ ազդում, պէտք է հոգաս, որ նրա բոլոր գաղափարները մնան իբրև զգայարանական տպաւորութիւններ. հոգս տար, որպէս զի նա ամեն տեղ իր շուրջը միայն իրական աշխարհը տեսնէ. ապա թէ ոչ կարող ես ապահով լինել, որ նա բոլորովին չի լսի քեզ կամ թէ ցնորական գաղափարներ կկազմէ այն բարոյական աշխարհի մասին, որի վերաբերմամբ խօսում ես նրա հետ. այնուհետև ամբողջ նրա կեանքի ընթացքում չես կարող ջնջել նրա գիտակցութիւնից այդ գաղափարները:

51. Երեխաներին խոհական մտապատկերներ տալը Լօքէի մեծ սկզբունքն էր, որ դեռ այսօր էլ գործածական է մեծ մասամբ. սակայն, ինձ թւում է, որ դրա հետևանքն այնքան էլ պատուաբեր չէ այդ սկզբունքի հեղինակի համար. իմ կողմից մի աւելի տղայական բան չեմ կարող երևակայել, քան այդ երեխաները, որոնց հետ այդչափ իմաստակութիւններ են անում: Մարդուս բոլոր ընդունակութիւններից միայն խոհականութիւնն է, որ այսպէս ասած, բարդուած է միւս բոլոր ընդունակութիւններից և ամենից դժուարութեամբ և ամենից ծանր է զարգանում: Խոհականութեան գործածութեամբ պէտք է զարգացնենք մեր ընդունակութիւնները: Լաւ դաստիարակութեան գլխաւոր գործն է՝ խոհական մարդ զարգացնելը. և մենք յանդգնում ենք երեխային խոհականութեան միջոցով դաստիարակել: Այդ նշանակում է վերջին ծայրից սկսել և գործից՝ գործիք շինել: Եթէ երեխաներն ըմբռնէին թէ ինչ է խոհականութիւնը, այլ ևս կարիք չէր լինի նրանց դաստիարակել. բայց որովհետև հենց սկզբի տարիներից սկսած երեխաների հետ այնպիսի լեզուով ենք խօսում, որ նրանք չեն հասկանում, այդ պատճառով նրանք սովորում են խօսքերով բաւականանալ. նրանք ուսուցիչների պէս իմաստուն են կարծում իրենց և վիճաբանել ու ընդդիմախօսել են սիրում: Բայց այնուամենայնիւ այն ամենը, ինչ որ յոյս ունենք ձեռք բերելու խոհական շարժառիթներով, ձեռք ենք բերում միայն այն ցանկութեան, երկիւղի կամ ունայնասիրութեան շնորհիւ, որստիպուած ենք միշտ կապակցել հետը:

5_. Հետևեալ ձևի կարելի է վերածել համարեա թէ այն բոլոր բարոյական հրահանգները, որ տալիս ենք երեխաներին, կամ թէ կարող ենք տալ:

Ուսուցիչ

Այս չպէտք է անել:

Երեխան

Ինչո՞ւ չպէտք է անել:

Ուսուցիչ

Որովհետև վատ բան է:

Երեխան

Վա՞տ. ինչ է նշանակում այդ:

Ուսուցիչ

Ինչ որ արգելուած է:

Երեխան

Ի՞նչ վատ բան կայ, երբ արգելած բանն ենք անում:

Ուսուցիչ

Քո անհնազանդութեան համար պատիժ կստանաս:

Երեխան

Այն ժամանակ ես այնպէս կանեմ այդ, որ ոչ ոք չիմանայ:

Ուսուցիչ

Մի կերպ կիմացուի:

Երեխան

Այդ դէպքում կկեղծեմ:

Ուսուցիչ

Հարց ու փորձ կանեն քեզ:

Երեխան

Սուտ կխօսեմ:

Ուսուցիչ

Չի կարելի սուտ խօսել:

Երեխան

Ինչո՞ւ չի կարելի:

Ուսուցիչ

Որովհետև վատ բան է այդ և այլն:

Ահա այս է անխուսափելի շրջապտոյտը: Եթէ դուրս գաս այդ շրջագծից, երեխան այլ ևս չի հասկանայ քեզ: Արդեօք սըրանք շատ օգտակար հրահանգներ չեն: Ես կցանկանայի իմանալ թէ այս երկխօսութեան փոխարէն ինչ կդնէին. Նոյն իսկ Լօքէն, անտարակոյս, վարանքի մէջ կընկնէր: Լաւն ու վատը ճանաչելը, մարդկային պարտականութիւնների հիմքն ըմբռնելը՝ երեխայի գործը չէ:

53. Բնութիւնը կամենում է, որ մանուկները մարդ լինելուց առաջ մանուկներ լինեն: Եթէ մեզ հաճելի լինի այս կարգաւորութիւնը շրջել, միայն վաղահաս պտուղներ կստանանք, որոնք

անժամանակ և անհամ կլինեն և շուտով կփչանան. մենք այդպիսով պատանի գիտնականներ և ծեր երեխաներ կունենանք։ Մանկությունը տեսնելու, մտածելու և զգալու իրեն յատուկ եղանակն ունի. եթէ մենք մանուկներին յատուկ այդ եղանակի տեղ մեր սեպհականը դնենք, անմիտ բան արած կլինենք. աւելի շուտ երեխայից կարող էի պահանջել, որ նա հինգ ոտք բարձրութիւն ունենայ, քան թէ մօտ տաս տարեկան հասակում դատողութիւն ունենայ։ Եւ իսկապէս այդ հասակում խոհականութիւնն ինչ ծառայութիւն պէտք է մատուցանէր նրան։ Խոհականութիւնը պէտք է սանձահարէ ոյժը. երեխան այդ սանձի պէտք չունի։

54. Եթէ ուզում էք փորձել ձեր սաներին համոզելու, որ նրանք պարտական են հնազանդուել, դուք այդ պատրուակեալ համոզմունքի հետ կապակցում էք ստիպմունքն ու սպառնալիքը, կամ, որ աւելի վատ է, քաղցր խօսքեր և խոստումներ։ Այդպիսով գրաւում էք նրանց՝ իրենց օգուտը ցոյց տալով կամ թէ վախեցնում էք ստիպմամբ. և նրանք այնպէս են անում՝ իբրև թէ խոհականութեամբ են այդ համոզմունքի եկել։ Նրանք շատ լաւ տեսնում են, որ հնազանդութիւնն օգտակար է իրենց, իսկ անհնազանդութիւնը՝ վնասակար՝ երբ դուք նկատում էք մէկը կամ միւսը։ Բայց որովհետև դուք նրանցից այնպիսի բան չէք պահանջում, որ անհաճոյ չլինի նրանց և որովհետև ստիպմամբ ուրիշի կամքը կատարելը միշտ ցաւալի բան է, այդ պատճառով նրանք իրենց սեպհական կամքը կատարելու ժամանակ թագնւում են՝ համոզուած լինելով, որ անարդար բան չեն անում. միայն թէ իրանց անհնազանդութիւնը չիմացուի. այդ դէպքում նրանք առաջուց մտադրւում են իրենց անարդարութիւնը խոստովանելու եթէ բռնուեն՝ աւելի ցաւալի հետևանքից երկիւղ կրելով։ Որովհետև պարտականութեան պատճառը հասկանալը նրանց հասակի գործը չէ, այդ պատճառով և աշխարհիս մէջ ոչ մի մարդ չի կարող այդ բանն իսկապէս նրանց հասկացնել։ Բայց պատժի երկիւղը, ներողութեան յոյսը, իրենց նեղ դրութիւնը, պատասխան գտնելու չփոթմունքը ստիպում է նրանց խոստովանել այն ամենը, ինչ որ ցանկանում էք. և երբ այդպիսով դուք նրանց ձանձրացնում կամ վախեցնում էք՝ կարծում էք թէ՝ համոզեցիք։

55. Հետևանքն ինչ է։ Դուք նրանց վրայ այնպիսի պարտականութիւն էք դնում, որ նրանք չեն զգում, դրանով դուք գրգռում էք նրանցը ձեր բռնութեան դէմ և ատելութիւն էք սերմանում նրանց մէջ՝ դէպի ձեզ. դուք նրանց սովորեցնում էք շողոքորթութիւն, կեղծաւորութիւն և ստութիւն, որով նրանք ձեզնից վարձատրութիւն են կորզում կամ թէ ձեր պատժից ազատւում։ Վերջապէս դուք սովորեցնում էք նրանց՝ միշտ մի որևէ գաղտնի չարժառիթ յայտնիով քողարկելու. ինքներդ միջոց էք տալիս նրանց չարունակ ձեզ խաբելու, իրենց բնաւորութեան ճանաչելն անկարելի դարձնելու և թէ ձեզ, թէ ուրիշներին յարմար դէպքում սին խօսքերով կերակրելու։ Ինձ կարող են ասել, որ օրէնքները, թէև նրանք խղճի համար պարտաւորիչ են, նոյնպէս ստիպողական միջոցներ են գործ դնում հասակաւորների համար։ Համաձայն եմ. բայց այդ հասակաւորներն ինչ են՝ եթէ ոչ դաստիարակութեան շնորհիւ փչացած երեխաներ։ Սակայն դրա առաջը պէտք է առնել։ Մանուկների համար պէտք է ոյժ գործ դնել, հասակաւորների համար խոհականութիւն. այս է բնական կարգը. իմաստունն օրէնքի կարիք չունի։

56. Սանիդ հետ վարուիր իր տարիքի համապատասխան կերպով։ Հենց սկզբից նրան իւր տեղը կանգնեցրու և այնպէս պինդ բռնիր, որ չմտածէ այդ տեղից հեռանալ։ Նա ձեր ամենակարևոր ուսմունքը կգործադրէ նախ քան գիտենալը՝ թէ ինչ է իմաստութիւնը։ Երբէք ոչինչ մի հրամայի նրան—ինչ էլ որ լինի։ Երբէք չպէտք է թոյլ տաս, որ նրա մէջ ծագէ այն միտքը՝ թէ դու ուզում ես բռնութիւն գործ դնել նրա վրայ։ Նա պէտք է իմանայ միայն, որ ինքը թոյլ է, իսկ դու ուժեղ, որ իւր դրութեամբ անհրաժեշտ կերպով քո ձեռքն է մատնուած. այդ պէտք է իմանայ, փորձէ և զգայ։ Նա շատ շուտ պէտք է իւր ամբարտաւան գլխի վրայ զգայ այն ծանր լուծը, որ բնութիւնը դրել է մարդու վրայ. վրայ զգայ այն ծանր լուծը, որ բնութիւնը դրել է մարդու վրայ. կարիքի ծանր լուծն է այդ, որի տակ պէտք է ընկճուի ամեն մի վերջ ունեցող էութիւն. Նա այդ կարիքը պէտք է տեսնէ իրերի և ոչ երբէք մարդուս քմահաճութեան *) մէջ։ Նրան սանձահարողը պէտք է լինի ոյժը և ոչ թէ մարդկային ակնածութիւնը։ Եթէ անհրաժեշտ է, որ նա որևէ բանից հեռու մնայ, մի թոյլ տայ այդ անելու՝ առանց բացատրութիւնների ու մեկնութիւնների։ Եթէ ուզում ես մի բան թոյլ տալ նրան, թոյլ տուր հենց առաջին խօսքի վրայ՝ առանց խնդրելու ու աղաչելու և մանաւանդ առանց պայմանների։ Համաձայնութիւնդ ուրախութեամբ տուր, իսկ մերժումդ՝ ակամայ. սակայն մերժումդ անդառնալի պէտք է լինի. ոչ մի թախանձանք չպէտք է գուլթդ շարժէ. քո ոչը պէտք է մի պղնձատեայ պարիսպ լինի, որի վրայ երեխան հինգ-վեց ան-

*) Պէտք է հաստատ իմանալ, որ երեխան ամեն մի կամք, որ հակառակ է իւր կամքին և որի պատճառն ինքը չէ հասկանում, իբրև քմահաճութիւն է ընդունում։ Սակայն նա երբէք չի հասկանում այն ամենի պատճառը, ինչ որ իւր երևակայութեան հակառակ է։

գամ իւր ուժերը սպառէ, որպէս զի այլ ևս չփորձէ կործանել:

57 Այդպիսով թէև երեխան իր ցանկացածը չի ստանայ՝ սակայն կսովորի համբերութեան, հանդարտութեան, հրաժարման և զոհութեան, որովհետև մարդկային բնաւորութեան յատուկ է՝ անփոփոխելին համբերութեամբ տանել, բայց ոչ ուրիշների չար կամքը կատարել: «Այլ ևս ոչինչ չկայ» պատասխանի դէմ երբէք ոչ մի երեխայ չի ընդիմայ. հակառակ դէպքում նա կարծում է, որ իրեն խաբում են: Այստեղ միջին ճանապարհ չկայ. կամ պէտք է բոլորովին չպահանջել, կամ թէ առաջուց նրան կատարեալ հնազանդութեան հարկադրել: Ամենավատ դաստիարակութիւնն այն է, երբ դուք թոյլ էք տալիս, որ նա իր և ձեր կամքի մէջ տարուբերուի և այդպիսով մի անդադրում վէճ առաջանայ ձեր մէջ՝ թէ ում խօսքը պէտք է անցնի. դրանից հարիւր անգամ աւելի լաւ կլինէր՝ եթէ միշտ նրա խօսքը կատարուէր:

58. Շատ տարօրինակ բան է, որ երեխաներին դաստիարակելու հենց սկզբի օրերից սկսած մինչև այսօր՝ մարդիկ ուրիշ միջոց չեն մտածել նրանց առաջնորդելու՝ բացի փառամոլութիւնից, նախանձից, ունայնասիրութիւնից, ընչաքաղցութիւնից, ստոր երկիւղից. սրանք բոլորն էլ ամենավտանգաւոր և մարմնի զարգացումից առաջ՝ հոգու համար ամենավնասակար մոլութիւններն են: Ամեն մի վաղահաս տեղեկութեան հետ, որ դուք ուզում էք նրա գլուխը մտցնել, նրա սրտի խորքում մի մոլութիւն էք սերմանում. անմիտ ուսուցիչները կարծում են թէ հրաշքներ են կատարում, երբ երեխաներին չարաբարոյ են դարձնում՝ ցանկանալով ցոյց տալ նրանց՝ թէ ինչ է բարութիւնը. և յետոյ ծանր շեշտով ասում են. այսպէս է մարդս—Այո, հարկաւ, այդպէս է ձեր ձևակերպած մարդը:

59. Բոլոր օժանդակ միջոցները գործ են դրուել, բացառութեամբ հենց այն միջոցի, որ միմիայն կարող է նպատակին հասցնել. այն է հասկացողութեամբ կանոնաւորուած ազատութիւնը: Ով չէ կարող միմիայն կարելիութեան և անկարելիութեան օրէնքներով երեխաներին հասցնել այնտեղ, ուր կամենում է, չպէտք է դաստիարակութեան գործով զբաղուի: Թէ մէկի և թէ միւսի սահմանը հաւասարապէս անծանօթ է երեխային, ուստի և կարելի է այդ սահմանն ըստ հաճոյքի ընդարձակել և փոքրացնել: Միայն կարեւորութեան տեսակէտը պէտք է ի նկատի ունենալ և միայն իրերի զօրութեամբ պէտք է սովորեցնել. որևէ մոլութիւն արմատ չի կարող ձգել երեխայի սրտի մէջ, որովհետև առանց ազդեցութեան՝ կրքերը երբէք չեն շարժւում:

60· Սանիդ երբէք մի ուսուցանի լոկ խօսքերով. նա պէտք է իւր ուսումը միմիայն փորձով ստանայ. ոչ մի կերպ մի պատժի

նրան, որովհետև նա դեռ ևս պատժի ենթակայ լինելու գիտակցութիւնը չունի. երբէք մի թոյլ տայ, որ ներողութիւն խնդրէ, որովհետև նա չի կարող քեզ վիրաւորել: Եւ որովհետև նրա գործողութիւնները զուրկ են բարոյական բնաւորութիւն ունենալուց, ուստի և նա բարոյապէս չատ բան չի կարող անել, որ արժանի լինէր պատժի կամ յանդիմանութեան:

61· Ես զգում եմ արդէն՝ թէ ինչ սարսափով պէտք է դատէ ուսուցիչն այս երեխայի մասին՝ ի նկատի ունենալով մեր սովորական երեխաներին. սակայն նա կսխալուի: Անդադար ճնշուած պահելով ձեր սաներին՝ զրկում էք նրանց աշխուժութիւնը. որչափ աւելի ճնշուած են զգում նրանք ձեր ներկայութեամբ, այնչափ աւելի սանձարձակ են ձեզնից հեռանալուց յետոյ. երբ կարող լինեն՝ նրանք կհատուցանեն ձեզ՝ ձեր բռնութեան փոխարէնը: Քաղաքի երկու դպրոցական աշակերտ աւելի մեծ վնասներ կառաջացնեն դաշտում և մարգագետնի վրայ, քան թէ մի ամբողջ գիւղի բոլոր պատանիները: Փակեցէք սենեակի մէջ քաղաքացի մի փոքրիկ պարոնի և մի գեղջուկ պատանի. դեռ երկրորդը տեղից չշարժուած, առաջինը սենեակի մէջ եղած բոլոր իրերը կթափթփի և կջարդի: Ինչու. որովհետև առաջինը շտապում է իր ազատութեան վայրկեանն անգամ ի չարը գործ դնել, այն ինչ միւսը, որ ապահով է իր մշտական ազատութեան համար, երբէք չէ ձգտում նոյնն անելու: Բայց և այնպէս այդ գեղջուկ երեխաները դեռ շատ հեռու են այն դրութիւնից, որ ես եմ ցանկանում ունենալ:

62· Իբրև անվիճելի սկզբունք պէտք է ընդունենք, որ բնութեան առաջին յոյզերը միշտ ճիշտ են լինում. մարդկային սրտի մէջ սկզբնական թիւրութիւններ չկան. նրա մէջ ոչ մի մոլութիւն անգամ չկայ, որի մասին կարելի չլինէր ապացուցանել՝ թէ ինչպէս և ինչ եղանակով է հաստատուել մարդուս սրտում: Մարդուն բնականապէս յատուկ միակ մոլութիւնը ինքն իրեն սիրելն է, կամ թէ անձնասիրութիւնն ընդարձակ մտքով առած: Այս անձնասիրութիւնն ինքն ըստ ինքեան կամ թէ մեզ հետ ունեցած յարաբերութեամբ լաւ է ու օգտակար. և որովհետև կարևոր յարաբերութիւն չունի ուրիշների հետ՝ ուստի այդ տեսակէտից անտարբեր է բնութեան վերաբերմամբ: Անձնասիրութիւնը լաւ կամ վատ կլինի միմիայն գործադրութեան և զանազան յարաբերութիւնների միջոցին: Մինչև անձնասիրութիւնը ղեկավարող խոհականութեան կազմակերպուիլը երեխան ոչինչ չպէտքէ անէ տեսածի կամ լսածի համեմատ. նա պէտք է անէ միմիայն այն, ինչ որ բնութիւնը պահանջում է նրանից և այդ դէպքում նա միշտ ճիշտ կվարուի:

63․ Դրանով չեմ ուզում ասել, թէ երեխան վնասներ չի տայ, իրան չի վիրաւորի կամ թէ իր ձեռքն ընկած թանկագին ամանեղէնը չի կոտրի։ Նա կարող է շատ չարիքների պատճառ լինել՝ առանց չարիք գործելու, որովհետև չար գործողութիւնը կախումն ունի վնասելու դիտաւորութիւնից, որ երեխան երբեք չունի։ Եթէ նա նոյն իսկ միայն մի անգամ այդպիսի դիտաւորութիւն ունենար՝ արդէն ամեն բան կորած կլինէր․ նա չար կլինէր՝ համարեա առանց փրկութեան։

64․ Շատ բան վատ է տեսնչանքի տեսակէտից, որ վատ չէ խոհականութեան նկատմամբ։ Թոյլ տուէք, որ երեխաներն իրենց փոքրիկ չարութիւններն անեն անարգել․ սակայն, հարկաւ, հեռու պահեցէք նրանցից ամեն թանկագին և կոտրուելու իրեղէնները։ Նրանց սենեակը լցրէք կարծր, դիմացկուն իրեղէններով՝ առանց հայելու, յախճապակու և չքեղութեան զարդերի։ Գոնէ իմ Էմիլը, որին գիւղում պէտք է կրթեմ, իր սենեակում ոչինչ այնպիսի բան չպէտք է ունենայ, որով զանազանուի գիւղական խրճթից։ Ի՞նչ միտք ունի երեխայի սենեակը շքեղ իրեղէններով զարդարել, քանի որ նա շատ քիչ ժամանակ պէտք է մնայ այդտեղ։ Բայց ո՛չ, երեխան ինքը կզարդարի իր սենեակը և մենք շուտով կտեսնենք՝ թէ ինչով։

65․ Եթէ երեխան, չնայելով քո նախազգուշութիւններին, մի որևէ անկարգութիւն է անում կամ թէ մի պէտքական իրեղէն կոտրում, մի՛ պատժի նրան քո անհոգութեան համար և մի կռուի նրա հետ․ նա ոչ մի յանդիմանական խօսք չպէտք է լսէ քեզնից․ մինչև անգամ մի՛ ցոյց տայ, որ նա տհաճութիւն է պատճառել քեզ․ այնպէս ձևացրու՝ իբրև թէ այդ իրն ինքն իրեն է կոտրուել․ ինքդ քեզ ասա՛, որ շատ բան արած կլինես, եթէ կարողանաս ոչինչ չանել։

66․ Այժմ լուսաբանեմ ամբողջ դաստիարակութեան ամենամեծ, ամենանշանաւոր և ամենաօգտակար օրէնքը, այսինքն, որ պէտք է ո՛չ թէ ժամանակ վաստակել, այլ՝ ժամանակ կորցնել։ Սովորական ուսուցիչը թող ների ինձ իմ այս տարօրինակութիւնը —պարադոքսը․— Եթէ մարդ ուզում է խորհրդածել, պէտք է տարօրինակութիւններ յայտնէ․ ով ինչ ուզում է՝ թող ասէ, ես աւելի լաւ եմ համարում տարօրինակութիւններ ասել, քան թէ նախապաշարուած լինել։ Երեխայի ծննդից մինչև տասներկու տարեկան հասակը ամենավտանգաւոր ժամանակն է․ Այս այն ժամանակամիջոցն է, երբ բողբոջում են սխալմունքն ու մոլութիւնները և մենք դեռ ևս ոչ մի միջոց չունենք այդ արմատախիլ անելու և երբ միջոց ենք ունենում, արմատներն արդէն այնքան խոր են

տարածուած լինում, որ այլ ևս ժամանակ չենք ունենում դուրս հանելու։ Եթէ երեխաները կարողանային մայրական գրկից մի թռիչքով հասնել խոհականութեան հասակը, այն ժամանակ միայն մեր տուած դաստիարակութիւնը յարմար կլինէր․ սակայն բնութեան ընթացքը բոլորովին դրա հակառակն է պահանջում։ Դուք պէտք է նրա հոգու հետ ոչինչ չսկսէիք՝ մինչև որ նա իր բոլոր ընդունակութիւնները զարգացնէր․ որովհետև կոյր լինելով՝ անկարելի է, որ նա զգայ իր առաջը բռնած լոյսը․ անկարելի է, որ նա գաղափարների անբաւ հարստութեան մէջ կարողանայ մի որոշ ճանապարհով գնալ։

67․ Առաջին դաստիարակութիւնն ուրեմն պէտք է զուտ բացասական լինի։ Նրա գործը պէտք է լինի՝ ո՛չ թէ առաքինութիւն կամ ճշմարտութիւն ուսուցանել, այլ սիրտը պահպանել մոլութիւնից և ոգին՝ սխալմունքից։ Եթէ դու կարողանայիր ոչինչ չանել և ոչինչ թոյլ չտալ անելու, եթէ կարողանայիր սանիկիդ առողջ և ուժեղ հասցնել մինչև տասներկու տարեկան հասակը, այնպէս որ չկարողանար իր աջ ձեռքը զանազանել ձախից, այն ժամանակ հենց քո տուած առաջին դասին նրա հոգեկան աչքերը կբացուէին խոհականութեան առաջ․ այդ դէպքում նա ոչ նախապաշարումներ, ոչ էլ սովորութիւններ կունենար և այդպիսով նրա մէջ ոչինչ այնպիսի բան չէր լինի, որ կարող լինէր վնասել քո ջանքերի ազդեցութեանը։ Շուտով նա ձեռքիդ տակ ամենախոհական մարդը կդառնայ և դու դաստիարակութեան մի հրաշք կատարած կլինես, եթէ ոչինչ չանելով սկսես գործդ։

68․ Իչխող սովորութեան հակառակն արա՛ և համարեա՛ թէ միշտ ճիշտ կլինի արածդ։ Եւ որովհետև երեխայից ուզում են ո՛չ թէ երեխայ, այլ գիտնական դարձնել, այդ պատճառով և հայրերն ու մայրերը շատ շուտ են սկսում կռուել, ուղղել, դատապարտել, շողոքորթել, սպառնալ, խոստանալ, հրահանգել և պատճառաբանել։ Դու ուրիշ կերպ վարուիր․ եղիր խոհական և մեծամտութիւն մի՛ անի սանիդ հետ, մանաւանդ ո՛չ այն նպատակով, որ նա սիրուն անուանէ այն, ինչ որ իրեն դուր չէ գալիս․ որովհետև երբ մենք անհաճոյ իրերի վերաբերմամբ միշտ խոհականութիւնն ենք մէջ բերում, վնասում ենք վերջինիս և վաղահաս կերպով ստորացնում նրա արժէքը երեխայի աչքում, որ դեռ ևս կարողութիւն չունի այդ հասկանալու։ Վարժիր նրա մարմինը, գործարանները, զգայարաններն և ուժերը, սակայն նրա հոգին թող պարապ մնայ, որչափ ժամանակ որ կարելի է։ Հեռու պահիր նրանից այն բոլոր կարծիքները, որոնք ոչ մի վճռով չեն կարող

ստուգուել: Աքսորի՛ր, հեռացրու օտար տպաւորութիւնները և
չարի առաջացումը խանգարելու համար՝ այնքան եռանդոտ մի
շտապիր, որ բարին առաջ բերես. որովհետև բարին այն ժա
մանակն է միայն բարի, երբ խոհականութեամբ է լուսաւորւում:
Ամեն մի յապաղումն իբրև առաւելութիւն նկատիր. շատ բան
ենք վաստակում, եթէ առանց ոչինչ կորցնելու նպատակին ենք
դիմում. թո՛յլ տուր, որ մանկութիւնը հասունանայ երեխաների
մէջ. Կարճ՝ եթէ որևէ տեղեկութիւն կարևոր է նրա համար, զգու-
շացիր նրան հաղորդելու այսօր, եթէ կարող ես այդ վաղուան թող-
նել՝ առանց վտանգի:

69. Այս մեթոդի արժէքը հաստատում է նաև երեխայի ա-
ռանձնայատուկ հոգեկան դրութեան դիտողութիւնը, որ պէտք է
ճիշտ իմանալ՝ որպէս զի գիտենանք թէ ներքին դաստիարակու-
թեան ո՛ր եղանակն աւելի յարմար է նրան: Իւրաքանչիւր երեխայի
հոգին իր յատուկ ձեն ունի, որի համեմատ էլ նա պէտք է առաջ-
նորդուի. այդ նպատակով եղած ջանքերի յաջողութեան համար
մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ նա այդ և ոչ թէ
մի ուրիշ ձևով առաջնորդուի: Եթէ խելացի ես՝ երկար ժամանակ
ականջ դիր բնութեանը և առաջին խօսքդ ասելուց առաջ՝ սանիդ
լաւ դիտիր. ամենից առաջ թոյլ տուր, որ նրա առանձնայատկու-
թեան սաղմը լիակատար ազատութեամբ կազմակերպուի, ոչ մի
բանում ճնշումն մի գործ դնի, որպէս զի նրան աւելի լաւ կարո-
ղանաս տեսնել իր ամբողջ էութեամբ: Կարծում ես թէ այդ ազա-
տութեան ժամանակը կորած կլինի նրա համար. հենց ճիշտ դրա
հակառակը՝ այդ ժամանակն ամենալաւ կերպով կգործադրուի,
որովհետև այսպիսով դու կսովորես՝ արժէքը կորցրած ժամանակի
և ոչ մի վայրկեանը կորցնել. մինչդեռ երբ դու սկսում ես գոր-
ծել՝ առանց գիտենալու թէ ինչ պէտք է գործես՝ անխորհուրդ
կերպով ես գործում. Այսպիսով սխալներ անելուց ազատ կլինես,
կհարկադրուես յետ դառնալու և նպատակից աւելի հեռացած
կլինես՝ քան թէ աւելի քիչ շտապէիր նոյն նպատակին հասնելու:
Այն ժլատների պէս մի անի, որոնք մեծ կորուստներ են ունենում՝
միմիայն կորուստից վախենալու պատճառով: Դաստիարակութեան
միջոցին շահիր ժամանակը, որ յետոյ հաստատուր եղած միջոցին
տոկոսներով յետ ստանաս: Խոհական բժիշկը հիւանդին առաջին
անգամ տեսնելուն պէս՝ թեթև կերպով անմիջապէս դեղեր չէ
գրում նրա համար, այլ նախ ուսումնասիրում է հիւանդի մարմնի
կազմութիւնը և ապա թէ կարգադրութիւն անում. նա ուշ է
սկսում իր գործողութիւնը, սակայն բժշկում է հիւանդին, մինչ-

դեռ չափազանց եռանդ ցոյց տուող բժիշկը՝ միւս աշխարհն է
ուղարկում նրան:

70. Սակայն ո՞րտեղ պէտք է պահենք այս երեխային, որ
դաստիարակենք ինչպէս մի անզգայ էութիւն, ինչպէս մի մեքե-
նական մարդ: Արդեօք լուսնի՞ թէ մի անմարդաբնակ կղզու վրայ
պէտք է ապրի նա: Պէ՞տք է արդեօք նրան բոլոր մարդկանցից
առանձնացնենք: Աշխարհիս վրայ նա շարունակ աչքի առաջ չի՞
ունենայ օտար մոլութիւնների օրինակը. Արդեօք նա իր հասա-
կակից ուրիշ երեխաներ չպէ՞տք է տեսնէ երբէք. Արդեօք չպէ՞տք
է տեսնէ իր ծնողներին, դրացիներին, ծծմօրը, իրեն պահող կնո-
ջը, իր ծառային, այո՛, նոյն իսկ իր դաստիարակին, որ նոյնպէս
հրեշտակ չէ:

71. Այս առարկութիւնը շատ նշանաւոր է և հիմնաւոր.
Բայց մի՞թէ ես պնդել եմ, որ բնական համապատասխանող դաս-
տիարակութիւնը հեշտ ձեռնարկութիւն է: Ո՜վ մարդիկ, մի՞թէ իմ
մեղն է, որ դուք ամեն լաւ բան դժուարացրել էք: Հարկաւ ես
զգում եմ այդ դժուարութիւնները. գուցէ և դրանք անյաղթելի
են: Բայց և այնպէս ճիշտ է, որ մինչև մի որոշ աստիճան արդէն
ծառայութիւն ենք արել, երբ հոգում ենք ծառայութիւն մատու-
ցանելու: Ես ցոյց եմ տալիս այն նպատակը, որ պէտք է ի նկատի
ունենալ. ես չեմ պնդում, որ կարելի է հասնել դրան, բայց հաս-
տատ կասեմ, որ նա՛ է ամենից լաւ գործն արել, ով ամենից շատ
է մօտեցել այդ նպատակին:

72. Մտածի՛ր, որ մարդ առաջ ինքն իրեն պէտք է մարդ
դարձրած լինի, որ յետոյ ձեռնարկէ ուրիշ մարդու կազմակեր-
պութեան. մարդ պէտք է ինքն իրեն մէջ ունենայ այն օրինակը,
որին պէտք է հետևի նոր կազմակերպուողը: Մինչ երեխան դեռ
տեղեկութիւններ չունի, մենք ժամանակ ունենք՝ նրա շուրջը
գտնուող իրերն այնպէս նախապատրաստելու, որ նրա առաջին
հայեացքներն ընկնեն միմիայն այն առարկաների վրայ, որոնց
տեսնելը յարմար ենք համարում. Այնպէս արա՛, որ ամեն մարդ
յարգէ քեզ. առաջ ամենքի սէրը ձեռք բեր, որպէս զի ամեն մարդ
աշխատէ քեզ հաճութեամբ ծառայել: Դու երեխային չես կարող
քո իշխանութեան ներքոյ ունենալ, եթէ չես տիրապետում նրա
բոլոր շրջակայքը. այդ յարգանքը երբէք բաւականաչափ չի լինի՝
եթէ հիմնուած չէ առաքինութեան պատկառանքի վրայ. Խնդիրն
այստեղ քսակը դատարկելուն և լիքը բուռով ոսկիներ ցրուելուն
չէ վերաբերում. ես երբէք չեմ տեսել, որ փողը մէկին սիրոյ ար-
ժանի դարձնէր: Մարդ պէտք է ոչ ժլատ և պինդ լինի, ոչ էլ
այն թշուառութիւնից դանդատուի, որ կարելի է թեթևացնել.

բայց եթէ դու դրամարկղներդ բանաս, սակայն սիրտդ չբանաս, ուրիշների սիրտը միշտ փակ կմնայ քեզ համար։ Քո թէ ժամանակը, թէ հոգացողութիւնը, թէ հակումները, նոյն իսկ քեզ՝ պէտք է նուիրես, որովհետև ինչ որ անես, ուրիշները միշտ կզգան, որ քո փողը չի կարող անձդ փոխարինել: Կան օրինակներ վշտակցութեան և բարեացակամութեան, որ աւելի մեծ ազդեցութիւն ունեն և իսկապէս աւելի օգտակար են քան բոլոր պարգևները։ Ո՛րքան թշուառներ և հիւանդներ աւելի սփոփանքի կարիք ունեն, քան ողորմութեան։ Ո՛րքան ճնշուածների համար պաշտպանութիւնն աւելի կարևոր է, քան փողը։ Կռուածներին հաշտեցրու, դատավարութիւնները խափանի՛ր. մանուկներին դէպ իրենց պարտականութիւնն առաջնորդիր, հայրերին դէպի ներողամտութիւն. նպաստիր երջանիկ ամուսնութիւններ գլուխ գալուն. խափանի՛ր հարստահարութիւնները. սանիդ ծնողների ազդեցութիւնը լիովին գործ դիր յօգուտ թոյլի, որին արդարադատութիւնը մերժել է և զօրեղը՝ գետնին հաւասարեցրել։ Ամբողջ աշխարհի առաջ հրապարակիր քեզ՝ իբրև պաշտպան դժբաղդների։ Եղի՛ր արդարադատ, մարդավայել, բարեգործ. Միայն ողորմութեամբ մի՛ գործի, այլ քրիստոնէական սիրով. գթասրտութեան գործերն աւելի շատ թշուառութիւնների առաջն են առնում, քան փողը. սիրի՛ր մերձաւորներիդ և նրանք էլ քեզ կսիրեն. ծառայի՛ր նրանց և նրանք էլ քեզ կծառայեն. եղի՛ր նրանց եղբայրը և նրանք քո զաւակները կլինեն։

73. Պատճառներից մէկն էլ այս է, թէ ինչո՛ւ Էմիլին գիւղումն եմ ուզում դաստիարակել՝ հեռու ծառաներից, որոնք իրենց տէրերից յետոյ ամենաապականուած մարդիկն են, հեռու քաղաքի վատթար բարքերից. քաղաքը շրջապատող և ծածկող փայլունութիւնը երիտասարդութեան համար մոլորեցնող և վարակիչ է, այն ինչ գիւղացիների չքողարկուած սխալները բոլոր իրենց կոշտութեամբ աւելի ընդունակ են մարդուն յետ մղելու, քան մոլորեցնելու՝ եթէ առանձին պատճառ չունինք նրանց նմանուելու։

74. Դաստիարակը գիւղում աւելի կարող է առանց արգելքի տնօրինել այն, ինչ որ պէտք է անցնի մանկան հետ. նրա կոչումը, խօսածները և նրա օրինակն այնպիսի յարգանքի կարժանանան, որ քաղաքում կարելի չէ ձեռք բերել. ինչպէս որ դաստիարակն ամեն մարդու համար օգտակար կլինի, այնպէս էլ ամեն մարդ կաշխատի արժանի լինել նրա շնորհակալութեանը, նրանից յարգուել և սանի վերաբերմամբ իրեն այնպէս պահել, ինչպէս որ ուսուցիչն իրապէս կկամենայ. և եթէ մարդ մոլութիւնից ձեռք չի վերցնի, գոնէ գայթակղութիւնից կխուսափի. այս է այն բոլորը,

ինչ որ հարկաւոր է մեր նպատակի համար։

75. Դադարեցէք ձեր սեպհական սխալների համար ուրիշներին պատասխանատու ճանաչելուց. երեխաների տեսած վատն աւելի քիչ է փչացնում նրանց, քան այն, ինչ որ դուք էք նրանց սովորեցնում։ Ձեր մշտական քարոզներով, կշտամբանքներով, խոստովանութիւններով նրանց տալիս էք մի միտք, որ նրանք բարի լինեն, բայց միևնոյն ժամանակ տալիս էք քսան ուրիշ մտքեր, որ ոչինչ արժէք չունին. բոլորովին գրաւուած լինելով ձեր մտքերով, չէք տեսնում այն ազդեցութիւնը, որ անում էք նրանց մտքերի վրայ։ Մի՞թէ կարծում էք, որ խօսքերի այն մեծ հեղեղի մէջ, որով չարունակ ողողում էք նրանց, չեն գտնի ոչ մէկը, որ սխալ ըմբռնեն։ Մի՞թէ կարծում էք, որ նրանք ձեր խառնաշփոթ բացատրութիւններն իրենց տեսակէտով չեն ըմբռնի. ձեր սեպհական համակարգութիւնը կառուցանելու համար նրանց մէջ ոչինչ չէք գտնի և նրանք յարմար դէպքում ձեր դէմ կլինին։

76. Լսեցէք միայն մի անգամ այդպէս ուսած մի փոքր տղայի, թողէք, որ նա սրտի ուզածին պէս խօսէ, հարցնէ և ցնդաբանէ և դուք կզարմանաք թէ ինչ տարօրինակ յեղաշրջութեան են ենթարկուել նրա հոգու մէջ ձեր բացատրութիւնները. Նա ամեն բան շփոթում, յեղաշրջում է, համբերութիւնից հանում և երբեմն չնախատեսնուած առարկութիւններով վհատեցնում ձեզ։ Նա այնտեղն է հասցնում, որ կամ դուք էք լռում, կամ նրան լռեցնում. և ինչ պէտք է մտածէ նա այն մարդու լռելու մասին, որ առհասարակ սիրով է խօսում. Եթէ երեխան երբևիցէ այդ առաւելութիւնն ունենայ և ինքն զգայ, այն ժամանակ դաստիարակութիւնն այլ ևս գոյութիւն չի կարող ունենալ. այդ վայրկեանին ամեն բան կվերջանայ. երեխան այլ ևս չի թոյլ տայ, որ դուք դաստիարակէք նրան, այլ միայն կհակաճառէ ձեզ։

77. Նրանդուն ուսուցիչնե՛ր, եղէք պարզ, խոհեմ, չափաւոր. միայն այն ժամանակ շտապով ձեռնարկեցէք, երբ պէտք կլինի ուրիշների ազդեցութիւնը հեռու պահել. ես կրկնում եմ չարունակ. յետաձգեցէք, եթէ կարելի է, մի լաւ ուսուցումն, որպէս զի վատը չհաղորդէք. Ցանկանալով անմեղութեանը բարւոյ և չարի ճանաչողութիւնը տալ՝ զգուշացէք մոլորեցնողի պաշտօնը կատարել. և որովհետև դուք չէք կարող այնպէս անել, որ երեխան դուրսը օրինակներով կրթուի, ձեր բոլոր հսկողութիւնը սահմանափակեցէք նրանով, որ այդ օրինակները նրա հոգու մէջ տպաւորուին նրան յարմար պատկերով։

78. Երեխայի ներկայութեամբ տեղի ունեցած կռիւների փո-

թորկալի արտայայտութիւնները մեծ ներգործութիւն են ունենում նրա վրայ, որովհետև զգայարաններին մատչելի նշաններով են տեղի ունենում. երեխաներն ակամայ ուշադրութիւն են դարձնում այդ բանի վրայ։ Օրինակ բարկութիւնն այնպէս աղմկալի արտայայտութիւններ ունի, որ անկարելի է անուշադիր թողնել, երբ բաւականին մօտ ենք լինում։ Կարիք չկայ հարց տալու, թէ արդեօք մանկավարժի համար լաւ առիթ չէ այս մասին մի գեղեցիկ ճառ ասել։ Ոչ, գեղեցիկ ճառերն աւելորդ են, ոչ մի խօսք անգամ կարիք չկայ ասելու։ Թող երեխան մօտենայ. զարմացած այդ տեսարանի վրայ, նա հարցեր կառաջարկէ քեզ։ Պատասխանը պարզ է և տրւում է ինքն իրեն՝ նրա զգայարանները գրաւեցնող իրերից. Նա տեսնում է մի կարմրած դէմք, փայլատակող աչքեր, սպառնացող ծամածռութիւններ, լսում է աղաղակ. այս բոլորը նշան է, որ մարմինը հանգիստ դրութեան մէջ չէ։ Ասա նրան հանդարտ, անպաճոյճ ու պարզ կերպով. այս խեղճ մարդը հիւանդ է, ջերմ ունի։ Այդ առիթով կարող ես, կարճ խօսքերով, գաղափար տալ նրան հիւանդութիւնների և դրանց ներգործութիւնների մասին, որովհետև դրանք էլ կապ ունին բնութեան հետ։

79. Այս մտապատկերի հիման վրայ, որ կեղծ չէ, արդեօք երեխան կանխաւ տհաճութիւն չի՞ զգայ՝ իր կրքերի չափազանցութիւններին ենթարկուելու, որ իբրև հիւանդութիւն կնկատէ. և միթէ կարծում ես, որ այսպիսի յարմար դէպքում պարզ ըմբռնումն աւելի փրկարար տպաւորութիւն չի՞ անի քան ամենաձանձրալի բարոյախօսութիւնը։ Բայց այս ըմբռնման հետեւանքները ապագայում պէտք է տեսնես. այժմ իրաւունք ունիս, եթէ մի վատ դէպք պատահի, կամակոր երեխային իբրև հիւանդ նկատելու, իր սենեակում փակելու կամ եթէ կարիք կայ, նոյն իսկ անկողնում քիչ կերակուր տալով պահելու, որպէս զի երկիւղ ներշնչես նրան՝ սաղմնաւորուող մոլութիւնների նկատմամբ. Նա պէտք է այդ մոլութիւններն ատելու արժանի և սարսափելի բան համարէ, բայց միևնոյն ժամանակ քո գործ դրած խստութիւնը, որ ստիպուած ես գուցէ գործ դնել՝ նրան բուժելու համար, իբրև պատիժ չպէտք է նկատէ։ Եւ եթէ դու էլ յուզման վայրկեանում կորցնես պաղարիւնութիւնդ և չափաւորութիւնդ, որ վարժութեամբ պէտք է ձեռք բերես, մի՛ աշխատի երեխայի առաջ սխալներդ քողարկել, այլ ասա՛ բացայայտ կերպով, սիրալիր յանդիմանութեամբ. ցաւակս, ինձ հիւանդացրիր։

80. Սակայն և այնպէս կարևոր հանգամանք է, որ բոլոր մանկական արտայայտութիւնները, որոնք դիպուածով կարող են առաջանալ, նրա ներկայութեամբ երբէք խօսակցութեան նիւթ

չպէտք է դառնան կամ թէ այնպէս չպէտք է առաջ բերուեն, որ երեխան նկատէ։ Չմտածուած մի ծիծաղը կարող է կէս տարուայ աշխատանքը փչացնել և ամբողջ կեանքի ընթացքում այլ ևս անուղղելի անարդարութիւն պատճառել։ Ես յաճախ պէտք է կրկնեմ. երեխային իշխելու համար՝ մարդ առաջ պէտք է ինքն իրեն իշխէ։ Ես երևակայում եմ՝ թէ ինչպէս փոքրիկ Էմիլը դրացի երկու կանանց կռուի ժամանակ, ամենաթունդ վայրկեանին կմօտենայ աւելի կատաղի կռուողին և ցաւակցական ձայնով կասէ նրան. սիրելիս, դու հիւանդ ես, շատ ցաւում եմ։—Յանկարծակի ասած այս խօսքն անկասկած առանց ազդեցութեան չի մնայ ներկայ եղողների և գուցէ նոյն իսկ կռուող անհատների համար։ Առանց ծիծաղելու, առանց հետը կռուելու, առանց գովելու, դուրս կտանեմ նրան իւր ցանկութեամբ կամ հակառակ նրա կամքի, առաջ քան նա կարողանայ զգալ այդ ազդեցութիւնը, կամ առաւել սակաւ, առաջ քան կարողանայ մտածել այդ մասին. և կըշտապեմ ամեն միջոց գործ դնել, որ կարող լինի ուրիշ մտքերով զբաղուել։

81. Իմ նպատակը չէ ամեն տեսակ մանրամասնութիւնների մէջ մտնել, այլ միայն ընդհանուր սկզբունքներ առաջ բերել և աւելի դժուար դէպքերում օրինակներ տալ։ Ես անկարելի եմ համարում, որ ընկերութեան մէջ երեխային մինչև տասներկու տարեկան հասակը կարողանանք հասցնել՝ առանց նրան որև է գաղափար տալու մարդկանց միմեանց հետ ունեցած յարաբերութեան և մարդկային գործողութիւնների բարոյական արժէքի մասին. Միայն պէտք է ուշադրութիւն դարձնել, որ այս կարևոր գաղափարներն ըստ կարելոյն ուշ տրուին նրանց և եթէ կարելի չէ անտես առնել, միայն վայրկենական նպատակով բաւականանանք, որպէս զի երեխան ինքն իրեն ամեն բանի տէր չճանաչէ և ուրիշներին չարութիւն չանէ՝ առանց այդ մասին մտածելու կամ գիտենալու։ Կան քնքոյշ և հանդարտ սիրտ ունեցող մանուկներ, որոնց կարելի է, անվտանգ, իրենց սկզբնական անմեղութեամբ, առաջ տանել, բայց կան նաև անզուսպ բնաւորութիւններ, որոնց մէջ սկզբից վայրենութիւն է երեւում և որոնց շուտով պէտք է մարդ դարձնել, որպէս զի շղթայակապ չլինին։

82. Մեր առաջին պարտականութիւնները հենց մեզ են վերաբերում. մեր սկզբնական զգայութիւնները նոյն իսկ մեզնով են սահմանափակւում. մեր բոլոր բնական յոյզերը վերաբերում են անմիջապէս մեր գոյութեան և բարեկեցութեան։ Այսպիսով սկզբնական արդարադատութեան զգացմունքը զարգանում է մեր՝ դէպի ուրիշները տածած արդարադատութեան զգացմունքի հի-

ման վրայ. մեր սովորական դաստիարակութեան տեսակների հակարևնական լինելու մի յատկութիւնն է, որ երեխաներին սովորեցնում ենք իրենց պարտականութիւնները, բայց ո՛չ երբեք իրաւունքները. այն չենք ասում նրանց, ինչ որ կարևոր է, այլ այն, ինչ որ նրանք չեն հասկանում և ոչ մի արժէք չէ կարող ունենալ նրանց համար:

83. Եթէ ես երեխային այն եղանակով դաստիարակելու լինէի, ինչպէս վերը յիշեցի, ինքս ինձ կասէի. երեխան ձեռք է բարձրացնում ոչ թէ անձանց, *) այլ իրերի վրայ. շուտով նա փորձով սովորում է յարգել նրանց, որոնք հասակով և ուժով գերազանցում են իրեն. բայց իրերն իրենք իրենց չեն պաշտպանում: Երեխային սովորեցնելու առաջին գաղափարը ո՛չ թէ ազատութեան, այլ սեպհականութեան գաղափարը պէտք է լինի. այդ գաղափարը հասկանալու համար երեխան պէտք է սեպհական մի բան ունենայ: Սեպհականութիւն չեն կազմում նրա ունեցած զգեստները, անօթները, խաղալիքը, որովհետև թէև նա իշխանութիւն ունի այդ իրերի վրայ, բայց չգիտէ՝ թէ ինչո՞ւ և ինչ կերպ է ստացել: Շատ բան չի արտայայտում նաև այն միտքը՝ թէ այդ իրերը նրանն են, որովհետև նրան են տուել. մէկին մի բան տալու համար՝ պէտք է առաջ ունենալ իբրև սեպհականութիւն. այսպիսով ուրեմն սեպհականութեան գաղափարը նրանից առաջ գոյութիւն ունի, բայց մենք ուզում ենք՝ հենց սեպհականութեան գաղափարը պարզել նրա համար մի կողմը թողնելով և այն, որ ընծայելը մի համաձայնութիւն, դաշն է, բայց երեխան դեռ չի կարող իմանալ՝ թէ ինչ բան է համաձայնութիւնը **): Ես խնդրում եմ, որ այս և ուրիշ հազարաւոր օրինակ-

---

*) Երբէք չպէտք է թոյլ տալ, որ երեխան հասակաւորների վրայ ձեռք բարձրացնէ՝ իբրև իրենից ստոր գտնուող կամ իրեն հաւասար անձանց: Եթէ նա մէկին լրջօրէն խփել համարձակուի, նոյն իսկ ծառային, այո, նոյն իսկ դահճին, պէտք է այնպէս անել, որ նա իւր տուած հարուածները տոկոսով յետ ստանայ և այնուհետև այլ ևս խփելու ցանկութիւն չունենայ: Ես տեսել եմ՝ թէ ինչպէս կարճամիտ դաստիարակչուհիներն երեխայի կամակորութիւնն աւելի գրգռում են, նրանց սիրտ են տալիս խփելու և թոյլ տալիս, որ նոյն իսկ իրենց խփէ և յետոյ ծիծաղում են նրա անզօր հարուածների վրայ, առանց մտածելու, որ փոքր արիւնարբուի գիտաւորութեամբ հասցրած ամեն մի հարուածը մահացու է և որ փոքրիկ կռուողը մեծ մարդասպան կդառնայ:

**) Այդ պատճառով երեխաները մեծ մասամբ ուզում են յետ ստանալ այն, ինչ որ ընծայել են ուրիշին և լալիս են, երբ յետ չեն ստանում: Այս բանն այլ ևս չի պատահում, երբ նրանք ճիշտ հասկանում են՝ թէ ինչ է նշանակում ընծայել. միայն յետոյ շատ զգոյշ են ընծայելում:

ներից նկատէք՝ թէ ինչպէս երեխաներին հիանալի կերպով ուսուցած ենք կարծում, երբ նրանց գլուխը լցնում ենք նրանց համար անըմբռնելի միտք ունեցող բառերով:

84. Ուրեմն խնդիրը վերաբերում է սեպհականութեան ծագմանը, որովհետև այդտեղից պէտք է առաջացնել դրա սկզբնական գաղափարը: Գիւղումն ապրող երեխան արդէն որոշ ճանաչողութիւններ ձեռք բերած կլինի գիւղական աշխատանքի մասին. այդ բանի համար բաւական են նրա աչքերն ու ազատ ժամանակը՝ երկուսն էլ նրա տրամադրութեան տակ են գտնւում: Ստեղծել կամենալը, նմանուելը, առաջացնելը, իւր ուժի և գործունէութեան ապացոյցներ տալը՝ յատուկ են ամեն հասակին, մանաւանդ երեխային: Եթէ երեխան միայն երկու անգամ տեսնի, որ այգին վարում, բանջարեղէն են ցանում, որ բանջարեղէնը բուսնում և աճում է, ինքն էլ կցանկանայ այգում աշխատել:

85. Վերն առաջ բերած սկզբունքների հիման վրայ երեխայի այդ ցանկութեանը չեմ հակառակուի. ընդհակառակը, կնպաստեմ, կաշխատեմ նրա հետ միասին՝ ո՛չ թէ նրան, այլ ինձ զուարճութիւն պատճառելու համար. գոնէ նա այնպէս կհասկանայ, որ ես նրա այգեպանն եմ. քանի նա ուրիշ միջակներ չունի, ես կհերկեմ նրա համար հողը. նա այդ հողի սեպհականատէրն է դառնում, երբ ցանում է մի լոբի և հարկաւ այս սեպհականութիւնն աւելի սուրբ է և յարգանքի արժանի, քան հարաւային Ամերիկայի տիրապետութիւնը իսպանական թագաւորի անունով, որ տեղի ունեցաւ Նունեց Բալբոայի ձեռքով, երբ սա իսպանական դրօշը կանգնեց Հարաւային Ովկիանոսի ափերին:

86. Այնուհետև երեխան ամեն օր ջրում է լոբին և անհուն ուրախութեամբ դիտում նրա աճումը: Ես աւելի ոյժ եմ տալիս նրա ուրախութեանը՝ ասելով. այժմ քեզ է պատկանում այդ—և բացատրելով «պատկանել» գաղափարը, աշխատում եմ ըմբռնել տալ նրան, որ իւր ժամանակը, աշխատանքը, ջանքը, այո, իւր անձը գործ է դրել և այդ պատճառով հողի մէջ եղածը կարող է իւրը համարել, ինչպէս որ իւր ձեռքը կարող է ազատել ուրիշի ձեռքից, երբ վերջինս ցանկանայ ուժով բռնել:

87. Մի գեղեցիկ օր, երբ երեխան ցնցուղը ձեռքին գալիս է լոբին ջրելու, ցաւալի տեսարան է ներկայանում նրա աչքին. բոլոր լոբիները գջլտուած, ամբողջ գետինը տակն ու վրայ է արած, ցանած տեղը հազիւ է որոշւում: Նա աղաղակում է. ո՛հ, ինչ է դարձել իմ ձեռքի աշխատանքը, իմ հոգացողութեան, իմ քրտինքի քաղցր պտուղը: Ո՞վ է յափշտակել իմ սեպհականութիւնը, ո՞վ է վերցրել իմ լոբիները: Երիտասարդ սիրտը խռո-

տում է և անարդարութեան առաջին զգացմունքը Թախծալի դառնութիւն է լցնում նրա հոգու մէջ· նրա արտասուքները հեղեղի նման են հոսում. անմխիթար երեխան օդը լցնում է հեկեկանքով ու լացով: Նրա վշտին և բարկութեանը պէտք է զգայակցել· պէտքէ որոնել, հարցնել և հետազօտել եղելութեան պատճառները· վերջապէս երեւան է գալիս, որ այգեպանն է այդ խաղը խաղացել· կանչում են նրան:

88· Այգեպանը հենց որ լսում է գանգատի պատճառը, մեզնից աւելի բարձրաձայն է բողոքում և ասում. «Ուրեմն դո՛ւք էք իմ աշխատանքը փչացրել· այդտեղ ես մալթայի սեխի սերմ էի ցանել· այդ սերմերը շատ Թանկագին էին և ես յոյս ունէի շուտով դրանց հասած պտղով ձեզ հիւրասիրել· Այժմ ձեր ողորմելի լոբու պատճառով իմ սեխը արմատից դուրս էք գցել և ես այլ ես այդ տեսակ սերմ չունիմ: Ձեր տուած վնասն էլ չի կարելի ուղղել և դուք ինքներդ զրկել էք ձեզ ընտիր սեխ վայելելու զուարճութիւնից»:

Ժան Ժակ

Ներողութիւն ենք խնդրում, խե՛ղճ Ռոբերտ, դու ջանք ու աշխատանք էիր Թափել· ես զգում եմ, որ անարդար ենք վարուել քո գործը ոչնչացնելով, բայց մենք Մալթայից ուրիշ սերմ բերել կտանք քեզ համար և ոչ մի տեղ հողը չենք մշակի այլ ես, մինչև որ չիմանանք՝ Թէ արդեօք մի ուրիշը մեզնից առաջ իրեն համար չէ՞ վերցրել այդ հողի կտորը:

Ռոբերտ

Վատ չէր լինի· բայց այդ դէպքում իսկոյն ձեռքերդ պէտք է խաչէք, որովհետև այլ ես ոչ մի տեղ անմշակ հող չկայ: Ես մշակում եմ այն հողը, որ հայրս է ձեռք բերել· այդպէս են անում ուրիշներն էլ· ձեր տեսած շրջակայ բոլոր հողերը վաղուց արդէն տէր ունեն:

Էմիլ

Ուրեմն սեխի սերմերը յաճախ են կորչում, պարոն Ռոբերտ:

Ռոբերտ

Ներողութիւն, երիտասարդ պարոն, ձեզ նման անխոհեմ պատանիներ շատ յաճախ չեն պատահում: Ոչ ոք ձեռք չէ տալիս իւր դրացու այգուն. ամեն մարդ յարգում է ուրիշի աշխատանքը, որպէս զի իւրն էլ ապահով մնայ:

Էմիլ

Բայց ես այգի չունեմ:

Ռոբերտ

Ի՞նչ իմ գործն է· եթէ դուք իմ այգին փչացնէք, այլ ես Թոյլ չեմ տայ, որ այնտեղ զբօսնէք, որովհետև, ինչպէս տեսնում էք, ես չեմ ուզում, որ իմ աշխատանքն իզուր կորչի:

Ժան Ժակ

Արդեօք չի՞ կարելի, բարի Ռոբերտ, հաշտութիւն առաջարկել· Թողէք, որ ես և իմ փոքրիկ բարեկամը ձեր այգու մի անկիւնը մշակենք և դրա փոխարէն մեր ստացած արդիւնքի կէսը ձեզ տանք:

Ռոբերտ

Առանց արդիւնք ստանալու էլ համաձայն եմ, բայց իմացէք, որ եթէ ձեռք տաք իմ սեխերին, ձեր բոլոր լոբիները կկտրեմ:—

89· Երեխաներին հիմնական սկզբունքներն ըմբռնել տալու այս փորձից կարելի է տեսնել, Թէ ինչպէս է բնական եղանակով առաջանում սեփականութեան գաղափարը, երբ մարդ աշխատանքի միջոցով տիրապետելու իրաւունք է ձեռք բերում: Այս բացայայտ, կարճ ու պարզ է և երեխայի համար միշտ հասկանալի: Այդտեղից մինչև սեփականութեան իրաւունքն ու փոխանակութիւնը միայն մի քայլ է, որից յետոյ պէտք է իսկոյն կանգ առնել:

90· Այստեղ էլ երևում է, որ իմ երկու էջ տեղ բռնող բացատրութիւնը փորձով գուցէ մի տարուայ գործադրելու բան է, որովհետև բարոյական գաղափարները բացատրելիս չի կարելի շատ դանդաղ առաջ գնալ և ամեն մի քայլափոխին հաստատուն հող ունենալու համար՝ երկչոտ չպէտք է լինել: Երիտասարդ ուսուցիչներ, խնդրում եմ, մտածեցէք այս օրինակի մասին և իմացէք, որ ձեր հրահանգները պէտք է աւելի գործով, քան խօսքով հաղորդէք, որովհետև երեխաները հեշտութեամբ մոռանում են իրենց ասածներն ու լսածները, բայց ո՛չ արածներն ու փորձածները:

91· Նմանօրինակ հրահանգները, ինչպէս արդէն ասացինք, պէտք է տրուին—աւելի վաղ կամ ուշ, նայելով Թէ մանկան աւելի հանդարտ կամ փոԹորկալի մտածողութեան եղանակը վաղ կամ ուշ է դրա կարիքն զգում. դրանց բացայայտ օգուտն իսկոյն աչքի է ընկնում, բայց որպէս զի դժուար բաներում ոչինչ անտես չառնենք, մի օրինակ էլ առաջ բերենք:

92· Քո կամակոր երեխան փչացնում է այն ամենը, ինչ որ

ձեռքն է ընկնում. բայց վրան մի բարկանայ, հեռացրու նրա մօտից այն իրերը, որ կարող է փչացնել։ Երբ կոտրում է իւր գործածած անօթները, իսկոյն մի ուրիշը մի տայ. թող, որ զգայ զրկանքի տագնապը։ Երբ կոտրում է իւր սենեակի լուսամուտը, թող որ քամին գիշեր ցերեկ ներս փչէ և նրա մրսելու մասին մի մտածի, որովհետև աւելի լաւ է, որ երեխան մրսի, քան թէ խենթանայ։ Երբէք մի գանգատուի այն անյարմարութիւնների մասին, որ պատճառում է քեզ, այլ աշխատիր, որ նա ինքն էլ զգայ այդ։ Վերջը պէտք է լուսամուտի ապակին կցել տալ, բայց դարձեալ առանց մի խօսք ասելու. եթէ նա կրկին կոտրէ, այն ժամանակ ձեռք առած միջոցդ փոխիր. ասա նրան սառը կերպով, բայց առանց յուզուելու. լուսամուտն ինձ է պատկանում և իմ կարգադրութեամբ էք դուք այստեղ բնակւում. այժմ սենեակն ինձ հարկաւոր է։ Յետոյ երեխային մի մութը տեղ փակիր, որտեղ լուսամուտ չկայ։ Այդ բանն անսպասելի լինելով նրա համար, նա կսկսի աղաղակել և կատաղել. թող ոչ ոք ուշադրութիւն չդարձնի։ Նա շուտով կյօգնի, կսկսի գանգատուել և հեկեկալ։ Ներս ուղարկուած ծառային փոքրիկ խռովարարը կխնդրէ, որ դուրս հանէ իրեն սենեակից։ Այդ խնդիրը չկատարելու համար առանց պատճառ որոնելու, ծառան պատասխանում է. ես էլ կուզէի, որ իմ սենեակի ապակիներն անվնաս մնային—և գնում է, Վերջապէս, երբ երեխան բաւական ժամանակ - այնքան երկար, որ ձանձրանայ և խրատուի—մնում է բանտարկուած, մէկը սովորեցնում է նրան, որ հաշտութիւն առաջարկէ քեզ, որի հիման վրայ դու կրկին ազատութիւն տաս նրան, իսկ նա էլ խոստանայ այլ ևս ապակիները չկոտրել։ Երեխան սիրով ընդունում է այդ առաջարկութիւնը և խնդրում քեզ, միջնորդի միջոցով, որ իւր մօտ գնաս. դու գնում, լսում ես նրա առաջարկութիւնը և իսկոյն համաձայնում ես հետևեալ խօսքերն ասելով. ասածդ խելացի է և երկուսիս համար էլ ձեռնտու. ինչո՞ւ աւելի շուտ չմտածեցիր այդ գեղեցիկ բանը։ Յետոյ ուրախութեամբ կգրկես նրան, իւր խոստումը կատարելու հաւաստիացումն կամ երդումն չես պահանջի և իսկոյն կտանես իր սենեակը. սակայն այս համաձայնութիւնը դու սուրբ և անխախտ կպահես, ինչպէս երդմամբ հաստատուած բան։ Արդեօք ինչ գաղափար կկազմի երեխան այս դէպքի առիթով՝ խոստման սրբութեան և նրա օգուտների մասին։ Չեմ կարող հաւատալ, որ երկրիս վրայ մի երեխայ գտնուի, եթէ արդէն փչացած չէ, որ այսպիսի գործողութիւնից յետոյ նորից հակառակուի և դիտմամբ դարձեալ լուսամուտի ապակիները

ջարդի *)։ Պէտք է ուշադրութեան առնել՝ թէ ինչպէս է այս բոլորը մէկը միւսից առաջանում։ Երբ փոքրիկ չարաճճին ծակ էր փորում լոբի ցանելու համար, հարկաւ չէր մտածում, որ իւր համար բանտ է դուրս փորում, որի մէջ շուտով պէտք է ընկնէր իր գիտութեան շնորհիւ։

93. Այսպիսով մենք կհասնէինք բարոյական աշխարհին և յանցանքի դռները կբանայինք։ Պայմանների և պարտաւորութիւնների հետ գալիս են նաև խաբեբայութիւնն ու սուտը։ Երբ արդէն կարելի է անել այն, ինչ ո՛չ անելու իրաւունք չունինք, կկամենանք ծածկել և այն, ինչ որ չպէտք է անէինք։ Եթէ խոստանում ենք մի որև է օգտի համար, կարող ենք և աւելի մեծ շահի համար մեր խոստացածը չկատարել. խնդիրը միայն նրանումն է, որ անպատիժ կերպով խոստմնազանց լինենք։ Ելքը բնական է. պէտք է թագնուել և ստել։ Այսպիսով եթէ չկարողացանք յանցանքի առաջն առնել, արդէն առիթ ունինք պատժելու. այսպէս մարդկային կեանքի մոլորութիւնների հետ սկսւում է նաև նրա թշուառութիւնը։

94. Արդէն բաւականին հասկանալի կերպով արտայայտեցի, որ պատիժն իբրև պատիժ չպէտք է տալ երեխաներին, այլ նրանք պատիժը պէտք է նկատեն իբրև բնական հետևանք իրենց վատ գործողութիւնների։ Դրա համեմատ չպէտք է ճառեր խօսել ստութեան դէմ և իսկապէս մէկ ստի համար չպէտք է նրանց պատժել, այլ պէտք է այնպէս կարգադրել, որ ստութեան բոլոր վատ ազդեցութիւնները հաւաքուին նրանց գլխին, եթէ ստել են— ինչպէս օրինակ, երբ մէկին բոլորովին չեն հաւատում, նոյն իսկ եթէ ճշմարտութիւնն է ասում, կամ երբ մէկը դատապարտւում

---

*) Եթէ խոստումնքը կատարելու պարտականութիւնն էլ երեխայի հոգու մէջ չարմատանար օգտի գերակշռելով, շուտով արտայայտուող ներքին զգացմունքն այդ իբրև խղճի պարտականութիւն կթելադրէր, ինչպէս մի բնածին սկզբունք, որ զարգանալու համար միայն ճանաչողութիւնների պէտք ունի, որոնցով և գործադրւում է։ Այս յատկութիւնը մարդկային ձեռքի արդիւնք չէ, այլ ամեն արդարադատութեան սկզբնապատճառն է մեր սրտի մէջ դրոշմել։ Եթէ վերացնենք հաշտութեան հիմնական օրէնքը և դրանից առաջացած պարտաւորութիւնը, այն ժամանակ մարդկային հասարակութեան մէջ ամեն բան խաբուսիկ և ընդունայն կլինի։ Ով միայն իւր օգտի համար է խոստումը կատարում, հազիւ թէ աւելի պարտաւորուած լինի, քան ոչինչ չխոստացողը կամ եթէ մէկն իսկոյն խոստմնազանց չէ լինում, առ առաւելն անում է այնպէս, ինչպէս խաղացողն իրեն ձեռնտու միջոցներն իսկոյն չէ գործադրում, որովհետև աւելի յաջող առիթի է սպասում։ Այս սկզբունքը շատ մեծ նշանակութիւն ունի և հասուն խորհրդածութեան արժանի է, որովհետև այստեղ առաջին անգամն է մարդ ինքն իրեն հակասում։

է իւր չգործած անարդարութեան համար։ Բայց դեռ պէտք է բացատրել, թէ ինչ նշանակութիւն ունի ստելը երեխաների համար։

95. Երկու տեսակ ստել կայ. իրական սուտը, որ վերաբերում է անցեալին, և մտաւոր սուտը, որ ապագային է վերաբերում: Առաջինը տեղի է ունենում, երբ մեր գործածը հերքում ենք, կամ թէ պնդում ենք, որ արել ենք այն, ինչ որ չենք արել և ընդհանրապէս երբ գիտակցաբար իսկական իրողութեան հակառակն ենք խօսում։ Միւսը տեղի է ունենում, երբ մարդ խոստանում է, ինչ որ կատարելու դիտաւորութիւն չունի և ընդհանրապէս, երբ մեր իսկական դիտաւորութեան հակառակն ենք արտայայտում։ Այս երկու ստերը կարող են երբեմն միևնոյնի մէջ միացած լինել. սակայն այստեղ ես դրանց դիտողութեան եմ ենթարկում իբրև տարբեր ստեր։

96. Ով ուրիշների օգնութեան կարիքն է զգում և չարունակ բարեացակամութիւն վայելում, շահ չունի նրանց խաբելու. ընդհակառակը, նա ակնյայտնի օգուտ ունի, որ նրանք իրերը տեսնեն այնպէս, ինչպէս որ են, որպէս զի ի վնաս իւր չխաբուին։ Պարզ է ուրեմն, որ իսկական սուտը երեխաների համար բնական չէ, ընդհակառակը հնազանդութեան օրէնքն իր հետ բերում է և ստելու կարևորութիւնը, որպէս զի ծածուկ, որքան կարող է ազատուի հնազանդուելուց, որ ձանձրալի բան է և պատժից կամ յանդիմանութիւնից խոյս տալու վայրկենական շահը յետ է մղում՝ ճշմարտութեանը հաւատարիմ մնալու հեռաւոր օգուտը։ Բնական և ազատ դաստիարակութեան ժամանակ քո երեխան ինչո՞ւ պէտք է ստէ. ինչ ունի քեզնից թագցնելու։ Դու չես կշտամբում նրան, երբէք չես պատժում, ոչինչ չես պահանջում նրանից։ Ինչո՞ւ նա իւր արած ամեն բանը նոյն անկեղծութեամբ չպէտք է ասէ քեզ, ինչպէս որ ասում է իւր փոքրիկ խաղընկերներին։ Այդ խոստովանութեամբ՝ նա ոչ առաջին և ոչ երկրորդ դէպքում վտանգի չէ ենթարկւում։

97. Մտաւոր սուտն աւելի անբնական է, որովհետև մի բան անելու կամ չանելու խոստումները համաձայնութեան գործողութիւններ են, որ բնական դրութիւնից են առաջանում և ազատութիւնը սահմանափակում։ Աւելի ևս երեխաների բոլոր խոստումներն ինքն ըստ ինքեան ոչինչ են, որովհետև նրանք իրենց սահմանափակ հայեացքով չեն կարող ներկայից այն կողմն անցնել, ուրեմն և իրենց խոստումների ժամանակ չգիտեն թէ ինչ են անում։ Երեխան հազիւ կարող է ստել, երբ մի բան է խոստանում. որովհետև նա միայն այն է ցանկանում, որ ներկայ րո-

պէում այդ բանից ազատուի. ամեն միջոց, որ վայրկենական ազդեցութիւն չունի, հաւասար արժէք պէտք է ունենայ նրա համար. երբ նա խոստանում է ապագայի համար, ոչինչ չէ խոստանում և մանկան դեռ ևս նիրհող երևակայութեան շնորհիւ նրա եսը չի կարող երկու տարբեր ժամանակների վրայ իշխող հանդիսանալ։ Եթէ նա վաղը պատուհանից դուրս թռչելու խոստումով պատժի հարուածից կարողանայ ազատուել կամ շաքարեղէն ստանալ՝ իսկոյն կխոստանայ այդպէս անել. Այդ պատճառով և օրէնքները բոլորովին ուշադրութիւն չեն դարձնում երեխաների խոստումների վրայ. եթէ հայրերն և ուսուցիչներն աւելի խիստ են վարւում և խոստման կատարումն են պահանջում, վերջինս տեղի է ունենում միայն այն դէպքերում, երբ երեխան առանց նախապէս խոստանալու էլ պէտք է կատարէր։

98. Ուրեմն՝ որովհետև երեխան խոստանալիս չգիտէ թէ ինչ է անում, հետևապէս չի կարող ստել խոստումն տալու ժամանակ։ Ստելու մի ուրիշ տեսակն էլ այն է, երբ երեխան իր խոստման հաւատարիմ չէ մնում, թէև շատ լաւ յիշում է, որ խոստումն է արել. այս դէպքում նա չէ հասկանում խոստումը կատարելու ստիպողականութիւնը։ Նա անկարող է ապագան նախագուշակել, այդ պատճառով և չի կարող իրերի հետևանքը նախատեսնել և երբ խոստմնազանց է լինում, իւր հասակի խոհականութեան հակառակ չէ գործում։

99. Այստեղից հետևում է, որ երեխաների ստելը միշտ իրենց ուսուցիչների գործն է և ով նրանց ուզում է սովորեցնել ճշմարտութիւնն ասել, հենց ինքն է նրանց ստել սովորեցնում։ Երեխաներին կրթելու, առաջնորդելու և ուսուցանելու եռանդի ժամանակ շատ և շատ միջոցներ կարող ենք գտնել՝ նպատակին հասնելու համար։ Անկայուն սկզբունքներով և անխոհեմ հրահանգներով մարդիկ կամենում են նոր ազդեցութիւն ունենալ մանկական հոգու վրայ և աւելի ցանկանում են, որ նրանք իրենց դասերը գիտենան և միևնոյն ժամանակ ստեն, քան թէ տգէտ մնան և ճշմարտախօս լինեն։

100. Մենք, ընդհակառակը, մեր աշակերտներին տեղեկութիւններ ենք տալիս իրական կեանքի համար, մենք աւելի սիրով ուզում ենք, որ նրանք բարի, քան թէ ուսումնական լինին և այդպիսով նրանցից ճշմարտութիւն չենք պահանջում, որպէս զի նրանք չայլակերպեն. Թոյլ չենք տալիս, որ նրանք այնպիսի խոստումներ անեն, որ դուցէ չկարողանան կատարել։ Երբ իմ բացակայութեամբ որևէ անարդար բան պատահի և չգիտենամ թէ անողն ո՞վ է, ես երբէք

չեմ բողոքի Էմիլի դէմ կամ թէ չեմ ասի նրան. դու ես արել։ *) Որովհետև դրանով նրան կսովորեցնէի իւր արածն ուրանալ։ Երբ նրա վտանգաւոր խորհուրդը ստիպում է ինձ նրա հետ որևէ համաձայնութեան գալ, ես խոհեմաբար այնպէս եմ կարգադրում, որ այդ առաջարկութիւնը միշտ նա անէ և ոչ երբէք ես, որպէս զի մի վայրկենական և յայտնի շահ է նկատի ունենայ և իւր խոստումը կատարելու պարտաւորութիւնն զգայ. եթէ խոստմնազանց լինի, այդ սուտը նրա համար վատ հետևանք ունենայ և այդ հետևանքն առաջանայ ոչ թէ դաստիարակի վրէժխնդրութիւնից, այլ նոյն իսկ իրերի բնական կարգաւորութիւնից։ Բայց ես համարեմ թէ ապահով եմ, որ այսպիսի ծանր միջոցի դիմելու կարիք չեմ ունենայ և Էմիլը դեռ շատ ուշ կսովորի՝ թէ ինչ է նշանակում ստել և նա շատ կզարմանայ այդ իմանալով, որովհետև չի կարողանայ ըմբռնել թէ ինչու համար է ստելը լաւ համարւում։ Շատ պարզ է, որ իմ ջանքով որչափ նրա բարեկեցութիւնը ուրիշների կամքից կամ դատողութիւնից անկախ լինի, նա այնչափ ես աւելի կարիք չի ունենայ ստելու։

101. Երբ ուսուցանելու ժամանակ չենք շտապում, պահանջներ անելիս նոյնպէս չենք շտապում. պէտք է հանգամանքները լաւ ճանաչենք, որպէս զի անժամանակ ոչինչ չպահանջենք։ Դրանից յետոյ երեխան զարգանում է, եթէ միայն չէ փչանում։ Բայց եթէ մի անգլուխ և իւր գործը չհասկացող վարժապետ ամեն րոպէ աշակերտից այս ու այն բանի համար խոստումն է առնում, առանցի նկատի ունենալու հանգամանքները, առանց ընտրութեան և չափի, երեխան այս բոլոր խոստումներից ճնշուած և ծանրաբեռնուած զգալով իրեն, անուշադիր է թողնում, մոռանում և վերջն արհամարհում. նա այդ բոլորը նկատում է իբրև դատարկ ձևականութիւն և զուարճանալով է խոստմնազանց լինում Եթէ կամենում ես, որ նա իւր խոստումը կատարէ, զգուշութեամբ պահանջիր։

102. Ստի մասին տուած մեր բացատրութիւնների մանրամասնութիւնները շատ բաներում կարելի է և ուրիշ պարտականութիւնների վերաբերմամբ ասել, որ երեխաների մտքում այնպէս ենք տպաւորում, որ ոչ միայն հակակրելի է նրանց համար,

*) Շատ անխորհուրդ բան է այդպիսի հարց տալը, մանաւանդ եթէ երեխան մեղաւոր է. երբ նա կարծում է, որ դուք գիտէք իւր արածը, կհասկանայ նոյնպէս, որ որոգայթ էք լարում նրա համար և այդ բանն անպատճառ երեխային ձեր դէմ կգրգռէ։ Եթէ այդպէս չէ կարծում, ինքն իրեն կասէ. ինչու պէտք է արածս դուրս տամ։ Եւ այսպիսով ստելու առաջի փորձանքը ձեր ո՛չ խելացի հարցման հետևանքն է հանդիսանում։

այլ մինչև անգամ անիրագործելի։ Մենք կարծում ենք թէ՝ առաքինութիւն ենք քարոզում նրանց, բայց ամեն տեսակ մոլութեան հակումն ենք ներշնչում. տալիս ենք նրանց և միևնոյն ժամանակ արգելում։ Կամենալով երեխաներին երկիւղած դարձնել՝ տանում ենք եկեղեցի, որ ձանձրանան. ստիպելով նրանց անվերջ աղօթքներ ասելու՝ ստիպում ենք կարօտով սպասելու այն երջանիկ վայրկեանին, երբ ազատ կլինեն Աստծուն աղօթելուց։ Մերձաւորներին սիրելու գաղափարը ներշնչելու համար թոյլ ենք տալիս նրանց՝ ողորմութիւն տալու, բայց միևնոյն ժամանակ կարծես թէ ստորացուցիչ ենք համարում, որ ինքներս տանք։ Ո՛չ, երեխան չպէտք է տայ, այլ ուսուցիչը. թող որքան ուզում է սիրէ նա իւր աշակերտին, այնուամենայնիւ այս պատիւը իրեն պէտք է վերապահէ. ուսուցիչը պէտք է առիթ տայ աշակերտին մտածելու, որ ինքը դեռ ևս արժանի չէ այդ պատուին։ Ողորմութիւն տալն այն մարդուն կսազի, որ ճանաչում է իւր տուած ողորմութեան արժէքը և մերձաւորի կարիքը։ Երեխան այդ բաներից ոչինչ չհասկանալով՝ ողորմութիւն տալով էլ ոչինչ չի վաստակի. նրա տուած ողորմութիւնը զուրկ է կարեկցութիւնից, բարեգործութիւն անելու մտքից նա համարեա թէ ամաչում է տալ, երբ իր և ձեր օրինակով տեսնում է, որ միայն երեխաներն են ողորմութիւն տալիս, իսկ հասակաւորները—ո՛չ։

103. Պէտք է նկատել նոյնպէս, որ երեխաները մեր շնորհիւ այնպիսի բաներ են տալիս իբրև ողորմութիւն, որոնց արժէքը յայտնի չէ իրանց—մետաղի կտորներ, որ գրպանումն ունին և ուրիշ ոչինչ օգուտ չեն տալիս նրանց։ Երեխան աւելի սիրով հաւ րիւր ոսկի կտայ, քան մի կտոր շաքարահաց։ Բայց այնպէս արա, որ շռայլաբար ողորմութիւն տուող երեխան ստիպուած լինի իրեն համար արժէք ունեցող բաներ տալ, օրինակ խաղալիկ, շաքարեղէն, իւր բաժին ընթրիքը, այն ժամանակ պարզ կերևայ, թէ արդեօք ո՛րքան առատաձեռն ես դարձրել նրան։

104. Մենք ուրիշ հնարք էլ ենք գտել. երեխային շուտով վերադարձնում ենք նրա տուածը, այնպէս որ նա սովորում է տալ այն ամենը, ինչ որ ապահով կերպով նորից յետ կստանայ։ Ես համարեա թէ երեխաների միայն այդ երկու տեսակ վեհանձնութիւնն եմ տեսել. նրանք տալիս են այն, ինչ որ իրենց համար անպէտք է, կամ այն, ինչ որ ապահով կերպով կրկին յետ կստանան։ Այնպէս արա, ասում է Լօքէն, որ նրանք փորձով սովորեն, որ առատաձեռն մարդը միշտ ամենից մեծ օգուտն ունի։ Բայց այդպիսով երեխային առատաձեռն ենք դարձնում միայն ըստ երևոյթին, սակայն իսկապէս՝ աչքածակ (անյագ ցանկացող)։ Լօքէն

աւելացնում է, որ երեխաներն այդպիսով առատաձեռնութիւնը սովորութիւն կդարձնեն.—այո՛, բայց այս առատաձեռնութիւնը վաշխառութեան է դիմում, որ կաղին է տալիս՝ կաղնի ստանալու մտքով։ Սակայն եթէ խնդիրը լրջութեամբ տալուն է վերաբերում, սովորութիւնը նշանակութիւն չի ունենայ. եթէ մենք այլ ևս յետ չտանք նրանց, նրանք էլ շուտով ողորմութիւն տալը կդադարեցնեն։ Աւելի ուշադրութիւն պէտք է դարձնել հոգու սովորութեան վրայ, քան ձեռքերի։ Երեխաներին սովորեցրած միւս բոլոր առաքինութիւններն էլ նման են սրան և այս անխախտ առաքինութիւնների քարոզով ենք անցկացնում նրանց ուրախութիւնից զուրկ պատանեկութիւնը։ Իմաստուն դաստիարակութիւն չէ այս։

105. Հեռո՛ւ կացէք կեղծիքներից, ուսուցիչնե՛ր, եղէք առաքինի և բարի. թող ձեր օրինակը տպաւորուի ձեր աշակերտների յիշողութեան մէջ, մինչև որ մի անգամ նրանց սիրտը թափանցի։ Ես չեմ շտապում՝ իմ աշակերտից ողորմածութեան գործողութիւններ պահանջելու. աւելի լաւ է ողորմութիւն կտամ նրանց ներկայութեամբ և մինչև անգամ կխլեմ նրանցից իմ օրինակին հետևելու միջոցները, որովհետև մի այսպիսի պատիւ սազ չի գայ նրանց հասակին. նրանք չպէտք է սովորեն՝ մարդկային պարտականութիւնները միայն իբրև երեխաների պարտաւորութիւններ նկատելու։ Երբ երեխան կտեսնի, որ ես աղքատներին ողորմում եմ և այդ մասին հարցումն կտայ ինձ, կասեմ նրան, եթէ պատասխան տալու ժամանակը հասած կլինի.*) «սիրելի բարեկամ, երբ աղքատները կարծիք յայտնեցին, որ հարուստներ էլ պէտք է լինեն, հարուստները խոստացան կերակրել այն բոլորին, որոնք անկարող կլինեն ապրել իրենց փողով կամ աշխատանքով»։—«Ուրեմն դո՞ւ էլ այդ խոստումն ես տուել», կպատասխանի նա.—«Հարկաւ. իմ ձեռքով անցնող կարողութիւնը ծառայում է ինձ միայն այն պայմանով, որ օգտակար կերպով գործ դնեմ»։

106. Եթէ Էմիլի տեղ մի ուրիշը լինէր, կարող էր, այս գրուցատրութեան միտքը հասկանալուց յետոյ (տեսանք, թէ ինչպէս պէտք է հասկացնենք երեխային այս բանը) փորձել՝ իմ օրինակին հետևելու և իրեն հարուստ մարդու պէս պահելու. այսպիսի դէպքում առ նուազն կհոգամ, որ այդ տեղի չունենայ սնապարծութեամբ. ես աւելի սիրով կցանկանայի, որ նա խաբելով իմ իրաւունքը բանեցնէր և գաղտնի ողորմութիւն տար։ Այդպիսի խաբեբայութիւնները յատուկ են նրա հասակին. բայց միմիայն այս խաբեբայութիւնը կներէի նրան։

*) Պէտք է ըմբռնել, որ ես նրա հարցումներին պատասխանում եմ ոչ թէ այն ժամանակ, երբ նրա քէֆն է, այլ երբ ես եմ ցանկանում. հակառակ դէպքում ես պէտք է նրա կամքին հնազանդէի և նրանից կախումն ունենայի, որ շատ վտանգաւոր դրութիւն կլինի ուսուցչի համար։

107. Ես գիտեմ, որ բոլոր օրինակուած առաքինութիւնները կապկի առաքինութիւններ են և մի գործողութիւն միայն այն ժամանակն է բարոյապէս լաւ, երբ իբրև այդպիսին է կատարւում և ոչ թէ նրա համար, որ ուրիշներն են կատարում։ Բայց մի այնպիսի հասակում, երբ սիրտը դեռ առանց զգացմունքի է, պէտք է երեխաներին թոյլ տալ օրինակելու այն գործողութիւնները, որ մեր ցանկութեամբ նրանց սովորութիւնը պէտք է դառնայ, մինչև որ նոյնն անեն նրանք իրենց սեպհական դատողութեամբ և դէպի բարին ունեցած սիրով։ Նմանուելը մարդու, նոյն իսկ կենդանու, էութեան յատկութիւնն է. նմանուելու հակումը գտնւում է բնութեան իմաստուն կարգաւորութեան մէջ. բայց հասարակութեան մէջ դառնում է մոլութիւն։ Կապիկը նմանւում է մարդուն որից վախենում է, բայց ոչ կենդանիներին, որոնք չնչին են նրա համար. նա լաւ է համարում այն, ինչ որ անում է իրենից աւելի լաւ էակը։ Մեզ մօտ, ընդհակառակը, խեղկատակները օրինակում են ամեն տեսակ գեղեցիկ բաներ՝ ստորացնելու և ծիծաղելի դարձնելու համար. իրենց ստորութիւնն զգալով՝ նրանք աշխատում են այն, ինչ որ իրենցից լաւ է, իրենց նման դարձնելու կամ, աւելի ջանք են թափում ընդօրինակել այն, ինչ որ իրենց զարմանք է պատճառում. հենց այդ իրերի ընտրութիւնից տեսնում ենք նմանուողների կեղծ ճաշակը. նրանք ուզում են աւելի ուրիշների աչքին թոզ փչել կամ իրենց տաղանդը հրապարակ հանել, քան թէ իրենց լաւացնել կամ իմաստուն դարձնել։ Մեզ մօտ նմանուելու պատճառը միշտ առաջանում է իւր շրջանից դուրս գալու պահանջից։ Եթէ իմ ձեռնարկութիւնը յաջողուի, հարկաւ Էմիլը չի ունենայ այս պահանջը։ Ուրեմն մենք պէտք է հրաժարուենք դրանից առաջացող երևոյթական օգտից։

108. Հետազօտեցէք ձեր դաստիարակութեան կանոնների ամբողջ հիմքը և կտեսնէք, որ այդ կանոնները բոլորն էլ անմիտ են, մանաւանդ առաքինութիւնների և բարքերի նկատմամբ։ Միակ բարոյական հրահանգը, որ յարմար է մանկութեան և բոլոր հասակների համար ամենակարևորն է, այն է, որ երբէք ուրիշին վատութիւն չանենք։ Նոյն իսկ՝ բարի արարէք հրահանգը վտանգաւոր, սխալ և հակասական է, եթէ առաջինին չստորադրուի։ Ո՞վ չէ բարութիւն անում. ամեն մարդ՝ թէ չար և թէ բարի, բարութիւն է անում. չարը մէկին բաղդաւորեցնում է ի հաշիւ հարիւր անբաղդների և դրանից-է առաջանում մեր բոլոր թշուառ-

ութիւնը: Ամենավեհ առաքինութիւնները բացասական բնաւորութիւն ունին. դրանք և ամենադժուարներն են, որովհետև-բոլոր ցուցամոլութիւններից հեռու են և մինչև անգամ աւելի բարձր են մարդկային այն քաղցր վայելչութիւնից, որ զգում ենք ուրիշին մեզնից աւելի բաղդաւոր տեսնելիս։ Ո՜հ, որքան բարութիւն է անում մերձաւորներին նա, ով նրանց երբէք վատութիւն չէ անում, եթէ կայ առհասարակ այդպիսի մարդ։ Այդպիսի մարդը պէտք է լինի համատատամիտ և անդրդուելի բնաւորութեան տէր։ Սակայն այդ իրականացնելու համար մեր կրած բազմաթիւ դժուարութիւնները և անախորժութիւնները ճանաչում ենք ոչ թէ այս սկըզբունքների բացատրութիւններով, այլ միայն կեանքի մէջ գործադրելու ձգտումով *)։

109 Սրանք միայն մի քանի թեթև ակնարկութիւններ են այն զգուշութեան վերաբերմամբ, որով, իմ կարծիքով, պէտք է երեխաներին այն ուսմունքը հաղորդենք, որից երբեմն կարելի չէ լինում խուսափել, առանց մեզ կամ ուրիշներին վնասելու վտանգին ենթարկելու, մանաւանդ վատ սովորութիւններ ներացնելու վերաբերմամբ, որ յետոյ միայն մեծ ջանքով կարելի է լինում արմատախիլ անել. բայց այնուամենայնիւ կարող ենք ապահով լինել, որ ճշմարիտ դաստիարակուած երեխաների վերաբերմամբ կարևոր չի լինի այս ախպմունքը գործադրել, որովհետև անկարելի է, որ նրանք անուս, չար, ստախօս և ընչաքաղց դառնան, եթէ այս յատկութիւնները տուող մոլութիւնները նրանց սրտում չսերմանուեն։ Ուրեմն ես ինչ որ այս կէտի վերաբերմամբ ասացի, աւելի վերաբերում է բացառութիւններին, քան թէ կանոններին. բայց այս բացառութիւններն այնքան աւելի յաճախ են լինում, որքան երեխաներն աւելի չատ առիթ կունենան՝ իրենց հանգամանքներից դուրս գալու և չափահասների սխալներն իւրացնելու։ Հասարա-

*) Ուրիշներին երբէք չվնասելու հրահանգի հետ կապուած է մարդկային ընկերութեան հետ ըստ կարելոյն քիչ շօշափուելը, որովհետև հասարակական դրութեան մէջ մէկի բարիքը միւսի համար չարիք է։ Այս յարաբերութիւնն իրերի էութեանն է վերաբերում. և ոչնչով չի կարելի փոխել. այս մտքի հիման վրայ պէտք է հետազօտել՝ թէ արդեօք ընկերութեան մէջ ապրող մարդն է աւելի լաւ, թէ առանձնութեան մէջ ապրողը։ Մի նշանաւոր հեղինակ (Դիդերոյին է ակնարկում) ասում է, որ միայն չարն է մենակ ապրում. ես պնդում եմ, որ ընդհակառակը, միայն բարին է մենակ ապրում։ Այս միտքն աւելի քիչ սենթենթեալ (պահանջող) է, բայց այնքան ես աւելի ճիշտ և աւելի լաւ պատճառաբանուած, քան նախորդը։ Ինչ չարութիւն կարող էր անել չարը, եթէ միայնակ լինէր։ Հասարակութեան մէջն է մտնում նա՝ ուրիշներին վնասելու համար։ Եթէ այս եզրակացութիւնները բարի մարդու վերաբերմամբ առնենք, ես կպատասխանեմ այն հատուածով, որի հետ կապուած է այս ծանօթութիւնը։

կութեան մէջ դաստիարակուող երեխաների կրթութիւնը պէտք է անհրաժեշտ կերպով աւելի չուտ սկսել, քան առանձնացած մանուկներինը: Առանձնութեան մէջ դաստիարակուելուն պէտք է առաւելութիւն տալ։

110· Միւս կողմից կան մի տեսակ բացառութիւններ նրանց համար, որոնք հոգեկան կարողութեամբ իրենց հասակից աւելի են զարգացած լինում։ Ինչպէս որ կան այնպիսի մարդիկ, որ երբէք մանկական աստիճանից դուրս չեն գալիս, կան և այնպիսիները, որ այսպէս ասած, մանկութիւն չեն ունենում և ծնուելիս արդէն համարեա թէ չափահաս են լինում։ Տարաբաղդաբար այս վերջին բացառութիւնը չատ հազիւ է պատահում և դժուար ճանաչելի է. իւրաքանչիւր մայր երբ մտածում է՝ թէ կարող են հրաշամանուկներ լինել, խկոյն կարծում է, որ իւր երեխան այդպիսիներից է։ Այո, դեռ աւելի ևս. Նրանք կանոնաւոր յարաբերութիւնների նըշաններն ընդունում են իբրև արտաքոյ կարգի երևոյթներ. աշխոյժ, եռանդոտ, արագաշարժ և մանկական հիանալի էութիւնն այդ հասակի բնորոշ յատկութիւններն են, որոնք ամենից լաւ ցոյց են տալիս, որ մանուկը միայն մանուկ է։ Մի՞թէ զարմանալու բան է, որ այն մարդը, որին չատ առիթներ են տալիս խօսելու, որին ասեցնել են տալիս, ինչ որ կամենում են, որ ոչ մի տեսակէտով սահմանափակուած չէ, պատահաբար մի անգամ մի յաջող բառ է գտնում։ Աւելի զարմանալի կլինէր, եթէ այդպէս չլինէր. ինչպէս որ զարմանալի կլինէր, եթէ աստղաբաշխը հազարաւոր սաեւրի մէջ մի անգամ էլ ճշմարտութիւն չասէր։ Հենրիկոս IV կարծիքով նրանք ասում են այնքան ժամանակ, մինչև որ վերջապէս մի ճշմարտութիւն են գտնում։ Ով ուզում է մի քանի նրբամիտ խօսքեր գտնել, բաւական է, որ չատ միամիտ բաներ դուրս տայ։ Աստուած բարի տայ մեր մօդայի հետևող մարդկանց, որոնց փառաբանում են հենց միայն այդ վաստակի համար։

111· Երեխայի ուղեղի մէջ ամենափայլուն մտքեր կարող են ծագել կամ նրանց բերանից ամենալաւ խօսքեր դուրս գալ, ինչպէս որ չատ թանկագին ադամանդներ կարող են նրանց ձեռքն ընկնել, բայց կարող է պատահել և այն, որ ոչ այդ մտքերը և ոչ էլ ադամանդները նրանց սեփականութիւնը չեն լինի. այս հասակի համար ոչ մի դէպքում իսկական սեփականութիւն չկայ։ Երեխայի ասած բաները նրա համար նոյն նշանակութիւնը չունին, ինչ նշանակութիւն որ ունին մեզ համար. նա դրանցով նոյն գաղափարները չէ հասկանում։ Այս գաղափարները, եթէ մանուկն ունի իսկապէս, նրա գլխում միմեանց հետ կապակցուած չեն և միմեանց չեն հետևում կանոնաւոր կերպով. այն բոլորը, ինչ որ

Նա մտածում է, հաստատուն կամ ապահով չէ: Մի անգամ հետա-
զոտիր այդ հրաշամանուկ կարծուած էութիւնը. որոշ վայրկեան-
ներում նրա մէջ կգտնես արտաքոյ կարգի առաձգականութիւն,
աշխուժութիւն և ամեն բան թափանցող հոգու պայծառութիւն:
Բայց աւելի յաճախ այս նոյն հոգին թւում է քեզ քնած, ընդար-
մացած և կարծես թէ թանձր մառախուղով պատած լինի: Մէկ
քեզնից առաջ է շտապում, մէկ անշարժ մնում: Մի րոպէ մարդ
քիչ է մնում, որ ասէ թէ ճանճար է, բայց վայրկեանն անցնելուց
յետոյ՝ յիմարագլուխ երկու դէպքումն էլ սխալւում ենք. Նա
միայն երեխայ է: Նա արծուի ձագ է, որ մի վայրկեան օդի մէջ
դէպի վեր է սաւառնում, իսկ վայրկեանն անցնելուց յետոյ նորից
իւր բոյնը վերադառնում:

112. Վարուիր երեխայի հետ իւր հասակի համեմատ՝ ու-
շադրութիւն չդարձնելով արտաքին երեւոյթի վրայ և զգուշացիր
չափազանց վարժութիւններով նրա ուժերը սպառելուց: Երբ այդ
մատաղ ուղեղը ջերմանայ, երբ տեսնես, որ նա սկսում է եռալ,
թոյլ տուր, որ անարգել խլթխըլթայ, բայց երբեք մի գրգռիր,
որպէս զի ամեն բան չչոգիանայ և երբ առաջին եռումն անցնի,
միւս եռումները յետ մղիր մինչև որ տարիների ընթացքում ամեն
բան կենդանացնող ջերմութեան և իսկական ոյժի փոխուի: Եթէ
ոչ՝ ժամանակ և աշխատանք կկորցնես, քո սեպհական գործը կոչն-
չացնես և անմտաբար այս բոլոր հրային չոգիներով արբենալուց
յետոյ՝ ձեզ ոչինչ չի մնայ, բացի անզօր տականքից:

113. Արագ զարգացող երեխաները սովորական մարդիկ են
դառնում. այս շատ ընդհանուր, վաւերական և ստոյգ դիտողութիւն
է: Ոչինչ այնքան դժուար չէ, որքան երեխաների իսկական բթա-
մտութիւնը զանազանել այն երեւոյթական և խաբէական բթամտու-
թիւնից, որ ուժեղ հոգու ծանուցումն է: Սկզբում օտարոտի է
թւում, որ երկու այսպիսի հակառակ իրեր այդպիսի նման նշան-
ներ ունին, բայց այնուամենայնիւ այդպէս պէտք է լինի. որովհե-
տև մի այնպիսի հասակում, երբ մարդ դեռ ոչ մի իսկական գա-
ղափար չունի, ձիրք ունեցողի և չունեցողի մէջ եղած տարբերու-
թիւնը նրանումն է, որ վերջինս միայն սխալ գաղափարներ է
կազմում, իսկ առաջինն այդ սխալ գաղափարներից ոչ մէկը չէ
ընդունում սա էլ ուրեմն նմանւում է բթամտին այն յարաբերու-
թեամբ, որ մէկը ոչինչ չի կարողանում ընդունել, իսկ միւսի
համար պէտքական ոչինչ չկայ: Սրանց տարբերութեան միակ
նշանը կախումն ունի պատահական դիպուածից, որ վերջինիս
որև է, նրա ընդունողութեան ուժին համապատասխան, գաղափար
կարող է տալ, այն ինչ բթամիտը միշտ և ամեն տեղ միևնոյնն

է մնում: Մանուկ Կատօն մանկական հասակում տանը տկարա-
միտ էր թւում: Նա լռակեաց էր և կամակոր. այսքանը միայն
կարողանում էին ասել նրա մասին: Միայն Սուլլայի նախասենեա-
կում ճանաչեց նրան իւր հօրեղբայրը: Եթէ Սուլլայի տուն գնա-
ցած չլինէր, գուցէ նա մինչև խոհականութեան հասակը սահմանա-
փակ մտքի տէր համարուէր. եթէ Կեսարն ապրած չլինէր, այս
նոյն Կատօին – որ թափանցել էր Կեսարի դժնդակ հոգին և նրա
բոլոր ծրագիրները վաղուց նախատեսել,— գուցէ միշտ երազող
համարէին: Ուրեմն որչափ կխաբուենք, եթէ երեխաների մա-
սին այդպէս շտապ դատողութիւններ տանք: Այդպէս դատողները
յաճախ իրենք աւելի երեխայ են, քան թէ իսկական երեխաները:
Իւր բարեկամութեամբ ինձ պատուող մի մարդ *) բաւականին
հասուն հասակում՝ թէ իւր ընտանիքում և թէ իւր բարեկամնե-
րի շրջանում, համարւում էր սահմանափակ մտքի տէր: Յանկարծ
նա հրապարակ եկաւ իբրև փիլիսոփայ և ես չեմ կասկածում, որ
մեր յաջորդ սերունդները նրան պատուաւոր և առաջնակարգ տեղ
կտան իւր դարի ամենալաւ մտածողների և խորիմաստ մետաֆի-
զիկների շարքում:

114. Քաշուիր մանկութիւնից և մի շտապի նրա վերաբեր-
մամբ դատողութիւն տալու՝ թէ լաւ և թէ վատ: Թոյլ տուր նախ,
որ բացառութիւններն երկար ժամանակ նկատելի լինին, ճշտուին
ու հաստատուին և յետոյ միայն դրանց համար առանձին միջոց-
ներ գործ դիր: Թող, որ բնութիւնն իւր գործունէութիւնն երկար
ժամանակ ցոյց տայ և յետոյ սկսիր նրա տեղը գործել, որպէս զի
նրա գործունէութիւնը չխափանուի: Դու պատճառաբանում ես
թէ գիտես ժամանակի արժէքը և չես ուզում ժամանակ կորցնել
բայց չես նկատում, որ աւելի շատ ժամանակ է կորչում, եթէ լաւ
չես գործադրում ժամանակը, քան՝ եթէ ոչինչ չես անում և վատ
դաստիարակուած երեխան շատ աւելի հեռու է իմաստութիւնից,
քան բոլորովին չդաստիարակուածը: Դու փշաքաղւում ես այն
մտքից, որ երեխան իւր առաջին տարիները պարապ պէտք է
անցկացնի: Ինչպէս: Միթէ երջանիկ լինելը ոչինչ է, միթէ թռչ-
կոտալը, խաղալը, ամբողջ օրը վազվզելը ոչինչ բան է: Իւր ամբողջ
կեանքում նա այլ ես այդպէս զբաղուած չի լինի: Պլատօնն իւր
հասարակապետութեան մէջ, որ շատ խիստ է համարւում, երե-
խաներին առաջ է բերում միայն հանդէսների, խաղերի, երգերի
և զուարճութիւնների ժամանակ. կարելի է ասել, որ նա ամեն
բան արել է երեխաներին ուրախանալ սովորեցնելով. Սենեկան

---

*) Abbé de Condillac-ը:

նոյնպէս խօսելով հին հռովմէական երիտասարդութեան մասին,
ասում է. «Նա միշտ ոտքի վրայ էր. Նրան այնպիսի բան չէին
ուսուցանում, որ ստիպուած լինէր նստած սովորելու»։ Միթէ այդ
երիտասարդութիւնն այրական հասակում քիչ արժէք ունէր։ Ու-
րեմն տյս կարծուած պարապութիւնը թող քեզ երկիւղ չպատ-
ճառէ։ Ի՞նչ կասէիր այն մարդու մասին, որ իւր ամբողջ կեան-
քից օգտուելու նպատակով՝ երբէք չկամենար քնել։ Դու կասէիր,
այդ մարդը խելագար է, որ չէ վայելում իւր ժամանակը, այլ վերց-
նում է իրենից. քնից ազատուելու համար՝ մահուան գիրկն է
վազում։—Սրտիդ մէջ խորը դրոշմիր, որ այս դէպքում մենք էլ
նոյն դրութեան մէջ ենք գտնւում և որ մանկութիւնը խոհակա-
նութեան քունն է։

115. Երևոյթական հեշտութիւն սովորելն երեխաների փչա-
նալու պատճառներից մէկն է։ Չենք նկատում, որ հենց այս հեշ-
տութիւնն ապացոյց է, որ նրանք ոչինչ չեն սովորում։ Նրանց
հարթ ու ողորկ ուղեղը հայելու նման յետ է ցոլացնում՝ առաջա-
դրուած առարկաները, բայց ոչինչ չէ մնում այնտեղ, ոչինչ չէ
ներս թափանցում։ Երեխան միտն է պահում խօսքերը, իսկ գա-
ղափարները յետ են ցոլանում. Նրան լսողները հասկանում են
այդ գաղափարները, բայց ինքը, երեխան, չէ հասկանում։

116. Թէև յիշողութիւնն ու կանոնաւոր մտածելն երկու էա-
պէս տարբեր ընդունակութիւններ են, բայց իսկապէս մէկը զար-
գանում է միայն միւսի հետ։ Խոհականութեան հասակից առաջ
երեխան գաղափարներ չէ ընդունում, այլ միայն պատկերներ և
այդ երկուսի մէջ այն տարբերութիւնը կայ, որ պատկերները մի-
միայն զգայարաններին ենթարկւող առարկաների նկարներն են,
իսկ գաղափարները՝ առարկաների փոխադարձ յարաբերութիւննե-
րով որոշուած ըմբռնումներ։ Պատկերը կարող է գոյութիւն ունե-
նալ միայն իրեն պատկերացնող հոգու մէջ. իսկ իւրաքանչիւր գա-
ղափար՝ ուրիշ գաղափարներ է ենթադրում։ Մտապատկերը տես-
նում է միայն, գաղափարը համեմատում է։ Մեր զգայարանական
զգայութիւնները զուտ կրաւորական բնաւորութիւն ունին, մինչ-
դեռ մեր բոլոր ըմբռնումները կամ գաղափարները ծագում են
ներգործական, դատող հիմնական կարողութիւնից։ Ցետոյ ցոյց
կտանք այս։

117. Ես պնդում եմ ուրեմն, որ մանուկները դեռ ես դա-
տողութեան ընդունակութիւն չունենալով, իսկական յիշողութիւն
էլ չունին։ Նրանք մտքումը պահում են հնչիւններ, ձևեր, զգայա-
րանական տպաւորութիւններ, բայց շատ հազիւ՝ գաղափարներ և
աւելի ևս հազիւ գաղափարների կապակցութիւններ։ Թուցէ ոմանք

կարծեն, թէ իմ ասածների հակառակ ապացոյց են բերում՝ ա-
ռարկելով, որ երեխաներն երկրաչափութեան մի քանի սկզբնա-
կան հիմունքներն են սովորում. բայց իմ տեսակէտով՝ դրանք հենց
հակառակն են ապացուցանում. դրանով ցոյց են տալիս, որ երե-
խաները ոչ թէ միայն սեպհական եզրակացութիւն անելու կարո-
ղութիւն չունեն, այլ նոյն իսկ ուրիշների եզրակացութիւններն էլ
չեն կարողանում միտը պահել, որովհետև երբ այս փոքրիկ երկ-
րաչափների մեթօդին հետևենք, իսկոյն կնկատենք, որ նրանք
միայն ձևի ճիշտ տպաւորութիւնը և ապացոյցի բնագիրն են մտա-
ները պահել։ Ամենաչնչին նոր առարկութիւն անելիս՝ սխալների
մէջ են խրւում. իսկ եթէ ձևը շրջենք, նրանք այլ ևս չեն կարող
բան հասկանալ։ Նրանց ամբողջ գիտութիւնը կանգ է առել զգայա-
րանական տպաւորութեան վրայ, հասկանալու համար՝ ոչինչ չէ
ներս թափանցել։ Նրանց յիշողութիւնը նոյն իսկ հազիւ թէ աւե-
լի կատարեալ լինի, քան միւս ընդունակութիւնները, որովհետև
նրանք համարեա ընդհանրապէս, երբ մեծանան, մի անգամ էլ
պէտք է սովորեն այն իրերը որոնց արտայայտիչ բառերը սովո-
րել են մանկութեան ժամանակ։

118. Սակայն ես հեռու եմ այն մտքից, որ իբրև թէ երե-
խաները չեն կարող կանոնաւոր մտածել. *) Ընդհակառակը ես
տեսնում եմ, որ նրանք շատ ճիշտ են մտածում այն ամեն բա-
նում, ինչ որ հասկանում են և ինչ որ յարաբերութիւն ունի նը-
րանց վայրկենական և ըմբռնելի շահագրգռման հետ։ Բայց խաբ-
ւում ենք նրանց ունեցած գիտութիւնների վերաբերմամբ, որովհետև
նրանց վերագրում ենք այնպիսի բաներ, որ չունին և իրերի մա-

*) Գրելու ժամանակ հարիւր անգամ մտածել եմ, որ անկարելի է մի
մեծ աշխատութեան մէջ միևնոյն բառերը միշտ միևնոյն մտքով գործածել։ Ոչ մի
լեզու այնքան հարուստ չէ, որ այնչափ անուններ, դարձուածքներ և արտայայտու-
թիւններ ունենայ, որչափ փոփոխութիւններ կարող են կրել մեր մտքերը։ Թէև բո-
լոր արտայայտութիւնները մեկնելու և ամեն անգամ մեկնութիւնը մեկնել ու բառի
տեղը դնելու մեթօդը լաւ է, բայց իրագործելի չէ. որովհետև ինչպէս պէտք է խու-
սափենք շրջապատոյտից (ցիրկէլ)։ Մեկնութիւնները կարող էին ճիշտ լինել՝ եթէ
դրանց համար բառերի կարիք լինէր։ Այնուամենայնիւ ես կարծում եմ, որ նոյն իսկ
մեր աղքատ լեզուով էլ կարելի է միտքը պարզ արտայայտել՝ ոչ թէ միևնոյն
բառերին միշտ միևնոյն նշանակութիւնը տալով, այլ նրանով, որ որքան յաճախ
պէտք լինի գործ դնել մի բառ, դրան տուած նշանակութիւնը բաւականաչափ
պարզուի՝ դրա հետ կապակցուած մտքով և իւրաքանչիւր նախադասութիւն,
որի մէջ գտնւում է այդ բառը, սրան իբրև մեկնութիւն ծառայէ։ Երբեմն ասում
եմ, որ երեխաները կանոնաւոր մտածելու անընդունակ են, երբեմն էլ թոյլ եմ
տալիս, որ նրանք բաւականին նրբութեամբ դատեն և կարծում եմ, որ իմ
մտքում ինձ չեմ հակասում. բայց չեմ կարող ժխտել, որ արտայայտութիւններիս
մէջ յաճախ հակասում եմ ինձ։

ս[ի]ն այնպիսի դիտողութիւններ ենք վերագրում նրանց, որ չեն
կարող հասկանալ։ Խաբում ենք նոյնպէս, կամենալով նրանց ու-
շադրութիւնը դարձնել այնպիսի դիտողութիւնների վրայ, որ ոչ
մի կերպ չեն կարող ունենալ, ինչպէս օրինակ իրենց ապագայ
չահերը, յետագայ կեանքի երջանկութիւնը, մեծանալուց յետոյ
մարդկանցից ստացած յարգանքը. սրանք բոլորը խօսքեր են, որ
նրանց նման կանխատեսութիւն չունեցող արարածների համար
բոլորովին նշանակութիւն չունին։ Բայց այդ խեղճ անբաղդներին
հենց այսպիսի բաներ են ուսուցանում, որ բոլորովին անմատչելի
լինելով նրանց հոգուն, նրանց հետաքրքրութիւնն էլ չեն կարող
գրաւել։

119. Այն մանկավարժները, որ մեծ հանդիսաւորութեամբ
առաջ են բերում իրենց տեսութիւնները, որով ուսուցանում են
աշակերտներին, հարկաւ ուրիշ լեզու են բանեցնում, որովհետև
վճար են ստանում դրա համար. բայց նրանց վարմունքից երևում
է, որ նրանք էլ ճիշտ ինձ պէս են մտածում. ինչ են սովորեց-
նում նրանք։ Խօսքեր, խօսքեր և միշտ խօսքեր։ Այն զանազան
գիտութիւններից, որ իրենց պարծենալով իբրև թէ սովորեցնում
են աշակերտներին, չեն ընտրում այնպիսիները, որ նրանց համար
իսկապէս օգտակար կարող են լինել իբրև իրերի գիտութիւն,
այլ ընտրում են այնպիսիները, որի արտայայտութիւնները սովո-
րեցնելով երեխաներին, կարծում են՝ թէ նրանք ըմբռնում են.
ինչպէս օրինակ կնքագիտութիւնը (հերալդիկ), աշխարհագրութիւ-
նը, ժամանակագրութիւնը, լեզուները և այլն։ Այս բոլոր գիտու-
թիւններն այնքան հեռաւոր առնչութիւն ունին մարդու և մանա-
ւանդ երեխայի հետ, որ հրաշք կլինի, եթէ այդ բոլորից որև է
բան, գոնէ մի անգամ, օգտակար լինի աշակերտին՝ նրա ամբողջ
կեանքի ընթացքում։

120. Զարմանալի կթուայ, որ ես լեզուների ուսմունքը դաս-
տիարակութեան անօգուտ առարկաների թւումն եմ դասում,
բայց պէտք է ի նկատի ունենալ, որ ես այստեղ խօսում եմ միայն
առաջին տարիների դաստիարակութեան մասին. ինչ էլ որ ասեն,
ես չեմ հաւատում, որ տասներկու կամ տասնուհինգ տարեկան
դառնալուց առաջ մի երեխայ—բացի հրաշամանուկներից—իսկա-
պէս երկու լեզու սովորած լինի։

121. Ես ընդունում եմ, որ եթէ լեզուի ուսումը միայն խօս-
քերով, այսինքն, միայն նրա ձևով և հնչիւններով բաւականանար,
յարմար կլինէր երեխաների համար. սակայն լեզուները նշանները
փոխելով՝ փոխում են նաև այն գաղափարները, որոնցով արտայայտ-
ւում են։ Գլուխները զարգանում են լեզուների հետեողութեամբ,

մտքերն ընդունում են առանձին առանձին լեզուների դրոշմը։
Միայն խոհականութիւնն է ընդհանուր. ոգին իւրաքանչիւր լեզուի
մէջ իւր առանձին ձևն ունի և այս տարբերութիւնը կարող էր
մասամբ ժողովրդների բնաւորութեանց պատճառը կամ ներգոր-
ծութիւնը լինել. այս կարծիքը հաստատւում է նրանով, որ աշ-
խարհիս բոլոր ազգերի լեզուները հետևում են բարքերի փոփո-
խութեանը և դրանց հետ միասին կամ նոյնն են մնում կամ փո-
փոխութեան ենթարկւում։

122. Այս տարբեր ձևերից մէկը երեխան իւրացնում է գոր-
ծածութեամբ. և միայն այդ ձևն է պահպանում մինչև խոհական
դառնալը։ Որպէս զի երկու ձև իւրացնէր, այսինքն երկու լեզու
սովորէր, նա պէտք է կարողանար գաղափարները միմեանց հետ
համեմատել. բայց ինչպէս պէտք է այդ անէր, երբ հազիւ է կա-
րողանում գաղափարները հասկանալ։ Իւրաքանչիւր իր կարող է
հազարաւոր տարբեր նշաններ ունենալ, սակայն իւրաքանչիւր գա-
ղափար կարող է միայն մի ձև ունենալ. երեխան կարող է ու-
րեմն միայն մի լեզու սովորել։ Բայց՝ այնուամենայնիւ ամենք
պնդում են՝ թէ երեխան մի քանի լեզուներ է սովորում. ես զար-
մանալ կրկնում եմ—ոչ։ Ես տեսել եմ այնպիսի հրաշամանուկներ,
որ իրենց կարծիքով հինգ կամ վեց լեզուով էին խօսում։ Ես լսել
եմ թէ ինչպէս նրանք գերմաներէն են խօսում՝ լատիներէն, ֆրան-
սերէն և իտալերէն դարձուածքներով. իսկապէս նրանք հինգ կամ
վեց լեզուի բառերի պաշար ունէին, բայց միշտ միայն գերմանե-
րէն էին խօսում։ Մէկ խօսքով՝ երեխաներին որքան սինօնիմ ու-
զում էք տուէք, դուք կփոխէք բառերը, բայց ոչ լեզուն. նրանք
միայն մի լեզուով կխօսեն միշտ։

123. Այս բանում երեխաների անընդունակութիւնը թագց-
նելու համար նրանցն առաւելապէս վարժեցնում են մեռած լեզու-
ներով։ Եւ որովհետև այդ լեզուները վաղուց արդէն սովորական
գործածութիւնից դուրս են եկել, ուսուցիչները բաւականանում
են գրքերի մէջ կարդացածի նմանութեամբ և կարծում են թէ ի-
րենք «խօսում են» այդ լեզուներով։ Եթէ այդ է ուսուցիչների
յունարէնն ու լատիներէնը, կարելի է գաղափար կազմել՝ թէ ինչ
կլինի աշակերտներինը։ Հենց որ երեխաներն անգիր են անում
իրենց rudimenta-ն *), որից ոչինչ չեն հասկանում, նրանցն իսկոյն
լատիներէն բառերով ֆրանսերէն ճառ են գրել տալիս. մի փոքր
առաջ գնալուց յետոյ Ցիցերոնից արձակ, Վիրգիլիոսից բանա-
ստեղծական ֆրազներ են կարկատել տալիս։ Եւ կարծում են թէ
լատիներէն են խօսում. ո՞վ կհակառակի դրանց։

*) Քերականութեան տարրական ձևերը։

124. Իւրաքանչիւր մասնագիտութեան մէջ, ինչ անուն էլ
որ կրէ, նկարագրող նշանները ոչինչ նշանակութիւն չունեն՝ ա-
ռանց նկարագրուած իրերի գաղափարի: Բայց և այնպէս երե-
խայի միտքը միշտ սահմանափակում են այդ նշաններով, սակայն
երբէք չեն կարողանում այդ նկարագրած իրերից գոնէ մէկը հաս-
կանալի դարձնել նրա համար: Կարծելով թէ երկրի նկարագրու-
թիւնն են սովորեցնում երեխային, միայն քարտէզներ ճանաչելն
են ուսուցանում. սովորեցնում են քաղաքների, երկրների, գետե-
րի անուններ, որոնց գոյութեան մասին, թղթից դուրս, որի վրայ
ցոյց են տալիս դրանց, երեխաները ոչ մի գաղափար չունեն: Յի-
շում եմ, որ իմ մի տեղ տեսած աշխարհագրութեան գիրքն այս
պէս էր սկսւում. «Ի՞նչ է աշխարհը—հաստ թղթէ գնդակ»:—Ճիշտ
երեխաների աշխարհագրութիւնն է այս: Ինձ համար շատ պարզ
է, որ երկու տարի մաթեմատիկայ և տիեզերաբաշխութիւն սովորեց-
նելուց յետոյ, ոչ մի տասնամեայ մանուկ չի կարող իր սովորած
կանոններով Պարիզից մինչև Սէն-Դընի ճանապարհ գտնել: Ինձ
համար պարզ է նոյնպէս, որ ոչ մէկը դրանցից յատակագիծը ձեռ-
քին չի կարող իր հօր պարտիզի ոլոր-մոլոր ճանապարհներով գը-
նալ՝ առանց մոլորուելու: Սրանք են այն գիտնական պարոնիկ-
ները, որ կէտերով կարող են որոշել՝ թէ ո՞րտեղ են գտնւում՝
Պէկինը, Իսպահանը, Մէքսիկօն և աշխարհիս բոլոր երկրները:

125. Ինձ պատասխանում են՝ թէ երեխաները պէտք է ու-
սումով զբաղուեն, որի համար կարևոր է միայն աչք ունենալ.
բոլորովին ճիշտ կլինէր այդ, եթէ գոյութիւն ունենար մի այնպի-
սի ուսումունք, որի համար միայն աչքը բաւական լինէր. ես այդ-
պիսի մի ուսումունք չգիտեմ:

126. Մի աւելի ծիծաղելի մոլորութեան հիման վրայ՝ երեխա-
ներին պատմութիւն են սովորեցնում. կարծում են, թէ պատմու-
թիւնը նրանց ըմբռնողութեան ուժից վեր բան չէ, որովհետև
միայն իրողութիւնների կապակցութիւնն է ներկայացնում: Սա-
կայն իրողութիւն ասելով ի՞նչ են հասկանում: Մի՞թէ կարծում են
թէ պատմական իրողութիւնների որոշած յարաբերութիւններն
այնքան հեշտ ըմբռնելի են, որ դրանց գաղափարներն առանց
այլեայլութեան կարող են կազմուել մանկան հոգու մէջ: Մի՞թէ
կարծում են, թէ պատահարների ճիշտ ճանաչողութիւնը կարելի
է բաժանել դրանց պատճառներից և ներգործութիւններից և թէ՝
պատմութիւնն ու բարոյականութիւնն այնքան թոյլ կապ ունեն
միմեանց հետ, որ կարելի լինի մէկն առանց միւսի սովորել: Եթէ
մարդկանց գործողութիւնների մէջ միայն արտաքին և զուտ ֆի-
զիկական շարժողութիւններ են տեսնում, այն ժամանակ ի՞նչ պէտք

է սովորել պատմութիւնից:—Բոլորովին ոչինչ. և այս ամբողջո-
վին անհրապոյր ուսումունքը նոյնչափ քիչ զուարճութիւն կարող է
պատճառել, որչափ և սակաւ խրատական լինել: Եթէ կամենաք
այս գործողութիւնները բարոյական տեսակէտից գնահատել, փոր-
ձեցէք մի անգամ այդ յարաբերութիւնները հասկանալի անել ե-
րեխայի համար և կտեսնէք՝ թէ արդեօք պատմութիւնը յարմա՞ր
է նրա հասակին:

127. Ընթերցո՛ղ, յիշիր միշտ, որ քեզ հետ խօսողը ո՛չ գիտ-
նական, ո՛չ էլ փիլիսոփայ է, այլ մի պարզ մարդ և ճշմարտու-
թեան բարեկամ՝ առանց կուսակցութեան կամ համակարգութեան,
մի միայնակեաց, որ մարդկանց մէջ քիչ է ապրում և աւելի քիչ
առիթ ունի՝ նրանց նախապաշարումներին ենթարկուելու, բայց
դրա փոխարէն շատ ժամանակ ունի մտածելու՝ մարդկանց հետ
ունեցած հաղորդակցութեան միջոցին արած դիտողութիւնների
մասին: Իմ բացատրութիւնները հիմնւում են ո՛չ այնքան սկըզ-
բունքների, որչափ իրողութիւնների վրայ և իմ կարծիքով դրանց
քննադատելու համար այդ դիտողութիւնների առանձին օրինակ-
ները յաճախ առաջ բերելուց աւելի լաւ ձեռնարկութիւն չեմ կա-
րող անել:

128. Ես մի քանի օր անցկացրի գիւղում մի ընտանիքի բա-
րի մօր մօտ, որ մեծ հոգացողութիւն ունէր իւր զաւակների և
նրանց դաստիարակութեան վերաբերմամբ: Մի առաւօտ ուսու-
ցիչը նրա մեծ որդուն, որին շատ լաւ էր սովորեցրել հին պատ-
մութիւնը, իմ ներկայութեամբ դաս տալիս սկսեց Աղէքսանդր
Մեծի պատմութիւնը և խօսեց Փիլիպպոս բժշկի յայտնի դէպքի
մասին: Ճարտար դաստիարակն Աղէքսանդրի աներկիւղութեան
մասին շատ դիտողութիւններ արեց, որ ես բոլորովին չհաւանե-
ցի, թէև չուզեցի միջամտել, որպէս կի նրա վարկը չընկնի աշա-
կերտի առաջ: Ճաշի ժամանակ, ըստ ֆրանսիական սովորութեան,
աշակերտն սկսեց դէսից դէնից խօսել: Նրա հասակի բնական աշ-
խուժութիւնը և գովասանք ստանալու վստահութիւնն առիթ տուին
նրան հազարաւոր յիմար բաներ դուրս տալու, որոնց մէջ երբեմն
երբեմն մի քանի յաջող բառեր էին աչքի ընկնում, որով մնացած
բոլորը մոռացութեան էր տրւում: Վերջապէս հերթը հասաւ նաև
Փիլիպպոս բժշկի պատմութեանը. նա պատմեց շատ լաւ և խելա-
ցի կերպով: Սովորական գովասանական խօսքեր շռայլելուց յե-
տոյ, որ մայրը պահանջում էր և որդին սպասում, այս ու այն
կողմից սկսեցին խօսել նրա պատմածի մասին: Մեծամասնութիւ-
նը դատապարտում էր Աղէքսանդրի յանդգնութիւնը. մի քանիսը
հիանալի էին գտնում, ինչպէս դաստիարակն էր արել, նրա հաս-

տատամտութիւնն ու արիութիւնը, որից ես եզրակացրի, որ ներկայ եղողներից ոչ ոք չէր ըմբռնել, թէ ինչումն է կայանում իսկապէս այդ դէպքի գեղեցկութիւնը. Իմ կարծիքով, ասացի նրանց, Աղէքսանդրի այդ գործողութեան եղանակի մէջ ոչ արիութիւն և ոչ հաստատամտութիւն կայ, այլ միայն մի անմիտ արարք: Ամենքը համաձայնեցան և խոստովանեցին, որ Աղէքսանդրի արածն իսկապէս անմիտ բան էր: Ես ուզում էի պատասխանել և տաքացայ, բայց կողքիս նստած կինը, որ ոչ մի խօսք չէր արտասանել, ականջիս փսփսաց. հանգիստ կաց. Ժան-Ժակ, միևնոյն է, քեզ չեն հասկանում: – Ես նայեցի նրա երեսին և ապշած լռեցի:

129. Եւ որովհետև ես շատ նշաններից ենթադրեցի, որ իմ փոքրիկ գիտնականն իւր այնպէս լաւ պատմած պատմութիւնից բոլորովին ոչինչ չէր հասկացել, ճաշից յետոյ նրա հետ միասին գնացինք պուրակը զբօսնելու. այդտեղ նրան հարց ու փորձ անելուց յետոյ իմացայ, որ նա ամենից շատ էր հիանում Աղէքսանդրի այնպէս հռչակուած արիութեան վրայ. բայց գիտէք թէ ինչումն էր նկատում այդ արիութիւնը. միմիայն նրանում, որ նա առանց վարանելու, առանց ամենաչնչին դժկամակութեան, մի անգամից դատարկեց վատ համ ունեցող ըմպելիքը: Խեղճ երեխային հազիւ երկու շաբաթ առաջ դեղ էին խմեցրել, որ մեծ դժուարութեամբ ընդունելով՝ դեռ համը բերանն էր մնացել: Մահն ու թունաւորումը միայն անախորժ զգայութիւններ էին նրա համար. բացի ածալի տերևներից (իւր խմած դեղը) նրա համար ուրիշ թոյն գոյութիւն չունէր: Բայց և այնպէս հերոսի հաստատամտութիւնը նրա մատաղ սրտի վրայ մեծ ազդեցութիւն էր գործել և հետևեալ անգամ դեղ ընդունելիս՝ նա հաստատապէս որոշել էր Աղէքսանդր լինել: Առանց երկար բարակ բացատրութիւններ տալու, որ յայտնապէս նրա ըմբռնողութեան կարողութիւնից վեր էին, ես խրախուսեցի նրա գովելի դիտաւորութիւնը և ծիծաղելով հայրերի ու մայրերի բարձր իմաստութեան վրայ, որ կարծում են թէ իրենց երեխաներին պատմութիւն են սովորեցնում, վերադարձայ տուն:

130. Հեշտ է երեխաների բերանը դնել՝ թագաւոր, պետութիւն, պատերազմ, տիրապետութիւն, յեղափոխութիւն, օրէնք բառերը. բայց երբ գործը կվերաբերի այս բառերի հետ պարզ գաղափարներ կապակցելուն, աւելի երկար ճանապարհի կարիք կլինի՝ քան այգեպան Ռոբերտի հետ խօսելուց մինչև այս բացատրութիւններին հասնելը:

131. Ինչպէս գուշակում եմ, ընթերցողներիցս մի քանիսը չեն բաւականանայ «Հանգիստ կաց, Ժան-Ժակ» խօսքերով և կկամենան գիտենալ՝ թէ Աղէքսանդրի գործողութեան մէջ ես ինչն եմ գեղեցիկ գտնում. Դժբաղդներ, ինչպէս կհասկանաք այդ, երբ ուրիշը պէտք է ասէ ձեզ. Աղէքսանդրը հաւատում էր առաքինութեան. նա իւր գլուխը, կեանքը զոհեց այդ հաւատին. Նրա մեծ հոգին ստեղծուած էր այդ հաւատի համար: Ի՞նչ գեղեցիկ հաւատոյ խոստովանութիւն էր՝ այդ դեղն ընդունելը. Երբէք մարդ մի այսպիսի վեհ գործ չէր արել. եթէ մեր օրերում որև է Աղէքսանդր գտնուի, թող այդպիսի գծերով իրեն ցոյց տայ:

132. Եթէ միայն բառերը գիտութիւն չեն կարող կազմել, չկայ ուրեմն և մի ուսմունք, որ յարմար լինէր երեխաներին: Երբ նրանք իսկական գաղափարներ չունեն, չունեն նաև իսկական յիշողութիւն, որովհետև այն յիշողութիւնը, որ միայն զգայարանական ըմբռնումներ է միտը պահում, յիշողութիւն չեմ անուանում ես: Ինչու՞ համար մտցնել մի շարք արտայայտիչ նշաններ նրանց գլուխը, երբ դրանք երեխաների համար ոչ մի նշանակութիւն չունեն: Միթէ նրանք այդ արտայայտիչ նշաններն էլ չեն սովորի, երբ իրերը սովորեն. Ինչու՞ պէտք է նրանց անօգուտ աշխատանք պատճառել՝ միևնոյն բանն երկու անգամ սովորելու: Բայց միևնոյն ժամանակ ինչպիսի՜ վտանգաւոր նախապաշարումներ ենք ներշնչում երեխաներին՝ նրանց համար միտք չունեցող բառերն իբրև գիտութիւն ընդունել տալով: Այն առաջին բառով, որ մանուկն ընդունում է ուրիշի խօսքերից՝ առանց նրա օգուտն անձամբ տեսնելու, փչանում է նրա դատողութեան կարողութիւնը. երկար ժամանակ անցնելուց յետոյ միայն կարող է նա այդ վնասից ազատուել *):

133. Ոչ. Երբ բնութիւնը մանկական ուղեղին դիւրաթեքու-

*) Գիտնականների մեծ մասն երեխաների եղանակով են գիտնական: Մեծ գիտնականութիւնն այնքան գաղափարների շատութիւնից չէ առաջանում, որքան պատկերացումների մեծ քանակութիւնից: Առանձին տեղեկութիւնները, յատուկ անունները, տեղերի անունները և բոլոր առանց ըմբռնելի բովանդակութեան գաղափարները միտներս ենք պահում միայն նշանների յիշողութեամբ և շատ հազիւ ենք այս գաղափարներից մէկը յիշում առանց այն գրքի աջ կամ ձախ կողմը մտաբերելու, որտեղ որ կարդացել ենք, կամ թէ առանց այն պատկերը մտքի առաջ բերելու, որով տեսել ենք առաջին անգամ: Այս է մօտաւորապէս այն գիտութեան տեսակը, որ վերջին դարերում ընթացիկ էր. մեր դարի գիտութիւնն ուրիշ բնաւորութիւն ունի: Այլ ևս չեն ուսումնասիրում և դիտում, այլ երազում են և վատ անցկացրած մի քանի գիշերների երազները տալիս են մեզ իբրև փիլիսոփայութիւն: Ինձ համար էլ կասեն, որ երազում եմ, ինքս էլ խոստովանում եմ, բայց ես իմ երազները տալիս եմ իբրև երազ և թողնում եմ ընթերցողին հետազօտելու՝ թէ արդեօք արթունների համար դրա մէջ օգտակար բան կայ՝ թէ ոչ: Ուրիշները խոհեմաբար այդպէս չեն անում:

թիւն է տալիս և նրան ընդունակ դարձնում ամեն տեսակ
տպաւորութիւններ ընդունելու, նրա համար չէ, որ տպաւորէ
թագաւորների անուններ, տարեթուեր, կնքագիտական, աստղա-
բաշխական և աշխարհագրական արտայայտիչ նշաններ և այն բոլոր
բառերը, որոնք միտք չունին նրա հասակի համար և ոչ էլ օգուտ՝
ոչ մի հասակի համար, միայն ծանրաբեռնում են նրա անմխիթար
ու ամայի մանկութիւնը — այլ նրա համար, որ այն բոլոր գաղափար-
ները, որ ընդունում են նրանք և որ օգտակար կարող է լինել
նրանց համար, որ վերաբերում են նրա բաղդաւորութեանը և
մի օր նրա պարտականութիւնները պէտք է պարզեն՝ կանխա-
պէս անջնջելի գծերով տպաւորուին և նրա ամբողջ կեանքում՝
իւր էութեանն ու ընդունակութիւններին յարմար եղանակով
պէտք գան։

134. Յիշողութեան այն տեսակը, որ կարող է ունենալ երե-
խան, պարապ չէ մնում, եթէ նոյն իսկ գրքերով չէ ուսում առ-
նում նա այն ամենը, ինչ որ տեսնում և լսում է երեխան, տպա-
ւորութիւն է անում և նրա յիշողութեան մէջ մնում. նա իր մէջ
մարդկանց գործողութիւնների և խօսածների մի ցուցակ է կրում.
նրա ամբողջ շրջապատն է այն գիրքը, որից նա, առանց այդ
մասին մտածելու, նոր գանձեր է ստեղծագործում իւր յիշողու-
թեան համար, մինչև որ նրա դատողութիւնը կարողանայ օգտուե-
լ նրանցից։ Երեխայի այս սկզբնական ընդունակութիւնը պէտք
է խնամել, պէտք է ջանալ ներկայացնել նրան այն, ինչ որ կա-
րող է ըմբռնել և թագցնել այն, ինչ որ նա չպէտք է ճանաչէ.
այս եղանակով հաւաքած ճանաչողութիւնների պաշարը կծառայի
նրա դաստիարակութեան համար՝ երիտասարդութեան միջոցին և
բարոյական առաջնորդը կլինի ընդմիշտ։ Հարկաւ այսպիսի դաս-
տիարակութիւնը հրաշամանուկներ չէ կրթում. դաստիարակներն
ու դաստիարակչուհիները չեն կարող դրանով փայլել. բայց պատ-
րաստում է կորովամիտ, գործունեայ, մարմնապէս և հոգեպէս
առողջ մարդիկ, որ պատանեկութեան ժամանակ զարմանքի
առարկայ չեն լինի, բայց իբրև տղամարդիկ՝ կյարգուեն։

135. Էմիլն երբեք մի բան անգիր չի անի և ոչ իսկ առակ-
ներ. նոյն իսկ Լա Ֆոնտէնինն էլ չէ, որչափ էլ սրանք մանկա-
կան ու հրապուրիչ են, որովհետև առակի խօսքերը նոյն իսկ ա-
ռակը չեն ներկայացնում, ինչպէս որ պատմութեան խօսքերը նոյն
իսկ պատմութիւնը չէ։ Ինչպէս կարելի է այնպէս կարճատես լի-
նել և առակները երեխաների բարոյականութիւնն անուանել, ա-
ռանց մտածելու, որ ջատագովը բոլոր խօսակիցներին մոլորեցնում
է, որ նրանք ստութեամբ մոլորուած՝ ձեռքից թողնում են ճշմար-

տութիւնը և որ ուսուցումն ախորժելի անելու հասար գործա-
դրուած միջոցները միևնոյն ժամանակ արգելք են լինում՝
դրանից օգտուելու։ Առակները չափահասների համար կա-
րող են խրատական լինել, իսկ մանուկներին պէտք է մերկ ճըշ-
մարտութիւնն ասել. հենց որ ճշմարտութիւնը քողով ծածկում են,
այլ ևս նեղութիւն չեն կրում՝ քողը բարձրացնելու։

136. Բոլոր երեխաներին սովորեցնում են Լաֆոնտէնի
առակները, բայց դրանցից ոչ մէկը չէ հասկանում այդ առակ-
ները։ Եթէ հասկանային, աւելի վատ կլինէր, որովհետև դրանց
բարոյականն՝ այնքան բարդ է և նրանց հասակին այնքան անյար-
մար, որ երեխաներին աւելի դէպի մոլութիւնները, քան թէ դէ-
պի առաքինութիւնները կառաջնորդեն։ Կրկին պարադոքսներ,
կասեն ինձ. թող այդպէս լինի. տեսնենք՝ թէ արդեօք ճշմարտու-
թիւններ են դրանք։

137. Ես պնդում եմ, որ երեխան չէ հասկանում իւր սովո-
րած առակները, որովհետև չնայելով առակը պարզաբանելու բո-
լոր ջանքերին, նրանցից հանելիք խրատը ստիպում է այնպիսի մըտ-
քի հոսանքներ առաջացնել, որ երեխան չի կարող ըմբռնել և ո-
րովհետև հենց բանաստեղծական ձևը, որ այնպէս հեշտացնում է
մտքում պահելը, դժուարացնում է հասկանալը, այնպէս որ առա-
կի հեշտութեամբ սովորելը տեղի է ունենում ի հաշիւ նրա պար-
զութեան։ Առանց ուշադրութիւն դարձնելու այն բազմաթիւ ա-
ռակների վրայ, որոնք երեխաների համար հասկանալի կամ օգ-
տակար ոչինչ չեն պարունակում և որոնց անշնորհք կերպով սո-
վորեցնում են նրանց միւսների հետ խառը, խօսքս կսահմանա-
փակեմ միայն այն առակներով, որ հեղինակը, ինչպէս ինձ թւում
է, յատկապէս երեխաների համար է կազմել։

138. Լա Ֆոնտէնի առակների ամբողջ ժողովածուի մէջ ես
գիտեմ միայն հինգ թէ վեց առակ, որոնց մէջ ճշտութեամբ ար-
տայայտւում է մանկական անմեղութիւնը. այս հինգ թէ վեց ա-
ռակից իբրև օրինակ վերցնում եմ հենց առաջինը, որովհետև նրա
բարոյականն ամենից շատ է ամեն հասակին յարմարւում, որով-
հետև մանուկներն ամենից լաւ են ըմբռնում և որովհետև մեծ
սիրով են բերանացի սովորում և վերջապէս, որովհետև հեղինակը,
հենց այդ պատճառով, առաւելութիւն տալով դրան՝ իւր գրքի
սկզբումն է զետեղել։ Եթէ կամենում էք հեղինակին վերագրել՝ խա-
կապէս երեխաներին հասկանալի լինելու, զուարճացնելու և խրա-
տելու գիտաւորութիւնը, այն ժամանակ այս առակը հարկաւ նրա
գլուխ գործոցն է. ուրեմն թող թոյլ տրուի ինձ՝ աչքի անցկաց-
նել այս առակը և մի քանի խօսքով լուսաբանել։

139. *Ագռաւն ու աղուէսը*

Առակ

Maître corbeau, sur un arbre perché,

(Վարպետ ագռաւը մի ծառի վրայ թառած՝)

Maître! ինչ է նշանակում այս բառն ըստ ինքեան: Ի՞նչ նշանակութիւն ունի, երբ յատուկ անուան առաջն է դրուած: Ի՞նչ միտք ունի այս դիպուածում:

Ի՞նչ է ագռաւը:

Ի՞նչ է նշանակում un arbre perché. Չենք ասում sur un arbre perché, այլ perché sur un arbre: Հետեւապէս պէտք է բացատրել, որ բանաստեղծութեան մէջ բառերի դասաւորութիւնը կարելի է փոփոխել, պէտք է ասել՝ թէ ինչ է արձակ և բանաստեղծական գրուածքը:

Tenait dans son bec un fromage.

(բռնած ունէր իւր կտուցով մի (կտոր) պանիր:)

Ի՞նչպիսի պանիր, շուէյցարակա՞ն, հոլանդակա՞ն կամ թէ fromage de Brie? Եթէ երեխան դեռ ագռաւ չէ տեսել, ինչ միտք ունի ագռաւի մասին խօսելը: Իսկ եթէ տեսել է, ինչպէս պէտք է ըմբռնի, որ նրա՛նք կարող են մի պանիր կտուցով բռնել: Պատկերները պէտք է բնութիւնից նկարել.

Maître renard, par l'odeur alléché,

(Վարպետ աղուէսը բուրմունքից հրապուրուած,)

Դարձեալ մի վարպետ. բայց այս անգամ լիակատար իրա-
ւունքով. Նա իւր արհեստի բոլոր հնարքներին քաջ տեղեակ է:
Այստեղ պէտք է ասել՝ թէ ինչ է աղուէսը և զանազանել նրա
իսկական բնոյթն առակների մէջ սովորական դարձած բնաւորու-
թիւնից:

Alléché սովորական խօսք չէ: Ուրեմն պէտք է բացատրուի.
պէտք է տեղեկացնել երեխային, որ այս բառը միայն ոտանաւո-
րի մէջ է այժմ գործածական: Երեխան կհարցնի՝ թէ ինչո՞ւ ոտա-
նաւորի մէջ ուրիշ կերպ ենք խօսում, արձակում՝ ուրիշ: Ի՞նչ
պէտք է պատասխանես:

Alléché par l'odeur d'un fromage (հրապուրուած պանրի
բուրմունքից): Այս պանիրը, որ ծառի վրայ թառած ագռաւն ունի
բռնած, շա՞տ թունդ հոտ պէտք է ունենար, որ մի թփի կամ իւր
բռնած, շա՞տ թունդ հոտ պէտք է ունենար, որ մի թփի կամ իւր
ոլջի մէջ նստած աղուէսն իմանար: Արդեօք ձեր սանին վարժեցո-
նում էք այն հոգւով սուր քննադատութիւն անելու, որ միայն
զօրեղ պատճառներով է յետ քաշւում և ուրիշների տեղեկութիւն-
ների մէջ ճշմարտութիւնը կարողանում է զանազանել ստութիւնից:

Lui tint à peu près ce langage:

(Արտասանեց մօտաւորապէս այս ճառը.)

Ce langage! Ուրեմն աղուէսները խօսում են և խօսում են հենց այն լեզուով, ինչ լեզուով որ խօսում են ագռաւները: Եթէ խոհականութիւն ունիս, ուսուցիչ, զգոյշ կաց. պատասխան տալուց առաջ լաւ կշռիր ասելիքդ: Աւելի շատ բան է կախուած այդ պատասխանից, քան դու կարծում ես:

Eh! bonjour, monsieur le corbeau!

(Ա՜յ, բարև ձեզ, պարոն ագռաւ.)

Monsieur! Երեխան տեսնում է, որ այս կոչական անունը ծաղրական մտքով է գործածուած, առաջ քան գիտենալը, որ այդ խօսքը պատուաբեր կոչական անուն է: Եթէ monsieur du corbeau խօսքը պատուաբեր կոչական անուն է: Եթէ monsieur du corbeau ասէինք, ուրիշ աւելի մեծ դժուարութիւնների կհանդիպէինք, մինչև որ du պարզուէր:

Que vous êtes joli! que vous me sembles beau!

(Ի՜նչ գեղեցիկ էք, ինչ սիրուն էք թւում ինձ:)

Կարկատուն խօսքեր, անօգուտ բազմաբանութիւն: Երբ երե-
խան միևնոյն բանն ուրիշ արտայայտութեամբ մի անգամ էլ լը-
սում է, անճիշտ խօսել է սովորում: Եթէ ասեն՝ թէ այս բազմա-
բանութեան մէջ հեղինակի արուեստն է պարունակւում, որ յար-
մարւում է աղուէսի դիտաւորութեանը և ուզում է ցոյց տալ, որ
իբրև թէ բառերի հետ բարձրանում է նաև գովասանքը, այդ մի
արդարացումն կլինի ինձ համար, բայց ո՛չ իմ սանիկի:

Sans mentir, si votre ramage

(Առանց ստելու, եթէ ձեր երգը)

Sans mentir. Ուրեմն երբեմն ստո՞ւմ են: Երեխան ինչ պէտք է մտածէ, երբ դու նրան սովորեցնում ես, որ աղուէսը միայն նրա համար է sans mentir, որովհետև հենց այդ ասելով ստում է:

Répondait à votre plumage

(Համապատասխանէր ձեր փետուրներին)

Répondait. ինչ է նշանակում այս խօսքը: Երեխայից սովո-
րեցրու ձայնի և փետուրների նման տարբեր յատկութիւնները
համեմատել և կտեսնես՝ թէ ինչպէս կհասկանայ քեզ:

Vous seriez le phénix des hôtes de ces bois.

(Դուք կլինէիք այս անտառի բնակիչների փիւնիկը:)

Le phenix. Ի՞նչ բան է փիւնիկը: Այս բառով մենք միան-
գամից հին աշխարհի ստութեան և նոյն. իսկ առասպելաբանու-
թեան մէջ կընկնէինք:

Les hôtes de ces bois. Ի՞նչ զարդարուն խօսքեր: Շողոքորթը ծաղկեցնում է իր խօսքը և աւելի արժանիք տալիս նրան, որ աւելի մոլորեցնող ազդեցութիւն ունենայ: Երեխան կհասկանա՞յ այս նրբութիւնը. արդեօք նա գիտէ՞, կամ կարո՞ղ է գիտենալ՝ թէ ինչ է բարձր կամ ստորին ոճը:

A ces mots, le corbeau ne se sent pas de joie;
(Այս խօսքերի վրայ՝ ագռաւն ուրախութիւնից իրեն կորցնելով)

Պէտք է մարդ արդէն շատ զօրեղ կրքեր զգացած լինի, որ այս առածի ձև ունեցող արտայայտութիւնը հասկանայ:

Et pour montrer sa belle voix,
(և իր գեղեցիկ ձայնը ցոյց տալու համար)

Չպէտք է մոռանալ, որ ոտանաւորի այս տունը և ամբողջ առակը հասկանալու համար՝ երեխան պէտք է գիտենայ թէ ինչ գեղեցիկ ձայն ունի ագռաւը:

Il ouvre un large bec, laisse tomber sa proie.
(Նա լայն բաց է անում կտուցը և ցած գցում իր աւարը:)

Այս տունն անգերազանցելի է. դաշնակութիւնն արդէն նըկարչական է: Ես տեսնում եմ մի զզուելի կտուց լայն բացած և լսում եմ, որ պանիրն ընկնում է ճիւղերի միջով. բայց այս տեսակ գեղեցկութիւնները կորած են երեխաների համար:

Le renard s'en saisit, et dit: Mon bon monsieur,
(Աղուէսը յարձակւում է պանրի վրայ և ասում. բարի պարոնս,)

Ուրեմն այստեղ էլ բարեսրտութիւնն արդէն յիմարութիւն է դարձել: Այդ հարկաւ ճշմարիտ է, շատ ենք շտապում երեխաներին լուսաւորելու:

Apprenez que tout flatteur
(իմացէք, որ իւրաքանչիւր շողոքորթ)

Մի ընդհանուր միտք է. գործից շեղւում ենք:

Vit aux dépens de celui qui l'écoute.
(ապրում է նրա հաշուով, ով լսում է նրան:)

Երբէք տաս տարեկան երեխան այս տունը չէ հասկացել:

Cette leçon vaut bien un fromage, sans doute.
(Այս դասը մի կտոր պանիր արժէ, անկասկած)

Այս պարզ է և միտքը շատ լաւ: Բայց միևնոյն ժամանակ շատ քիչ երեխաներ կգտնուին, որ կարողանան խրատը պանրի հետ համեմատել և ոչ թէ պանիրը խրատից գերադասեն: Ուրեմն պէտք է նրանց հասկացնել, որ այս նախադասութիւնը միայն ծաղր է: Ո՞րքան նրբութիւն մանուկների համար:

Le corbeau, honteux et confus,
(Ագռաւը՝ ամաչած և շփոթուած)

Դարձեալ բառերի կուտակումն և այս անգամ՝ անիրաւացի:

Jura, mais un peu tard, qu'on ne l'y prendrait plus.
(երդուեց, բայց մի փոքր ուշ, որ ինքն այլ ևս չի բռնուի):

Jura. Ո՞ր ուսուցիչն այնքան խենթ կլինի, որ կամենայ երեխաներին բացատրել՝ թէ ինչ է երդումը:

140. Սրանք հարկաւ շատ մանր բաներ են և կարիք չկայ այս առակի ամբողջ մտքերի պարունակութիւնը մասերի բաժանելու և պարզ ու հիմնական գաղափարների վերածելու, որից բաղկացած է առակը: Բայց պատանիներին հասկանալի անելու համար ո՞վ է զգում այս մասերի բաժանելու կարևորութիւնը: Մեզնից ոչ ոք այնչափ փիլիսոփայ չէ՝ որ իրեն երեխայի տեղ դնէ: Այժմ տեսնենք բարոյականը:

141. Հարցնում եմ, արդեօք վեց տարեկան երեխաներին պէ՞տք է սովորեցնել՝ թէ կան մարդիկ, որ իրենց օգտի համար շողոքորթում են ու ստում: Ամենաշատը նրանց պէտք է սովորեցնէինք, որ կան ծաղրողներ, որ փոքրիկ տղաներին ծաղրում են և նրանց յիմար ունայնասիրութեան վրայ նրանց յետևից զուարճանում. բայց պանիրն ամեն բան փչացնում է. նրանց այնքան չեն սովորեցնում՝ պանիրը կտուցից վայր չձգելը, որքան ուրիշի կտուցից խլելը: Այս է իմ երկրորդ պարադոքսը և ոչ ամենաաննշանը:

142. Դիտէ՛ր մի անգամ երեխաներին, երբ նրանք առակներ են սովորում և կտեսնես, որ եթէ նրանք առհասարակ կարողանում են սովորածը գործադրել՝ համարեա միշտ հեղինակի դիտաւորութեան հակառակն են հասկանում և փոխանակ նկատելու իրենց սխալները, որոնցից կամենում ենք նրանց բժշկել կամ պահպանել, ուրիշների սխալներից օգուտ քաղելու մոլութիւնն են իւրացնում: Վերոյիշեալ առակում ամենքը ծիծաղում են ագռաւի վրայ, բայց աղուէսը սիրելի է դառնում նրանց համար: Հետեւեալ առակով կարծում են թէ ծղրիդն օրինակելի կլինի երեխաների համար, բայց նրանք մրջիւնին առաւելութիւն կտան: Մարդս չի կարող իրեն ստորացնել, նա միշտ ամենալաւ դերն է ընտրում. նա ընտրում է անձնասիրութիւնը և այս շատ բնական ընտրութիւն է: Ի՞նչ սարսափելի խրատ երեխայի համար: Բոլոր այլասերուած արարածների մէջ ամենաատելին այն աչքածակ (ընչաքաղց), քարասիրտ երեխան կլինէր, որ գիտենար թէ ինչ են խնդրում իրենից և թէ ինքն ինչ է մերժում: Բայց մրջիւնն աւե-

լի հեռու է գնում, նա մերժելիս սովորեցնում է դեռ հեգնել էլ։

143. Այն բոլոր առակներում, որտեղ առիւծը դեր է խաղում, բնականաբար ամենափայլուն անձնաւորութիւնն է. երեխան ուզում է անպատճառ առիւծ լինել և եթէ որև է բան բաժանելու լինի, նրա օրինակին հաւատարիմ մնալով՝ կհոգայ, որ ամեն բան իրեն ընկնի։ Բայց երբ մժղուկը յաղթում է առիւծին, բանը փոխւում է. այդ դէպքում մանուկը ոչ թէ առիւծ, այլ մժղուկ է։ Մի օր նա սովորում է ասեղով ծակծակելով սպանել նրանց, որոնց բաց աչքերով չէ համարձակւում ձեռք տալ։

144. Վտիտ գայլի և գեր շան առակից երեխան չափաւորութեան պատուէրը չէ ստանում, ինչպէս որ կարծւում է, այլ սանձարձակութիւն է սովորում։ Մտքից չէ անցնում՝ թէ ինչպիսի դառն արտասուքներ էր թափում մի անգամ մի փոքրիկ աղջիկ, որին յուսահատեցրել էին այս առակով և շարունակ հնազանդութիւն քարոզել։ Երկար ժամանակ չէին կարողանում հասկանալ նրա լացի պատճառը, վերջապէս գուշակեցին։ Խեղճ երեխան միշտ շղթայուած մնալուց ձանձրացել էր, նրան այնպէս էր թւում, որ իւր վզի կաշին արդէն քերթուած է. նա լալիս էր, թէ ինչու ինքն այն գայլը չէ։

145. Ուրեմն առաջին առակի բարոյականը ստոր շողոքորթութիւնն է, երկրորդինը՝ բարբարոսութիւն, երրորդինը՝ անարդարութիւն, չորրորդինը՝ ծաղր, հինգերորդինը՝ անկախութիւն։ Թէև իմ սանի համար այս վերջինն աւելորդ է, բայց ձերերի համար աւելի անյարմար է։ Երբ դուք իրար հակասող պատուէրներ էք տալիս նրան, ինչ պտուղ էք սպասում ձեր աշխատանքից։ Բայց, այս դիպուածի բացառութեամբ, այն ամբողջ բարոյականը, որ առիթ է տալիս ինձ հակառակ լինելու առակներին, գուցէ ունենի և այնպիսի շատ հիմունքներ, որոնք անհրաժեշտ են դարձնում դրանց սովորեցնելը։ Հասարակական կեանքում մենք բառերով այլ բարոյականութիւն ենք արտայայտում, օրինակներով այլ և այս երկուսը միասին երբեք միատեղ չեն լինում։ Առաջինը գտնւում է քրիստոնէականում և մնում է անձեռնմխելի. երկրորդը գտնւում է *Լա Ֆոնտէնի*, երեխաների համար գրած, առակներում, իսկ մայրերի համար՝ նրա պատմութիւնների մէջ։ Միևնոյն հեղինակն երկու նպատակներին էլ ծառայում է։

146. Մենք իրար կհասկանանք, սիրելի *դը Լա Ֆոնտէն*։ Ես իմ կողմից խոստանում եմ՝ ընտրութեամբ կարդալ քո առակները, սիրել քեզ և առակներիդ մէջ խրատ որոնել. որովհետև յոյս ունեմ, որ ճիշտ եմ ճանաչել դրանց նպատակը։ Իսկ ինչ վերաբերում է իմ սանին, թոյլ տուր, որ ոչ մէկն էլ չսովորեցնեմ

նրան, մինչև որ չապացուցանես ինձ, թէ նրա համար լաւ է այնպիսի բաներ սովորելը, որի չորրորդ մասն էլ չէ հասկանում, իսկ հասկացածների շնորհիւ էլ չի յիմարանայ և ստահակին երբեք օրինակելի չի ընդունի, այլ յիմարից կզգուշանայ։

147. Քանի որ այսպիսով բոլոր պարտականութիւնները հեռու եմ պահում երեխաներից, հեռացնում եմ նաև նրանց ամենամեծ չարիքի աղբիւրները—գրքերը։ Կարդալը պատիժ է երեխաների համար և այդ համարեա թէ միակ զբաղմունքն է, որ տալիս են երեխաներին։ Էմիլը տասներկու տարեկան հասակում հազիւ կիմանայ՝ թէ ինչ է գիրքը։ Սակայն, կասեն ինձ, նա պէտք է առ նուազն գոնէ կարդալ սովորի։ Հարկաւ. նա կարդալ կսովորի, երբ կարդալը նրա համար օգտակար կլինի, մինչև այդ ժամանակ կարդալը միայն կձանձրացնի նրան։

148. Եթէ հնազանդութեան շնորհիւ երեխաներին չստիպենք մի բան անելու, հետևանքն այն կլինի, որ նրանք ոչինչ չեն կարող սովորել եթէ դրա իսկական և վայրկենական օգուտը չտեսնեն՝ լինի այդ որև է զուարճութիւն կամ շահ. ուրիշ ինչ շարժառիթից ստիպուած պէտք է նրանք կարդալ սովորէին։ Բացակաների հետ խօսելու և նրանց հասկանալու, առանց միջնորդների՝ մեր զգացմունքները, կամքը, ցանկութիւնները հեռու տեղ հաղորդելու արուեստն այնպիսի մի օգուտ է, որ ամեն հասակի անհատներին կարելի է հասկացնել։ Շատ զարմանալի պէտք է լինի, որ այսպիսի օգտակար և հաճելի արուեստն երեխաների համար տանջանք է դարձել։ Սակայն բանն այն է, որ նրանց ստիպում են հակառակ իրենց կամքի դրանով զբաղուելու և այնպիսի նպատակների ծառայելու, որոնց մասին երեխաները բոլորովին գաղափար չունեն։ Երեխան երբեք չի աշխատի կատարելագործել մի գործիք, որով իրեն են տանջում. բայց եթէ աշխատէք, որ այդ գործիքը նրա զուարճութեան համար ծառայէ, նա շուտով ինքն իրեն դրանով կզբաղուի՝ հակառակ քո կամքի։

149. Մարդիկ կարդալ սովորելու համար ամենալաւ եղանակներ գտնելն ահագին գործ են դարձնում, հնարում են կարդալու արկղիկներ և քարտեր, երեխայի սենեակը դարձնում են տպարանական գործարան։ *Լոքէն* ցանկանում է, որ երեխան խորանարդներով կարդալ սովորի։ Հիանալի գիւտ չէ այս։ Ափսոս։ Այս բոլորից ամենաապահով միջոցը, որ միշտ և շարունակ մոռացութեան է տրւում, սովորելու ցանկութիւնն է։ Ներշնչիր երեխային այս պահանջը և մի կողմը ձգիր քո արկղիկներն ու խորանարդները, որովհետև այդ ժամանակ ամեն մեթոդ լաւ կլինի նրա համար։

150. Անմիջական հետաքրքրութիւնն է այն մեծ և միակ ձըգտումը, որ ապահով կերպով ու երկար է ներգործում: Էմիլն երբեմն իր հօրից, մօրից, ազգականներից ու բարեկամներից հրաւիրատոմսեր է ստանում՝ ճաշելու, զբօսնելու, նաւելու կամ թէ որև է հրապարակական տօնախմբութեան մասնակցելու համար: Այս նամակատոմսերը կարճ, պարզ, սիրուն և գեղեցիկ են գըրուած: Պէտք է մարդ որոնել այս նամակները կարդալու համար. այս մարդն էլ կամ շուտով չէ գտնւում, կամ թէ կամենալով հատուցանել երեխայի պատճառած նախորդ օրուայ տհաճութեան փոխարէնը, չէ կամենում կարդալ: Այսպիսով առիթն ու իսկական ժամանակը կորչում է: Վերջապէս նամակը կարդում են նրա համար, բայց արդէն ուշ է լինում: Ո՜հ, երանի թէ ինքը կարդալ կարողանար: Ստացւում են դարձեալ ուրիշ նամակներ և որքան կարճ են, բովանդակութիւնը հետաքրքրական. մարդ ուզում է փորձել՝ գրածի միտքն իմանալու. երբեմն յաջողւում է, երբեմն ոչ: Մարդ հաստատապէս որոշում է կարդալ և վերջապէս կարդում նամակի կէսը, որտեղ գրուած է, որ վաղը պէտք է չօկօլադ ունենալ—բայց յայտնի չէ՝ թէ որտեղ և ում մօտ—որչափ աշխատանք պէտք է թափել՝ նամակի մնացած կէսն էլ կարդալու համար: Ես կարծում եմ, որ Էմիլը կարդալու արկղիկի կարիք չի ունենայ: Արդեօք գրելու մասին խօսեմ այժմ: Ո՛չ, ես ամաչում եմ դաստիարակութեան մասին գրուածքում այսպիսի չնչին բաների մասին խօսել:

151. Միայն մի խօսք դարձեալ, որի մէջ կարևոր սկզբունք կայ. սովորաբար այն, ինչի որ այսպիսի մեծ հապճեպով չենք ձգտում, շատ ապահով կերպով և շուտ ենք ձեռք բերում: Ես համարեա՛ իբրև իրողութիւն եմ ընդունում, որ Էմիլը տասը տարեկան դառնալուց առաջ կարող է կատարելապէս կարդալ ու գրել, հենց որովհետև ես մեծ նշանակութիւն չեմ տալիս, որ նա տասնհինգ տարեկան դառնալուց առաջ այդքան գիտենայ. բայց ես աւելի սիրով կցանկանայի, որ նա երբէք կարդալ չսովորէր, եթէ այդ գիտութիւնը պէտք է ձեռք բերեմ այն բոլորի գնով, ինչ որ կարդալը կարող է օգտակար դարձնել նրա համար. ինչ օգուտ պէտք է տայ նրան կարդալն այդ դէպքում: Jd imprimis cavere oportebit ne studia qui amare nondum potest, oderit, et amaritudinem semel perceptam etiam ultra rudes annos reormidet *).

*) «Ամենից առաջ պէտք է զգուշանալ, որ ով դեռ չի կարող սիրել ուսմունքը, չատէ այն և մի անգամ արդէն նրա դառնութիւնը ճաշակելով, նաև առաջին տարիներից յետոյ՝ չխրտնի նրանից»:

152. Որքան աւելի եմ պաշտպանում իմ մեթոդը, այնքան աւելի ես զգում եմ այն առարկութիւնները, որ պէտք է անուին նրա դէմ: «Եթէ քո սանը ոչինչ չսովորի քեզնից, ուրիշներից կը սովորի: Եթէ դու ճշմարտութեամբ սխալանքի առաջը չկտրես, երեխան ստեր կիւրացնի. այն նախապաշարումները, որ ուզում ես հեռու պահել նրանից, նա կընդունի իւր ամբողջ շրջապատից. նա իւր բոլոր զգայարաններով կըմբռնէ այդ. դրանք կամ նրա դեռ չկազմակերպուած խոհականութիւնը կփչացնեն, կամ նրա երկար ժամանակ անգործ մնացած և նիրհած հասկացողութեան ոյժը կթուլանայ: Մանկական հասակի չմտածելու սովորութիւնը կարող է չարունակուել և նրա մնացած ամբողջ կեանքի ընթացքում»:

153. Ինձ թւում է, որ ես հեշտութեամբ կարող էի պատասխանել. բայց ինչու՞ միշտ պատասխանեմ: Եթէ իմ մեթոդն ինքը կպատասխանէ այդ առարկութիւններին, լաւ կլինի, իսկ եթէ ոչ, բանի պէտք չէ: Ուրեմն և չարունակում եմ:

154. Եթէ իմ սկսած նախագծած ծրագրով հետևես այժմ սահմանուող սովորութեան ճիշտ հակառակ ընթացքին, եթէ սանիդ ոգին փոխանակ հեռուները սաւառնել տալու, փոխանակ նրան չարունակ ուրիշ երկիրներում, կլիմաներում, ուրիշ դարերում, մինչև աշխարհի ծայրերը, այո՛, մինչև իսկ երկինքում մոլորեցնելու՝ քո պարտաւորութիւնը համարես նրան միշտ իւր շրջանում պահելու, նրա ուշադրութիւնը դարձնելու անմիջապէս նրան շրջապատող իրերի վրայ, այն ժամանակ դու նրան ընդունակ կգտնես՝ ըմբռնելու, իւրացնելու և կանոնաւոր մտածելու համար. այս է բնութեան կարգը: Երբ զգացող էակը քայլ առ քայլ հասնում է գործունէութեան, իւր ուժերին համապատասխանող հասկացողութիւն է ձեռք բերում և միայն իւր ինքնապահպանութեան համար ունեցած ուժով զարգանում է նրա մէջ գննական ընդունակութիւնը, որ ծառայում է ուժերի այս աւելորդն ուրիշ նպատակների համար գործադրելու: Ուրեմն եթէ ուզում ես սանիդ ոգեկան ոյժը խնամել, խնամիր ա՛յն ուժերը, որ դրանով պէտք է կառավարուեն: Վարժեցրու չարունակ նրա մարմինը, դարձրու նրա՛ն ուժեղ և առողջ՝ որպէս զի իմաստուն և խոհական դարձնես. նա պէտք է աշխատի, գործունեայ լինի, վազի, աղաղակի և միշտ շարժողութեան մէջ լինի. իւր ուժով պէտք է մարդ լինի և շուտով կլինի՝ իւր խոհականութեամբ:

155. Այս եղանակով հարկաւ նրան բթամիտ կդարձնէինք, եթէ չարունակ նրան դիմէինք և չարունակ կանչէինք. գնա՛ այնտեղ, կա՛ց, ա՛յս արա, թո՛ղ այն: Երբ քո գլուխն է միշտ ղեկավարում նրա ձեռքերը, շուտով նրա գլուխն անպէտք կլինի: Բայց

յիշիր մեր կայացրած համաձայնութիւնը. եթէ իմաստակի մէկն-
ես, այն ժամանակ չարժէ, որ կարդաս այս գրուածքը։

156. Շատ ցաւալի մոլորութիւն է, որ կարծում են՝ թէ մարմ-
նական վարժութիւնները վնասում են հոգու գործունէութեանը.
ինչ կլինէր, եթէ այս երկու գործունէութիւնները համաձայնու-
թեամբ միասին չներգործէին և մէկը միւսին միշտ չղեկավարէր։

157. Երկու մարդկային դասակարգեր կան, որ անընդհատ
մարմնական վարժութիւններ են անում և որոնցից ոչ մէկը, ոչ էլ
միւսը չէ մտածում իւր հոգին զարգացնելու. դրանք են գիւղա-
ցիներն ու վայրենիները։ Առաջինները ծանրաշարժ, բիրտ, փցուն
են. վերջինները յայտնի են իրենց նշանաւոր բնական խելքով,
բայց աւելի ես իրենց հոգու լաւութեամբ. ընդհանրապէս՝ գիւղա-
ցուց աւելի ծանրաշարժ և վայրենուց աւելի խորամանկ էակ չկայ։
Ո՞րտեղից է այս տարբերութիւնը։ Առաջինը միայն այն է անում,
ինչ որ հրամայում են կամ թէ՝ ինչ որ տեսել է իւր հօր ժամա-
նակ, կամ ինչ որ ինքն է արել երիտասարդութիւնից սկսած և
այդպիսով միշտ հետեւում է միայն վաղուցուայ սովորութեանը և
նրա համարեա մեքենայանման կեանքում, որ միշտ և անդադար
միևնոյն աշխատանքով է զբաղուած՝ սովորութիւնն ու հնազան-
դութիւնը խոհականութեան տեղն են բռնում.

158. Վայրենին բոլորովին այդպէս չէ. ոչ մի տեղի հետ կա-
պուած չլինելով, առանց որոշ, հաստատուն աշխատանքի, ոչոքի
չհպատակող, նա բացի իւր կամքից ոչ մի հրամանի չի ենթարկ-
ւում, ստիպուած է կեանքի ամեն մի գործունէութեան ընթաց-
քում՝ մտածել. նա ոչ մի շարժողութիւն, ոչ մի քայլ չէ անում
առանց նախապէս հետեւանքն ի նկատի ունենալու։ Այս եղանա-
կով որչափ նրա մարմինը վարժւում, այնչափ ես լուսաւորւում է
միտքը. նրա ոյժն աճում է խոհականութեան հետ միաժամանակ.
մէկն ընդարձակւում է միւսով.

159. Կորովամիտ ուսուցիչ, այժմ տեսնենք թէ մեր երկու
աշակերտներից ո՞րն է վայրենու նման և որը՝ գիւղացու։ Քո
աշակերտն ամեն բանում միշտ ուսուցանող հեղինակութեան
հպատակելով՝ առանց հրամանի ոչինչ չէ անում նա չի համար-
ձակւում ուտել, երբ քաղցած է, ծիծաղել՝ երբ ուրախ է, լալ՝
երբ տխուր է, մէկ ձեռքը միւսի փոխարէն երկարացնել կամ
ոտքն ուրիշ կերպ շարժել, քան պատուիրուած է նրան. չուտով
նա միմիայն քո կանոնների համաձայն շնչելու համարձակութիւն
կունենայ։ Էլ ինչ մտքեր ես պահանջում նրանից, երբ ամեն բան
դու ես մտածում նրա փոխարէն։ Էլ նա ինչ կարիք ունի նախա-
զգուշանալու առհասարակ, երբ ապահով է, որ դու ես նրա հա-

մար նախազգուշանում։ Նա տեսնում է, թէ ինչպէս դու հոգում
ես նրա պահպանութեան և բարեկեցութեան համար և այդ հոգ-
սից ազատ է զգում իրեն. նրա դատողութիւնը քո դատողութեան
վրայ է յոյս դնում. այն ամենը, ինչ որ չես արգելում նրան,
անում է առանց մտածելու, որովհետև լաւ գիտէ, որ այդպիսով
ոչ մի վտանգի ենթակայ չի լինի։ Արդեօք կարիք ունի նա սովո
րել՝ թէ ինչպէս են նախագուշակում անձրև գալը, երբ գիտէ, որ
դու ես դիտում երկինքը նրա փոխարէն։ Արդեօք կարիք ունի
իւր զբօսանքին որոշ ուղղութիւն տալու։ Նա երկիւղ չունի, որ
դու նրան ճաշին կուշացնես։ Քանի որ չես արգելի նրան ուտե-
լու, նա կուտէ. հենց որ արգելեցիր, այլ ես չի ուտի. նա այլ ես
իւր ստամոքսի ձայնին չէ ականջ դնում, այլ միայն քո ձայնին։
Եթէ կարողանաս նրա մարմինն անգործունէութեան մէջ թողնել,
դրանով նրա հասկացողութիւնն աւելի դիւրակոր չի լինի, ընդհա
կառակը, խոհականութեան արժէքը լիովին կստորացնես նրա
աչքում՝ նրա ունեցած սակաւ խելքն էլ գործ դնելով այնպիսի
բաների վրայ, որոնք նրա համար ամեն արժեքից զուրկ են։ Եւ
որովհետև նա երբէք չէ տեսնում, թէ խելքն ինչու համար է լաւ,
վերջն այն եզրակացութեանն է գալիս, որ ոչնչի համար էլ լաւ
չէ։ Ամենավատ բանը, որ կարող է պատահել նրան այն է, որ
խելքիսխալ գործածելուց յետոյ կպատժուի. բայց այդ էլ այնքան
յաճախ է պատահում նրան, որ համարեա էլ ուշադրութիւն չէ
դարձնում դրա վրայ. այդպիսի սովորական վտանգն այլ ես եր-
կիւղ չէ պատճառում նրան։

160. Քո կարծիքով պնուամենայնիւ նա ոգի ունի և ճիշտ
որ, այնքան ունի, որ կանանց հետ խօսի՝ իմ արդէն ցոյց տուած
եղանակով. բայց եթէ մի անգամ այնպիսի դէպք պատահի, որ
նա ստիպուած լինի ինքն իրեն պաշտպանել կամ դժուար դրու-
թեան մէջ մի վճիռ կայացնել, այն ժամանակ դու նրան ամենա-
բիրտ գիւղացու որդուց հարիւր անգամ աւելի վախկոտ և անշնորհք
կգտնես։

161. Իմ կամ աւելի լաւ է ասել՝ բնութեան աշակերտն, ընդ
հակառակը, ինքն իրեն բոլոր կարելոյն բաւականութիւն տալու
համար կանխահաս կերպով առաջնորդուած լինելով՝ միշտ ուրիշ-
ների օգնութեանը դիմելու սովորութեանը չէ ենթարկւում և ոչ
էլ իւր մեծ գիտութիւնն է ձեր առաջ դուրս տալիս։ Բայց դրա
փոխարէն դատողութիւն է տալիս, հոգում և մտածում է այն բո-
լորի մասին, ինչ որ անմիջապէս շօշափում է իրեն։ Նա չէ շաղա-
կրատում, այլ գործում է. նա բոլորովին չգիտէ, թէ ինչ է պատա-
հում աշխարհում, բայց շատ լաւ գիտէ անել այն բոլորը, ինչ որ

պատշաճ է իրեն։ Եւ որովհետև միշտ շարժողութեան մէջ է, պէտք է անհրաժեշտ կերպով շատ բան գիտէ, բազմակողմանի ներգործութիւններ ճանաչէ. Նա կանխահաս կերպով ձեռք է բերում մեծ փորձառութիւն, իւր ուսումը քաղում է բնութիւնից, ոչ թէ մարդկանցից և աւելի լաւ է ուսուցանում իրեն, որովհետև դասաւանդելու գիտաւորութիւն չէ նկատում ոչ մի տեղ։ Այսպէս վարժւում են նրա մարմինն ու ոգին միաժամանակ։ Եւ որովհետև նա միշտ գործում է ո՛չ թէ ուրիշի, այլ իւր մտքով, երկու գործունէութիւնները միշտ միացնում է միմեանց հետ. ուքան զօրեղանայ և ուժեղանայ նա, այնքան աւելի խելացի և դատելու ընդունակ կդառնայ։ Այս ճանապարհով մի օր կհասնենք երկու անմիաբանելի համարուած իրերի, որ համարեա բոլոր մեծ մարդիկ միացած են ունեցել—մարմնի և հոգու ույժ՝ իմաստունի խոհականութիւն և ըմբշամարտի մարմնակազմ։

162. Երիտասարդ դաստիարակ, ծանր արուեստ եմ քարոզում քեզ. պէտք է առաջնորդես առանց սովորեցնելու, ամեն բան անելով՝ այնպէս պէտք է ցոյց տաս՝ իբրև թէ ոչինչ չես անում։ Խոստովանում եմ, որ այս արուեստը չէ համապատասխանում քո հասակին, չի կարող ճարտարութիւնդ իսկոյն փայլեցնել և ոչ էլ հայրերի աչքում յարգանքդ ապահովել. բայց և այնպէս դրանով կարելի է նպատակին հասնել։ Քեզ երբէք չի յաջողուի իմաստուններ դաստիարակել՝ եթէ նախ ստահակներ չկրթես. այդպէս էին դաստիարակում սպարտացիք իրենց զաւակներին. փոխանակ գրքերի մէջ թաղելու նրանց, ամենից առաջ սովորեցնում էին՝ իրենց ճաշը գողանալ։ Միթէ այդ պատճառով սպարտացիք իբրև տղամարդ՝ թանձրամիտ գլուխներ էին։ Ո՞վ չգիտէ նրանց կծու պատասխանների ույժը։ Միշտ յաղթելու ճարտարութիւնն ունենալով՝ ամեն տեսակ կռիւների մէջ գետին էին տապալում իրենց հակառակորդներին և շաղակրատ աթենացիք նոյնքան վախենում էին նրանց խօսքերից, ուքան և նրանց հարուածներից։

163. Ամենահոգացող դաստիարակչական համակարգութիւնների մէջ ուսուցիչը հրամայում է և կարծում՝ թէ սանձն իր ձեռքն է. բայց իսկապէս երեխան է տօն տալիս։ Ինչ որ դու նրանից պահանջես, նրա համար մի միջոց կլինի՝ քեզնից ստիպելով առնելու այն, ինչ որ ինքն է ցանկանում և մի ժամուայ փութաջան աշխատանքը դու պէտք է ութ օրուայ պատրաստակամութեամբ վճարես։ Ամեն վայրկեան պէտք է նրա հետ բանագնացութիւն ունենալ։ Այն դաշինքները, որ դու ըստ քո հաւանութեան ես առաջարկում և նա ըստ իւր հաւանութեան կատարում, միշտ յօգուտ

նրա տրամադրութեան են վճռւում, մանաւանդ երբ մարդ անշնորհք է լինում՝ յօգուտ իւր դրուած պայմանն ապահով պահելու և հսկելու՝ թէ արդեօք երեխան էլ կատարո՞ւմ է հակառակ պայմանները։ Երեխան սովորաբար աւելի լաւ է ուսուցչի միտքը դուշակում, քան թէ ուսուցիչը թափանցում աշակերտի սիրտը. ուրիշ կերպ չի կարող լինել, որովհետև այն բոլոր սրամտութիւնը, որ ինքն իրեն թողնուած երեխան պէտք է գործ դնէր իր պահպանութեան վրայ, այժմ գործ է ածում իւր բնական ազատութիւնը պաշտպանելու՝ բռնաւորի շղթաներից. մինչդեռ, ընդհակառակը, վերջինս նրան դիտելու ստիպողական առիթ չունենալով, երբեմն աւելի լաւ է համարում թոյլ տալ նրան ծուլանալու կամ անափառութեամբ զբաղուելու։

164. Դու պէտք է սանիդ հետ ճիշտ հակառակ ընթացքը բռնես. թող նա միշտ իբրև տէր պահէ իրեն, սակայն իրապէս դու պէտք է լինես միշտ տէրը։ Ոչ մի հպատակութիւն այնքան լիակատար չէ, քան այն, որ պահպանում է ազատութեան արտաքին երևոյթը. այդպիսով նոյն իսկ կամքը շղթայւում է։ Խեղճ երեխան, որ ոչինչ չգիտէ, ոչինչ չի կարող և ոչինչ չէ ճանաչում, ամբողջովին միթէ քո ողորմածութեանը չէ թողնուած։ Միթէ նրա ամբողջ շրջակայքը քո իշխանութեան տակ չէ։ Միթէ նրա աշխատանքներն ու խաղերը, նրա զուարճութիւնն ու ջանքը քո ձեռքը չեն տուած՝ առանց նրա գիտութեան։ Հարկաւ նա պէտք է անէ, ինչ որ կամենայ, բայց պէտք է կամենայ այն, ինչ որ դու ես կամենում. Նա ո՛չ մի քայլ չպէտք է անէ, որ նախատեսած չլինես. չպէտքէ բերանը բանայ՝ եթէ չգիտես թէ ինչ պէտք է ասէ։

165. Ցետոյ երեխան կարող է իւր հասակի պահանջած մարմնական վարժութիւններն անել՝ առանց միտքը բթացնելու։ Ասպա կտեսնես, թէ նա ինչպէս փոխանակ իւր սրամտութեանն ույժ տալու՝ որպէս զի այդ տաղտկալի վարչութիւնն ի դերև հանէ միմիայն նրանով կզբաղուի, որ իւր ամբողջ շրջակայքից վերցնի այն, ինչ որ ամենայաւն է իւր իսկական բարեկեցութեան համար. յետոյ զարմացած կմնաս՝ թէ սանդ ինչպէս լաւ գիտէ՝ իր ձեռք բերածներն իւրացնել և իրերն իսկապէս վայելել՝ առանց երևակայութեան օգնութեան։

166. Եթէ թողնես, որ երեխան այդպիսով իւր կամքի վրայ իշխէ, դրանով երես չես տայ նրան՝ իւր հաճոյքները կատարելու։ Երբ նա միայն այն է անում, ինչ որ իւր ցանկութեան համաձայն է, շուտով միայն այն կանէ՝ ինչ որ պէտք է անէ և չնայելով որ նրա մարմինը մշտական շարժողութեան մէջ է, քանի որ խնդիրը վերաբերում է նրա վայրկենական և չօշափելի հետաքրքրութեա-

նը, դու կտեսնես թէ ինչպէս նրա խոհականութիւնն, իր հասակի
համեմատ, աւելի լաւ և աւելի յարմար կերպով է զարգանում,
քան թէ կարող էր զարգանալ՝ միայն հագեկանն աչքի առաջ ու-
նեցող ուսմունքով։

167. Երբ սանիկն այս եղանակով երբէք չէ նկատում, որ
դու նրա կամքի հակառակ ես գործում, երբ վստահութիւն ունի
վրադ, քեզնից ծածկելու ոչինչ չունի, այն ժամանակ քեզ չի խա-
բի կամ չի ստի. նա անհոգ կերպով իրեն ցոյց կտայ այնպէս,
ինչպէս որ է. դու կարող ես հանգիստ հետազօտել նրան և նրա
շուրջն ամեն բան պատրաստել նրան ուսուցանելու համար, բայց
այնպէս, որ նա չնկատէ թէ դու ես ուսուցանողը։

168. Նա էլ քո առանձնայատկութիւնները նախանձոտ հե-
տաքրքրութեամբ չի զննի և քո մի թուլութիւնը նկատելիս գաղտ-
նի ուրախութիւն չի զգայ։ Դրանով մի շատ նշանաւոր անպատե-
հութեան առաջն առած կլինէինք։ Երեխաների առաջին զբաղմունք-
ներից մէկն է, ինչպէս արդէն նկատեցինք, իրենց ուսուցիչների
թոյլ կողմերը գտնել։ Այս հակումը ձգտում է դէպի չարութիւնը,
բայց դրանից չէ ծագում և առաջանում է՝ տաղտկալի ազդեցու-
թիւնից ազատուելու պահանջից։ Իրենց վրայ դրուած լուծի ծան-
րութիւնից ճնշուած՝ նրանք աշխատում են թօթափել այդ լուծը
և ուսուցիչների արած սխալները լաւ առիթ են լինում նրանց
ձեռքում։ Ժամանակի ընթացքում կազմւում է՝ մարդկանցն իրենց
թոյլ կողմերից դիտելու և այդ թոյլ կողմերը ուրախութեամբ ո-
րոնելու սովորութիւնը։ Պարզ է, որ այսպիսով Էմիլի սրտում մո-
լութիւնների մի աղբիւր էլ կխցուի. երբ նա այլ ես չի հետա-
քրքրուի իմ սխալները որոնելու, չի էլ որոնի և ուրիշների սխալ-
ները որոնելու փորձանքին էլ չի ենթարկուի։

169. Այս բոլոր գործողութիւնը դժուար է թւում, որովհե-
տև չենք սկսում. բայց իսկապէս դժուար չպէտք է լինի։ Արդա-
րացի պահանջ է, որ դու պէտք է կարեւոր խելամտութիւնն ունե-
նաս քո ընտրած կոչմանը ծառայելու. պէտք է ընդունել, որ դու
ճանաչում ես մարդկային սրտի բնական զարգացումը, որ հաս-
կանում ես մարդկանցն ու անհատներին ուսումնասիրելու գործը,
որ նախապէս գիտես թէ սանիդ կամքն ինչ ուղղութիւն կստանայ՝
իր հասակին համապատասխանող իրերի ըմբռնմամբ։ Գործիքներն
բեւր ձեռքն ունեցողը և գործադրել իմացողը՝ միթէ չպէտք է բա-
նեցնել կարողանայ։

170. Իմ սաածներին հակադրում են երեխայի հաճոյքը, բայց
անիրաւացի կերպով։ Երեխաների հաճոյքն երբէք բնութեան գոր-
ծը չէ, այլ վատ կրթութեան. Նրանք կամ հնազանդուել են, կամ

հրամայել և ես հարիւր անգամ ասել եմ, որ թէ մէկը և թէ միւսն
անտեղի են։ Քո սանը միմիայն այն հաճոյքները կունենայ, որ
դու ես տուել նրան. բայց բնական է, որ ինքդ կրես քո սխալնե-
րի հետեւանքը։ Սակայն ինչպէս կռուեմ դրա դէմ, կասես դու։
Թէև այդ կարելի է դեռ, բայց աւելի լաւ ղեկավարելով և աւելի
մեծ համբերութեամբ։

171. Մէկ անգամ մի երեխայ վերցրի՝ մի երկու շաբաթ
ինձ մօտ պահելու. սա ոչ թէ միայն սովոր էր իւր սեպհական
կամքը կատարելու, այլ և ամենքի մօտ էլ իր կամքն առաջ տա-
նելու. այդ պատճառով շատ զարմանալի յատկութիւններ ունէր։
Իմ զիջողութիւնն ի չարը գործ դնելով՝ նա հենց առաջին օրն
ուզում էր կէս գիշերին վերկենալ։ Մինչ խորը քնած էի, նա տե-
ղից վեր է թռչում, հագնում է տանու զգեստը և կանչում ինձ։
Ես վեր եմ կենում և մոմ վառում. Նրա ուզածն էլ միայն այդ էր,
քառորդ ժամ անցնելուց յետոյ նրա քունը տանում է և այդ
փորձով գոհ՝ կրկին անկողին է մտնում։ Երկու օրից յետոյ նա
կրկնում է նոյնը՝ միեւնոյն յաջողութեամբ. ես անհամբերութեան
ամենաչնչին նշան անգամ չեմ ցոյց տալիս։ Վերջին անգամ երբ
պառկելիս նա համբուրեց ինձ, ես շատ վայելուչ տօնով ասացի.
երիտասարդ բարեկամ, շատ լաւ է այդպէս. բայց այլ ես չկրկ-
նես։ —Այս խօսքը նրա հետաքրքրութիւնը շարժեց և հենց հե-
տեւեալ օրն ուզում էր տեսնել, թէ ինչպէս կհամարձակուեմ նրա
կամքը չկատարել և միեւնոյն ժամին վեր կենալով՝ կանչեց ինձ։
Ես հարցրի՝ թէ ինչ է կամենում։ Նա պատասխանեց, որ քունը
չէ տանում։ Աւելի վատ, պատասխանեցի և տեղիցս չշարժուեցի։
Նա խնդրեց, որ մոմը վառեմ. «ինչու համար», հարցրի և դար-
ձեալ չշարժուեցի տեղիցս։ Այս լակոնական ոճը նրան կամաց կա-
մաց շփոթեցրեց։ Նա ոտքի մատերի վրայ ման գալով՝ սկսեց կայծ-
հանը որոնել և այնպէս ձեւացնել՝ իբրև թէ կրակ է անում. ես
չկարողացայ ծիծաղս պահել՝ երբ լսեցի, որ նա իւր մատներն է
միմեանց զարկում։ Երբ վերջապէս բոլորովին համոզուեց, որ այդ-
պիսով բան չի դուրս գայ, կայծհանը մօտեցրեց անկողնիս. ես
ասացի՝ թէ ինձ հարկաւոր չէ և շուռ եկայ միւս կողքիս վրայ։
Յետոյ նա խելագարի պէս սկսեց սենեակի մէջ վազվզ-
զել, աղաղակել, երգել, ամեն տեսակ աղմուկ բարձրացնել, սեղա-
նին ու աթոռներին դիպչել, հարկաւ մեծ նախազգուշութեամբ.
բայց այնուամենայնիւ դրանից յետոյ սկսեց սաստիկ աղաղակել՝
յուսալով ինձ անհանգստացնել։ Այս բոլորը չազդեց և ես տեսայ,
որ նա յանդիմանութիւններ և բարկացած խօսքեր էր սպասում.
իմ այսպիսի սառնարիւնութիւնն անսպասելի էր նրա համար։

172. Բայց որովհետև նա վճռել էր իմ համբերությանը կամակորութեամբ յաղթել, աղմուկն այնպէս յաջողութեամբ չարունակեց, որ ես վերջը կատաղութեան հասայ և որովհետև նախատեսնում էի, որ անժամանակեայ եռանդով ամեն բան պէտք է փչացնեմ, նախագիծս փոխեցի: Առանց մի խօսք ասելու տեղիցս վեր կացայ և ուզեցի վերցնել կայծհանը, բայց չգտայ. հարցրի՝ թէ ո՞ւր է կայծհանը, նա չափազանց ուրախացած, որ վերջապէս յաղթեց ինձ, կայծհանը տուեց: Ես զարկեցի կայծհանը և մոմը վառեցի, բռնեցի փոքրիկ ստահակի ձեռքը և հանդարտ տարայ մերձակայ սենեակը, որի փեղկերը լաւ փակուած էին և որտեղ կոտրելու ոչինչ չկար. թողի նրան այդտեղ մթութեան մէջ, դուռը վրան փակեցի բանալիով և նորից տեղս պառկեցի՝ առանց մի խօսք անգամ ասելու: Ինչ ասել կուզէ, որ նա իսկոյն աղմուկ բարձրացրեց. այդ ի նկատի ունէի և բոլորովին չը վրդովուեցայ: Վերջապէս աղմուկը հանդարտուեց. ես ականջ դրի և լսեցի, թէ ինչպէս նա պառկեց և հանգստացաւ: Միւս առաւօտը ցերեկուայ լուսով մտայ այն սենեակը և փոքրիկ կամակորին գտայ խորը քնի մէջ ընկղմած. այնքան չարչարուելուց յետոյ հարկաւ քունը կարեւոր կլինէր:

173. Բայց դրանով պատմութիւնը չվերջացաւ: Մայրն իմացաւ, որ իւր զաւակը գիշերուայ երկու երրորդն անկողնից դուրս է անցկացրել: Իսկոյն ամենավատ բանը մտածեցին. երեխան մեռածի նման էր: Տղան յարմար առիթ գտաւ վրէժ խնդիր լինելու և իրեն հիւանդ ձևացրեց՝ հարկաւ չենթադրելով, որ դրանով ոչինչ չի վաստակի: Բժիշկ կանչեցին: Տարաբաղդաբար, մօր տեսակէտից, բժիշկը կատակասէր մարդ էր ու օգուտ քաղելով նրա երկիւղից, ամեն բան արեց՝ նրա երկիւղն աւելի ևս շատացնելու: Միևնոյն ժամանակ ականջիս ասաց. Թողէք, ես ամեն բան կանեմ. խոստանում եմ ձեզ, որ կարճ ժամանակից յետոյ երեխան կամակորութեան հիւանդութիւնից բոլորովին կբժշկուի: — Եւ իսկապէս կարգադրեց, որ երեխան պահեցութեան հետևի և տանը մնալու պատուէր տուեց: Շատ ցաւում եմ, որ բոլոր շրջապատողներն էլ խաղ էին խաղում խեղճ մօր գլխին, բացի ինձնից. իսկ նա ինձ վրայ էր բարկացած, որովհետև ես նրան չէի խաբում:

174. Բաւականին խիստ յանդիմանութիւններից յետոյ նա ասաց ինձ, որ իւր որդին քնքոյշ բնաւորութիւն ունի, ընտանիքի միակ ժառանգն է և ինչ էլ որ լինի, նա պէտքէ ապրի ու ինքը չէ ցանկանում, որ նրան հակառակուեն: Ես լիովին համաձայնեցի նրա հետ. բայց նա հակառակուել ասելով հասկանում էր ամեն առթիւ ընդդիմանալը: Ես պարզ տեսնում էի, որ մօր

հետ էլ ճիշտ այնպէս պէտք էր խօսել, ինչպէս որդու հետ: Ողորմած տիկին, ասացի նրան բաւականին սառնութեամբ, ես չգիտեմ թէ ինչպէս պէտքէ դաստիարակել ժառանգին, աւելի ևս, ես բոլորովին չեմ էլ ուզում սովորել. ի նկատի ունեցէք այդ և այնպէս կարգադրեցէք:— Դեռ մի առ ժամանակ ես կարեւոր էի նրանց համար. հա՛րն ամեն բան խաղաղացրեց. մայրը գրեց իրենց տնային ուսուցչին, որ շուտով վերադառնայ. երեխան տեսնելով, որ բան չվաստակեց՝ իմ քունը խանգարելով կամ հիւանդանալով վճռեց վերջապէս քնել և իրեն լաւ զգալ:

175. Դժուար է երևակայել՝ թէ այս փոքրիկ բռնակալը ո՛րքան այսպիսի քմահաճոյքների էր ենթարկում իւր դժբաղդ դաստիարակին. որովհետև դաստիարակութիւնը մօր ներկայութեամբ էր տեղի ունենում և վերջինս ոչ մի պայմանով չէր թոյլ տալիս, որ տոհմի գոյութիւնը պահպանողին որև է բանում հակառակուեն: Օրուա որ ժամին էլ նա կամենար տանից դուրս գնալ՝ պէտքէ պատրաստ լինէին նրան ուղեկցելու կամ աւելի լաւ է ասել՝ հետևելու. և նա միշտ աշխատում էր հենց այն վայրկեանն ընտրել, երբ դաստիարակն ամենից շատ զբաղմունք էր ունենում: Իմ վերաբերութեամբ նա ուզում էր նոյն քմահաճոյքները գործ դնել և գիշերուայ հանգստութեան փոխարէն, որ նա ստիպուած էր զիջանել, ցերեկը վրէժխնդիր լինել ինձնից: Ես կամաւ ամեն բան թոյլ էի տալիս և նրա ներկայութեամբ յայտնեցի՝ թէ ինչպիսի զուարճութեամբ պատրաստ էի ծառայելու, բայց յետոյ, երբ խնդիրը վերաբերում էր նրան քմահաճոյքից բուժելուն, ես ուրիշ կերպ ակսեցի:

176. Ամենից առաջ նա պէտք է բռնուէր անարդար գործ անելիս և այդ դժուար չէր: Որովհետև երեխաները, ինչպէս գիտէք, միշտ միայն ներկայի մասին են մտածում, նախազգուշութեան համար օգուտ քաղեցի այդ հանգամանքից. աշխատեցի նրա համար տնային որևէ այնպիսի զբաղմունք գտնել, որ համապատասխանում էր նրա հակումներին և օգտուելով նրա լաւ տրամադրութեան վայրկեանից՝ առաջարկեցի մի զբօսանք անել միասին. նա չկամեցաւ. ես պնդեցի, բայց ականջ չդրեց ինձ. ես պէտք է տեղի տայի և նա անկեղծ ուրախացաւ իմ հպատակութեան այս արտայայտութեան վրայ:

177. Հետևեալ օրը հերթն իմն էր: Այնպէս էի կարգադրել, որ նա ձանձրանում էր, իսկ ես ընդհակառակը՝ սաստիկ զբաղուած էի ցոյց տալիս ինձ: Բայց և այնպէս նա շուտ վճիռ կայացրեց: Եկաւ իսկոյն և ուզում էր, որ գործս թողնեմ և անմիջապէս զբօսնելու տանեմ իրեն: Ես մերժեցի, նա դարձեալ նոյնը

կրկնեց։ Ո՛չ, ասացի. դու քո կամքը կատարեցիր, այժմ ես էլ իմ կամքը պէտք է կատարեմ. չեմ ուզում զբօսնելու գնալ։—Լաւ, պատասխանեց նա, ես էլ մեն մենակ կերթամ։—Ինչպէս կամենաս—ասացի և նորից իմ զբաղմունքն սկսեցի։

178. Նա զգեստը հագնում է մի փոքր անհանգստացած, որ ես էլ նոյնը չեմ անում։ Գնալու միջոցին ողջունում է ինձ. ես ես բարևում եմ նրան. նա փորձում է վախեցնել ինձ՝ պատմելով թէ ինչպիսի տեղեր պէտք է գնայ. եթէ նրան ականջ դնէիք, կկարծէիք թէ մինչև աշխարհի վերջը պէտք է գնայ։ Ես նրան բարի ճանապարհ եմ մաղթում և իբրև թէ ոչինչ չեմ նկատում։ Նրա չփոյթութիւնը կրկնապատկւում է. բայց այնուամենայնիւ խաղի լաւ տրամադրութիւն է ցոյց տալիս և գնալիս հրամայում է իւր սպասաւորին, որ հետևէ իրեն։ Սպասաւորն առաջուց արդէն նախապատրաստուած լինելով՝ պատասխանում է, որ ժամանակ չունի, ինձ համար գործ պէտք է անէ և աւելի ինձ պէտք է հնազանդուի, քան նրան։ Այժմ տղան կարծես գլխին խփածի պէս եղաւ։ Ի՞նչպէս պէտք է հասկանար, որ թողնում են իրան մեն մենակ տանից դուրս գնալու. նա, որ իրեն ընդհանուր հետաքրքրութեան առարկայ է համարում և այն կարծիքի է, որ երկինքն ու երկիրը մասնակից են իւր բարեկեցութեանը։ Բայց միևնոյն ժամանակ արդէն զգում է իւր թուլութիւնը. տեսնում է, որ ինքը միայնակ այնպիսի մարդկանց մէջ պէտք է ընկնի, որոնք իրեն չեն ճանաչում. Նա նախատեսնում է իւր գլխին գալիք փորձանքները միայն դարձեալ կամակորութիւնն է անում. դանդաղ քայլերով և մեծ երկչոտութեամբ իջնում է սանդուղքից։ Վերջապէս գնում է փողոց և մխիթարւում է իրեն պատահելիք ձախորդութեամբ՝ այն յուսով, որ պատասխանատու ես պէտք է համարուեմ։

179. Մինչև այդտեղ էի ուզում հասցնել նրան։ Ամեն բան նախապէս պատրաստուած էր և որովհետև գործը վերաբերում էր մի տեսակ հրապարակական բեմ դուրս գալուն, առաջուց ստացել էի հօր համաձայնութիւնը։ Հազիւ մի քանի քայլ անելուց յետոյ նա աջ ու ձախ լսում է իրեն ուղղուած զանազան արտայայտութիւններ. Դրացի, ինչ կասէք այս երիտասարդ պարոնի մասին. ո՞ւր է գնում այդպէս մենակ. Նրա բանը լաւ կլինի, ես ուզում եմ խնդրել, որ մեզ մօտ գայ.—Տիկին, դրացի, թող անցնի գնա, չէք տեսնում, որ փոքրիկ ստահակ տղայ է, որին տանից դուրս են արել իր արած անկարգութիւնների պատճառով։ Այդպիսի տղաներին չպէտք է յետ պահել, թող գնա, ուր կամենում է.—Թող այդպէս լինի, յանուն Աստուծոյ, բայց ես կվշտանայի,

եթէ նրան մի դժբաղդութիւն պատահէր։—Յետոյ նա պատահում է մի քանի համարեա իրեն հասակակից փողոցային տղաների, որոնք նրան ծաղրում և վրան ծիծաղում են։ Ամեն մի քայլափոխին նոր դժուարութիւնների է հանդիպում։ Մենակ և անպաշտպան մնալով, նրան այնպէս է թւում թէ ամենքը խաղ են խաղում իր հետ և մեծ զարմանքով տեսնում է, որ իւր ուսերի ժապաւինահանգոյցը և ոսկեկար զգեստն այլ ևս յարգանքի չեն արժանանում։

180. Այդ միջոցին նրան հետևում էր իմ բարեկամներից մէկը, որին նա չէր ճանաչում. բարեկամիս յանձնարարել էի քայլ առ քայլ հսկել և ժամանակին մօտենալ նրան։ Այս դերը, որ Pourceaugnac ի *) Սբրիգանիի դերի նման է, հոգեկան արիութիւն ունեցող մարդ էր պահանջում և բարեկամս շատ լաւ խաղաց։ Առանց երեխային վախեցնելու և սարսափեցնելու՝ այնպէս զգացնել տուեց նրան իւր արածի անխելացիութիւնը, որ երբ կէս ժամից յետոյ նրան տուն բերեց, հեզ տղան ամօթից հազիւ էր կարողանում աչքերը բանալ։

181. Նրա ձեռնարկութեան ձախորդութիւնը լիակատար անելու համար՝ հենց այն րոպէին, երբ տղան տուն էր վերադառնում, հայրը սանդուղքից ցած էր իջնում և պատահեց նրան։ Տղան ստիպուած էր ասել՝ թէ ո՞րտեղից է գալիս և թէ ինչո՞ւ ես հետը չեմ **)։ Այդ վայրկեանին խեղճ տղան աւելի սիրով հարիւր ոտք խորը գետնի մէջ կուզենար մտնել. Հայրն երկար բարակ յանդիմանութիւններ չարեց, այլ իմ սպասածից աւելի սառնութեամբ ասաց. եթէ ապագայում էլ կամենաս մենակ տանից դուրս գնալ, կարող ես, բայց որովհետև ես իմ տանը յուղկահար չեմ ուզում ունենալ, այդ պատճառով եթէ մի անգամ էլ այդպիսի բան անես, այլ ևս տուն չվերադառնաս։

182. Ինքս էլ նրան ընդունեցի առանց յանդիմանութեան ու ծաղրի, բայց որոշ լրջութեամբ և որպէս զի չկասկածէ, որ այս բոլորը միայն մի խաղ է, այդ օրն այլ ևս զբօսնելու չտարայ նրան։ Հետևեալ օրը մեծ զուարճութեամբ տեսայ, որ նա երէկ իրեն ծաղրող մարդկանց մօտով յաղթական դէմքով էր անցնում, ինձ հետ միասին։ Հասկանալի է, որ տղան այնուհետև այլ ևս չէր սպառնում ինձ՝ առանց իմ ընկերակցութեան տանից դուրս գնալու։

*) Մոլիէրի կոմեդիան «Monsieur de Pourceagnac».

**) Այսպիսի դէպքում առանց վտանգ սպասելու կարելի է երեխային պահանջել, որ ճշմարտութիւնն ասի, որովհետև նա լաւ գիտէ, որ չի կարող ճշմարտութիւնը ծածկել և անմիջապէս կբռնուի, եթէ համարձակուի ստել։

183. Այս և ուրիշ նման միջոցներով ես նրան այնտեղ հասցրի—Նրա հետ միասին անցկացրած կարճ ժամանակի ընթացքում—, որ նա անում էր այն ամենը, ինչ ես էի կամենում, չնայելով որ նրան նախապէս չէի ասում կամ պատուիրում, չէի քարոզում և յորդորում, անօգուտ խրատներով չէի յոգնեցնում նրան: Քանի խօսում էի հետը՝ ամեն բան լաւ էր նրա համար, միայն իմ լռութիւնը մտածմունքի մէջ էր գցում նրան. Նա հասկանում էր, որ մի բան կարգին չէ և այդպիսով նոյն իսկ իրերից էր խրատ ստանում: Սակայն դիմենք գործին:

184. Այս անդադար կրկնուող և միայն բնութեան ղեկավարութեանը թողնուած վարժութիւնները ոչ թէ չեն ճնշում հոգին, մարմինը կազդուրելով, այլ ընդհակառակը, կազմում են մեր խոհականութեան այն միակ տեսակը, որ ստեղծելու ընդունակ է մանկութիւնը և բոլոր հասակների համար ամենակարեւորն է: Այդ վարժութիւնները սովորեցնում են մեզ լաւ ճանաչել մեր ուժերի գործածութիւնը, մեր մարմնի յարաբերութիւնները մեզ շրջապատող իրերի հետ և այն բնական գործիքների գործածութիւնը, որոնք մեր իրաւունքի տակ են գտնւում և համապատասխանում են մեր գործարաններին: Կայ արդեօք աւելի յիմար արարած, քան միշտ սենեակում և մօր հսկողութեան տակ դաստիարակուած երեխան, որ գաղափար չունենալով կշռի և ընդիմադրութեան ուժի մասին, կամենում է մեծ ծառը գետնից դուրս քաշել կամ ժայռը բարձրացնել: Երբ ես առաջին անգամ Ժընև քաղաքից դուրս եկայ, ուզում էի արագ վազող ձիու յետեւից հասնել. քարեր էի նետում Սալև լերան դէմ, որ երկու ժամուայ ճանապարհ հեռու էր ինձնից. գիւղի բոլոր երեխաները ծաղրում էին ինձ և ես նրանց աչքում իսկական բթամիտ տղայ էի: Տասն և ութ տարեկան հասակում փիլիսոփայութեան մէջ սովորում ենք՝ թէ ինչ է լծակը. ամեն մի գիւղացի տղայ տասներկու տարեկան հասակում աւելի լաւ է լծակ գործածում, քան թէ ճեմարանի առաջին մեքենագէտը: Ինչ որ երեխաները միմեանցից սովորում են դպրոցի բակում՝ հարիւր անգամ աւելի օգտակար է, քան այն բոլորը, ինչ որ նրանց ասում են դասարանում:

185. Տես, թէ ինչպէս է կատուն առաջին անգամ սենեակը մտնում. նա ականջ է դնում, նայում և հոտոտում: Ոչ մի վայրկեան հանգիստ չէ մնում, և ոչ մի բանի չէ հաւատում, մինչև որ ամեն բան չէ զննում ամեն բան լաւ չէ ճանաչում: Միևնոյնն է անում նոր մանգալ սկսող և այսպէս ասած՝ աշխարհ դուրս եկող մանուկը: Բոլոր զանազանութիւնը նրանումն է, որ բացի թէ երեխայի և թէ կատուի ունեցած աչքերից դիտելու համար մանուկը

գործ է ածում նաև բնութիւնից տուած ձեռքերը, իսկ կատուն՝ նուրբ հոտոտելիքը, որ նոյնպէս բնութեան շնորհն է: Այս բնական կարողութեան լաւ կամ վատ խնամելուցն է կախուած երեխայի ճարտար կամ փցուն, ծանրաշարժ կամ շնորհալի, անհաստատ կամ հասկացող լինելը:

186. Ուրեմն եթէ մարդու առաջին բնական շարժողութիւնները պէտք է չափել նրա ամբողջ շրջապատով և ամեն մի ըմբռնուած իրի մէջ պէտքէ քննել բոլոր զգայարանական յատկութիւնները, որոնք կարող են նրա հետ յարաբերութիւն ունենալ, այն ժամանակ մարդուս առաջին ուսմունքը մի տեսակ փորձնական ֆիզիկա է՝ յարմարեցրած նրա սեպհական գոյութեան պահպանութեանը, որից նրան յետ են քաշում տեսական ուսմունքներով, նախ քան մարդս իւր տեղը ճանաչէր երկրիս վրայ: Քանի որ նրա քնքոյշ և ճկուն գործարանները կարող են յարմարուել այն մարմիններին, որոնց վրայ ներգործութիւն պէտքէ ունենան, քանի որ նրա դեռ ևս չպղտորուած զգայութիւններն ազատ են ինքնախաբէութիւնից, ժամանակ է նրան բաժին ընկնող գործողութիւնների վարժութիւններով պարապել և իրերի մեզ հետ ունեցած փոխադարձ յարաբերութիւնները ճանաչել: Եւ որովհետև ամեն բան միմիայն զգայարանների միջոցով է մարդկային հասկացողութիւն դառնում, այդ պատճառով էլ մարդուս սկզբնական ճանաչողութիւնները՝ զգայարանական ճանաչողութիւններն են. զգայարանական ճանաչողութիւնն է հոգեկան ճանաչողութեան հիմնաքարը. մեր սկզբնական փիլիսոփայութեան ուսուցիչներն են մեր ոտքերը, ձեռքերը և աչքերը: Եթէ այս բոլորի տեղը գիրքը բռնի, մենք կսովորենք ոչ թէ ճանաչել, այլ միայն ուրիշի ճանաչողութիւններին ծառայել. այդպիսով մենք կսովորենք շատ բանի հաւատալ, բայց երբէք ոչ մի բան չենք գիտենայ:

187. Որև է արուեստի մէջ վարժուելու համար, ամենից առաջ պէտքէ կարևոր գործիքները ձեռք բերել. իսկ այդ գործիքներն օգտակար կերպով բանեցնելու համար՝ պէտքէ դրանց բաւականին դիմացկուն դարձնել, որպէս զի գործածելիս դիմանան: Մտածել սովորելու համար պէտքէ մեր անդամները, զգայարաններն ու գործարանները վարժեցնենք. սրանք են մեր հասկացողութեան գործիքները: Այս գործիքներից բոլոր կարելի եղած օգուտները քաղելու համար՝ պէտքէ մեր մարմինը, որի մասերն են կազմում գործիքները, պնդակազմ և առողջ լինի: Այսպէսով մարդուս իսկական ճանաչողութիւնը չէ կազմւում անկախ մարմնից, այլ ընդհակառակը՝ մարմնի պնդակազմութիւնը հեշտացնում և ապահովում է հոգու գործողութիւնները:

188. Ցոյց տալով՝ թէ մանկութեան երկարատև պարապ ժամանակից ինչպէս պէտքէ օգտուել, ես այնպիսի մանրամասնութիւնների մէջ եմ մտնում, որ կարող են ծիծաղելի թուալ: Զուարճալի ուսուցումն է, կառարկեն ինձ, որ նոյն իսկ քո քննադատութեամբ տապալւում է և վերջ ի վերջոյ ոչ այլ ինչ է սովորեցնում, եթէ ոչ այն՝ ինչ որ ոչ ոք սովորելու պէտք չունի: Ինչո՞ւ զուր ժամանակ կորցնել այնպիսի ուսուցման համար, որ ինքն ըստ ինքեան տրւում է առանց աշխատանքի և հոգացողութեան: Ո՞ր տասներկու տարեկան երեխան չգիտէ այն բոլորը, ինչ որ դու ուզում ես սովորեցնել սանիդ և իրենց ուսուցիչների սովորեցրածն էլ դեռ աւելի:

189. Սիրելիներս, սխալւում էք. ես սանիս սովորեցնում եմ շատ երկարատև ու դժուարին արուեստ, որ ձեր սաները, կաբող եմ վստահ ասել, բոլորովին չգիտեն. այդ արուեստ է՝ անգէտ լինելը. որովհետև ով կարծում է՝ թէ գիտէ միայն այն, ինչ որ իսկապէս գիտէ, նրա գիտութիւնը համարեա ցրուած չէ և միութիւն է կազմում: Դուք գիտութիւն էք տալիս ձեր սաներին-շատ լաւ. ես կզբաղուեմ այն գործիքով, որով կարելի է ձեռք բերել այդ գիտութիւնը: Երբ մի օր վենետիկցիները մեծ շքով ցոյց էին տալիս Իսպանիայի դեսպանին սբ. Մարկոսի գանձերը, դեսպանը փոխանակ, ինչպէս ասում են, հաճոյախօսութիւններ անելու, նայեց սեղանների տակը և ասաց. "Qui non cè la radice„*): Երբ ուսուցիչն ի ցոյց է դնում իր աշակերտի գիտցածները, ես միշտ միևնոյն նկատողութիւնն եմ ուզում անել:

190. Այն բոլոր անհատները, որոնք մտածել են հների կեանքի եղանակի մասին, նրանց մարմնի և ոգու ուժեղութիւնը—որով ամենա-շօշափելի կերպով տարբերւում՝ էին նորերից—վերագրել են մարմնամարզական վարժութիւններին: Այն նշանակութիւնը որ տալիս է Մօնտէյնը այս կարծիքին, ցոյց է տալիս, թէ ո՛ր աստիճանի ինքն էլ ներշնչուած էր այդ գաղափարով. նա անդադար հազար ու մի տարբեր ձևերով նոյնն է ասում: Մանուկների դաստիարակութեան մասին խօսելիս ասում է. Նրա հոգին զօրացնելու համար՝ պէտքէ նրա մկանները պնդացնել. աշխատանքի սովորելով՝ մարդ սովորում է ցաւին դիմանալ. մարդ պէտքէ սովորի մարմնի վարժութեան անդիւրութեանը, որպէս զի տանելի լինին անդամների խախտման, խիթքի, անդիւրութիւնը և մարմնի բոլոր ցաւերը: Խոհական Լօքէն, բարի Ռօլլէնը, գիտնական Ֆլէօրին, սոփեստական Դը Կրուզասը, որչափ որ միւս ամեն

*) «Բայց որտեղ են սրանց արմատները»:

բաներում տարբերւում էին միմեանցից, բոլորն էլ համաձայնում են այս կէտում և երեխայի մարմնի համար շատ վարժութիւններ են պահանջում: Նրանց տուած հրահանգներից ամենախելացին է այս կէտը, բայց և այնպէս ամենից շատ էլ այս կէտն է անտես առնւում և միշտ էլ անհոգութեան կորուի:

Դրա կարևորութեան մասին բաւականաչափ խօսեցի արդէն և որովհետև դրա համար աւելի լաւ կանոններ և աւելի խելացի պատճառաբանութիւններ չի կարելի գտնել, քան Լօքէի գրքի մէջ եղածները, բաւականանում եմ այդ աղբիւրը ցոյց տալով և իմ կողմից մի քանի նկատողութիւններ աւելացնելով նրա ասածներին:

191. Աճող մարմնի անդամները պէտք է զգեստների մէջ բոլորովին ազատ շարժուել-կարողանան. ոչ մի բան չպէտք է արգելք լինի անդամների շարժմանը կամ աճմանը. ոչ մի բան չպէտքէ շատ կպած լինի նրա մարմնին՝ սեղմելու համար և ոչ էլ կապկպած: Ֆրանսիական տարազը, որ անառողջ և սեղմ է չափահասների համար, աւելի ես վնասակար է երեխաների համար: Մարմնի հիւթերն ընդհատուելով և հոսելու միջոցին արգելքների հանդիպելով՝ փչանում են շարժողութեան պակասութիւնից. անգործունեայ և նստակեաց կեանքն աւելի ես նպաստում է հիւթերի փչանալուն, որ անմաքուր դառնալով՝ ընդացաւ հիւանդութիւնն են առաջացնում. մեր օրերում օրէց օր աւելի է ընդհանրանում այս հիւանդութիւնը, թէև հներին համարեա բոլորովին անծանօթ էր որովհետև նրանց ապրելու և հագնուելու եղանակը պաշտպանում էր նրանց այդ հիւանդութիւնից: Հուսարի զգեստները ոչ թէ վերացնում են չարիքը, այլ ընդհակառակն աւելի վատթարացնում և ճնշում երեխայի ամբողջ մարմինը՝ ազատելով նրան մի քանի կապանքներից: Ամենից լաւն այն է, որ երեխային կարելոյն չափ երկար ժամանակ թողնեն մանկական զգեստի մէջ, յետոյ հագցնեն բաւականին լայնարձակ հագուստ և բոլորովին չհոգան նրա մարմնի աճման գեղեցկութեան մասին. որովհետև այդ հոգացողութիւնը նպաստում է միայն նրա մարմնի տձևանալուն: Երեխաների թէ հոգեկան և թէ մարմնական համարեա բոլոր թերութիւնները միևնոյն աղբիւրից են առաջանում. մարդիկ ուզում են, որ երեխաները ժամանակից առաջ չափահաս դառնան:

192. Կան պայծառ և մթին գոյներ. պայծառ գոյներն աւելի են յարմարւում երեխաների ճաշակին և սազում նրանց. ես չեմ հասկանում՝ թէ ինչու չպէտք է օգտուել այսպիսի մի բնական ներդաշնակութիւնից. բայց հենց այն վայրկեանից, երբ նըրանք առաւելութիւն են տալիս շքեղ ու հարուստ զգեստի կտորանք

րին, նրանց սիրտը ենթարկւում է փարթամութեան և երևակայութեան ամեն տեսակ քմահաճոյքներին. վստահ կարելի է ասել, որ երեխաների այս ճաշակն ինքն իրեն չէ առաջացել։ Չի կարելի ասել՝ թէ զգեստների ընտրութիւնը և այդ ընտրութեան պատճառները որքան մեծ ազդեցութիւն են ունենում մանուկների դաստիարակութեան վրայ։ Կարճատես մայրերն իրենց զաւակներին զարդեր են խոստանում՝ իբրև վարձատրութիւն. պատահում է նոյնպէս, որ անխոհեմ դաստիարակները իրենց սաներին սպառնում են իբրև պատիժ՝ հագցնել պարզ և կոշտ զգեստ. եթէ աւելի լաւ չես սովորի, եթէ իրերիդ աւելի ուշադրութեամբ չես նայի, քեզ այս փոքրիկ գիւղացու հագուստի պէս զգեստ կհագցնենք։ Սրանով իսկապէս երեխաներին ասում են. | գիտցէ՛ք, որ մարդ միայն զգեստով է ամեն բան և քո բոլոր արժէքը զգեստիդ մէջն է։ Միթէ զարմանալի է, որ այսպիսի իմաստուն ուսմունքներն արմատանում են պատանիների մէջ, որ սրանք միայն զարդարանքի վրայ են ուշադրութիւն դարձնում և արժանաւորութիւնը միմիայն արտաքինով գնահատում։

193. Եթէ ես մի այդպիսի փչացած երեխայի ուղղելու լինէի, կաշխատէի, որ նրա ամենաշքեղ զգեստներն ամենաանյարմարները լինէին, որ նա այդ հագուստների մէջ շարունակ նեղուէր, ճնշուէր և հարիւր տեսակ նեղութիւններ քաշէր. ազատութիւնն ու զուարթութիւնը պէտք է հեռու մնային զարդարանքից. եթէ այդ երեխան ուրիշ աւելի պարզ հագնուած մանուկների խաղին ուզենար մասնակցել, բոլորը պէտք է յետ քաշուեն և մի ակնթարթում հեռանան։ Կարճ ասեմ, ես նրա շքեղութիւնն այն աստիճանի ձանձրալի ու տաղտկալի կդարձնէի, նրան այն աստիճանի կստրկացնէի իւր ոսկէ հագուստին, որ վերջինս նրա համար պատիժ դառնար և նա աւելի պակաս երկիւղով խաւար բանտը տեսնէր, քան իր զգեստները։ Քանի դեռ երեխան չէ ենթարկուել մեր նախապաշարմունքներին, նրա առաջին ցանկութիւնն է՝ լինել ազատ և արձակ. ամենապարզ, ամենայարմար և ամենաազատ հագուստն է նրա ամենագնահատելի զգեստը։

194. Կայ այնպիսի կազմուածք, որ յարմար է մարմնի վարժութիւնների համար, կայ և այնպիսինը, որ աւելի հանգիստ կեանքին է յարմարւում։ Վերջիններիս հիւթերը հաւասարաչափ և հանդարտ ընթացք են ստանում և պէտք է մարմինը պահպանէ օդափոխութիւնից. առաջինը գրգռուած դրութիւնից արագ անցնում է դէպի հանգիստը, տաքից դէպի ցուրտը և մարմինը պէտք է վարժեցնէ այս փոփոխութիւններին։ Սրանից հետևում է, որ սենեակում երկար մնացող և նստակեաց կեանք վարող մարդիկը՝

միշտ պէտք է տաք հագնուեն, որպէս զի իրենց մարմինը միշտ հաւասարաչափ ջերմութեան մէջ պահեն, որ տարուայ և օրուայ բոլոր ժամանակներում համարեա միշտ նոյնը պէտք է լինի։ Իսկ ընդհակառակը քամու, արևի և անձրևի ժամանակ տուն ու դուրս անող մարդիկը, որ գործունեայ կեանք են վարում և իրենց ժամանակի մեծագոյն մասն ազատ բնութեան մէջ են անցկացնում՝ պէտք է միշտ թեթև հագնուած լինեն՝ որպէս զի ամեն տեսակ օդի փոփոխութիւններին և ջերմութեան աստիճաններին վարժուեն՝ առանց նեղութիւն զգալու։ Ես այդ երկու տեսակ մարդկանցն էլ խորհուրդ կտայի, որ իրենց հագուստը չփոխէին՝ յարմարուելով տարուայ եղանակին. իմ Էմիլը միշտ այդպէս պէտք է վարուի. դրանով չեմ ուզում ասել, որ նա ամառն էլ իր ձմեռուայ զգեստները հագնի՝ ինչպէս անում են նստակեաց կեանք վարող մարդիկը, այլ որ ձմեռն էլ իր ամառուայ շորը հագնի, ինչպէս բանուորներն են անում։ Այս վերջին սովորութիւնն ունէր և Սիր Նիւտոնը՝ իր ամբողջ կեանքի ընթացքում. նա ութսուն տարի ապրեց։

195. Տարուայ բոլոր եղանակներին գլուխը պէտք է միայն թեթև ծածկել կամ բոլորովին բաց թողնել։ Հին եգիպտացիները միշտ գլխաբաց էին. պարսիկները ծածկում են հաստ գլխարկներ և վրան էլ հաստ չալմաներ. այս սովորութիւնն ըստ Chardin-ի նրանց երկրի կլիմայի ազդեցութիւնից է առաջանում։ Մի ուրիշ տեղ *) ես նկատողութեան առայ այն տարբերութիւնը, որ դիտել է Հերոդոտոսը պատերազմի դաշտում՝ պարսիկների և եգիպտացիների գանգերի վրայ։ Գանգի ոսկրների աւելի կարծր ու պինդ լինելը նշանակութիւն ունի. որպէս զի ուղեղն աւելի լաւ պաշտպանուած լինի ո՛չ միայն վնասուելուց, այլ նաև մրսելուց, յօդացաւերից և օդի ամեն տեսակ ներգործութիւնից, պէտք է սովորեցնել երեխաներին՝ թէ ամառ, թէ ձմեռ, թէ ցերեկը և թէ գիշերը միշտ գլխաբաց մնալ։ Իսկ եթէ նրանց մազերը կարգին պահելու և մաքրութեան համար ուզում էք գիշերը գլուխները կապել, պէտք է գործ ածէք բարակ, ցանցանման գլխարկ, նման այն ցանցի, որով բասկերն իրենց մազերն էին փաթաթում։ Ես շատ լաւ գիտեմ, որ աւելի շատ մայրերի վրայ Chardin-ի արած նկատողութիւնն աւելի մեծ ազդեցութիւն կունենայ, քան իմ առաջ բերած պատճառաբանութիւնները. նրանք ամեն տեղ Պարսկաստանի կլիմայի ներկայութիւնը կերևակայեն. բայց ես

*) Դ՚ Ալեմբերտին գրած նամակը՝ ներկայացումների մասին. էջ 109 I հրատ։

իմ սանին նրա համար չեմ Եւրոպայից վերցրել, որ ասիացի դարձնեմ:

196. Ընդհանրապէս երեխաներին շատ տաք են հագցնում, մանաւանդ սկզբի տարիներում: Աւելի լաւ կլինէր, եթէ նրանց ցրտին դիմանալու վարժեցնէին քան տաքի. շատ ցուրտն երբէք մանուկներին նեղութիւն չի պատճառի, եթէ սկզբից նրանք ցրտի սովոր են. բայց նրանց կաշուի դեռ ևս շատ քնքոյշ և փափուկ հիւսուածքը խիստ շոգի պատճառով անխուսափելի թմրութիւն է պատճառում, որովհետև շոգիացումը շատ է հեշտանում: Նկատուած է նոյնպէս, որ Օգոստոս ամսին աւելի շատ երեխաներ են մեռնում, քան որևէ ուրիշ ամսուայ ընթացքում: Բացի դրանից, հիւսիսային և հարաւային երկրներում ապրող ազգերի համեմատութիւնից հաստատւում է նոյնպէս, որ սաստիկ ցրտի դիմանալուց մարդ աւելի պնդակազմ է լինում, քան թէ խիստ շոգի ազդեցութիւնից. մինչ երեխան աճում և նրա նեարդերը պնդանում են, պէտք է հետզհետէ վարժեցնել նրան արևի ճառագայթների ազդեցութեանը ենթարկուել. աստիճանաբար առաջ գնալով՝ կարելի է, առանց որևէ վտանգի, նոյն իսկ ամենատաք գօտու տապին դիմանալ:

197. Լօքէն այրական և խելացի հրահանգներ տալով մեզ, երբեմն այնպիսի հակասութիւնների մէջն է ընկնում, որ կարելի չէր սպասել նրա նման խստապահանջ մտածողից: Միևնոյն մարդը պահանջում է, որ երեխաներին սառուցի նման սառը ջրով լողացնեն և արգելում է, որ տաքացած ժամանակը սառը ջուր խմեն, խոնաւ գետնի վրայ նստեն կամ պառկեն: *) Բայց նա պահանջում է, որ երեխաների կօշիկներն ամեն ժամանակ ջուր անցկացնեն. միթէ նոյն կօշիկներն աւելի քիչ ջուր կանցկացնեն, երբ երեխան տաքացած է լինում. ինչպէս որ նա ձեռքերին նայելով՝ ոտքերի և դէմքին նայելով՝ մարմնի մասին է դատում, միթէ կարելի չէ նոյնպէս ոտքերին նայելով մարմնի մասին եզրակացութեան գալ: Եթէ դու կամենում ես, կասէի նրան, որ մարդը ամբողջովին դէմք լինի, ինչու ես ինձ դատապարտում, երբ ես կամենում եմ, որ նա ամբողջովին ոտք լինի: **)

---

*) Միթէ գիւղացի պատանիները ցամաք գետին են որոնում՝ նստելու կամ պառկելու համար և ո՞վ է լսել երբ և իցէ, որ գետնի խոնաւութիւնից որևէ մէկը վնասուած լինի: Երբ այս խնդրի մասին բժիշկներին խօսեցնենք, պէտք է կարծել թէ բոլոր վայրենիները ռևմատիզմից հաշմանդամ են դարձել:

**) Ակնարկում է Լօքէի առաջ բերած անեկդոտը. աթենացին զարմացած հարցնում է սկիւթացուն՝ թէ ի՞նչպէս է կարողանում ձիւնի և սառուցի մէջ միշտ մերկ մնալ. վերջինս պատասխանում է. դու ինչպէս ես ցրտին ու

198. Շոգ ժամանակ երեխաներին ջուր խմելու սովորութիւնից յետ կանգնեցնելու նպատակով, նա հրահանգ է տալիս՝ սովորեցնել երեխային, որ խմելուց առաջ մի կտոր հաց ուտէ: Շատ տարօրինակ բան է, որ ծարաւ երեխային ուտելու բան տանք. այդ դէպքում աւելի՛ ցանկալի կլինէր, որ քաղցած ժամանակը ջուր տային նրան: Ես չեմ կարող համոզուել երբէք, որ մեր սկզբնական կարիքներն այնչափ անխելք բաներ լինեն, որ չկարողանանք բաւականացնել՝ առանց մեզ մահուան վտանգի ենթարկելու: Եթէ այդպէս լինէր, մարդկային սերունդը հարիւր անգամ ոչնչացած կլինէր, նախքան իմանար՝ թէ ինչ պէտք է անել՝ իր գոյութիւնը պահպանելու համար:

199. Ամեն անգամ, երբ Էմիլը ծարաւ լինի, պէտք է նրան խմելու տալ մաքուր ջուր, առանց որևէ՛ խառնուրդի, առանց նոյն իսկ գաղջացնելու, եթէ նա նոյն իսկ քրտնքի մէջ կորած լինի և կամ թէ ամենացուրտ ձմեռ ժամանակը լինի: Ես առաջարկում եմ միմիայն, ուշադրութիւն դարձնել ջրի որակութեան վրայ: Եթէ գետի ջուր է, պէտք է տալ նրան հենց որ գետից վերցնում և բերում են: Իսկ եթէ աղբիւրի ջուր է, խմելուց առաջ պէտք է մի առ ժամանակ օդի մէջ դրուի: Շոգ ժամանակները գետերը տաք են. այդպէս չեն աղբիւրները, որ դեռ օդի հետ չեն շփուել: Պէտք է սպասել՝ մինչև որ աղբիւրի ջուրը մթնոլորտի ջերմութեան աստիճանը առնի: Ձմեռն, ընդհակառակը, աղբիւրի ջուրն այս նկատումով աւելի քիչ վտանգաւոր է, քան գետի ջուրը: Բայց ոչ բնական է և ոչ էլ յաճախ կրկնուող երևոյթ, որ մարդ ձմեռը շատ քրտնի, մանաւանդ ազատ օդի մէջ. որովհետև կաշուի վրայ շարունակ ներգործող սառն օդը յետ է քշում քրտինքը և չէ թոյլ տալիս, որ ծակոտիները բաւականաչափ լայն բացուին. այդ պատճառով քրտինքն ազատ կերպով չէ դուրս հոսում: Ես չեմ ասում, որ Էմիլը վառարանի չաղացրած լաւ կրակի մօտ պէտք է մարմնի վարժութիւններ անէ, այլ դուրսը, դաշտերի վրայ՝ ձիւնի և սառուցի մէջ: Քանի որ նա միայն ձնագունդ շինելով և ձգելով է տաքանում, թող խմէ՝ երբ ծարաւ լինի. խմելուց յետոյ պէտք է շարունակէ իր շարժողութիւնները և մենք ոչ մի աղէտի երկիւղ չենք ունենայ: Եթէ նա ուրիշ մարմնական շարժողութիւնների շնորհիւ է քրտնել և ծարաւ է, կարող է այդ դէպքումն էլ սառը ջուր խմել: Միայն պէտք է այնպէս անել, որ նա բաւականին տարածութիւն

սաստիկ քամու ժամանակ դէմքդ բաց պահում. «դէմքս սովոր է» ասում է աթենացին. սկիւթացին պատասխանում է. «հրեակայիր թէ ես ամբողջովին դէմք եմ»:

և դանդաղ քայլերով դէպի ջուրը գնայ։ Դրսի ցուրտը նրան բա-
ւականաչափ կսառեցնի՝ մինչև որ ջրին հասնի և անվտանգ խմի։
Բայց ամենից առաջ այս զգուշացուցիչ միջոցներն այնպէս պէտք
է ձեռք առնել, որ նա չնկատէ։ Աւելի լաւ է, որ նա երբեմն եր-
բեմն հիւանդ լինի, քան թէ չարունակ իւր առողջութեան մասին
հոգայ։

200. Երեխաներն երկար քնելու կարիք ունին, որովհետև
սաստիկ շատ շարժողութիւններ են անում։ Մէկը միւսին լրաց-
նում է. երկուսն էլ կարևոր են երեխաների համար։ Հանգստու-
թեան ժամանակը գիշերն է. բնութիւնն ինքն է ցոյց տալիս այդ։
Հաստատ կերպով փորձուած է, որ քունն աւելի հանգիստ և խա-
ղաղ է լինում, երբ արևն հորիզոնից իջնում է. արեգակի ճառա-
գայթներից տաքացած օդը չէ թոյլ տալիս, որ մեր զգայարաննե-
րը լրիվն հանգստութիւն վայելեն։ Այսպիսով հարկաւ ամենա-
բարերար ներգործութիւն ունի արևի ծագելու հետ զարթնելու
և մայր մտնելու հետ քնելու սովորութիւնը։ Սրանից հետևում է,
որ մեր կլիմայում մարդիկ և բոլոր կենդանիները ձմեռն ընդհան-
րապէս աւելի երկար քնելու կարիք ունին, քան ամառը։ Սակայն
քաղաքաբնակ հասարակութիւնների մէջ կեանքը ոչ պարզ է, ոչ.
բնական, ոչ էլ բաւականաչափ ազատ բռնպբոս խանգարմունք-
ներից և պատահարներից, որ մարդիկ միատեսակ կեանքի եղա-
նակի սովորէին և այդ սովորութիւնն անհրաժեշտ պահանջ դառ-
նար։ Մարդ պէտք է հարկաւ ենթարկուի կեանքի կանոններին,
բայց առաջին պայմանն այն է, որ առանց վտանգի կարողանանք
զանց առնել այդ կանոնները, երբ հանգամանքները պահանջեն։
Ուրեմն դու չպէտք է սանիդ անխոհեմաբար հանգիստ և երբէք
չխանգարուող քնի սովորեցնես, որ ոչ մի ժամանակ չընդհատուի։
Հենց սկզբից առանց սահմանափակումների թող նրան բնութեան
օրէնքների տրամադրութեան տակ. բայց չմոռանաս, որ նա մեր
հասարակութեան մէջ այս օրէնքներից բարձր պէտք է լինի, որ
նա պէտք է կարողանայ ուշ անկողին մտնել, վաղ զարթնել,
յանկարծ արթնանալ և ամբողջ գիշերներով ոտքի վրայ մնալ՝ ա-
ռանց անհանգստութիւն զգալու։ Եթէ շուտ սկսենք այդպէս և ան-
նկատելի կերպով աստիճանաբար առաջ գնանք, նրա մարմնի
կազմուածքը չի վտանգուի այնպիսի բաներից, որոնք ան-
պատճառ նրան կվնասէին, եթէ նրա մարմնի լրիվն կազմակեր-
պուելուց յետոյ սկսէինք այդ վարժութիւնները։

201. Մեծ նշանակութիւն ունի նաև, որ մարդ սկզբից սովո-
րի գիշերները անյարմար պառկել. այդ կերպով մարդ երբէք ան-
կողնի անյարմարութիւնը չի զգայ։ Բիրտ կեանքին սովոր լինելը

շատացնում է ընդհանրապէս հաճելի զգայութիւնները. մեղկ
կեանքն, ընդհակառակը, անագին քանակութեամբ տհաճութիւն-
ներ է պատճառում մեզ։ Չափազանց քնքոյշ մեծացած մարդիկը
միայն աղուամազէ բարձերի վրայ կարող են քնել. իսկ այն մար-
դիկը, որ սովոր են տախտակների վրայ քնել, ամեն տեղ էլ կը
քնեն. ով պառկելուն պէս քնում է, ոչ մի անկողին կոշտ չի
համարի։

202. Փափուկ անկողինը, որտեղ մարդ աղուամազի կամ
մանր փետուրների մէջ թաղուած է պառկում, փափկացնում և քայ-
քայում է մարմինը։ Երիկամները տաքանում են չափազանց տաք
փաթեթի մէջ։ Այդտեղից էլ յաճախ առաջանում են քարի կամ
ուրիշ հիւանդութիւններ և անպայման կերպով մարմնի քնքոյշ
կազմուածք, որ այդ հիւանդութիւններին սնունդ է տալիս։

203. Ամենալաւ անկողինն այն է, որի մէջ մարդ ամենից
լաւ է քնում։ Թող տեսնեն թէ ինչպէս Էմիլն ու ես ամեն օր
կարգի ենք բերում մեր անկողինը։ Մեր անկողինը չինելու համար
պարսկական սպրուկների կարիք չկայ. դաշտային աշխատանքի
հետ շրջում ենք նաև մեր դոշակները։

204. Ես փորձով գիտեմ, որ երբ երեխան առողջ է, մեզ-
նից է կախուած համարեա՝ ըստ մեր ցանկութեան նրան քնեցնել
կամ զարթեցնելը։ Երբ երեխան անկողնում պառկած՝ իւր զրու-
ցատրութեամբ ձանձրալի է դառնում դայեակի համար, վերջինս
ասում է նրան. լաւ, քնի.—այս նշանակում է նրան ասել թէ՝
առողջացիր—երբ հիւանդ է։ Նրան քնեցնելու առաջին միջոցն
այն է, որ մարդ ինքն է ձանձրանում։ Խօսիր այնքան նրա հետ,
մինչև որ նա ստիպուած լինի լռել. յետոյ շուտ կքնի. քարոզնե-
րը միշտ մի բանի պէտք են գալիս. դրանք նոյնպէս լաւ են, ինչ-
պէս օրօրելը. միայն թէ երբ դու այդ քնաբեր միջոցը երեկոյեան
ես գործ դնում, պէտք է զգուշանաս ցերեկը գործածելու։

205. Երբեմն ես Էմիլին քնից կզարթնացնեմ, ոչ թէ նրա հա-
մար, որ երկար քնելու սովորութիւնը չխրացնի, այլ որ ամեն
բանի սովորի և ի միջի այլոց՝ յանկարծ արթնանալուն։ Բացի
դրանից ես իմ կոչման համար շատ քիչ շնորհք կունենայի, եթէ
չկարողանայի նրան այն տեղը հասցնել, որ ինքն իրեն զարթնի
և այսպէս ասած, իմ ցանկութեան համեմատ վերկենայ՝ առանց
ինձնից մի խօսք լսելու։

206. Եթէ նա բաւականաչափ երկար չէ քնում, ես նրան
հասկացնում եմ, որ միւս առաւօտը ձանձրալի օր պէտք է լինի
նրա համար և նա իւր քնած անցկացրած ժամերը վաստակ կհա-
մարի. երբ նա շատ երկար է քնում, զարթնելուց յետոյ նրա

սիրած մի որև է խօսակցութիւն եմ սկսում հետը։ Եթէ ուզում եմ, որ որոշ ժամին զարթնի, ասում եմ նրան. վաղն առաւօտը, ժամի վեցին, պէտք է գնանք ձկնորսութեան, կամ թէ՝ գնում ենք այս կամ այն տեղ զբօսնելու, դու էլ կգաս։ Նա սիրով ցանկանում է գալ և խնդրում է ինձ, որ իրեն արթնացնեմ. ես կամ խոստանում եմ կատարել նրա խնդրածը կամ չէ՝ նայելով պահանջին. եթէ շատ ուշ զարթնի, ես արդէն գնացած կլինեմ։ Շատ վատ կլինէր, եթէ նա այդպիսով շուտ արթնանալը սովորութիւն չդարձնէր։

207. Եթէ տեղի ունենայ այն հազուագիւտ դէպքը, երբ երեխան հակումն է ունենում ծուլանալու, չպէտքէ թոյլ տալ, որ այդ բոլորովին թմրեցնող հակումը զարգանայ, այլ որևէ խըթող միջոց գործ դնելով՝ պէտք է արթնացնել նրան։ Հասկանալի է, որ ուժով նրան գործունեայ դարձնելու մասին խօսք չի կարող լինել, այլ պէտք է որև է հրապուրիչ միջոցով հետաքրքրել. այսպիսի հրապոյրը, որ՛ ընտրութեան միջոցին պէտք է հետևել բնութեան ցուցմունքին, միաժամանակ երկու նպատակի է ծառայում մեզ համար։

208. Մի փոքր ճարպիկութիւն գործ դնելով՝ կարելի է ամեն բանի համար երեխաներին հակումն, նոյն իսկ կիրք ներշնչել՝ առանց ունայնասիրութեան, փառամոլութեան և նախանձախնդրութեան։ Նրանց աշխուժութիւնն ու նմանուելու ձգտումը բաւական են այդ բանի համար, առաւելապէս նրանց բնական զուարթութիւնը, որ երբեք չէ գլանում, բայց այնու-ամենայնիւ ոչ մի ուսուցիչ մտքովն անգամ չէ անցկացրել օգտուել դրանից։ Բոլոր խաղերի ժամանակ նրանք առանց գանգատուելու, նոյն իսկ ծիծաղելով ամեն բան թոյլ են տալիս, որ ուրիշ ժամանակ չէին համբերի առանց արտասուքների հեղեղի։ Երկար ժամանակ քաղցած մնալը, հարուածները, այրոցքները, ամեն տեսակ աշխատութիւնները պատանի վայրենիների համար սովորական են. այս ապացոյց է, որ նոյն իսկ ցաւն իր ամոքումն ունի, որ կարող է վերացնել ցաւի դառնութիւնը. բայց ամեն ուսուցչի գործը չէ ճաշն այնպէս պատրաստել և գուցէ ամեն աշակերտի բանն էլ չէ ճաշակել պատրաստածը՝ առանց բերանը ծռելու։ Բայց ես կրկին բացառութիւնների մասին եմ խօսքս երկարացնում, պէտք է զգուշանամ։

209. Հարկաւ ոչ մի բացառութիւն չէ թոյլ տալիս մարդուն՝ ցաւի, ամեն տեսակ չարիքների, դժբաղդութեան ու կեանքի վտանգի և վերջապէս մահուան ենթարկուելը. որչափ աւելի ծանօթացնենք նրան այս մտքի հետ, այնքան աւելի կբուժենք նրան անժամանակեայ զգայականութիւնից, որ չարիքի վրայ աւելաց-

նում է նաև անհամբերութիւնը. որչափ աւելի ենք ծանօթացնում նրան այն ցաւերի հետ, որ կարող է ունենալ ապագայում, այնքան ևս աւելի, ինչպէս կասէր Մօնտայնը, կվերացնէինք «անսպասելի կծու տպաւորութիւնը» և այնքան ևս աւելի անխոցելի և դիմացկուն կդարձնէինք նրա հոգին. Նրա մարմինը կլինի այն զրահը, որից յետ կխփուէին այն բոլոր հարուածները, որոնք կարող էին նրան մահացու կերպով վիրաւորել։ Նոյն իսկ մահուան մօտենալը չի զգայ նա, որովհետև այդ զգացումը դեռ ևս մահից շատ հեռու է. իսկապէս նա չի մեռնի, այլ կապրի կամ մեռած կլինի, ուրիշ ոչինչ։ Նրա մասին նոյն Մօնտայնը կարող էր ասել, ինչպէս որ ասել է Մարօկկօի մի թագաւորի մասին, թէ ոչ մի մարդ այնքան երկար չէ ապրել մահուան մէջ։ Անդոր-դողդութիւնն ու անդրդուելիութիւնը պատկանում են, ինչպէս ուրիշ առաքինութիւնները, մանկութեան վկայագրին. բայց դրանց անունները սովորեցնելով՝ չեն հասկացնում այդ բաները երեխաներին. պէտք է երեխաներին ճաշակել տալ, առանց նրանց ասելու՝ թէ ինչ է այդ։

210. Քանի որ խօսքը մեռնելու մասին է, ինչպէս պէտք է վարուենք մեր սանի հետ ծաղկի վտանգի վերաբերմամբ։ Պէտք է նրան փոքր հասակում արդէն պատուաստենք, թէ սպասենք, մինչև որ ինքը վարակուի։ Առաջին հնարը, որ մեր սովորութեանն աւելի է համապատասխանում, պաշտպանում է մանկութիւնը, երբ կեանքն ամենից մեծ արժէքն ունի, վտանգից, ի հաշիւ այն ժամանակի, երբ կեանքն աւելի քիչ արժէք ունի, եթէ առհասարակ լաւ պատուաստումից յետոյ վտանգի մասին կարելի է խօսել։

211. Երկրորդն աւելի լաւ է համապատասխանում մեր ընդհանուր սկզբունքներին՝ ամեն բանում բնութեան իշխանութիւնն ընդունել, որտեղ միայն բնութիւնն է նախապէս հոգում և այդ հոգացողութիւնն ընդհատում է, հենց որ մարդն է խառնւում։ Բնական մարդը միշտ նախապատրաստուած է. նա կարող է վարպետի *) ձեռքով պատուաստուել. նա յարմար վայրկեանը մեզնից աւելի լաւ կընտրէ։

212. Բայց սսածներիցս չպէտք է եզրակացնել, որ ես դատապարտում եմ պատուաստումը, որովհետև այն տեսակէտը, որով ես չէի ցանկանայ, որ իմ սանը չպատուաստուէր, ձեր տեսակէտին շատ վատ կյարմարուի։ Ձեր դաստիարակութիւնն այնտեղ է հասցնում, որ երեխաները մի անգամ ծաղիկ ընկնելով՝ այլ ևս չեն ազատուի նրանից. եթէ թոյլ տաք, որ նա դիպուածաբար մօտե-

*) Այսինքն բնութեան։

նայ, հաւանական է, որ երեխաները մեռնեն այդ հիւանդութիւնից: Ինչպէս տեսնում եմ, զանազան երկրներում հակառակում են պատուաստմանը այնքան ևս աւելի, որքան որ այդ անհրաժեշտ է դառնում. պատճառը հեշտ է գտնել: Ես էլ չեմ կարող համաձայնել, որ այս բանը խնդիր դառնայ իմ Էմիլի համար: Նա կամ կպատուաստուի կամ թէ չի պատուաստուի՝ նայելով ժամանակին, տեղին և հանգամանքներին. Նրա համար այդ համարեա թէ միևնոյն է: Եթէ նրա ծաղիկը կտրենք, այն առաւելութիւնը կունենանք, որ նրա հիւանդութիւնը շուտ, կնախատեսնենք և կճանաչենք. այս արդէն մի բան է. իսկ եթէ բնական ճանապարհով ծաղիկ կընկնի, բժշկից պահպանած կլինենք նրան. և այս մի բանից էլ աւելի է:

213. Այն բացառիկ դաստիարակութիւնը, որի նպատակն է այդպէս դաստիարակուածներին ժողովրդից առանձնացնելը միշտ ամենաթանկագին հրահանգները գերադասում է ամենից մօտ եղածներից և այդպիսով նոյնպէս ամենանպատակայարմարներից: Այսպէս օրինակ հոգացողութեամբ կրթուած բոլոր երիտասարդները սովորում են ձի նստել, որովհետև դրա համար շատ փող է հարկաւոր. բայց դրանցից համարեա ոչոք լողալ չէ սովորում, որովհետև լողալը ոչինչ չարժէ և որովհետև արհեստաւորը, կարող է պատահել, որ նոյնչափ լաւ կարողանայ լողալ, ինչպէս և ուրիշ որևէ մարդ: Այն ինչ ճանապարհորդը, առանց ձի նստելու դասեր առնելու, ձի է նստում, քշում և յաջողութեամբ իր նպատակների համար ծառայեցնում նրան. բայց լողալ չիմացողը խեղդւում է ջրի մէջ և առանց սովորելու կարելի չէ լողալ: Վերջապէս մարդ կեանքի վտանգով ստիպուած չէ լինում ձի նստելու, այն ինչ ոչ ոք ապահով չէ ազատուելու՝ խեղդուելու վտանգից, որ այնպէս յաճախ է պատահում: Էմիլը ջրի մէջ իրեն այնպէս կզգայ, ինչպէս ցամաքի վրայ. ինչու չէ կարող նա ամեն տեսակ տարրի մէջ ապրել: Եթէ կարելի լինէր սովորեցնել նրան օդի մէջ թռչել, ես նրան արծիւ կդարձնէի. իսկ եթէ կարելի լինէր կրակի դէմ պաշտօպանութիւն սովորեցնել, ես նրան սալամանդր կդարձնէի:

214. Վախենում են՝ թէ երեխան լողալ սովորելիս կարող է խեղդուել. թէ լողալ սովորելիս խեղդուի, թէ լողալ չսովորելուց, մեղքը միշտ ձերն է: Միայն ունայնասիրութիւնն է մեզ յանդուգն դարձնում. երբ տեսնող չկայ, դադարում է և ունայնասիրութիւնը. Էմիլը յանդգնութիւն չի ցոյց տայ՝ եթէ նոյն իսկ ամբողջ աշխարհը նրան նայէ: Եւ որովհետև վարժութեան համար վտանգն էական չէ, Էմիլը իր հօր պուրակում գտնուող ջրանցքը լողալով անցնելով կերևակայէ՝ թէ Հելլէսպոնտոսն է անց-

նում. բայց պէտք է վտանգաւոր ձեռնարկութիւններ անելն էլ սովորել, որպէսզի մարդ ինքն իրեն չկորցնէ. այս մի էական կէտ է այն ուսուցման վկայագրի մէջ, որի մասին խօսեցի: Բայց որովհետև ես չարունակ ուշադրութիւնս Էմիլի վրայ եմ դարձնում, վտանգը նրա ուժերի համեմատութեամբ չափելու և նրա հետ միասին ենթարկուելու այդ վտանգին, հազիւ թէ անխոհեմ վարուելու երկիւղն ունենամ, երբ նրան պահպանելու հոգացողութիւնը որոշեմ՝ հենց իմ անձի պահպանութեան համար արած հոգացողութեան համեմատ:

215. Մանուկը չափահասից փոքր է. նա ոչ չափահասի ուժն ունի և ոչ նրա խելքը. բայց նրա պէս լաւ է տեսնում ու լսում, կամ համարեա թէ նրա պէս լաւ. նա նոյնպիսի զգայուն ճաշակ ունի՝ թէև աւելի պակաս դժուարահաճ, նոյնպէս լաւ որոշում է հոտերը՝ թէպէտ չափահասի զգայուն հոտառութիւնը չունի: Այն առաջին ընդունակութիւնները, որ մեր մէջ առաջանում և կատարելագործւում են՝ զգայարաններն են: Ուրեմն ամենից առաջ էլ զգայարանները պէտք է խնամէինք. բայց հենց զգայարաններն ենք միայն մոռացութեան տալիս կամ ամենից շատ անուշադիր թողնում:

216. Զգայարանները վարժեցնել չէ նշանակում միայն գործադրել դրանց, այլ աւելի և՝ նրանց օգնութեամբ ճիշտ դատողութիւն տալ, այսպէս ասած, զգալ սովորել. որովհետև մենք կարող ենք միայն այնպէս զգալ, տեսնել և լսել՝ ինչպէս որ սովորել ենք:

217. Կան զուտ բնական և մեքենական վարժութիւններ, որոնք թէ և ծառայում են մարմինն ուժեղացնելու համար, բայց դատողութեան համար ոչև է օգուտ չեն բերում. լողալը, վազելը, թռչելը, ֆըրրան թռցնելը և քար ձգելը—բոլորը լաւ են. բայց մի՞թէ մենք միայն ձեռք ու ոտք ունենք. աչք ու ականջ չունենք և մի՞թէ այս գործարաններն առաջինները գործածելու համար աւելորդ են: Ուրեմն պէտք է վարժեցնել ոչ միայն ուժերը, այլ այն բոլոր զգայարանները, որոնք դրանց շարժողութեան մէջ են. դնում. պէտք է ամեն մէկից կարելի եղած օգուտը քաղել և յետոյ մէկը գործ դնել միւսի արածն ուղղելու համար: Պէտք է չափել, թուել, կշռել, համեմատել: Ուժը պէտք է գործադրել միայն այն ժամանակ, երբ ընդիմադրութեան չափը գիտենք. միշտ այնպէս պէտք է կարգադրել, որ ներգործութեան գնահատութիւնն աւելի առաջ տեղի ունենայ, քան միջոցների գործադրութիւնը: Երեխան պէտք է գիտենայ երբեք անբաւարար կամ աւելորդ աշխատանք չանելու արժէքը: Եթէ մարդ այդպիսով սո-

վորի իր բոլոր շարժողութիւնների ներգործութիւնը նախապէս իմանալու և իր սխալմունքները փորձով ուղղելու, պարզ է, որ մարդ այնքան աւելի դատելու ընդունակ կլինի, որքան շատ լինի նրա գործունէութիւնը։

218. *Տեղից պէտք է շարժել մի զանգուած. եթէ երեխան շատ երկար լծակ վերցնի, շատ շարժողութիւններ անելու ստիպուած կլինի. իսկ եթէ շատ կարճ լծակ վերցնի՝ բաւականաչափ ույժ չի ունենայ։ Փորձը նրան կսովորեցնի ուղղակի վերցնել այն լծակը, որն իրեն պէտք է։ Այս ըմբռնումը նրա հասակին անհամապատասխան չէ։ Պէտք է մի բեռը կրել. եթէ նա ուզենայ այնպիսի ծանրութիւն վերցնել, որ կարողանայ տանել, բայց աւելի չհամարձակուի, քան կարող է բարձրացնել, մի՞թէ ստիպուած չի լինի բեռի ծանրութիւնը աչքերով գնահատել։ Եթէ նա գիտէ միևնոյն նիւթի և տարբեր մեծութիւն ունեցող զանգուածները համեմատել, թող ընտրէ միևնոյն մեծութիւնն ունեցող և տարբեր նիւթի զանգուածները. այդ դէպքում պէտք է աշխատէ իր խսկ ծանրութիւնը համեմատել։ Ես տեսել եմ մի շատ լաւ դաստիարակուած երիտասարդ, որ ձեռնարկուած փորձից յետոյ միայն ուզում էր հաւատալ, որ կաղնու տաշեղով լի դոյլն աւելի թեթև է, քան նոյն դոյլը ջրով լցրած։*

219. *Մեր բոլոր զգայարանների գործադրութիւնը նոյն չափով չէ մեր տրամադրութեան տակ դրուած։ Կայ մէկը, այսինքն շօշափելիքը, որի գործունէութիւնը արթուն ժամանակ երբէք չէ դադարում, տարածուած է մեր մարմնի ամբողջ մակերևոյթի վրայ, ինչպէս մի մնայուն պահապան, որպէս զի տեղեկութիւն տայ այն բոլորի մասին, ինչ որ կարող է վնասել մարմնին։ Ատա այն բոլորի մասին, ինչ որ կարող է վնասել մարմնին։ Անմենից առաջ դրանից ենք, լաւ կամ վատ, փորձառութիւն ունենում՝ շնորհիւ շարունակ կրկնուող վարժութեան և այդ պատճառով էլ քիչ հոգացողութիւն ենք ունենում դրա մասին։ Նկատուած է, որ կոյրերը մեզնից աւելի ապահով և աւելի լաւ շօշափելիք ունեն, որովհետև նրանք աչքերով չառաջնորդուելով՝ հարկից ստիպուած պէտք է միայն շօշափելիքի օգնութեամբ դատողութիւն տալ սովորեն։ Ինչո՞ւ մեզ էլ նրանց նման չեն վարժեցնում՝ մթնումը ման գալու, ձեռքով բռնած մարմինները ճանաչելու, մեզ շրջապատող իրերի մասին դատողութիւն տալու, մէկ խօսքով գիշերը և առանց լոյսի անելու այն ամենը, ինչ որ կոյրերն են անում ցերեկը՝ առանց աչքի լոյսի։ Քանի որ արևը փայլում է երկնքում, մենք կոյրերից առաւելութիւն ունենք. խաւարի մէջ, ընդհակառակը, նրանք են մեր առաջնորդները։ Մեր կեանքի կէսի ընթացքում մենք կոյր ենք, այն տար-*

բերութեամբ միայն, որ իսկական կոյրերը միշտ կարողանում են ճիշտ ըմբռնել տեղը, այն ինչ մենք մութը գիշերը չենք համարձակւում մի քայլ անգամ անել։ Ինձ կառարկեն, թէ դրա համար լոյս կայ։ Ի՞նչպէս. միշտ և շարունակ մեքենաներ։ Ո՞վ կարող է երաշխաւորել, որ հարկաւոր եղած ժամանակ դուք միշտ կարող էք ունենալ այդ մեքենաները։ Ես աւելի սիրով կուզենայի, որ Էմիլը մատների ծայրերին աչքեր ունենար, քան մոմավաճառի կրպակ։

220. *Եթէ գիշերով փակուած ես մի տան մէջ, ծափ տուր ձեռքերով. արձագանքից կարող ես իմանալ՝ թէ արդեօք փոքր, թէ մեծ տարածութիւն ունի քո գտնուած տեղը, թէ արդեօք մէջ տեղն ես գտնւում, թէ մի անկիւնում։ Պատից կէս ոտնաչափ հեռաւորութեան վրայ՝ աւելի քիչ ազատ և աւելի ուժով յետ խփուած օդը դէմքի վրայ՝ ուրիշ զգայութիւն է պատճառում։ Մնա միևնոյն տեղը և հետզհետէ շրջուիր դէպի բոլոր կողմերը. եթէ մի դուռը բաց է, օդի թեթև հոսանքն իմաց կտայ քեզ այդ։ Եթէ մակոյկի մէջ ես, կարող ես՝ նայելով թէ որ կողմից է օդը դէմքիդ դիպչում, իմանալ ոչ թէ միայն ճանապարհի ուղղութիւնը, այլև թէ արդեօք գետի հոսանքը քեզ դանդաղ, թէ արագ է առաջ քշում։ Այս և ուրիշ հազարաւոր դիտողութիւններ կանոնաւոր կերպով կարելի է անել միայն գիշերը. ցերեկը որքան էլ մեծ ուշադրութիւն դարձնենք, այնուամենայնիւ տեսողութիւնն օգնութիւն կհասնի մեզ կամ մեր ուշադրութիւնը կցրուի և դիտողութիւնն անկատար կմնայ։ Դեռ չենք խօսում ձեռքերի և ձեռնափայտի մասին։ Աչքի միջոցով ձեռք բերելի բազմաթիւ փորձառութիւններ կարող ենք ունենալ միայն շօշափելիքի շնորհիւ, նոյն իսկ առանց որև է առարկայի ձեռք տալու։*

221. *Գիշերները պէտք է յաճախ խաղեր սարքել։ Այս խորհուրդն աւելի էական է, քան ըստ երևոյթին։ Բնական բան է, որ գիշերը մարդկանց և երբեմն նաև կենդանիներին երկիւղ է ներշնչում *)։ Խելքը, գիտութիւնը, ոգին ու սրտոտութիւնը միայն քիչ մարդկանց են ազատում երկիւղից։ Ես տեսել եմ մեծ մտածողներ, ազատամիտներ, փիլիսոփաներ և զինուորականներ, որոնք ցերեկով երկիւղի մասին գաղափար չունէին, բայց գիշերը կանանց նման դողում էին ծառի տերևի շարժուելու խշխշոցից։ Այս երկիւղը վերագրում են ծծմայրերի հեքիաթներին, սակայն դրա պատճառը բնութեան մէջն է։ անտրամաբանական կերպով.*

**) Այս երկիւղն աւելի պարզ կերպով է երևան գալիս արևի լիակատար խաւարումների ժամանակ։*

Ես որն է այդ պատճառը։ Միևնոյնը, որ վայրենիներին կասկածոտ և ժողովրդին սնահաւատ է դարձնում՝ մեզ շրջապատող իրերի և մեր շուրջը կատարուող գործողութիւնների անգիտութիւնը *)։ Սովորած լինելով առարկաները հեռուից նշմարելու և նրանց տպաւորութիւնն իսկոյն նախատեսնելու, հազարաւոր էակներ և շարժողութիւններ չէի երևակայի, եթէ ամբողջ շրջապատից ոչինչ չտեսնէի. դրանք կարող էին ինձ վնասել և դրանցից չեմ կարող ինձ ապահովել։ Եթէ ես շատ լաւ էլ գիտենամ, որ իմ գտնուած տեղը ապահով է, այնուամենայնիւ դեռ ես այնպէս վստահ չեմ, ինչպէս որ կլինէի՝ եթէ աչքերովս էլ տեսնէի. ուրեմն միշտ առիթ ունիմ վախենալու. լոյս ցերեկով երկիւղի այդ առիթը չեմ ունեցել։ Ես լաւ գիտեմ, հարկաւ, որ մի օտար մարմին հազիւ թէ կարող լինի իմ մարմնի վրայ ներգործել՝ առանց որև է շշուկով իւր ներկայութիւնն իմաց տալու և ինչպէս արթուն է ամեն վայրկեան իմ ականջը։ Ամենաչնչին շշուկի ժամանակ, որի պատճառը չեմ կարող իմանալ, ինքնապահպանութեան հոգացողութիւնն ինձ թոյլ է տալիս իսկոյն ամեն բան ենթադրելու, ինչ որ ինձ ամենից շատ առիթ է տալիս զգոյշ լինելու և այդպիսով այն ամենը, ինչ որ ինձ իսկապէս պէտք է երկիւղ պատճառէ։

---

*) Առաջ ենք բերում այստեղ և մի հիանալի բացատրութիւն այն փիլիսոփայի, որի գիրքը յաճախ յիշում եմ, բայց որի վսեմ հայեացքն աւելի յաճախ է հրահանգում ինձ։ «Եթէ մենք առանձին հանգամանքների շնորհիւ ճիշտ գաղափար չունենք հեռաւորութեան մասին և առարկաները կարող ենք չափել միայն անկեան կամ աւելի ես պատկերի մեծութեամբ, որ նրանք առաջ են բերում մեր աչքերում, այն ժամանակ անհրաժեշտ կերպով խաբւում ենք առարկաների մեծութեան վերաբերմամբ։ Ամեն մարդ փորձած կլինի, որ երբ գիշերն ենք ճանապարհորդում, մօտիկ գտնուող թուփը՝ հեռու եղած մեծ ծառ է երևում մեզ կամ թէ հեռու գտնուող մեծ ծառը մօտիկ եղած թուփ է թւում. նոյնպէս անհրաժեշտ կերպով կխաբուենք՝ եթէ առարկաներն իրենց ձևից չենք ճանաչում և այս միջոցով չենք կարողանում հեռաւորութեան մասին մտապատկեր կազմել. մեզնից մի քանի մատնաչափ հեռաւորութեամբ մեր աչքի առաջ արագ թռչող ճանճն այս դէպքում մեզնից շատ հեռու գտնուող թռչուն կթւայ։ Դաշտում անշարժ և մօտաւորապէս գառան դիրքով կանգնած ձին, մեզ մեծ գառից աւելի մեծ չի թւայ, մինչև չճանաչենք, որ այդ կենդանին ձի է. հենց որ ճանաչեցինք, նա իսկոյն ձիու չափ մեծ կերևայ մեզ և այդպիսով կարող ենք մեր առաջին դատողութիւնն ուղղել»։

Ամեն անգամ, երբ անծանօթ տեղ ենք գտնւում, որտեղ չենք կարող հեռաւորութեան մասին դատել և մթութեան

222. Եթէ բոլորովին ոչինչ էլ չլսեմ, դրանով չեմ հանդըստանայ, որովհետև առանց շշուկի էլ կարող են ինձ յանկարծակի բերել։ Ես պէտքէ իրերն այնպէս պատկերացնեմ, ինչպէս որ էին նրանք առաջ և կրկին պէտքէ լինեն. ես պէտքէ տեսնեմ այն, ինչ որ չեմ տեսնում։ Այսպիսով եթէ ստիպուած լինեմ երևակայութիւնս գործ դնելու, շուտով այլևս նրան չեմ իշխի և ինչ որ արի ինձ հանգստացնելու համար, աւելի ես կանհանգստացնի ինձ։ Երբ շշուկ լսեմ, կկարծեմ թէ գողեր են. եթէ ոչինչ չլսեմ, ուրուականներ կտեսնեմ. իմ ինքնապահպանութեան համար եղած հոգացողութիւնից առաջացած արթնութիւնն ինձ համար նոր եր-

---

պատճառով առարկաների ձևը չենք կարող ճանաչել, կարող ենք ամեն րոպէ՝ ներկայ գտնուող առարկաների վերաբերմամբ դատողութիւն կազմելիս սխալանքի մէջ ընկնելու վտանգին ենթարկուել։ Այստեղից է առաջանում երկիւղը և այն առանձնայատուկ ներքին վախը, որ գիշերային մթութիւնը ներշնչում է համարեա ամեն մարդու. դրա վրայ են հիմնւում ոգիների երևան գալը, հսկայական և երկիւղալի կերպարանքները, որ շատ մարդիկ տեսած են համարում։ Սովորաբար դրանց պատասխանում են, որ այդ երևոյթները գոյութիւն ունեն միայն իրենց երևակայութեան մէջ. բայց դրանք կարող էին իսկապէս նրանց աչքում գոյութիւն ունենալ և շատ հաւանական է, որ նրանք իսկապէս տեսած լինեն այն, ինչ որ տեսած են համարում. որովհետև ամեն անգամ, եթէ առարկայի մասին դատողութիւն կազմենք նրա մեր աչքում կազմած անկիւնի համեմատ, անհրաժեշտ կերպով այս անծանօթ առարկան այնքան աւելի մեծ զանգուած և ծաւալ կունենայ, որքան մեզնից մօտ լինի. այդ առարկան չճանաչող մարդուն, որ հեռաւորութիւնը չի կարող գնահատել, առաջ մի քանի ոտնաչափ բարձր է երևացել, երբ ինքը քսան, երեսուն քայլ հեռու էր, այս նոյն առարկան միքանի գրկաչափ բարձր կթւայ, երբ դիտողը միայն մի քանի ոտնաչափ հեռու լինի. այս բանը հարկաւ նրան երկիւղ և զարմանք կպատճառի, մինչև որ կարողանայ առարկան շօշափել կամ ճանաչել. որովհետև հենց այն վայրկեանին, երբ ճանաչեց, հրէշաւոր թուող առարկան յանկարծ կանյայտանայ և իր իսկական մեծութեամբ կերևայ։ Իսկ եթէ դիտողը փախչի նրանից կամ չհամարձակուի մօտենալ, այդ դէպքում նա այդ առարկայի մասին ուրիշ մտապատկեր չի ունենայ, բացի նրա մեր աչքին երեցած պատկերից. այս դէպքում դիտողն իսկապէս կկարծէ՝ թէ տեսնում է մեծութեամբ և ձևով մի հրէշաւոր և սարսափեցնող երևոյթ։ Ուրեմն ուրուականներ տեսնելու անմտութիւնը բնութեան մէջ է գտնւում և նրանց երևան գալը կախուած չունի միմիայն երևակայութիւնից, ինչպէս որ կարծում են փիլիսոփաները»։ Histoire naturelle. tome VI page 22, in 12.։ Ես բնագրի մէջ փորձեցի ապացուցանել, թէ

կիւղի առիթ կլինի միայն։ Այն ամենը, ինչ որ ինձ պէտք է հան-
դստացնէ, գտնւում է միայն իմ խոհականութեան մէջ. բնազդը,
որ նրանից աւելի ուժեղ է, բոլորովին ուրիշ լեզուով է խօսում ինձ
հետ։ Ի՞նչ օգուտ կտայ ամեն տեսակ սիրտ տալը՝ թէ ոչնչից
չպէտք է վախենալ։ Այս դէպքում ես առհասարակ բոլորովին
ոչինչ անելու բան չէի ունենայ *)։

223. Զարկքի պատճառի հետ գտնուել է նաև նրա բժշկ-
կութիւնը։ Սովորութիւնն ամեն բանում խեղդում է երևակայու-
թիւնը. միայն նոր առարկաներն են գրգռում այն։ Շարունակ
տեսնուող առարկաները մեր երևակայութիւնը չեն գրգռում, այլ
յիշողութիւնը և դրա վրայ է հիմնւում ab assuetis non fit pas-
sio միտքը (սովորական իրերը կիրք չեն առաջացնում), որովհե-
տև կրքերը վառւում են միայն երևակայութեան կրակով։ Ձեռք
քաշիր ուրեմն բոլոր խելացի առարկութիւններից, երբ ուզում

ինչպէս այս անմտութիւնը միշտ մասամբ երևակայութիւնից
կախումն ունի և ինչ վերաբերում է վերն առաջ բերուած պատ-
ճառաբանութեանը, պարզ է, որ գիշերը շրջելու սովորութիւնը
մեզ պէտք է սովորեցնէ՝ զանազանել երևոյթի ձևերը, որ ստա-
նում են առարկաները մեր աչքում մութ գիշեր ժամանակ՝ շնոր-
հիւ ձևերի նմանութեան և հեռաւորութիւնների զանազանու-
թեան. երբ օդը դեռ այնքան պայծառ է, որ առարկաների
ստուերագիծը կարելի լինի ճանաչել, մենք այս ստուերագծե
րը, որովհետև աւելի մեծ հեռաւորութեան վրայ աւելի շատ
օդ է լինում մէջ տեղը, միշտ աւելի անորոշ կտեսնենք՝ երբ
առարկան աւելի հեռու է գտնւում մեզնից և այսքանը բաւա-
կան է, եթէ սովորութիւն դարձնենք, այն սխալներից ազատ
մնալու համար, որ այստեղ բացատրում է Բիւֆոնը։ Որ բա-
ցատրութեանն էլ որ առաւելութիւն տրուի, իմ մեթոդը միշտ
ազդեցիկ է, ինչպէս փորձն էլ լիովին հաստատում է։

*) Այսինքն. երբ ոչ մի բանից չվախենանք, մեր երևա-
կայութիւնն անգործ կմնայ։
Իսկ այժմ երևակայութիւնը գրգռուած է, ուրեմն կայ մի
բան, որից պէտքէ վախենալ։ Բանաստեղծ Belloy-ին ուղղուած
մի նամակում Ռուսօն գրում է 1770 թ. մարտի 12 ին. «Որը
ցերեկով ոչ մի բան ինձ երկիւղ չէ պատճառել. բայց երբ
խաւարը շրջապատում է ինձ, ամեն բանից խրտնում եմ և
մթութեան մէջ միայն սևութիւն եմ տեսնում։ Նոյն իսկ
ամենասոսկալի հայեացքը մանկութեանս ժամանակ երկիւղ չէ
պատճառել ինձ, բայց սպիտակ շորի մէջ փաթաթուած կեր-
պարանքը ջղաձգութիւն պատճառեց ինձ. այս տեսակէտից,
ինչպէս և ուրիշ շատ տեսակէտներից, ես երեխայ կմնամ մին-
չև մահս։»

ես գիշերը վախեցողներից մէկին բժշկել. յաճախ մութը տեղ
տար նրան և ապահով եղիր, որ փիլիսոփայութեան բոլոր պատ-
ճառաբանութիւններն աւելի քիչ արժէք ունին, քան այդ վար-
ժութիւնը։ Կտուրների ծածկերը շինողների գլուխները չեն պտը-
տում կտուրների վրայ և ով սովոր է մթութեան, նա այլ ևս
խաւարի մէջ երկիւղ չի կրի։

224. Սրանով մեր գիշերային խաղերի առաջին առաւելու-
թեանը կցում ենք նաև երկրորդը. որպէս զի այս խաղերը յա-
ջողուին՝ շատ ուրախ-զուարթ տրամադրութիւն պէտք է ունե-
նալ։ Ոչինչ այնքան տխուր չէ, քան խաւարը. երեխային մի բան-
տարկի։ Նա պէտք է ծիծաղի, երբ մութը տեղ է գնում և դուրս
գալուց առաջ դարձեալ պէտք է ծիծաղի. երբ նա մթի մէջ է
գտնւում, թող այն զուարճութիւնների յիշողութիւնը, որ թող-
նում է և որ պէտք է վայելէ յետոյ՝ հեռու պահեն նրանից այն
խառնաշփոթ երևակայական մտապատկերները, որ կարող է
ստանալ այնտեղ։

225. Կեանքի մէջ կայ մի սահմանագիծ, որից յետոյ մեր ա-
ռած իւրաքանչիւր քայլը դէպի յետ է տանում մեզ։ Ես զգում եմ,
որ արդէն անցել եմ այդ սահմանագիծը. ես, այսպէս ասած,
կրկին մի ուրիշ ճանապարհի վրայ եմ ոտք դնում։ Հասունու-
թեան հասակի ունայնութիւնը, որ արդէն զգում եմ, կրկին հո-
գուս առաջն է բերում մանկական տարիների քաղցր ժամանակ-
ները։ Ծերանալով՝ կրկին երեխայ եմ դառնում և աւելի մեծ
ուրախութեամբ եմ յիշում այն, ինչ որ տաս տարեկան հասա-
կումն եմ արել, քան այն, ինչ որ երեսուն տարեկան հասակում
եմ գործել։ Այս պատճառով թող ընթերցողը ներողամիտ լինի,
եթէ ես երբեմն օրինակները հենց իմ կեանքից եմ առաջ բե-
րում. որովհետև այս գիրքը լաւ գրելու համար՝ պէտք է զուար-
ճութեամբ գրեմ։

226. Մի գիւղում ես ապրում էի Lambercier անունով հո-
գևորականի տանն՝ իբրև գիշերօթիկ։ Ինձ հետ էր և իմ հօրեղբօր
որդին, որ ինձնից հարուստ էր և ժառանգ էր համարւում, այն
ինչ ես հօրիցս բաժանուած լինելով՝ խեղճ որբ էի համարւում։
իմ մեծ հօրեղբօրորդի Bernard-ը սաստիկ վախկոտ էր, մանաւանդ
գիշերը։ Ես նրա վախկոտութեան վրայ այնպէս էի զուարճանում,
որ հայր Lambercier-ը իմ մեծախօսութիւնից ձանձրացած, ու-
զում էր իմ սրտոտութիւնը փորձի ենթարկել։ Աշնանային մի
երեկոյ, երբ սաստիկ մութն էր, նա տուեց եկեղեցու բանալին
և պատուիրեց ինձ վերցնել ամբիոնի վրայ թողած Աստուածա-
շունչը։ Իմ պատուասիրութիւնը գրգռելու համար, նա մի քանի

խօսք էլ ասաց ինձ, որով անկարելի էր դառնում պատուէրի անկատար թողնելը։

227. Ես գնացի առանց լոյսի. եթէ ճրագ ունենայի, գուցէ աւելի վատ լինէր։ Պէտք է գնայի գերեզմանատան միջով. անվախ անցայ գերեզմանատան միջով, որովհետև բաց և ազատ տեղը ես երբէք երկիւղ չէի կրում գիշերով։

228. Երբ եկեղեցու դուռը բաց արի, վերևը, կամարների տակ մի որոշ շշնչոց լսեցի, որ ձայներ թուացին և իմ հռովմէական արիասրտութիւնը սկսեց խախտուել։ Երբ դուռը բաց էր, ուզում էի ներս գնալ, բայց հենց որ մի քանի քայլ արի, մնացի կանգնած։ Ընդարձակ տարածութեան վրայ իշխող խորին խաւարը տեսնելով՝ ես մի այնպիսի սարսափ զգացի, որ մազերս բիզ բիզ եղան. յետ դարձայ, դուրս եկայ եկեղեցուց և դողալով ու սարսռալով փախայ։ Բակում տեսայ մի փոքրիկ շուն, Սուլտան անունով, որ քծնելով նորից հանգստացրեց ինձ։ Իմ վախկոտութիւնից ամաչելով՝ ես իսկոյն վերադարձայ և փորձեցի Սուլտանին էլ հետս տանել, բայց նա չէր ուզում հետևել ինձ։ Ես արագ անցայ եկեղեցու շեմքի վրայից և ներս մտայ։ Ներս մտնելուց անմիջապէս յետոյ երկիւղը նորից պատեց ինձ, բայց այս անգամ արդէն այնպիսի ուժով, որ գլուխս կորցրի և չնայելով որ ամբիոնը աջ կողմն էր և ես էլ շատ լաւ գիտէի այդ, բայց այն ու ամենայնիւ ձախ կողմն էի որոնում, որովհետև անգիտակցաբար շրջուել էի հակառակ կողմը. նստարանների մէջ մոլորուեցի և այլ ես չգիտէի թէ որտեղ եմ. և որովհետև այլես ոչ ամբիոնը և ոչ էլ եկեղեցու դուռն էի կարողանում գտնել, մի անասելի շփոթութեան մէջ ընկայ։ Վերջապէս նկատեցի դուռը և յաջողութեամբ եկեղեցուց դուրս եկայ. ես հեռացայ առաջին անգամուայ պէս՝ հաստատ վճռելով, որ երբէք այլ ես մենակ եկեղեցի չմտնեմ գիշերով։

229. Հասայ մինչև տուն և հենց որ ուզում էի ներս մտնել, ճանաչեցի հայր Lambercier-ի ձայնը, որ հռհռալով ծիծաղում էր։ Դէպի ինձ ուղղուած համարելով այդ ծիծաղը, ես սաստիկ ամաչելով՝ դանդաղում էի դուռը բանալու։ Այդ միջոցին լսեցի թէ ինչպէս օրիորդ Lambercier-ը իմ վերաբերմամբ հոգացողութիւն է արտայայտում և պատուիրում է աղախնին լապտերը վերցնելու. հայր Lambercier-ն էլ պատրաստութիւն էր տեսնում ինձ բերելու և սրան էլ պէտք է ուղեկցէր հօրեղբօրորդիս աներկիւղ, որին և անպատճառ պէտք է յետոյ վերագրէին այս ձեռնարկութեան պատիւը։ Վայրկենաբար բոլոր երկիւղս անցաւ և միայն նրանից էի վախենում, որ չլինի թէ փախչելիս բռնուեմ.

ես շտապում, թռչում եմ դէպի եկեղեցի և առանց շփոթուելու, առանց այս ու այն կողմը խարխափելու՝ գտնում եմ ամբիոնը. բարձրանում եմ վերև, վերցնում Աստուածաշունչը և կրկին դէպի ցած շտապում. երեք թռիչքով եկեղեցուց դուրս թռայ և մինչև անգամ մոռացայ եկեղեցու դուռը փակել. շունչս կտրուած վերադառնում եմ սենեակս և Աստուածաշունչը ձգում սեղանի վրայ՝ թէև շփոթուած, բայց ուրախութիւնից դողալով, որ նրանց մտադրուած օգնութեան առաջն առայ։

230. Այժմ ինձ կհարցնեն՝ թէ արդեօք այս պատմութիւնն ես առաջ եմ բերում իբրև հետևելու արժանի և այն զուարճութեան օրինակ, որ ինքս պահանջում եմ այսպիսի վարժութիւնների միջոցին։ Ոչ, բայց առաջ բերի այդ իբրև ապացոյց, որ ոչ մի բան այնպէս չէ հանգստացնում գիշերային մթութիւնից վախեցողին, քան մօտիկ սենեակում հաւաքուած ընկերութեան անհոգ ծիծաղի ու զրուցատրութեան լսելը։ Ես կցանկայի, որ փոխանակ սանի հետ միայնակ զրուցատրելու, երեկոյեանները մի խումբ ուրախ բնաւորութեան տէր երեխաներ հաւաքուէին և նրանց ոչ թէ մէկ մէկ, այլ շատերին միասին ճանապարհ ձգէին և այնպէս չանէին, որ մէկը բոլորովին մենակ մնար, առանց նախապէս համոզուած լինելու, որ նա սաստիկ երկիւղ չի կրի այդ բանից։

231. Ես չեմ կարող աւելի ուրախ և նպատակայարմար բան երևակայել, քան այն տեսակ խաղերը, որոնց գործադրութեան միջոցին մասամբ շնորհք, մասամբ էլ անշնորհքութիւն է երևում։ Ես մի մեծ դահլիճում սեղաններից, թիկնաթոռներից, բազկաթոռներից և անկողնի շիրմաներից մի տեսակ լաբիւրինթոս կշինէի։ Այս լաբիւրինթոսի ոլոր-մոլոր գալարումների մէջ ութը կամ տասը պատրանքի արկղիկների շարքում մի շաքարեղէնով լաւ լցուած արկղիկ կդնէի, որ միւս արկղների ձեն ունենայ. պարզ, բայց կարճառօտ խօսքերով ես ճշտութեամբ այն տեղը ցոյց կտայի, որտեղ գտնւում է շաքարեղէնի արկղիկը և ցուցումն կտայի, որով երեխաներից աւելի ուշադիր և հանգիստ մարդիկ կարող էին տարբերել միւսներից և գտնել. *) յետոյ ես փոքրիկ մրցող-

---

*) Նրանց ուշադրութիւնը վարժեցնելու համար, պէտքէ նրանց միշտ այնպիսի բաներ ասել, որոնց հասկանալը մի շօշափելի և վայրկենական շահագրգռութեամբ կարելի լինէր հեշտացնել. միայն երկար ճառեր չպէտքէ ասել, ոչ մի խօսք աւելի։ Բայց միևնոյն ժամանակ բացատրութիւնների միջոցին այնպէս պէտք է անել, որ նրանք սխալ չհասկանան կամ երկմիտ մնան։

ներին վիճակ հանել կտայի և մէկը միւսի յետևից որոնելու կուղարկէի, մինչև որ իսկական արկղիկը գտնուէր. այս բանը ես աւելի կդժուարացնէի՝ ի նկատի ունենալով նրանց ճարպիկութեան աստիճանը։

232. Պէտք է երևակայել մի փոքրիկ Հերկուլէս, որ արկղիկը ձեռքին հպարտութեամբ յի վերադառնում է յաղթանակով։ Արկղիկը պէտքէ դնել սեղանի վրայ և հանդիսաւոր կերպով բանալ։ Ես արդէն երևակայում եմ զուարթ խմբի ուրախութեան աղաղակն ու ծիծաղը, երբ սպասած շաքարեղէնի փոխանակ արկղիկի մէջ տեսնեն՝ մամուռի կամ բամբակի վրայ սիրուն կերպով շինուած մայիսեան ճճի, խխունջ, ածուխ, խողկաղին, շաղգամ կամ ուրիշ այդպիսի որև է անուշեղէն։ Մի ուրիշ անգամ նոր սպիտակացրած պատի մօտ պէտք է կախել որևէ փոքրիկ խաղալիկ, մի փոքրիկ անօթ և պէտք է ցած բերել՝ առանց պատին կպչելու։ Երբե ցանկացողը հենց որ վերադառնայ, նրա գլխարկի սպիտակ եզրը, կօշկի ծայրը, զգեստի փեշը կամ թևը կմատնեն նրա անշնորհքութիւնը, եթէ նա պայմանի հակառակ վարուած լինի։ Այսքանը բաւական, գուցէ և շատ է՝ այսպիսի խաղերի միտքը հասկանալու համար։ Եթէ ես պէտք է ամեն բան ասեմ, աւելի լաւ է, որ իմ գրածը երբէք չկարդան։

233. Այսպէս կրթուած մարդն ինչ առաւելութիւններ պէտք է ունենայ ուրիշներից գիշեր ժամանակ։ Նրա ոտքերը, որ սովոր են մթնումը հաստատուն քայլով գնալու և ձեռքերը, որ վարժուած են հեշտութեամբ բոլոր առարկաների շուրջը շօշափելու, առանց ջանքի նրան ամենամութ տեղ կառաջնորդեն։ Նրա երևակայութիւնը դեռ ևս լցուած լինելով պատանեկութեան ժամանակի գիշերային խաղերով, դժուար թէ երկիւղ ազդող առարկաներով զբաղուի։ Երբ նա ուրախ ծիծաղ լսէ, չի երևակայի թէ դրանք չար ոգիներ են, այլ իւր հին խաղընկերները. եթէ նա մի ընկերութիւն երևակայի, չի լինի այդ վհուկների ժողով, այլ իւր դաստիարակի սենեակը։ Գիշերը նրա յիշողութեան մէջ միայն ուրախ մտապատկերներ կարթնացնէ և երբէք սարսափելի չի լինի նրա համար. նա չի վախենայ, այլ կսիրէ գիշերը։ Եթէ գործը վերաբերում է մի պատերազմական ձեռնարկութեան, նա ամեն ժամ պատրաստ կլինի թէ մենակ և թէ իւր զօրագնդի հետ։ Նա Սաուղի բանակը կմտնի և շատապով կանցնի՝ առանց մոլորուելու. նա կըգնայ մինչև թագաւորի վրանը, առանց մէկին քնից զարթեցնելու *)։ Եթէ Րէզոսի ձիերը և կվերադառնայ՝ առանց նկատուելու

*) Սամ. 26,7.—Ռուսօն մե ծախրով՝էր կարդում հին կտակարանը։

պէտքէ գողացուին՝ առանց հոգացողութեան նրան դիմիր։ *)
Ուրիշ կերպ դաստիարակուած մարդկանց մէջ դժուար թէ մի Ու-
լիսէս գտնուի։

234. Ես տեսել եմ՝ թէ ինչպէս ոմանք յանկարծակի բերե-
լով երեխաներին, ուզում էին սովորեցնել գիշերով ոչինչ բանից
չվախենալ։ Այս եղանակը շատ անհամեմատ բան է, ցանկացածի
հակառակ ներգործութիւն է առաջ բերում և երեխաներին աւե-
լի վախկոտ դարձնում։ Ոչ խոհականութիւնը, ոչ սովորութիւնը
չեն կարող սպառնացող վտանգի մտապատկերը հանգստացնել,
որի աստիճանը կամ եղանակը անկարելի է ճանաչել. աւելի ևս
յանկարծակի գալու երկիւղը, որ արդէն յաճախ փորձուել է.
ինչպէս կարելի է վստահ լինել, որ սանը պաշտպանուած կմնայ
այդպիսի պատահմունքներից։ Ամենալաւ խրատը, որ կարելի է
տալ նրան դրա վերաբերմամբ՝ իմ կածիքով հետևեալը պէտքէ լինի.
ես իմ Էմիլին կասեմ. «Այդ դէպքում դու իրաւունք ունիս անձդ
պաշտպանելու, որովհետև յարձակուողը թոյլ չէ տալիս տեսնելու՝
թէ արդեօք քեզ վնասել, թէ միայն վախեցնել է ուզում և քանի
որ նա նկատել է իւր առաւելութիւնը, փախչելով էլ չես ազա-
տուի։ Համարձակ կերպով բռնիր նրան, ով գիշերով յարձակուի
քեզ վրայ, ով կուզէ լինի՝ մարդ թէ կենդանի. բռնիր բոլոր ու-
ժովդ. եթէ դիմադրէ, հարուածներ հասցրու և այնպէս արա, որ
հարուածներդ համար չզղջաս. թող ինչ ուզում է անէ կամ ասէ
նա, ձեռքիցդ չթողնես, մինչև որ ճիշտ չիմանաս նրա ով լինելը։
Գործի պարզուիլը հաւանականօրէն ցոյց կտայ քեզ, որ շատ վախե-
նալու բան չկար. բայց կատակածների հետ այդ կերպ վարուիլը
նրան երկիւղ կներշնչէ՝ նոյն փորձն երկրորդ անգամ կրկնելու։»

235. Թէև մեր զգայարաններից շօշափելիքն ամենից շատ
ենք շարունակ վարժեցնում, բայց և այնպէս նրա շնորհիւ կազ-
մուած դատողութիւնները մնում են, ինչպէս արդէն ասացինք,
աւելի անկատար և չիրտ, քան ուրիշ որևէ զգայարանի միջոցով
կազմուած դատողութիւնը, որովհետև մենք նրա գործածութիւնը
միշտ միացնում ենք աչքի գործողութեան հետ և որովհետև խնդ-
քը—քանի որ աչքն աւելի շուտ է առարկային հասնում, քան
ձեռքը—համարեա միշտ առանց ձեռքի օգնութեան է դատում։
Դրա հակառակ շօշափելիքի միջոցով ձեռք բերած դատողութիւն-
ներն աւելի ապահով են, հենց որովհետև սահմանափակ են. և
որովհետև աւելի հեռու չեն հասնում, քան մեր ձեռքերը՝ ուղղում

*) Էնէական I. 469. Ուլիսէսը և Դիոմէդէսը գաղտնի գողացան Րէզոսի ձիերը՝ նրա բանակից։

են ուրիշ զգայարանների աճապարանքները, որ հեռուից կազմւում են հազիւ նշմարած առարկաների մասին, այն ինչ շօշափելիքն այն ամենը, ինչ որ ըմբռնում է, լաւ է ըմբռնում։ Դրա վրայ պէտքէ աւելացնել, որ մենք ըստ մեր ցանկութեան մեր մկանների ոյժը կապակցում ենք նեարդերի գործունէութեան հետ և այդպիսով միաժամանակեայ զգայութեամբ միացնում ենք ջերմութեան, մեծութեան և ձևի դատողութեան հետ ծանրութեան և ամրութեան դատողութիւնը։ Այսպիսով շօշափելիքն այն զգայարանն է, որ ամենից լաւ է սովորեցնում մեզ զգալ այն ազդեցութիւնը որ օտար մարմինները կարող են ունենալ մեր մարմնի վրայ, նոյնպէս և այն, որ ամենից յաճախ է գործածւում և մեր պահպանութեան համար կարևոր փորձառութիւնն ամենից անմիջական կերպով է մեզ հաղորդում։

236. Քանի որ կազմակերպուած շօշափելիքը օգնութեան է հասնում տեսանելիքին, ինչու չպէտքէ և մինչև մի որոշ սահման նաև լսողութիւնը պաշտպան է, քանի որ հնչիւնները ձայն արձակող մարմինների մէջ տատանումներ են առաջացնում, որոնք զգալի են շօշափելիքի համար։ Եթէ ձեռներս դնենք ստուարայջութակի (վիօլօնչէլ) վրայ, առանց աչքերի կամ ականջի օգնութեան՝ նայելով միայն փայտի տատանումներին, կարող ենք ճանաչել՝ թէ արդեօք նրա արձակած տոնը ցածր թէ բարձր է, թէ արդեօք ո՛ր լարերին է դիպչում կնտնտոցը։ Թող մեր զգայարանները վարժեցնենք այսպիսի տարբերութիւններով և ես չեմ կասկածում, որ ժամանակով այնպիսի նուրբ զգայութիւններ կունենանք, որ մի ամբողջ հատուած կարող ենք լսել մատներով։ Այս ենթադրութիւններից պարզ երևում է, որ խուլերի հետ կարելի է հեշտութեամբ խօսել երաժշտութեան միջոցով. որովհետև երանգն (տօնն) ու ամանակը (տէմպօն), որոնք վանկերից և հնչիւններից պակաս ընդունակ չեն կանոնաւոր կապակցութիւններ առաջացնելու, կարող են խօսքի մասերի տեղը բռնել։

237. Կան այնպիսի վարժութիւններ, որ թմրեցնում և բթացնում են շօշափելեաց զգայարանը, կան և այնպիսիները, որոնք սրում են շօշափելիքը, նրբացնում և աւելի զգայուն դարձնում։ Առաջինները շարունակ կոշտ մարմինների հպմամբ շատ շարժողութիւն և ոյժ բանացնելով՝ կաշին կոշտացնում, բրտացնում և պակասացնում են նրա բնական զգայունութիւնը վերջիններն, ընդհակառակը, նոյն զգայունութեանը փոփոխութիւն են պատճառում թեթև և յաճախ կրկնուող շարժողութեամբ, այնպէս որ խոհականութիւնը շարունակ կրկնուող տպաւորութիւնները ուշադրութեան առնելով,

թեթևութիւն է ձեռք բերում՝ նրա բոլոր փոփոխութիւնները դատողութեան ենթարկելու։ Այս տարբերութիւնը զգացւում է երաժշտական գործիքները ձեռք առնելիս. ստուարաջութակի, գերաստուար ջութակի (կօնտրբասի) և նոյն իսկ ջութակի լարերին կոշտ և վնասող կերպով խփելը՝ թէև մատներն աւելի շարժուն է դարձնում, բայց մատների ծայրերին կոշտեր է առաջացնում։ Թռուցիկ և թեթև հպումները դաշնամուրի վրայ նոյնպէս աւելի շարժուն է դարձնում մատները, բայց միևնոյն ժամանակ աւելի զգայուն։ Այս դէպքում ուրեմն առաւելութիւն պէտք է տալ դաշնամուրին։

238. Էական հանգամանք է, որ կաշին դուրս կանգնի օդի տպաւորութիւնների դէմ և նրա փոփոխութիւններին դիմադրէ, որովհետև կաշին պէտք է պաշտպանէ բոլոր մնացածը։ Բացի դրանից, ես չեմ կարծում, որ ձեռքը միևնոյն աշխատանքով չափազանց սարկօրէն գործելով կոշտանայ և նրա կաշին համարեա ոսկրային դարձած՝ կորցնի այն քնքոյշ զգացմունքը, որով մենք ճանաչում ենք թէ ինչ տեսակ են այն մարմիններն, որոնց վրայով սահում են մատները և նայելով շօշափման եղանակին երբեմն մթութեան մէջ տարբեր տեսակ սարսուռ են պատճառում։

239. Ինչու պէտք է իմ սանը ստիպուած լինի ոտքերի տակ միշտ եղան կաշի կրելու։ Ինչ վատ կլինէր, եթէ նոյն իսկ իւր կաշին պէտք եղած ժամանակը ծառայէր նրան իբրև կօշիկ ներբան։ Պարզ է, որ այդ տեղում կաշուի զգայունութիւնը երբէք ոչ մի բանի համար լաւ չի լինի և երբեմն էլ բաւականին կվնասի։ Ձմեռ ժամանակ կէս գիշերին ժընևցիները թշնամիների յարձակումից յանկարծակի արթնանալով՝ աւելի շուտ իրենց զէնքերը գտան, քան կօշիկները։ Եթէ նրանցից ոչ մէկը բոբիկ չկարողանար մանգալ, ով գիտէ թէ ժընևը թշնամիների ձեռքը չընկնէր *)։

240. Ուրեմն մարդս միշտ պէտք է զինուած լինի չնախատեսնուած դէպքերի համար։ Թող Էմիլը տարուայ իւրաքանչիւր եղանակին, առաւօտները բոբիկ ման գայ սենեակում, սանդուղքի վրայ և պարտիզում. ես երբէք նրա հետ չեմ կռուի այդ բանի համար, այլ ընդհակառակը, կհետևեմ նրա օրինակին. միայն կհոգամ, որ ճանապարհին ապակու կտորներ չլինեն։ Ես շուտով կխօսեմ ձեռքի աշխատանքի և խաղերի մասին. Ի միջի այլոց նա պէտք է սովորի ամեն տեսակ քայլուածք, որոնք հեշտացնում են մարմնի շարժողութիւնները, նա պէտք է սովորի ամեն

*) Սաւոյեայի հերցոգի. 1602 թուին։

տեսակ դիրքով իրեն թեթև և վստահ պահել. Նա պէտք է իմա-
նալ հեռու և բարձր թռչել, ծառի վրայ մագլցել, պատի վրայ
բարձրանալ. միշտ պէտք է հաւասարակշռութիւնը պահպանէ. Նրա
բոլոր շարժողութիւնները և շարժուածքները յարմարեցրած պէտք
է լինեն ծանրութեան կէտի օրէնքներին, աւելի վաղ, քան թէ
կշռականութիւնն այդ մասին բացատրութիւններ կտայ նրան։
Նայելով այն եղանակին, թէ ինչպէս է նրա ոտքը քայլում և
մարմինը ոտքերի վրայ յենւում, նա պէտքէ նկատէ՝ թէ արդեօք
լաւ թէ վատ է կանգնած։ Վստահ դիրքը միշտ լաւ է երեւում և
ամենահաստատուն կանգնուածքը միշտ ամենավայելուչն է։ Եթէ
ես պարի ուսուցիչ լինէի, *Մարսէլի**) բոլոր կապկութիւնները
մի կողմը կթողնէի, որոնք լաւ են այն երկրի համար, ուր
գործ են դրւում. բայց իմ սանին փոխանակ շարունակ օդային
թռիչքներով զբաղեցնելու, նրան կտանէի մի ժայռի ստորոտ։
Այդտեղ ես նրան ցոյց կտայի թէ ինչ դիրք պէտքէ բռնել, թէ
ինչպէս պէտքէ գլուխն ու մարմինը պահել, ինչպիսի շարժողու-
թիւն անել, թէ ինչպէս պէտքէ ոտքն առաջ դնել, ձեռքն առաջ
տանել՝ սեպաձև, անհարթ և լեռնային շաւիղը թեթեւութեամբ
անցնելու և ծայրից ծայր թռչելու համար՝ թէ վեր բարձրանալիս
և թէ ցած իջնելիս։ Ես նրան աւելի սիրով քարայծի ախոյեան
կդարձնէի, քան բալէտ պարող։

211 Որչափ որ շօշափելիքն իւր գործողութիւնները կեն-
դրոնացնում է մարդու շրջապատի վրայ, այնքան էլ տեսանելի-
քը տարածում է այդ շրջապատից դուրս։ Այդպիսով վերջիններն
աւելի խաբէական են դառնում. մի հայեացքով մարդ ընդգրկում
է իւր տեսութեան սահմանի կէսը։ Այսքան բազմաթիւ զգայու-
թիւններ միաժամանակ ստանալով և դատողութիւններ կազմե-
լով՝ ինչպէս կարելի է այս կամ այն դէպքում չխաբուել։ Այսպէ-
սով տեսանելիքը մեր բոլոր զգայարանների մէջ ամենից շատ
սխալուողն է, որովհետև ամենից հեռուն է հասնում և որովհետև
նրա գործողութիւնները, որոնցով նա միւսներից շատ ա-

*) Մի նշանաւոր պարի ուսուցիչ Փարիզում, որ իւր գոր-
ծը լաւ գիտէր և խորամանկութեամբ իւր արուեստին [illegible]-
[illegible] այնպիսի մեծ նշանակութիւն էր տալիս, որ ըստ երևոյ-
թին ծիծաղելի էին համարում, բայց և այնպէս հենց նոյն բա-
նի համար մեծ յարգանք էին ցոյց տալիս նրան։ Աւելի շատ
պարզութիւն ունեցող և քիչ աղմուկ հանող ճշմարիտ տաղան-
դը բանի տեղ չէ անցնում։ Այստեղ խոհեմութիւնը թուլամիտ-
ների առաքինութիւնն է։

առաջ է գնում, շատ վայրկենական և շատ ընդգրկող են,
որպէս զի դրանցով ուղղուի։ Աւելի ևս. նոյն իսկ պէրսպէկտիւի
պատրանքները կարևոր են մեզ համար, որպէս զի կարողանանք
հասնել ծաւալի ճանաչողութեանը և առանձին մասերի համեմա-
տութեանը։ Առանց տեսանելիքի պատրանքների մենք ոչինչ
չէինք տեսնի հեռուից. առանց մեծութեան և լուսաւորութեան
աստիճանաւորութեան, չէինք կարող հեռաւորութիւնը կշռադա-
տել կամ թէ մեզ համար գոյութիւն չէին ունենայ դրանք։ Եթէ
երկու ծառերից մէկը, որ հարիւր քայլ հեռաւորութեան վրայ է
գտնւում, մեզ նոյնչափ մեծ և պարզ երեւայ, քան տասը քայլ
հեռու գտնուողը, մենք այդ երկու ծառն էլ մի տեղ կկարծէինք։
Եթէ մենք առարկաների բոլոր ծաւալներն իրենց իսկական չա-
փով տեսնէինք, ոչ մի տարածութիւն չէինք կարող տեսնել և
ամեն բան մեզ կերեւար թէ մեր աչքի մակերևոյթի վրայ են կանգ-
նած։

242. Առարկաների մեծութեան և նրանց հեռաւորութեան
մասին դատելու համար տեսանելիքը միայն մի չափ ունի, այս-
ինքն մեր աչքի տեսողութեան անկեան բացուածքը և որովհետև
այս բացուածքը մի բարդ պատճառի պարզ ներգործութիւնն է,
այդ պատճառով դրանով առաջացած դատողութիւնն անորոշ
կթողնի ամեն մի առանձին պատճառը կամ թէ անհրաժեշտ կեր-
պով սխալ կլինի։ Ի՞նչպէս պէտքէ միայն տեսնելով զանազանենք՝ թէ
արդեօք այն անկիւնը, որի տակ մի առարկայ ենք տեսնում, որ
աւելի փոքր է քան միւսը, նրանից է առաջանում, որովհետև այս
առաջին առարկան իսկապէս աւելի փոքր է, կամ թէ, որովհետև
աւելի հեռու է։

243. Այստեղ ուրեմն առաջուայ բռնած ճանապարհի հա-
կառակ ընթացքով պէտքէ գնալ. փոխանակ զգայութիւնը պար-
զարանելու, պէտքէ մի ուրիշի հետ միասին պահել և ուղղել,
տեսանելեաց գործարանը պէտքէ ստորադրել շօշափելեաց գոր-
ծարանին և, այսպէս ասած, առաջին զգայարանի փութկոտու-
թիւնը պէտքէ երկրորդի դանդաղ և համաչափ ընթացքով սահ-
մանափակել։ Բայց որովհետև գործողութեան այս եղանակի հետ
չենք ուզում կապուել, մեր կշռադատութիւններն աչքի չափով
շատ անճիշտ են։ Մենք վստահ չենք մեր հայեացքի վրայ, երբ
ուզում ենք որոշել բարձրութիւնները, երկարութիւնները, խորու-
թիւններն ու հեռաւորութիւններն և այն ապացոյցը, որ այդ առաջա-
նում է ոչ թէ զգայարանի թերութիւնից, այլ դրա գործածութիւնից,
այն հանգամանքն է, որ ինժեներները, երկրաչափները, ճարտարա-

պետները, որմնադիրները և նկարիչները սովորաբար աւելի անվրէպ աչք ունին քան մենք և աւելի մեծ ճշտութեամբ են որոշում տարածութիւնը. որովհետև նրանց պաշտօնը փորձառութիւն է տալիս նրանց այդ գործում, որ մենք չենք ձեռք բերում, Նրանք տեսողութեան անկեան բազմանշանակութիւնը հաւասարացնում են դրանց հետ եղող երևոյթների շնորհիւ, որ այս անկեան երկու պատճառների յարաբերութիւնը նրանց աչքում աւելի մեծ ճշտութեամբ է որոշում:

244. Այն ամենը, որ առիթ է տալիս մարմնին ազատ շարժողութիւն անելու, միշտ հեշտ է երեխաներին կատարել տալ: Հազար ու մի միջոցներով կարելի է նրանց հետաքրքրութիւնը շարժել՝ չափելու, ճանաչելու և հեռաւորութիւնները որոշելու: Ահա մի շատ բարձր կեռասենի. ինչպէս պէտքէ քաղենք կեռասը. կարելի՞ է արդեօք յարդանոցի սանդուղքը բանացնել դրա համար: Ահա մի շատ լայն առու. ինչպէս անցնենք վրայից. բակում եղած տախտակներից մէկը կհասնի՞ երկու ափերին: Սիրով կցանկանայինք դղեակի պատուհաններից ջրանցքում ձուկ որսալ. ո՞րչափ երկարութիւն պէտքէ ունենայ մեր չուանը: Ես կցանկանայի այս երկու ծառի միջև մի ճօճ շինել. երկու գրկաչափ երկարութիւն ունեցող պարանը բաւակա՞ն կլինի: Լսում եմ, որ ուրիշ տան մէջ գտնուող մեր սենեակը պէտքէ քսանուհինգ քառակուսի ոտնաչափ տարածութիւն ունենայ. լա՞ւ կլինի մեզ համար. այս սենեակից մե՞ծ կլինի արդեօք: Մենք շատ քաղցած ենք. ահա երևում են երկու գիւղ. ո՞ր գիւղն աւելի շուտ կհասնենք, որ հաց ուտենք և այլն:

245. Պէտքէ մի քնէած, ծոյլ երեխայի, որ ինքն իրեն ոչ մի մարմնական վարժութիւններ չէ անում, չնայելով որ նրան զինուորական ծառայութեան համար էին պատրաստում, վազելու վարժութիւններ անել տալ: Չգիտեմ ինչպէս, նա այն համոզման էր եկել, որ իր դիրքն ունեցող մարդը ոչինչ չպէտքէ անէ և ոչինչ չգիտենայ, իր ազնուական կոչումը պէտքէ ոտքերի, ձեռքերի և ամեն տեսակ աշխատանքի փոխարէն ծառայէ իրեն: Այսպիսի մի ազնուականից արագոտն Աքիլէս դարձնելու համար՝ դժուար թէ բաւական լինէր Քիրոնի ճարպիկութիւնը: Դժուարութիւնն աւելի մեծ էր, որովհետև ես ոչինչ չէի ուզում պատուիրել: Քաջալերութիւնները, խոստումները, սպառնալիքները, մրցութիւնը և փայլելու ցանկութիւնը ես ջնջել էի իմ ծրագրից. ինչպէս կարող էի նրան վազելու ցանկութիւնը ներշնչել՝ առանց մի բան ասելու: Իմ վազելն ապահով միջոց չէր լինի և անյարմարութիւններ կառաջացնէր: Բացի դրանից պէտք էր և

այնպէս անել, որ այս վարժութիւններն առիթ լինէին՝ նրան սովորեցնելու մեքենայի գործողութիւնները և դատող խոհականութեան ամեն ժամանակ միաբան ընթացքը: Ես հետևեալ կերպով սկսեցի. ես, այսինքն նա, ով այս օրինակում խօսում է:

246. Ճաշից յետոյ տեղի ունեցող մեր սովորական զբօսանքների ժամանակ երբեմն ես գրպանս էի դնում նրա սիրած խմորեղէններից երկու կտոր. մեզնից ամեն մէկը զբօսնելիս*) ուտում էր այդ կտորներից մէկը և շատ գոհ վերադառնում էինք տուն: Մի օր նա նկատեց, որ ես երեք կտոր խմորեղէն եմ վերցրել, նա կարող էր առանց դժուարանալու՝ վեց հատ ուտել, շտապով կերաւ իր բաժինը, որ երրորդն էլ ուզէ: «Ոչ», պատասխանեցի ես՝ «ինքս էլ լաւ կարող էի ուտել, կամ թէ երկու մասը կանէի և կբաժանէի. բայց աւելի լաւ է, որ այն երկու փոքրիկ տղաները վազելով մրցեն իրար հետ և ով տանի, նա՛ կստանայ»: Ես կանչեցի երկու փոքրիկներին, ցոյց տուի խմորեղէնը և բացատրեցի պայմանը: Հոգով չափ ուրախացան երկուսն էլ. խմորեղէնը դրուեց մի մեծ քարի վրայ, որ պէտքէ իբրև վազելու նպատակակէտ ծառայէր: Մենք նստեցինք և մեր նշանի վրայ՝ երկուսն էլ սկսեցին վազել. յաղթողը յափշտակեց խմորեղէնը և անողորմաբար մաքրազարդեց հանդիսատեսների և յաղթուողի ներկայութեամբ:

247. Այս կատակն աւելի արժէր, քան խմորեղէնի կտորը. բայց այս անգամ չներգործեց և առանց ազդեցութեան մնաց: Բայց ես ոչ ձեռք վերցրի այդ փորձից, ո՛չ էլ շտապեցի. երեխայոց ուսուցումն այնպիսի գործ է, որ ժամանակ պէտքէ կորցնել՝ ժամանակ վաստակելու համար: Մենք շարունակեցինք մեր զբօսանքները. յաճախ վերցնում էինք երեք, երբեմն էլ չորս կտոր խմորեղէն և ժամանակ առ ժամանակ վազելու մրցակիցներին տալիս էինք մի կամ նոյն իսկ երկու կտոր: Թէև մրցանակը մեծ չէր, բայց դրա փոխարէն մրցողներն էլ փառասէր չէին. ով

---

*) Ինչպէս ընթերցողն իսկոյն կտեսնէ, զբօսանք տեղի էր ունենում դէպի գիւղը: Քաղաքների մէջ կատարուող զբօսանքներն երկու սեռի երեխաների համար էլ աղետաբեր են: Այդտեղ է սկսւում տեսնուելու ցանկութիւնն և ունայնասիրութիւնը. Լուքսէմբուրգում, Տիւլէրիում, մանաւանդ Պալէ-Րոյեալում Փարիզի գեղեցիկ երիտասարդութիւնը դառնում է յանդուգն և անմիտ, որ նրան այնպէս ծիծաղելի է դարձնում և ամբողջ Եւրոպայի ծաղրին ու գարշանքին արժանանում:

ստանում էր մրցանակը, գովասանքի և պատուի էր արժանանում.
բոլորը տեղի էր ունենում որոշ ձևականութեամբ։ Բաղդի փոփոխու-
թիւնը կարելի դարձնելու և հետաքրքրութիւնն աւելի մեծաց-
նելու նպատակով՝ ես վազելու համար աւելի երկար տարածու-
թիւն էի նշանակում և շատ մրցակիցների էլ թոյլ տալիս վազե-
լու։ Հենց որ նրանք մրցումն սկսում էին, բոլոր անցորդները
կանգնում, նայում էին. կանչերը, աղաղակը և ծափահարութիւնը
բորբոքում էր նրանց. երբեմն տեսնում էի, որ իմ պատանի
պարոնիկս դողում, վեր էր թռչում և աղաղակում, երբ մրցող-
ներից մէկն ուզում էր միւսին հասնել կամ նրա առաջը կտրել.
այս մրցումը Օլիմպիական խաղերն էին նրա համար։

248. Մրցակիցներն երբեմն պատերազմական խորաման-
կութիւններ էին բանեցնում. նրանք յետ էին մնում փոխադար-
ձաբար կամ վայր էին ընկնում կամ ճանապարհի վրայ քարեր
ձգում։ Այս բանն առիթ էր տալիս ինձ՝ նրանց բաժանելու և
զանազան կէտերից վազեցնել տալու, որոնք հարկաւ նպատակից
հաւասար հեռաւորութեան վրայ էին գտնւում. այսպիսի միջոց-
ներ ձեռք առնելու պատճառը շուտով կպարզուի, որովհետև
այս կարևոր բանը շատ մանրամասնօրէն պէտքէ նկարագրեմ։

249. Իմ փոքրիկ պարոնս վերջապէս էլ չկամեցաւ, որ այդ
գրաւիչ խմորեղէններն իւր աչքի առաջ ուրիշներն անուշ անեն
և միտք արաւ, որ լաւ վազելն այնուամենայնիւ մի բանի համար
լաւ է և տեսնելով, որ ինքն էլ երկու ոտք ունի, սկսեց ծածուկ
վազելու փորձեր անել։ Ես այնպէս էի ձևացնում, իբրև թէ ոչինչ
չեմ տեսնում, բայց հասկացայ, որ խորամանկութիւնս յաջողուել
է։ Երբ նա իրեն ուժեղ զգաց (ես գուշակում էի նրա մտքերը)
բաւականին, այնպէս արեց, որ իբրև թէ աղերսելով է ուզում
աւելորդ մնացած խմորեղէնը ստանալ ինձնից։ Ես մերժում եմ,
նա շարունակում է և սկամայ ասում վերջապէս. «լաւ, դրէք
խմորեղէնը քարի վրայ, որոշեցէք վազելու սահմանը և կտեսնենք».
«լաւ», պատասխանում եմ ծիծաղելով. «մի՞թէ պարոնիկն էլ կա-
րող է վազել, դու աւելի ախորժակ կստանաս և ոչինչ՝ ախոր-
ժակիդ բաւականութիւն տալու համար։» Իմ ծաղրից գրգռուած,
հաւաքում է իւր ուժերը և հեշտութեամբ ստանում մրցանակը,
քանի որ ես սահմանը կարճ էի որոշել և հոգացողութեամբ ամե-
նալաւ վազողին հեռու էի պահել մրցումից։ Հասկանալի է, թէ
այս առաջին քայլի յաջողութիւնից յետոյ ինձ համար հեշտ էր
նպատակիս հասնելը։ Շուտով նա այնպէս սիրեց մարմնի վարժու-
թիւններով պարապելը, որ առանց նպաստելու համարեա այա-

հով էր, որ փողոցի տղաների առաջը կարող է կտրել վազելով,
որչափ էլ վազելու սահմանն երկար լինէր։

250. Այս մի առաւելութիւնը շուտով իր հետ բերեց և մի
երկրորդը, որի մասին ես չէի մտածել։ Երբ նա մրցանակը շատ
չուտ չէր ստանում, համարեա միշտ միայնակ էր ուտում խմորե-
ղէնը, ինչպէս որ անում էին և նրա մրցակիցները. բայց երբ
յաղթելը սովորական դարձաւ, նա ազնուասիրտ դարձաւ և յա-
ճախ խմորեղէնի կէսը յաղթուողին էր տալիս։ Այս բանն ինձ ա-
ռիթ տուեց մի բարոյական դիտողութեան և դրանից սովորեցի,
թէ ո՞րն է ճշմարիտ մեծահոգութեան հիմքը։

251. Յետոյ էլ զանազան տեղեր նրա հետ միասին նշանա-
կելով այն կէտերը, որտեղից պէտքէ միաժամանակ սկսէին վա-
զելը, հեռաւորութիւններն ես, նրանից ծածուկ, անհաւասար
էի դարձնում, այնպէս որ վազողներից մէկն ակնյայտնի ան-
նպաստ հանգամանքներումն էր. բայց չնայելով, որ ընտրութիւ-
նը իմ սանին էի թողնում, նա չէր կարող դրանից օգտուել։ Ա-
ռանց հեռաւորութիւնից քաշուելու, նա միշտ ամենից լաւ ճա-
նապարհն էր ընտրում և այդպիսով, նրա ընտրութիւնը հեշտու-
թեամբ նախատեսնելով, համարեա ինձնից էր կախուած նրա
մրցանակը տանելու կամ կորցնելու խնդիրը և այս խորամանկու-
թիւնը մի քանի նպատակների էր ծառայում։ Եւ որովհետև իմ
նպատակն էր, որ նա տարբերութիւնը տեսնէ, աշխատում էի
այդ բանը նրա համար նկատելի դարձնել. բայց չնայելով որ հան-
գիստ վայրկեաններում նա անտարբեր էր, խաղերի ժամանակ
այնպէս աշխոյժ էր և այնքան քիչ կասկածանքով էր վերաբեր-
ւում ինձ, որ ես մեծ ջանք էի գործ դնում նրան հասկացնելու,
որ խորամանկութեամբ խաբում եմ իրեն։ Վերջապէս այնտեղը
հասցրի, չնայելով նրա կոյր եռանդին, որ նա ինձ յանդիմանեց։
Ես ասացի նրան. «ինչո՞ւ ես գանգատւում. եթէ ես մէկին մի
բան եմ ուզում ընծայել, մի՞թէ չեմ կարող իմ պայմանները
դնել։ Ո՞վ է ստիպում քեզ մրցութեանը մասնակցել։ Մի՞թէ ես
խոստացել եմ քեզ՝ հաւասար սահմաններ որոշել. մի՞թէ քեզնից
չէ կախուած ընտրութիւնը։ ընտրիր կարճ ճանապարհը. ոչ ոք
արգելք չէ լինում քեզ։ ինչո՞ւ չես տեսնում, որ ես քո կողմն եմ
բռնում և այն անհաւասարութիւնը, որի մասին դու գանգատ-
ւում ես, ամբողջովին քո օգտի համար է, եթէ կարողանաս օգ-
տուել նրանից»։ Այս շատ պարզ էր. նա նոյնպէս ըմբռնեց և
այնուհետև ընտրելու համար աւելի լաւ էր դիտում։ Ամենից ա-
ռաջ պէտքէ քայլերը համարէին. բայց երեխաների քայլաչափը

դանդաղ և սխալ է. բացի դրանից միտք արի միևնոյն օրը մի քանի անգամ մրցութիւն նշանակել և քանի որ այս խաղը մի տեսակ կիրք էր դարձել, չէին կամենում մրցութեան համար նշանակուած ժամանակը սահմանները չափելով կորցնել։ Այս յապաղումներին սիրով չէ յարմարւում պատանեկութեան աշխուժութիւնը. ուրեմն վարժւում էին աւելի ճիշտ տեսնելու և որոշ հեռաւորութիւնն աչքերով աւելի լաւ որոշելու։ Այնուհետև ինձնից մեծ աշխատանք չէր պահանջւում՝ այս հակումը զօրեղացնելու և սննդելու։ Ամիսներով շարունակ կրկնուող փորձերը և արած սխալների ուղղելը նրա աչքի չափն այնպէս զարգացրին, որ երբ ես մտքով որև է հեռու գտնուող առարկայի վրայ խմորեղէն էի դնում, նա իւր աչքով համարեա այնպէս ճշտութեամբ էր չափում, ինչպէս երկրաչափը՝ չափելու գործիքով։

252. Որովհետև տեսանելիքն այն զգայարանն է, որից ամենից քիչ են բաժանւում խոհականութեան դատողութիւնները, այդ պատճառով և երկար ժամանակ է հարկաւոր՝ տեսնել սովորելու համար. տեսանելիքն երկար ժամանակ շօշափելիքի հետ համեմատելուց յետոյ միայն կարելի է տեսանելիքին սովորեցնել՝ պատկերների ու հեռաւորութիւնների մասին ճիշտ տեղեկութիւն տալ մեզ. առանց շօշափելիքի և տեղափոխութեան մեր նոյն իսկ ամենաթափանցող աչքերն էլ չեն կարող մտապատկերներ կազմել տարածութեան մասին։ Ոստրէի համար ամբողջ աշխարհը միայն մի կէտ պէտք է լինի. աշխարհը նրա համար դարձեալ աւելի ոչինչ չէր լինի, եթէ ոստրէն նոյն իսկ մարդկային հոգի ունենար: Միայն մանգալով, շօշափելով, թուելով և չափելով կարելի է տարածութիւնները հասկանալ և որոշել. բայց եթէ միշտ չափել կամենայինք, զգայարանը իւր յոյսը դնելով գործիքի վրայ, ճշտութեան չէր հասնի։ Երեխան էլ չպէտք է միանգամից չափելուց որոշելուն անցնի. նա պէտք է նախ շարունակ մասամբ համեմատելով, որտեղ չէ կարող ամբողջը մի հայեացքով համեմատել՝ մասերը ճշտութեամբ որոշելու փոխարէն՝ մօտաւոր չափը վերցնի և պէտք է սովորէ չափը ոչ միշտ ձեռքով, այլ միմիայն աչքով որոշել։ Բայց իմ կարծիքով պէտք է նրա առաջին վարժութիւններն իսկական չափերով ճշտել, որպէս զի նա իւր սխալներն ուղղէ և եթէ որևէ սխալ ըմբռնումն մնացած լինի, պէտք է սովորէ աւելի լաւ դատողութեամբ ճշտել։ Կան բնական չափեր, որ համարեա ամեն տեղ միևնոյնն են. մի մարդու քայլուածքը, նրա ձեռքերի տարածուելու չափը, նրա մեծութիւնը։ Երբ երեխան

որոշում է մի յարկի բարձրութիւնը՝ դաստիարակը կարող է նրան իբրև գրկաչափ ծառայել. եթէ նա եկեղեցու աշտարակի բարձրութիւնն է ուզում որոշել, կարող է տների բարձրութեամբ չափել։ Եթէ ուզում է անցած ճանապարհի հեռաւորութեան ժամերն իմանալ, պէտք համարէ ոտքով գնացած ճանապարհի ժամերը. այս բոլոր գործողութիւնների ժամանակ ուրիշը չպէտք նրա փոխարէն գործէ. նա ինքը պէտք անէ ամեն բան։

253. Չի կարելի մարմինների տարածութիւնն ու մեծութիւնը լաւ որոշել սովորել, եթէ չենք սովորում դրանց պատկերները ճանաչել և ինքներս շինել. որովհետև իսկապէս այս ճանաչողութիւնն ամբողջովին հիմնւում է պերսպեկտիւի օրէնքների վրայ և առանց այս օրէնքների մասին որևէ գաղափար ունենալու չի կարելի տարածութիւնը չափել ըստ երևոյթին։ Երեխաները նմանուելու մեծ հակումն ունին և ամենքն էլ փորձում են նկարել. իմ սանը պէտք է խնամքով սովորէր այս արուեստը, ոչ թէ նոյն իսկ արուեստի համար, այլ վստահ աչք և վարժուած ձեռք ունենալու համար. մեծ նշանակութիւն չունի՝ թէ արդեօք նա այս կամ այն հմտութիւնն ունի, եթէ միայն յաջողուի ունենալ զգայարանի սրութիւն և մարմնի լաւ սովորութիւն, որ ձեռք է բերւում այս վարժութիւններով։ Այդ պատճառով իմ սանը այնպիսի նկարչութեան ուսուցիչ չի ունենայ, որ նրան միմիայն արտանկարել տար և ուրիշների գծագրածն ընդօրինակէր. Ես պահանջում եմ, որ նա բացի բնութիւնից ուրիշ ուսուցիչ չունենայ և բացի նոյն իսկ առարկաներից ուրիշ ոչինչ օրինակ։ Ես պահանջում եմ, որ նոյն իսկ բնագիրը լինի նրա առաջը և ոչ թէ այն թուղթը, որի վրայ նկարուած է բնագիրը (օրիգինալը). նա տունը պէտք նկարէ իսկական տուն աչքի առաջ ունենալով, ծառ և մարդ նկարէ նոյնպէս դրանց իսկականներին նայելով, որպէս զի սովորէ մարմիններն ու նրանց երևոյթները լաւ դիտել և կեղծ ու պատիր նկարներն իսկական պատկերների տեղ չընդունէ։ Ես ինքս կարգելեմ նրան յիշողութեամբ նկարելու, մինչև որ առարկաների դիտողութիւնը յաճախակի դիտողութիւնների շնորհիւ նրա ճիշտ շրջագծերը մտքի մէջ չտպաւորուի, որպէս զի նա զարմանալի և երևակայական ձևերը իրերի իսկական պատկերի տեղ չձևակերպէ և յարաբերութիւնների ճանաչողութիւնն ու բնութեան գեղեցկութեան ճաշակը չկորցնէ։

254. Ես լաւ գիտեմ, որ այս կերպով նա երկար կխզբզէ, մինչև կարողանայ այնպէս նկարել, որ ճանաչելի լինի, որ նկարչի աչքի դուրեկան շրջագծերն ու թեթև ձեռքի վարժութիւնն

ուշ կստանայ, բայց նկարչական էֆէկտների տարբերելը և նկարչական լաւ ճաշակը գուցէ երբէք չիւրացնէ. բայց դրա փոխարէն նա կունենայ աւելի ճիշտ հայեացք, վստահ ձեռք կենդանիների, բոյսերի և բնական մարմինների մեծութեան և պատկերի իսկական յարաբերութեան ճանաչողութիւնը և աւելի արագ հայեացք պէրսպէկտիւի ազդեցութեան համար։ Ահնց այդ է իմ ցանկացածը և իմ դիտաւորութիւնն այն չէ, որ նա առարկաներն արտանկարէ, այլ որ ճանաչել սովորէ։

255. Թէ այս և թէ ուրիշ վարժութիւնների միջոցին ես չեմ ցանկանում, որ իմ սանը միայն զուարճութիւն զգայ գործից. ես կամենում եմ գործն աւելի հաճելի անել նրան՝ չարունակ հետը գործելով։ Բացի ինձնից նա ուրիշ ոչ միախոյեան չպէտք է ունենայ. բայց ես էլ նրա համար մի անխոնջ և վստահելի ախոյեան կլինեմ. այս բանը հետաքրքրութիւն կներշնչէ նրան։ իւր զբաղմունքների համար՝ առանց մեր մէջ նախանձ յարուցանելու։ Ես նրա ձևով կբռնեմ մատիտը և սկզբում ես էլ նրա նման անշնորհք կերպով կբանեցնեմ։ Եթէ նոյն իսկ Ապելլէս լինէի, այդ վայրկեանին ես միայն մրոտող եմ։ Ես ամենից առաջ մի մարդ կնկարեմ, ինչպիսին որ սպասաւորները նկարում են պատերի վրայ, որոնց ձեռքերն ու ոտքերը մի մի ձողեր են և մատներն աւելի հաստ քան ձեռքը։ Շատ յետոյ միայն մենք երկուս էլ միասին կնկատենք այս անհամաչափութիւնը. կտեսնենք, որ մէկ ոտքը հաստ է և այս հաստութիւնն էլ ամեն տեղ միևնոյնը չէ, որ ձեռքը իւր որոշ երկարութիւնն ունի մարմնի յարաբերութեամբ և այլն։ Առաջադիմութեան միջոցին էլ նրա հետ հաւասար քայլեր կանեմ կամ թէ միայն այնքան առաջ կգնամ, որ նրա համար հեշտ կլինի հասնել և յաճախ. գերազանցել ինձ։ Մենք գոյներ ու վրձին կստանանք և կաշխատենք առարկաների գոյները և նրանց ամբողջ տեսքը նոյնպէս լաւ պատկերացնել, ինչպէս և նրանց արտաքին ձևը։ Մենք կգունաւորենք, կնկարենք, կխզբզտենք, բայց այս բոլոր ժամանակը չարունակ բնութեանն աչկանջ կդնենք. մեր բոլոր գործողութիւնները տեղի կունենան մեր վարպետի (այսինքն բնութեան) աչքի առաջ։

256. Մեր սենեակը զարդարելու համար վարանքի մէջ էինք. այժմ ինքն իրեն լուծուեց խնդիրը։ Ես մեր նկարները շրջանակի մէջ եմ դնել տալիս և գեղեցիկ ապակիով ծածկում, որպէս զի այլևս ձեռք չդիպցնենք և սանս տեսնելով, որ նկարը վերջացնեալոց յետոյ պահում ենք, իւր նկարներն խնամքով պահելու հոգացողութիւնը կունենայ։ Ես շարքով կախում եմ նկարները պա-

տերի վրայ, ամեն մէկ նկարը քսան երեսուն անգամ կրկնուած, որոնցից ամեն մէկը ցոյց է տալիս նկարողի առաջադիմութեան քայլը. առաջին նկարի մէջ տունը համարեա մի անձև քառանկիւնի է, իսկ վերջինը ճշտութեամբ ներկայացնում է մասերի համաչափ յարաբերութիւնը և լուսաւորութիւնը։ Այս աստիճանաբար առաջադիմութիւնը հետզհետէ մեզ այնպիսի նկարներ կտայ, որ հետաքրքրական կլինեն մեզ համար, հրաշալի ուրիշների համար և մեր մրցութեանն էլ միշտ կտան։ Մեր առաջին և անշնորհք նկարներն ես դնել կտամ ամենափայլուն, ոսկեզօծ շրջանակների մէջ, որ աւելի աչքի ընկնեն. իսկ եթէ նմանողութիւնն աւելի ճիշտ և նկարն իսկապէս յաջող է, դնել կտամ մի սև, շատ հասարակ շրջանակի մէջ. այդպիսի նկարն ուրիշ զարդարանքի պէտք չունի, բացի իրենից և ափսոս կլինի, որ այն ուշադրութիւնը, որին արժանի է նկարը, մասամբ գրաւէ շրջանակը։ Այսպիսով մեզնից իւրաքանչիւրը կձգտէ հասարակ շրջանակի պատուին և եթէ մէկն ուզենայ միւսի նկարի արժէքը վայր ձգել, ոսկէ շրջանակ կրելու կդատապարտի այդ նկարը։ Մի օր գուցէ այդ ոսկէ շրջանակներն առակի չարքն անցնեն մեզ մօտ և մենք կզարմանանք, թէ մարդիկ որքան արդար են վերաբերում իրենց՝ այդպիսի շրջանակների մէջ դնելով իրենց պատկերը։

257. Արդէն ասացի, որ երկրաչափութիւնն երեխաների ըմբռնողութեան կարողութիւնից վեր է. բայց մեղքը մերն է։ Մենք չենք ուզում հասկանալ, որ նրանց մեթոդը մերի նման չէ և ինչ որ մեզ համար տրամաբանական մտածողութեան արուեստ է դառնում, նրանց համար միմիայն տեսնելու արուեստ պէտք է լինի։ Փոխանակ մեր մեթոդը տալու նրանց, աւելի լաւ կանենք՝ եթէ նրանց մեթոդն ընտրենք. որովհետև մեր ձևով երկրաչափութիւն սովորելը նոյնչափ երևակայութեան գործն է, որչափ և տրամաբանական մտածողութեան։ Երբ միտքը տրուած է, պէտք է և դրա ապացոյցը մտածել, այսինքն պէտք է գտնել՝ թէ արդէն սովորած ո՛ր մտքի հետևանքը պէտք է լինի այդ և այն բոլոր հետևութիւններից, որ կարելի է այս մտքից հանել՝ պէտք է ընտրենք հենց այն, ինչ որ հարկաւոր է։

258. Այս եղանակով ամենաճշգրիտ եզրակացութիւնը, եթէ հնարիմաց չէ, անարգանք կդառնայ։ Հետևանքն ինչ կլինի։ Փոխանակ այնպէս անելու, որ ապացոյցները մենք գտնենք, թելադրում են մեզ. փոխանակ եզրակացութիւններ անելու վարժութիւններից, ուսուցիչն ինքն է եզրակացնում մեր փոխարէն և վարժեցնում է միայն մեր յիշողութիւնը։

259. Պէտք է նկարել որոշ պատկերներ, միմեանց մօտ պա-
հել, միմեանց վրայ դնել և նրանց փոխադարձ յարաբերութիւն-
ները հետազօտելով և մէկ դիտողութիւնից միւսին անցնելով՝
ամբողջ երկրաչափութիւնը կգտնենք՝ առանց մեկնաբանութիւն-
ների, պրօբլէմների կամ առանց ապացոյցի որևէ ձևի օգնու-
թեան, բացառութիւն կազմելով միմիայն ձևերի հասարակ միմեանց
վրայ դնելը։ Ես բոլորովին չեմ յանդգնի Էմիլին երկրաչափութիւն
սովորեցնելու. նա ինձ կսովորեցնի. ես կ որոնեմ յարաբերութիւն-
ները, իսկ նա կգտնի, որովհետև ես այնպէս կորոնեմ, որ նա
կարողանայ գտնել։ Օրինակ շրջագիծ քաշելու համար ես կարկին
չեմ գործ ածի, այլ շրջագիծը կքաշեմ միջակէտի վրայ պտտուող
թելի ծայրին ամրացրած սրածայրով։ Երբ յետոյ ճառագայթները
միմեանց հետ համեմատել ուզենամ, Էմիլն ինձ վրայ կծիծաղի և
կհասկացնի ինձ, որ նոյն լարուած դրութիւնն ունեցող թելը չի
կարող անհաւասար հեռաւորութիւններ նկարել։

260. Եթէ ես ուզում եմ չափել վաթսուն աստիճան ունե-
ցող անկիւնը, այս անկեան ծայրից կամար չեմ քաշում, այլ մի
ամբողջ շրջագիծ, որովհետև երեխաներին ուսուցանելիս չպէտք է
լռելեայն ենթադրութիւններ անել։ Ես գտնում եմ, որ անկեան
երկու կողմերի մէջ շրջագծի հատուածը հաւասար է շրջագծի
վեցերորդ մասին։ Յետոյ նոյն գագաթնակէտից գծում եմ մի
ուրիշ աւելի մեծ շրջագիծ և գտնում, որ այս երկրորդ կամարա-
ձև գիծն էլ շրջագծի վեցերորդ մասն է։ Ես գծում եմ մի երրորդ
համակենդրոն շրջագիծ, որի վրայ միևնոյն փորձն եմ անում և
նոյնը կրկնում եմ ինը շրջագծերի վրայ, մինչև որ Էմիլը զար-
մացած իմ անշնորհքութեան վրայ, յիշեցնում է ինձ, որ նոյն
անկեան մէջ իւրաքանչիւր կամարագիծ, մեծ թէ փոքր, միշտ իւր
շրջագծի վեցերորդ մասը կլինի և այլն։ Այսպիսով մենք կսովո-
րենք անկիւնաչափի գործածութիւնը։

261. Ապացուցանելու համար, որ կից անկիւնները հաւա-
սար են երկու ուղիղ անկեան, մի շրջագիծ են քաշում. ես,
ընդհակառակն այնպէս եմ սկսում, որ Էմիլն այդ դիտողութիւնն
առաջին անգամ շրջագծի վրայ է անում և յետոյ ասում եմ նրան.
եթէ այժմ շրջագիծը վերցնէինք և միայն ուղիղ գծերը թողնէինք,
արդեօք անկիւնների մեծութիւնը կփոխուէ՞. և այլն։

262. Ձևերի ճշտութիւնն անտես անելով՝, ենթադրում են
իբրև ուղիղ և ապա դրանցով ապացուցանում. Մեզ մօտ, ընդ-
հակառակը, երբէք ապացոյցի մասին խօսք չի կարող լինել։ Մեր
ամենակարևոր հոգացողութիւնն այն կլինի, որ շատ ուղիղ, կանո-

նաւոր և հաւասար գծեր քաշենք, լիակատար քառանկիւնի նկա-
րենք, գեղեցիկ կլոր շրջագիծ քաշենք։ Ձևի կանոնաւորութիւնը
հաստատելու համար, կհետազօտենք նրա բոլոր նկատելի յատ-
կութիւնները և այս բանն առիթ կտայ մեզ ամեն օր նոր յատ-
կութիւններ գտնելու։ Մենք երկու կիսաշրջաններն ըստ տրամա-
գծի, քառանկիւնու երկու կէսերն ըստ անկիւնագծի կը յօրինենք.
մեր երկու ձևերն էլ կհամեմատենք, որպէս զի գտնենք այն, որի
եզրներն ամենից ճշտութեամբ են միմեանց ծածկում և այդ
պատճառով էլ ամենից լաւ են գծուած. մի բացատրութիւն էլ
կտանք՝ թէ արդեօք մասերի այ. հաւասարութիւնը միշտ պէտք է
տեղի ունենայ պարալելօգրամի, տրապեցի և այլն վերաբերմամբ։
Երբեմն էլ դիտում ենք՝ թէ արդեօք փորձի հետևանքը կարելի՞
է նախապէս որոշել և աշխատում ենք դրա պատճառները գտնել
և այլն։

263։ Իմ սանի համար երկրաչափութիւնը միայն քանոնի
և կարկինի լաւ գործածելու արուեստն է. նա երկրաչափութիւնը
չպէտք է շփոթէ նկարչութեան հետ, որտեղ այս գործիքներից և
ոչ մէկը չպէտք է բանեցնէ։ Քանոնն ու կարկինը պէտք է փակած
պահել. միայն երբեմն պէտք է թոյլ տալ այդ գործիքների գոր-
ծածութիւնը՝ կարճ ժամանակով, որպէս զի նա խզբզտել չսովորի.
բայց երբեմն կարող ենք մեր կազմած ձևերը զբօսանքի ժամա-
նակ հետներս վերցնել և խօսել մեր արածի ու անելիքի մա-
սին։

264. Ես երբէք չեմ մոռանայ՝ Տուրինում տեսած այն երի-
տասարդին, որին մանկութեան օրերում ծաւալի և մակերևոյթի
յարաբերութիւնները հասկացնելու համար ամեն օր ընտրել
էին տուել ամեն տեսակ երկրաչափական ձևերով շինուած հաւասար
ծաւալ ունեցող կարկանդակներ։ Փոքրիկ որկրամոլն Արխիմէդի
բոլոր արուեստը գործ էր դրել գտնելու համար՝ թէ ո՞ր ձևն ընտրե-
լով աւելի շատ ուտելու բան կունենայ։

265. Երբ երեխան փետրագունդ է խաղում, աչքն ու ձեռ-
քը վարժւում է ճշտութեամբ, իսկ երբ ֆուրան է թռցնում, աւե-
լացնում է իւր ոյժն այդ վարժութեամբ, բայց առանց որևէ բան
սովորելու։ Ես երբեմն հարցրել եմ, թէ ինչո՞ւ երեխաներին նոյն խա-
ղերը չեն խաղացնում՝ ճարպիկութեան մէջ նրանց վարժեցնելու
համար, ինչ որ չափահասներն ունեն. գնդակի զանազան խաղեր,
բիլիարդ, երաժշտական գործիքներ։ Ինձ պատասխանել են, որ
այս խաղերից մի քանիսը նրանց ուժերից վեր է և ուրիշ մի քա-
նիսների համար էլ նրանց անդամներն ու գործարանները դեռ

բաւականաչափ չեն զարգացել: Այս պատճառներն ես ընդունելի չեմ գտնում. երեխան տղամարդու հասակն էլ չունի, բայց նրա զգեստի նման է հագնում: Չեմ ուզում ասել, որ երեխան մականով երբեք ոտնաչափ բարձրութիւն ունեցող բիլիարդի վրայ խաղայ. չեմ ասում, որ նա գնդակ խաղալուն յատկացրած սրահում գնդակ գլորէ կամ թէ գնդակին խփելու փայտի թաթը իւր փոքրիկ ձեռքերով բռնէ, բայց նա պէտք է այնպիսի դահլիճում խաղայ, որի պատուհանները լաւ պաշտպանուած են, սկզբում միայն փափուկ գնդակներով պէտք է խաղայ և նրա գնդակին խփելու թաթը նախ պէտքէ փայտից, յետոյ մագաղաթից և վերջապէս ձիգ նուագարանալարից լինի՝ նայելով իւր առաջադիմութեանը: Փետրագնդին առաւելութիւն է տրւում, որովհետև աւելի քիչ է յոգնեցնում և անվտանգ է: Բայց սխալ է այդ՝ հետևեալ երկու պատճառներով. փետրագունդը կանանց խաղ է, բայց երբէք չենք տեսնում, որ մի կին թռչող գնդակի հարուածից խոյս տալու համար մի կողմը չքաշուի: Նրանց սպիտակ մորթը չպէտք է ծեծուի, նրանց դէմքն աւելի ուրիշ բանի է սպասում, քան ճմլուելու: Բայց մենք ստեղծուած ենք ուժեղ լինելու. մի՞թէ այս առանց աշխատութեան տեղի կունենայ. և ինչպէս պիտի կարողանանք երբևիցէ մեզ պաշտպանել, եթէ երբէք յարձակման չենթարկուենք: Այն խաղերը, երբ առանց վտանգի կարելի է անշնորհք լինել, միշտ անտարբեր կերպով են խաղացւում. ընկնող փետրագունդը ոչ ոքի չէ վնասում. բայց ոչ մի բան մեր ձեռքերն այնպէս շարժուն չէ դարձնում, քան երբ պէտք է պաշտպանենք մեր գլուխը. ոչինչ մէկին այնպիսի անվրէպ հայեացք չէ տալիս, քան երբ ստիպուած ենք մեր աչքերը պաշտպանել: Դահլիճի մէկ ծայրից միւսը թռչելը, գնդակի ընթացքն օդի մէջ չափելը, ուժեղ ձեռքով յետ խփելը և այլ այսպիսի խաղերն աւելի քիչ են յարմարւում տղամարդկանց և առաւել ծառայում են տղամարդիկ զարգացնելու գործին:

266. Ասում են, որ իբրև թէ երեխաների մկանների կապերը շատ փափուկ են, քիչ առաձգականութիւն ունեն. բայց նրանք աւելի ճկուն են: Մանկան ձեռքը թոյլ է, բայց և այնպէս ձեռք է: Համապատասխան յարաբերութիւնների միջոցին նրանով պէտք է ամեն բան անել, ինչ որ կարելի է անել ուրիշ նման մեքենայով: Մանուկների ձեռքերն արագաշարժ չեն, հենց այդ պատճառով ես պահանջում եմ, որ նրանց տանք այդպիսի արագաշարժութիւն. չափահասն էլ նոյնչափ քիչ վարժութիւն ունենալով, նոյնպէս սակաւ կունենայ. մենք չենք կարող մեր գործաւանների գործողութիւնը ճանաչել՝ առանց նրանց գործադրելու: Միայն երկարատև փորձը կարող է մեզ սովորեցնել՝ նոյն իսկ մեզնից օգտուել և հենց այդ փորձառութիւնն է իսկական ուսմունքը, որին որչափ շուտ դիմենք, այնչափ լաւ կլինի:

267. Ինչ որ կատարւում է, կարելի է ուրեմն կատարել: Շատ սովորական բան է արագաշարժ և ճարտար երեխաներ տեսնելը, որոնց անդամները նոյն շարժունութիւնն ունին, որ կարող է ունենալ չափահասը: Համարեա բոլոր տօնավաճառների ժամանակ տեսնում ենք լարախաղի ճարտարարուեստ գործեր անող երեխաներ. դրանք ձեռքերի վրայ են ման գալիս, թռչկոտում, պարանների վրայ պարում: Որքան տարիների ընթացքում Comedie Italienne-ում հասարակութիւն են գրաւել բալետ պարող երեխաները: Ո՞վ չէ լսել Գերմանիայում կամ Իտալիայում նշանաւոր Նիկոլինի մնջախաղների (պանտոմիմ) խմբի մասին: Ո՞վ է երբևիցէ տեսել կամ լսել, որ այս խմբի երեխաները թերի շարժմունքներ, աւելի պակաս շնորհալի կեցուածք, աւելի վատ լսելիք, պակաս թեթև պար ունենան, քան լիովին պատրաստուած պարողները: Սկզբում երեխաները գուցէ հաստ, կարճ և աւելի պակաս շարժուն մատներ, մսոտ և պինդ, բռնելու համար անյարմար, ձեռքեր կարող են ունենալ, բայց այս հանգամանքը մի՞թէ արգելք է լինում, որ երբեմն երեխաները կարողանում են գրել և նկարել այնպիսի հասակում, երբ ուրիշները դեռ չեն կարողանում մատիտը կամ գրիչը բռնել: Ամբողջ Փարիզը յիշում է դեռ այն փոքրիկ անգլուհուն, որ տաս տարեկան հասակում հրաշքներ էր գործում դաշնամուրի նուագով: Մի աստիճանաւորի տանը ես տեսայ, թէ ինչպէս նրա ութ տարեկան տղային դեսերտի ժամանակ արձանի նման կանգնեցրին ամանների մէջ և թէ յետոյ ինչպէս նա համարեա իւր մեծութիւնն ունեցող ջութակի վրայ նուագեց և նոյն իսկ արուեստագէտներին զարմացրեց:

268. Այս բոլոր օրինակները և սրանց նման ուրիշ հազարաւորներն ապացուցանում են, իմ կարծիքով, թէ երևակայական է այն ենթադրութիւնը, թէ երեխաները շնորհք չունին մեր արած վարժութիւններն անելու և եթէ նրանք մի քանի վարժութիւններ չեն կարողանում գլուխ բերել, պատճառն այն է, որ նրանց չեն վարժեցնում:

269. Ինձ կառարկեն, թէ ես մարմնի վերաբերմամբ վաղաժամ զարգացումն եմ քարոզում սխալ կերպով. այն ինչ երեխաների վաղաժամ հոգեկան զարգացումը դատապարտում եմ:

Բայց այստեղ մեծ տարբերութիւն կայ, որովհետև այդ հասակում երեխայի հոգեկան առաջադիմութիւնը միայն ըստ երևոյթին է, այն ինչ մարմնականը՝ իրական։ Ես ապացուցեցի, որ երեխան այն հասկացողութիւնը չունի, որ ըստ երևոյթին ցոյց են տալիս, մինչդեռ ինչ որ ըստ երևոյթին գործում են, իսկապէս են գործում։ Բացի դրանից պէտք է նկատել, որ այս բոլորը խաղ է, կամ խաղ պէտք է լինի, շարժողութիւնների թեթև ու ոչ ստիպողական առաջնորդութիւն, որ բնութիւնը պահանջում է նրանցից, նրանց զուարճութիւնները վայելչութիւն դարձնելու արուեստը. բայց այնպէս, որ երբէք ոչ մի աշխատանքի միջոցին ամենափոքրիկ ստիպմունք անգամ չլինի. արդեօք մանուկների մի կրուցատրութիւնը չի կարելի ուսուցման նիւթ դարձնել նրանց համար։ Եւ եթէ ես չկարողանամ այդպէս անել, նրանց առաջադիմութիւնը ոչինչ նշանակութիւն չունի այդ վայրկեանի համար, երբ նրանք առանց վնասի զուարճանում են և ժամանակ են անցկացնում, մինչդեռ երբ ուզում ենք անպատճառ որևէ բան սովորեցնել նրանց, անկարելի է, ինչպէս ուզում է սկսեն, առանց ստիպմունքի, դժկամակութեան և տհաճութեան՝ նպատակին հասնել։

270. Ինչ որ ասացի երկու զգայարանների մասին, որոնց գործածութիւնն անընդհատ և ամենակարևորն է, կարող է իբրև օրինակ ծառայել միւս զգայարանները վարժեցնելու համար։ Տեսանելիքն ու շօշափելիքը հաւասար կերպով են գործում՝ հանդարտ և շարժուող մարմինների վերաբերմամբ. բայց որովհետև միայն օդի տատանումները կարող են լսելեաց զգայարանը գրգռել, այնպէս էլ միայն շարժուել սկսող առարկան կարող է ձայն կամ հնչիւն պատճառել. եթէ ամեն բան հանգիստ ու անշարժ լինէր, երբէք ոչինչ չէինք լսի։ Գիշերը, երբ այնքան ենք շարժւում, որքան ցանկանում ենք և միայն շարժուող առարկաներից ենք երկիւղ կրում, մեզ համար մեծ նշանակութիւն ունի՝ հսկող ականջ ունենալը և ըստ մեր ստացած զգայութեան որոշելու, թէ արդեօք այդ զգայութիւնը պատճառող մարմինը մեծ թէ փոքր, հեռու թէ մօտիկ է, թէ արդեօք նրա երերումը զօրեղ, թէ թոյլ է։ Տատանուած օդը ենթակայ է հակադարձութիւնների, որ յետ են մղում օդը, իրենց տուած արձագանքի շնորհիւ կրկնում են զգայութիւնը և հնչող կամ թնդիւն արձակող մարմինը մի այլ տեղ են լսեցնում ու ոչ այնտեղ, որտեղ որ է իսկապէս։ Եթէ դաշտավայրում կամ հովտում ականջներս գետնին կպցնենք, մարդկային ձայնն ու ձիերի տրոփիւնն աւելի հեռուից

կլսենք, քան թէ կանգնած ժամանակը։

271. Քանի որ տեսանելիքը համեմատեցինք շօշափելիքի հետ, նպատակայարմար է լսելիքի հետ էլ համեմատել և փորձել թէ երկու տպաւորութիւններից, որոնք միաժամանակ միևնոյն առարկայից են առաջանում, ո՞րն աւելի վաղ է իր գործարանին հասնում։ Եթէ տեսնում ենք թնդանօթի կրակը, կարող ենք նրա հարուածից պաշտպանուել. բայց հենց որ լսեցինք նրա թնդիւնը, արդէն ուշ կլինի, գնդակը կհասնի մեզ։ Կայծակի փայլատակելու և որոտման ժամանակամիջոցից կարելի է եզրակացնել՝ թէ որքան հեռու է դեռ փոթորիկը։ Պէտք է ուշադրութիւն դարձնել, որ երեխան այս բոլոր փորձերը գիտենայ. այն, ինչ որ նա կարող է ըմբռնել, ինքը պէտք է փորձէ. միւսները պէտք է ներածութեան (ինդուկցիայի) շնորհիւ գտնէ. բայց հարիւր անգամ աւելի լաւ է, որ նա չգիտենայ այդ, քան թէ ուրիշներն ասեն նրան։

272. Մենք ունենք մի գործարան, որ համապատասխանում է լսելիքին, այդ ձայնն է. բայց չունենք այնպիսին, որ տեսանելիքին համապատասխանէ. մենք չենք կարող գոյներն այնպէս կրկնել, ինչպէս հնչիւնները։ Այստեղից առաջանում է մի այլ միջոց առաջին զգայարանի վարժութեան համար՝ երբ մենք ներգործական և կրաւորական գործարանը միմեանց միջոցով ենք վարժեցնում։

273. Մարդս երեք տեսակ ձայն ունի. հնչական կամ խօսելու ձայնը, մելօդիական կամ երգելու ձայնը, շեշտելու կամ ոգևորութեան ձայնը, որ ծառայում է կրքերի արտայայտութեան համար և կենդանութիւն է տալիս երգին ու խօսքին։ Երեխան էլ չափահասի նման ձայնի այս երեք տեսակներն ունի՝ բայց չի կարողանում դրանց միացնել. նա գիտէ ծիծաղել, աղաղակել, գանգատուել, կանչել, յառաչել ինչպէս մենք, բայց նա չէ կարող այս ձայների գեղգեղանքը միւս երկու ձայների հետ միախառնել։ Լիակատար երաժշտութիւնն այն է, որ ամենից լաւ է միացնում այս երեք ձայները։ Բայց երեխաներն ընդունակ չեն այսպիսի երաժշտութեան և նրանց երգը հոգեշունչ չէ։ Նրանց լեզուն նոյնպէս ձայնի շեշտ չունի. նրանք աղաղակում են, բայց չեն շեշտում և որովհետև խօսելիս քիչ եռանդ են ցոյց տալիս, ձայնն էլ զուրկ է շեշտից։ Մեր սանն աւելի միաձև, աւելի պարզ խօսելու եղանակ կունենայ, որովհետև նրա դեռ ևս նիրհող կրքերի լեզուն չէ միախառնւում նրա լեզուի հետ։ Այս պատճառով երեխաներին

պէտք է ողբերգական կամ կատակերգական դերեր բերան անել
տալ և ոչ էլ ճարտասանութիւն սովորեցնել։ Նա այնքան խե-
լացի է, որ իւր չհասկացած բաներին չի կարող համապատաս-
խան շեշտ և երբէք չզգացած զգացմունքներին արտայայտու-
թիւն տալ։

274. Պէտք է սովորեցնել երեխային հաւասարաչափ ու
պարզ խօսել, լաւ հնչել, ճիշտ և առանց զարդարանքների ար-
տասանել, իմանալ քերականական շեշտը և բառերի հնչելը և
գիտել ու միշտ այնքան բարձր խօսել, որ կարելի լինի հաս-
կանալ և ոչ երբէք պէտք եղածից աւելի բարձր ձայնով, որ
սովորական թերութիւն է միջնակարգ դպրոցներում. ոչ մի
դէպքում աւելորդ բան պէտք չէ։

275. Երգելիս նոյնպէս պէտք է նրա ձայնն ուղղել, հաւա-
սարաչափ, ճկուն և հնչիւնալի դարձնել, իսկ ականջն ընդունակ
դարձնել տակտի և ներդաշնակութեան համար, բայց աւելի ո-
չինչ։ Նմանուող և թատրոնական երաժշտութիւնը չէ համա-
պատասխանում նրա հասակին։ Իմ կարծիքով երեխան նոյն իսկ
բառեր չպէտքէ երգէ. իսկ եթէ նա ցանկութիւն ունենայ
երգելու, ես կաշխատեմ նրա հասակին համապատասխանող
առանձին երգեր յօրինել, որ նրա գաղափարների նման պարզ
ու հասարակ լինէին։

276. Քանի որ ես չեմ շտապում սանիս առհասարակ կար-
դալ սովորեցնել, ընթերցողը կարող է արդէն գուշակել, որ նոյն-
պէս չեմ շտապի նրան երաժշտական խազերը կարդալ սովորեց-
նել։ Ամեն մի վախկոտ ուշադրութիւն պէտք է հեռու պահենք
նրա ուղեղից և չպէտքէ նրա խոհականութիւնը ժամանակից ա-
ռաջ զբաղեցնենք հաստատուն նշաններով։ Այս էլ իւր դժուա-
րութիւններն ունի, խոստովանում եմ, որովհետև եթէ ձայնանիշ-
ների գիտենալն աւելի կարեւոր չէ թւում երգելու համար, քան
տառերի գիտենալը՝ խօսելու համար, այնուամենայնիւ կայ այն
տարբերութիւնը, որ խօսելու ժամանակ մենք մեր սեպհական
մտքերն ենք արտայայտում, իսկ երգելիս՝ ուրիշներինը։ Եւ որ-
պէս զի կարողանանք ուրիշի մտքերն արտայայտել, այդ մտքերը
պէտք է կարդանք։

277. Սակայն փոխանակ կարդալու, կարելի է առաջ լսել և
ականջն աւելի լաւ է ըմբռնում երգը, քան աչքը։ Երաժշտութիւ-
նը լաւ հասկանալու համար բաւական չէ՝ երաժշտական հա-
տուածի կրկնելը. պէտք է հնարել, ստեղծել և մէկը միւսի հետ
միասին սովորել, եթէ ուզում ենք ճշտիւ հասկանալ։ Պատանի
երաժշտին նախ պէտք է վարժեցնել՝ շատ կանոնաւոր, լաւ դաշ-

նակած հատուածներ ստեղծելու, յետոյ շատ պարզ գեղգեղան-
քով կապակցելու և վերջապէս նրանց միմեանց հետ ունեցած
յարաբերութիւնը զգայարաններին համապատասխան յօդաւորու-
թեամբ նշանակելու. այս վերջինը տեղի է ունենում կանոնաւոր
շեշտերի և դադարման նշանների ճիշտ ընտրութեամբ։ Ամենից
առաջ երգը չպէտք է լինի անբնական, զօրովաշարժ, լիահնչիւն։
Պէտք է լինի երգի համապատասխան պարզ մելոդիայ, որ հնչիւն-
ների եղանակի գլխաւոր ձայնանիշների վրայ է հիմնւում և բա-
սը այնպէս պարզ է ցոյց տալիս, որ նա կարող լինի զգալ այդ
և առանց ճիգ թափելու ձայնակցել. որովհետև ձայնն ու ականջը
վարժեցնելու համար, նա պէտք է միշտ դաշնամուրի ձայնակ-
ցութեամբ երգէ։

278. Ձայներն աւելի լաւ դուրս բերելու համար պէտք է
արտասանելու ժամանակ հնչեցնել. սրանից է առաջանում ձայ-
նասանդուղն որոշ վանկերով երգելու սովորութիւնը։ Աստիճան-
ները տարբերելու համար պէտք է նրանց և նրանց որոշ հնչիւն-
ների բարձրութեանն անուններ տալ. այստեղից են առաջանում դա-
րների անունները և այբուբենի տառերի անունները, որով ցոյց են
տրւում դաշնամուրի ստեղները և ձայնասանդուղի ձայնանիշնե-
րը։ C և A ցոյց են տալիս որոշ, անփոփոխ հնչիւններ, որոնք
միշտ միևնոյն ստեղներով են նուագւում։ Ut (do) և la մի
փոքր ուրիշ են։ Ut միշտ հիմնական ձայնանիշն է (Tonika) մե-
ծագոյն երգաձայնի (դուրտոնարտ) կամ միջին ձայնանիշն է
(Mediante) փոքրագոյն երգաձայնի (մոլտոնարտ)։ La միշտ հիմ-
նական ձայնանիշն է փոքրագոյն երգաձայնի կամ վեցերորդ
ձայնանիշը (Sexte) մեծագոյն երգաձայնի։ Այսպէս տառերը ցոյց
են տալիս հաստատուն կէտերը մեր երաժշտական համակարգու-
թեան յարաբերութիւններով, վանկերը ցոյց են տալիս համա-
պատասխան կէտերը՝ տարբեր երգաձայների մէջ կրկնուող նման
յարաբերութիւնների համար։ Տառերը ցոյց են տալիս դաշնամու-
րի ստեղները, վանկերը ցոյց են տալիս երգաձայնի աստիճան-
ները։ Ֆրանսիական երաժիշտներն այս տարբերութիւնները զար-
մանալի կերպով շփոթել են. նրանք վանկերի նշանակութիւնը
փոթել են տառերի նշանակութեան հետ և ստեղների համար
նշանները զուր տեղը կրկնապատկելով, այլ ես ոչ մէկը չեն թո-
ղել երգաձայնի աստիճանների համար. նրանց համար Ut և C
միշտ միևնոյն բանն է, որ այդպէս չէ և չպէտք է լինի, որով-
հետև ինչի՞ համար է այդ դէպքում C։ Նոյնպէս և նրանց ձայնա-
սանդղուղն երգելու եղանակը շատ դժուար է՝ առանց որև է օգ-
տի, առանց խոհականութեանը որև է պարզ գաղափար տալու,

որովհետև այս մեթօդով, օրինակի համար, ut և mi երկու վանկերը միաժամանակ մի մեծ, մի փոքր, չափազանց մեղմ Terz կարող են նշանակել: Ի՞նչ տարօրինակ ճակատագիր, որ հենց այն երկրում, որտեղ ամենագեղեցիկ գրքերն են գրում երաժշտութեան մասին, ամենից դժուար կերպով են սովորեցնում:

279. Մեր սանին երաժշտութիւն սովորեցնելիս մենք աւելի պարզ ու հասկանալի եղանակի կհետևենք. նրա համար միայն երկու երգաձայն կարող է լինել, որոնց յարաբերութիւնը միշտ միևնոյնը կլինի և միշտ միևնոյն վանկով պէտք է ցոյց տրուին: Նա երգելիս կամ թէ որև է գործիքի վրայ նուագելիս պէտք է կարողանայ իւր երգաձայնը հիմնել այն տասներկու հնչիւններից իւրաքանչիւրի վրայ, որ կարող են նրան իբրև հիմք ծառայել և միևնոյն է թէ արդեօք նա D. C կամ G և այլն է գեղգեղում, վերջին ձայնանիշը պէտք է լինի միշտ ut կամ la, նայելով երգաձայնին: Այս եղանակով ուսուցումը միշտ հասկանալի կլինի նրա համար. ճիշտ երգելու կամ նուագելու համար երգաձայնի էական յարաբերութիւնները միշտ ներկայ կլինեն նրա գիտակցութեան մէջ, նրա նուագը կամ երգը աւելի մաքուր կլինի և նրա առաջադիմութիւնն աւելի արագ: Ոչինչ աւելի զարմանալի բան չկայ, քան ֆրանսիացիների այսպէս կոչուած՝ բնական ձայնասանդուղը (solfeggiatur). այդպիսով գաղափարները բաժանում են իրերից՝ որպէս զի հեռաւորներով փոխանակեն դրանց, որոնք միայն սխալեցնում են: Ոչինչ աւելի բնական չէ, քան փոխուած երգաձայնի ժամանակ նոյնպէս փոխուած ձայնասանդուղով երգելը: Սակայն չափազանց երկար խօսեցինք երաժշտութեան մասին. ինչպէս ուզում են թող ուսուցանեն երաժշտութիւնը, միայն այդ չպէտք է լինի իբրև լոկ զուարճութիւն:

280 Բաւականաչափ խօսեցինք օտար մարմինների դրութեան մասին մեր մարմնի յարաբերութեամբ, նրանց ծանրութեան, ձևի, գոյնի, խտութեան, մեծութեան, հեռաւորութեան, ջերմութեան, հանգիստ կամ շարժուն դրութեան մասին: Այժմ գիտենք, թէ ո՛ր մարմիններին պէտք է մօտենանք, որոնցից հեռու պէտք է պահենք մեզ. մենք գիտենք թէ ինչ եղանակով պէտք է սկսենք, որպէս զի նրանց դիմադրութեանը յաղթենք կամ նրանց այնպիսի դիմադրութիւն ցոյց տանք մեր կողմից, որ ազատ մնանք նրանցից վնասուելու հանգամանքից. բայց այսչափը բաւական չէ. մեր սեպհական մարմինն անդադար ուժասպառ է լինում և կարիք ունի շարունակաբար վերանորոգուելու: Թէև մենք ընդունակ ենք ուրիշ մարմիններ մեր սեպհական գոյացութեան փոխելու, բայց հարկաւ ընտրութիւնը մեծ նշանակութիւն

ունի. ամեն բան կերակուր չէ մարդու համար և կերակրի տեղ ծառայող նիւթերի մէջ կան աւելի կամ պակաս յարմարները՝ նայելով նրա առանձին կազմութեանը, նրա բնակութեան տեղին՝ մարմնի մասնաւոր յատկութիւններին և նրա կոչման համեմատ վարած կեանքին:

281. Սովից կամ թոյնից կմեռնէինք մենք, եթէ մեզ յարմար սնունդ ընտրելու համար ստիպուած լինէինք սպասելու՝ մինչև որ փորձառութիւնը սովորեցնէր մեզ ճանաչելն և ընտրելը. բայց յաւիտենական բարութիւնը, որ զգայական էակների հաճութեան զգայութիւնից՝ նրանց պահպանութեան գործիքն է շինել, ցոյց է տալիս, որ ինչ հաւանելի է մեր քմքին, միևնոյն ժամանակ և յարմար է մեր ստամոքսի համար: Մարդուս համար բնութիւնից տուած ամենավստահելի բժիշկը՝ ուտելու ցանկութիւնն է և երբ ես դիտում եմ այդ ցանկութիւնն իւր սկզբնական դրութեամբ, չեմ կասկածում, որ նրա համար ամենահաճելի սննդի նիւթերը միևնոյն ժամանակ և ամենաօգտակարը պէտք է լինէին:

282. Աւելի՛ ևս: Իրերի Սկզբնապատճառը հոգում է ոչ թէ միայն այն կարիքի համար, որ տալիս է մեզ, այլ և այն, որ մենք ինքներս ենք մեզ համար պատրաստում և որպէս զի կարիքի կողքին միշտ ցանկութիւն լինի՝ թողնում է, որ մենք մեր կեանքի եղանակի համեմատ փոխենք մեր ճաշակը: Որչափ աւելի հեռանում ենք բնական դրութիւնից, այնքան ևս կորցնում ենք մեր բնական ճաշակը կամ թէ սովորութիւնը ստեղծում է մեզ համար մի երկրորդ բնութիւն, որ այնպէս փոխում է առաջինին, որ անճանաչելի է դառնում:

283. Այստեղից հետևում է, որ ամենաբնական ճաշակը՝ ամենապարզը պէտք է լինի, որովհետև այսպիսին ամենից հեշտութեամբ է փոփոխութեան ենթարկւում, մինչդեռ այդ մեր քմահաճութեամբ գրգռուած և բորբոքուած՝ այնպիսի ձև է ընդունում, որ այլ ևս փոփոխութեան չէ ենթարկւում: Այն մարդը, որ դեռ ոչ մի երկրին չէ պատկանում, առանց ջանքի յարմարւում է ամեն մի երկրի սովորութիւններին, բայց այն մարդը, որ պատկանում է մի որոշ երկրին, մի ուրիշ երկրում բոլորովին բնիկ չի զգայ իրեն:

284. Այս ամեն կողմից ճիշտ է թւում ինձ, բայց աւելի ևս ճիշտ՝ խոհական ճաշակի վերաբերմամբ: Մեր առաջին կերակուրը կաթն է. միայն հետզհետէ ենք սովորում կծու կամ դառը համերի. սկզբում դրանք անհաճոյ են լինում: Պտուղ, բանջարեղէն, կանաչեղէն և վերջապէս մի փոքր խորոված միս ա-

ռանց համեմունքների և աղի. այս էր սկզբնական մարդու կերակուրը։ Երբ վայրենին առաջին անգամ գինի է խմում, երեսը ծամռում և յետ է մղում. եթէ մինչև անգամ մեզնից մէկը մինչև քսան տարեկան հասակը դեռ երբէք չէ ճաշակել ոգելից խմիչքներ, այլ ևս չի կարող դրանց գործածութիւնը սովորութիւն դարձնել. մենք բոլորս էլ ժուժկալութեան առաքեալներ կլինէինք, եթէ մեր պատանեկութեան միջոցին մեզ գինի տուած չլինէին։ Կարճ՝ որքան պարզ լինի մեր ճաշակը, այնքան աւելի քիչ դժուարահաճ կլինի. ամենասովորական դէպքերում զզւանք ենք զգում միախառնուած կամ բարդուած կերակուրներից։ Արդեօք երբ և իցէ պատահե՞լ է, որ մարդ զզուի հացից կամ ջրից։ Այդտեղ մենք տեսնում ենք բնութեան ցուցմունքը, այդտեղ տեսնում ենք մեր սկզբնական կանոնը։ Որչափ կարելի է երկար պէտք է պահպանել երեխայի սկզբնական ճաշակը. թող նրա կերակուրը սովորական և պարզ լինի. նրա քիմքը չպէտքէ սովորի համեմունքներին և բացառապէս մի որոշ ճաշակ չպէտքէ իւրացնի։

285. Ես այստեղ չեմ հետազօտում՝ թէ արդեօք կեանքի այս եղանակն աւելի առողջարար է թէ ոչ. իմ տեսակէտը բոլորովին ուրիշ է։ Նախապատւութիւն տալու համար բաւական է, որ ես գիտենամ, թէ այդ բնականին առաւելապէս համապատասխան է և հեշտութեամբ ամեն ուրիշին կարող է յարմարուել։ Նրանք, որոնք ասում են, թէ երեխաներին պէտք է այն կերակրին սովորեցնել, որ նրանք իբրև չափահաս պէտք է ուտեն, իմ կարծիքով՝ ճիշտ չեն դատում։ Ինչո՞ւ պէտք է նրանց կերակուրը նոյնը լինի, քանի որ նրանց կեանքի եղանակն այնպէս տարբեր է։ Աշխատանքից, հոգսերից և տանջանքից ուժասպառ եղած մարդը հիւթալի կերակրի կարիք ունի, որ նրա ուղեղը նորից կենդանացնէ. երեխան, որի մարմինն աճում է, պէտք ունի առատ կերակրի, որ նրան շատ սնունդ է մատակարարում։ Բացի սրանից չափահաս մարդն արդէն իւր դիրքը, կոչումը և բնակութեան տեղն ունի. բայց ո՞վ կարող է վստահ կերպով ասել՝ թէ ինչ է պատրաստել բաղդը մանկան համար։ Ոչինչ բանում նրան այնպիսի վճռական ուղղութիւն չպէտքէ տալ, որ ըստ պահանջին փոփոխութեան ենթարկելը նրան դժուար չթուայ։ Թող մենք չլինենք մեղաւորը, որ նա ուրիշ երկրներում սովամահ լինի, եթէ ամեն տեղ մի ֆրանսիացի խոհարար քաշ չտայ իւր յետևից՝ կամ, որ մի օր ասէ թէ միայն Ֆրանսիայում գիտեն ուտել։ Միջանկեալ ասեմ՝ զարմանալի գովասանք կլինի այս։ Ես ընդհակառակը կասէի, որ միայն ֆրանսիացիները

չեն հասկանում ուտել, որովհետև մի առանձին արուեստ պէտք է՝ նրանց կերակուրներն ուտելու բան դարձնելու համար։

286. Մեր զանազան զգայութիւններից՝ ճաշակելիքն այն զգայութիւններն է տալիս, որոնք ընդհանրապէս ամենամեծ տպաւորութիւնն են թողնում մեզ վրայ։ Մեզ համար աւելի հետաքրքրական է՝ այն նիւթերի մասին ճշտութեամբ դատել, որոնք մեր նիւթերի մի մասը պէտք է կազմեն, քան այն նիւթերի մասին, որոնք միայն նրա շրջակայքումն են գտնւում։ Հազարաւոր բաներ անտարբեր են շօշափելիքի, լսելիքի և տեսանելիքի համար. բայց համարեա թէ ոչինչ չկայ, որ անտարբեր լինի ճաշակելիքի համար։ Այս զգայարանի գործունէութիւնն ամբողջովին ֆիզիկական և նիւթական է. այս զգայարանն է միայն, որ ոչինչ չէ ասում երևակայութեանը, առ նուազն ամենից քիչ է խառնւում նրա զգայութիւններին, մինչդեռ նմանողութիւնն ու երևակայութիւնը յաճախ ուրիշ տպաւորութիւններին մի փոքր հոգեկան գոյն են տալիս։ Նոյնպէս քնքոյշ և ուրախ սրտերը, կրքոտ և իսկապէս զգայուն բնաւորութիւնները, որ հեշտութեամբ գըրգռւում են միւս զգայարանների շնորհիւ, ճաշակելիքի վերաբերութեամբ բաւականին անզգայ են։ Հենց այս յարաբերութիւնից, որ ճաշակելիքը մի աստիճան նրանցից ստոր է դասում և նրան նուիրուելն արհամարհելի է ուզում դարձնել, ես ընդհակառակը կեզրակացնէի, որ երեխաներին սնուցանելու ամենայարմար միջոցն այն է, որ մենք նրանց իրենց բերանի միջոցով առաջնորդենք։ Ուտելու ցանկութեան բնազդը պէտք է ընդհանրապէս գերադասել սնափառութիւնից, քանի որ առաջինը մի բնական հակումն է, որ զգայարանի հետ անմիջապէս կապակցուած է, այն ինչ վերջինը միայն երևակայութեան գործն է, որ ենթարկւում է մարդու քմահաճութեան և ամեն տեսակ զեղծումներին։ Ուտելու ցանկութիւնն երեխաների կիրքն է և ոչ մի բանի առաջ կանգ չէ առնում. մէկ ուրիշ կրքի առաջանալուց յետոյ անմիջապէս անյայտանում է։ Այո, հաւատացէք ինձ, երեխան շատ շուտ կդադարէ՝ ուտելու մասին մտածելը և երբ նրա սիրտը շատ զբաղուած լինի, քիմքը հազիւ թէ նրան այլ ևս զբաղեցնի։ Երբ երեխան մեծանայ, հազարաւոր փոթորկալի զգացմունքներ շուտով ասպարիզից կհեռացնեն ուտելու ցանկութիւնը և միայն սնափառութիւնը կգրգռեն. որովհետև միայն այս վերջին կիրքը օգուտ է քաղում միւս բոլորից և վերջապէս կլանում է բոլորին։ Ես երբեմն ուսումնասիրել եմ այն մարդկանց, որոնք լաւ պատառին արժէք էին տալիս, որոնք արթնանալիս արդէն այն էին մտածում, թէ ինչ պէտք է ուտեն այդ օրը և իրենց

վայելած մի ճաշն աւելի մեծ ճշտութեամբ էին նկարագրում, քան Պոլիբիոսը մի ճակատամարտ նկարագրելիս: Ես համոզուեցի, որ այս պատրուակեալ մարդիկը միայն քառասնամեայ երեխաներ էին, առանց ոյժի և բովանդակութեան. fruges consumere nati *): Ուտելու ցանկութիւնն անբովանդակ սրտերի թերութիւնն է: Ուտողի հոգին ամբողջովին նրա քիմքի մէջ է գտնւում, նա միայն ուտելու համար է ստեղծուած. իւր հոգեկան աղքատութեամբ նա միայն ճաշի վրայ է իւր տեղը և միայն կերակուրների մասին կարող է դատել. առանց ափսոսալու թողնենք նրան իւր տեղը. նրա համար այդ տեղն աւելի լաւ է, քան մի ուրիշը՝ թէ մեր և թէ իւր շահի տեսակէտից:

287. Այն երկիւղը՝ թէ ուտելու ցանկութիւնը կարող է արմատանալ որևէ ընդունակութիւն ունեցող երեխայի մէջ, փոքրոգի կասկածամտութիւն է: Մանկական հասակում մտածում են միայն նրա մասին, ինչ որ ուտում են. պատանեկութեան հասակում այլ ևս այդ մասին չեն մտածում. այդ ժամանակ ամեն բան բաւական լաւ է մեզ համար և բոլորովին ուրիշ բաների մասին պէտք է հոգալ: Այնուամենայնիւ ես չէի ցանկանայ, որ այսպիսի ստորին բնազդն անշնորհք գործադրութիւն ունենար և ոչ էլ մի լաւ բան անելու պատիւն ունենայ՝ հիմնուելով լաւ պատառի վրայ: Միայն չեմ հասկանում թէ ինչու զուտ մարմնական վարժութիւնները նիւթական, զգայարանները շօշափող մրցանակ չպէտքէ ստանային, քանի որ ամբողջ մանկութիւնը միայն խաղ և ազատ զուարճութիւն է կամ պէտք է լինի: Երբ մի պատանի մայորկացի ծառի վրայ կողով է տեսնում և պարսատիկով ցած գցում, միթէ բնական չէ, որ նա յետոյ մի լաւ նախաճաշ վայելելով՝ կրկին նորոգէ իւր այն ուժերը, որ գործ է դնում նախաճաշը վաստակելու համար **): Երբ երիտասարդ սպարտացին իւրեն սպառնացող հարիւր մտրակի հարուածներն ի նկատի առնելով՝ ճարպիկութեամբ խոհանոց է մտնում, կենդանի աղուէս գողանում, իւր զգեստի մէջ թաքցրած տանում և միևնոյն ժամանակ դիմանում աղուէսի չանգռտելուն, կծոտելուն ու արիւնաշաղախ լինում և երբ նա բռնուելու խայտառակու-

*) Հորացիոս 1, 2, 27. Non numerus sumus et fruges consumere nati.—«մենք մարդիկ ենք միայն ըստ թուի, լաւ նրա համար, որ ամեն օր կուշտ ուտենք»:

**) Շատ դարեր առաջ արդէն մայորկաները թողել են այս սովորութիւնը, որ վերաբերում է այն ժամանակին, երբ նրանց պարսաքարողները նշանաւոր էին: (Փիւնիկեան պատերազմներում, funditor Balearis):

թիւնից ազատուելու համար թողնում է, որ իւր մարմինը մասքանց լինի՝ առանց ցնցուելու, առանց մի աղաղակ, նոյն իսկ մի ձայն հանելու, միթէ արժանի չէ, որ վերջապէս իւր որսը վայելէ և ատամների մէջ առնէ՝ ազատուելով նրա ժանիքներից: *) Լաւ ուտելն երբէք վարձատրութիւն չպէտքէ լինի. բայց ինչու երբեմն երբեմն մարդ իւր կրած նեղութիւնների հետևանքն ինքը չվայելէ: Էմիլը քարի վրայ դրուած խմորեղէնը չէ համարում իբրև մրցանակ՝ իւր լաւ վազելու համար ստացած. նա գիտէ միայն, որ այդ խմորեղէնը ստանալու միակ միջոցն այն է, որ ուրիշից առաջ ինքը հասնի նրան:

288. Այս չէ հակասում այն սկզբունքներին, որ ես վերևն առաջ բերի ուտելու պարզութեան մասին. որովհետև երեխաների ախորժակը գրգռելու համար կարիք չկայ նրանց զգայունութիւնը գրգռելու, այլ միայն նրանց բաւականութիւն տալու և այդ բանին կհասնենք ամենասովորական բաներով՝ եթէ միայն չենք ձգտում նրանց ճաշակը նրբացնելու: Նրանց մշտական ախորժակը, որ առաջացնում է աճելու կարիքը, մի այնպիսի անվրէպ համեմունք է, որ ծառայում է նրանց շատ ուրիշների փոխարէն: Պտուղ, կաթնեղէն, սովորական հացից մի փոքր աւելի նուրբ թխուածք, մանաւանդ ամեն բան խնայողութեամբ բաժանելու արուեստը. սրանցով կարելի է երեխաների ամբողջ խմբեր մինչև աշխարհի ծայրը հասցնել՝ առանց նրանց ճաշակը համեմունքներին սովորեցնելու և առանց նրանց քիմքը վատ սովորութեան վտանգին ենթարկելու:

289. Ապացոյց, որ մսի ճաշակը մարդու համար բնական չէ, երեխաների այս կերակրի համար ունեցած անտարբերութիւնն է և այն առաւելութիւնը, որ նրանք տալիս են բուսեղէն կերակուրներին, ինչպէս նաև կաթնեղէնին, թխուածքին, պտղին և այլն: Ամենից կարևորն այն է, որ այս սկզբնական ճաշակը փչացած չէ և երեխաները մսակեր չեն դառնայ՝ եթէ ոչ իրենց առողջութեան, գոնէ իրենց խառնուածքի պատճառով. որովհետև ինչպէս որ կամենան փորձառութիւնը բացատրել, ստոյգ է, որ մեծ մսակերները սովորաբար աւելի խստասիրտ և վայրենի են, քան ուրիշ մարդիկ. այս դիտողութիւնն արուած է ամեն տեղ և ամեն ժամանակ: Յայտնի է

*) Այս պատմում է Պլուտարքոսը Լիկուրգոսի կեանքը նկարագրելիս. գլխ. 15. բայց նրա պատմածով երեխան մեռնում է աղուէսի կծոտելուց՝ առանց իրեն մատնելու:

անգլիական բարբարոսութիւնը. *) իսկ ընդհակառակը գաւրները **) ամենահեզաբարոյ մարդիկն են։ Բոլոր վայրենիները խստասիրտ են, բայց նրանց բարոյական սովորութիւններն առիթ չեն տալիս այդ բանին. այս խստասրտութիւնն առաջանում է նրանց կերակրից։ Նրանք պատերազմ են գնում իբրև որսի և մարդկանց հետ վարւում են իբրև արջերի։ Անգլիայում մսագործներն իբրև վկայ կանչուելու իրաւունքից զրկուած են ***) նոյնպէս և վիրաբոյժները։ Մեծ յանցագործները բթացնում են իրենց զգացմունքը սպանելու նկատմամբ՝ արիւն խմելով։ Հոմերոսը մսակեր ցիկլօպներին դարձնում է սարսափելի մարդիկ, իսկ լոտոփագներին այնպիսի սիրալիր ժողովուրդ, որ նրանց հետ շփուողները մինչև անգամ մոռանում էին իրենց հայրենիքը, որպէս զի նրանց հետ ապրեն։

290. «Դու հարցնում ես ինձ», ասաց Պլուտարքոսը, «ինչու Պիւթագորասը կենդանու միս չէր ուտում. ես էլ ընդհակառակը, հարցնում եմ քեզ, ինչ սիրտ ունէր առաջին մարդը, որ առաջին անգամ յօշոտած միս բերանը դրեց, ատամներով սատկած կենդանու ոսկորները ջարդեց, որ մեռած մարմիններ, դիակներ իր առաջը դրեց և նրա անդամները մէկ մէկ կուլ տուեց, որ մի վայրկեան առաջ դեռ վազվզում, բառաչում, մայում էին գալիս և տեսնում։ Ի՞նչպէս էր կարողանում նրա ձեռքը երկաթը մխել մի զգացող էակի սիրտը. ի՞նչպէս էին կարողանում նրա աչքերը տեսնել մեռցնող հարուածը։ Ի՞նչպէս էր կարողանում տեսնել նա մի խեղճ անպաշտպան կենդանի մորթելիս, մորթազերծ և մաս մաս

---

*) Ես գիտեմ, որ անգլիացիները շատ են փառաբանում իրենց մարդասիրութիւնն ու իրենց ազգի բարի խառնուածքը, որ իրենք good natured people (լաւ բնաւորութիւն, խառնուածք ունեցող ժողովուրդ) են անուանում. բայց նրանք կարող են այդ մասին զուռնայ փչել որքան կամենան, ոչոք չէ կրկնում նրանց ասածը։

**) Գաւրները կամ գեբէրները Զօրօաստրի հետևողներն են։

***) Այս գրքի անգլիերէն թարգմանողն ուղղել է իմ այս սխալը։ Մսագործներն ու վիրաբոյժները կարող են վկայ լինել. միայն մսագործներն ոճրագործական դատերի ժամանակ չեն ընդունւում իբրև երդուեալ դատաւոր կամ ատենակալ (պէր)։

անելիս. ի՞նչպէս էր կարողանում տանել ցնցուող մսի տեսարանը. ի՞նչպէս նրա հոտն արդէն զզուանք չէր պատճառում նրան. ի՞նչպէս կարելի եղաւ, որ նա չզզուեց, չզարշեց, սարսափով չլցուեց, երբ ձեռքերով ժահրոտ վէրքերը շօշափեց և սև, մակարդուած արիւնը, որով ծածկուած էր վէրքը, հեռացրեց, մաքրեց։

291. «Նա պէտք է պատկերացնէր և զգար այդ, երբ առաջին անգամ կարողացաւ իրեն յաղթել և այդպիսի սարսափելի կերակուր վայելել, երբ առաջին անգամ քաղց զգաց՝ կենդանու միս ուտելու, երբ ուզեց կերակրուել մի ստեղծուածով, որ դեռ արածում էր և մտածեց՝ թէ ինչպէս պէտք է իր ձեռքը լիզող ոչխարը խեղդել, մաս մաս անել և եփել։ Նրանց վրայ պէտք է իրաւամբ զարմանալ, որոնք այսպիսի սարսափելի ճաշեր էին անում և ոչ նրանց վրայ, որոնք հրաժարւում էին դրանից. բացի սրանից առաջինները կարող էին իրենց տմարդութիւնն արդարացնել այն արդարացուցիչ պատճառներով, որ մերոնք չունին և որոնց պակասութիւնը մեզ հարիւր անգամ աւելի անգութ է դարձնում, քան նրանց։

292. ««Ո՜վ դուք, աստուածներից նախամեծարութիւն ստացածներ», կասեն այն առաջին մարդիկը, «համեմատեցէք ժամանակները, տեսէք թէ ի՞նչպէս երջանիկ էք դուք և ի՞նչպէս թշուառ էինք մենք։ Նոր կազմակերպուած երկիրը, գոլորշիներով լցուած օդը դեռ չէին յարմարւում տարուայ եղանակների կանոնաւորութեանը. գետերի անհաստատ ընթացքն ամէն տեղ քանդում էր ափերը. լճերը, ծովերը, խորը ճահիճները հեղեղում էին երկրի մակերևոյթի երեք-չորրորդ մասը. մնացած քառորդ մասը ծածկուած էր անտառներով և անպտուղ ծառերով։ Երկիրը չէր տալիս ոչ մի տեսակ պէտքական պտուղներ. մենք ոչ մի գործիք չունէինք՝ երկիրը մշակելու համար. մենք չգիտէինք երկիրը մեզ ծառայեցնելու արուեստը և երբեք չէր հասնում հնձի ժամանակը նրանց համար, որոնք ոչինչ չէին ցանել. այսպիսով երբեք սովից ազատ չէինք մնում։ Ձմեռը մեր ամենօրեայ կերակուրը մամուռն ու ծառի կեղևն էր։ Կռաբանջարի և մացառների մի քանի արմատներ գտնելիս՝ տօնախմբութիւն էր մեզ համար և երբ վերջապէս յաջողուեց մարդուն անձար, ընկոյզ կամ կաղին գտնել, ուրախութիւնից պարում էր կաղնու կամ աճարենու չուրջը՝ որևէ երգի հնչիւնները տարածելով չորս կողմը. նա երկիրն անուանեց մայր և կերակրող. այս էր

մարդկանց միակ տօնախմբութիւնը, միակ խաղը. մնացած ամբողջ կեանքը միայն ցաւ, չարչարանք և թշուառութիւն էր:

293. «Երբ վերջապէս կողոպտուած և մերկ երկիրն այլ ևս ոչինչ չէր տալիս մեզ, մեր գոյութիւնը պահպանելու համար ստիպուած ուտում էինք մեզ հետ չարքաշ կեանք վարող ընկերակիցներին, որպէս զի մենք էլ նրանց հետ միասին չոչնչանայինք: Բայց դուք, խստասիրտներ, ո՞վ է ստիպում ձեզ արիւն թափել: Տեսէք թէ ձեր շուրջը ո՜րքան բարիք կայ աւելորդ. ո՜րչափ պտուղ է տալիս ձեզ երկիրը. ինչ հարստութիւններ է տալիս ձեզ դաշտն ու գինեգործութիւնը. ո՜րքան կենդանիներ տալիս են իրենց կաթը՝ ձեզ կերակրելու համար և իրենց բուրդը՝ ձեր հագուստի համար: Այլ ևս ինչ էք պահանջում նրանցից. ինչ կատաղութիւն է ստիպում ձեզ այդքան սպանութիւններ անելու, երբ բարիքներով յագեցած, ապրուստի միջոցներով ծանրաբեռնուած էք: Ինչո՞ւ էք ստում մեր մայր երկրի դէմ՝ մեղադրելով նրան, որ իբրև թէ չէ կարողանում կերակրել ձեզ: Ինչո՞ւ էք մեղանչում Ցերէսի, սուրբ օրէնքները գտնողի և ուրախ Բաքոսի, մարդկանց մխիթարողի դէմ, կարծես նրանց շռայլ պարգևները բաւական չեն մարդկային սեռունդը պահպանելու համար: Ի՞նչ սրտով էք ձեր սեղանի վրայ քաղցր պտուղների հետ ոսկորներ խառ-նում և կաթի հետ այն կենդանիների արիւնը վայելում, որոնք կաթ են տալիս ձեզ: Յովազներն և առիւծները, որոնց դուք վայրենի կենդանի էք անուանում, ստիպուած են հետևել իրենց բնական ձգտմանը և սպանում են ուրիշ կենդանիներ, որպէս զի ապրել կարողանան: Բայց դուք հարիւր անգամ նրանցից աւելի վայրենի էք, դուք առանց կարիքի կոյր էք մղւում բնազդման դէմ, որպէս զի ձեր վայրագ ցանկութիւններին նուիրուէք: Այն Անասունները, որ դուք ուտում էք, ուրիշներին չեն ուտում. դուք չէք ուտում այն մսակեր կենդանիներին, այլ հետևում կամ նմանւում էք նրանց: Դուք քաղց էք զգում միայն այն անմեղ և հեզ անասունների վերաբերմամբ, որոնք երբէք մէկին վնաս չեն տալիս, ձեզ հետ են լինում, ձեզ ծառայում և դուք էլ նրանց ծառայութեան փոխարէն վարձատրելով՝ կուլ էք տալիս նրանց»:

294. «Ինութեան հսկայական սպանութիւն գործող, եթէ դու անպատճառ ուզում ես պնդել, որ բնութիւնը ստեղծել է քեզ՝ քեզնմաններին կուլ տալու համար, միս և ոսկր ունեցող արարածներին, որոնք քեզ նման զգում և ապրում են, այն

ժամանակ խեղդիր այն զարշանքը, որ բնութիւնը ներշնչում է քեզ հսկայական այս սարսափելի կերակուրների. ինքդ անձամբ սպանիր կենդանիներին, այսինքն քո սեպհական ձեռքերով, առանց գործիքների, առանց դանակի. պատառիր քո եղունգներով, ինչպէս որ անում են առիւծներն ու արջերը. կծոտիր այս եզան մարմինը և մաս մաս արա նրան, եղունգներդ խրիր նրա կաշուի մէջ. կե՛ր այս կենդանի գառը, նրա տաք տաք միսը խժռիր, խմիր նրա հոգին՝ արեան հետ միասին: Սարսափո՞ւմ ես: Չե՞ս ուզում, որ կենդանի միսն ատամներիդ տակը ցնցուի: Ողորմելի՛ մարդ. առաջ սպանում ես կենդանին և յետոյ ուտում՝ կարծես թէ ուզում ես, որ երկու անգամ մեռնի նա: Բայց դեռ բաւական չէ. մեռած մսից զզւում ես դեռ, քո ստամոքսը չի կարողանում մարսել. պէտք է կրակով փոփոխութեան ենթարկուի, եփուի, խորովուի և միսն անճա-նաչելի դարձնող համեմունքներով խառնուի. դու գործ ես ածում մսագործներ, խոհարարներ, խորոված անողներ, մարդիկ, որոնք սպանութեան սարսափը հեռացնում են քեզանից և մեռած մարմիններին զգեստներ են հագցնում, որպէս զի այս ծածկոյթներով ճաշակելիքը խաբուի, որպէս զի հակաբնականը յետ չմղէ և ախորժակով դիակները ճաշակէ, որին նայող աչքը միայն զզուանքով է հանդուրժում»:

295. Թէպէտ այս հատուածն իմ խնդրից դուրս էր գտնւում, այնուամենայնիւ առաջ բերի այստեղ և կարծում եմ, որ ընթերցողների մեծամասնութիւնը շնորհակալ կլինի ինձնից:

296. Ինչպէս էլ որ կարգադրենք երեխաների կեանքի եղանակը՝ եթէ միայն նրանց սովորական և պարզ կերակուրների սովորեցնենք, նրանք կարող են ուտել, վազել և խաղալ, ինչքան որ ցանկանան և կարելի է ապահով լինել, որ նրանք երբէք չափազանց շատ չեն ուտի և երբէք ստամոքսի ցաւից չեն գանգատուի. բայց երբ ժամանակի կէսը նրանց քաղցած էք պահում և նրանք էլ միջոց են գտնում ձեր հսկողութիւնից խոյս տալու, նրանք իրենց մարմնի ուժերից վեր հատուցումն կտան. նրանք կուտեն մինչև սիրտ խառնելը, մինչև տրաքուելը: Մեր ուտելու պահանջը նրա համար է անչափ, որովհետև մենք ուզում ենք ուրիշ կանոններ տալ, քան բնութեան կանոնները. մեր մշտական կանոնաւորելով, կարգադրելով, աւելացնելով և պակասեցնելով պէտք է մեր բոլոր արածների համար կշռի դիմենք. բայց այս կշիռն էլ դրուած է մեր քմահաճութեան և ո՛չ թէ մեր ստամոքսի համեմատ: Ես

կրկին վերադառնում եմ իմ օրինակներին. գիւղացիների հացի և պտղի արկղները միշտ բաց են և այնտեղ թէ երեխաները և թէ չափահասները չգիտեն թէ ինչ է դժուարամարսութիւնը։

297. Այնուամենայնիւ եթէ պատահի, որ երեխան չափ ուտէ, որ իմ մեթօդով անկարելի եմ համարում, շատ հեշտ է նրան սիրելի մի զրուցատրութեամբ այնպէս ցրուել նրա մտքերը, որ նա մինչև ուժասպառ լինելը քաղցի, առանց ուտելու մասին մտածելու։ Ի՞նչպէս կարող են այսպիսի ապահով և հեշտ միջոցներն անյայտ մնալ բոլոր դաստիարակներին։ Հերոդոտէսը պատմում է, որ Լիդացիները մի հրեշաւոր սովից ստիպուած՝ մտածեցին խաղեր և ուրիշ զուարճութիւններ գտնել, որով բթացնում էին իրենց քաղցի զգայութիւնը և ամբողջ օրերով զբաղուելով՝ ուտելու մասին չէին մտածում.*) Ձեր իմաստուն դաստիարակներն այս հատուածը գուցէ հարիւր անգամ կարդացել են՝ առանց նկատելու, որ այս կարելի է գործադրել երեխաների վերաբերմամբ։ Գուցէ դրանցից մէկն ինձ ասէ. որ երեխան սիրով չէ թողնում իր ճաշը, դաս սովորելու համար։ Այդ դիպուածում հարկաւ իրաւունք ունիք, վարպետ․ այդ զբաղմունքի մասին չէի մտածել ես։

298. Հոտոտելիքը նոյնն է ճաշակելիքի համար, ինչ որ տեսանելիքը՝ շօշափելիքի համար. հոտոտելիքն առաջուց իմաց է տալիս ճաշակելիքին, թէ այս կամ այն նիւթն ինչպէս պէտք է ազդէ նրա վրայ և տրամադրում է նրան այդ նիւթը ստանալու կամ դրանից խոյս տալու՝ նայելով այն տպաւորութեանը, որ առաջուց արդէն ստացել ենք նրանից։ Ես լսել եմ, որ ասել են թէ՝ հոտոտելիքը վայրենուն բոլորովին ուրիշ զգայութիւններ է պատճառում, քան մեզ և նրանք բոլորովին ուրիշ կերպ են դատում լաւ ու վատ հոտի մասին։ Շատ հաւանական է։ Հոտերն ինքն ըստ ինքեան շատ թոյլ զգայարանական տպաւորութիւններ են. նրանք աւելի երևակայութիւնն են շարժողութեան մէջ դնում, քան զգայարանը և նրանց տպաւորութիւնն այնքան իրենց տուածից չէ առաջանում, որքան նրանից սպասածից։ Եւ որովհետև ընդունելով այդ-կեանքի տարբեր եղանակի շնորհիւ՝ տարբեր մարդկանց ճաշակը նոյնպէս զանազան է լինում, ուրեմն և իրերի ճաշակի մասին բոլորովին միմեանց հակառակ դատողութիւններ կառաջացնէ հետևապէս և դրանց հետ կապակցուած հոտերի մասին։ Թաթարը ձիու հոտած քառորդ մասը պէտք է նոյնպիսի հաճութեամբ հոտոտէ, ինչպէս մեր որսորդներից մէկը՝ կիսով չափ փտած կաքաւի միսը։

299. Մեր պարապ կեանքի զգայարանական վայելչութիւնները, ինչպէս օրինակ բալասանի ծաղկաբուրմունքների ներշնչելը, անզգայ պէտք է լինեն այն մարդկանց համար, որոնք ոտքի վրայ շատ են լինում, սիրով զբօսնելու են գնում և որոնք այնքան աշխատանք չեն ունենում, որ հանգստութիւնը նրանց համար վայելչութիւն լինի։ Այն մարդիկը, որ միշտ քաղցած են մնում, մեծ զուարճութիւն չեն զգայ այն բուրմունքից, որոնք կերակրի հոտ չեն բուրում։

300. Հոտոտելիքը երևակայութեան զգայարանն է։ Որովհետև նա նեարդերը սաստիկ լարում է, պէտք է խիստ գրգռէ նաև ուղեղը. այդպիսով նա մի վայրկենաչափ կենդանացնում է ընդհանուր դրութիւնը և ուժասպառ անում երկար ժամանակի համար։ Սիրողները ճիշտ գիտեն դրա ազդեցութիւնը. հագնուելու սենեակի քաղցր բուրմունքն աւելի վտանգաւոր օձ է, քան կարծւում է և ես չգիտեմ՝ թէ արդեօք այն զգաստ և առնասիրտ մարդուն շնորհաւորել թէ ցաւակցել պէտք է, որին երբէք չէ յուզել իր սիրուհու կրծքի ծաղիկների հոտը։

301. Ուրեմն հոտոտելիքը մանկական հասակում շատ ազդեցիկ չպէտք է լինի, երբ երևակայութիւնը դեռ ևս քիչ կրքերից վառուած, հազիւ ընդունակ է գրգռուելու և երբ դեռ ևս բաւականաչափ փորձառութիւն չկայ՝ մէկ զգայարանով նախատեսնելու, ինչ որ մի ուրիշ զգայարան խոստանում է մեզ։ Այս եզրակացութիւնը լիովին հաստատուել է դիտողութեամբ և պարզուած է, որ երեխաների մեծամասնութեան հոտոտելիքը շատ տկար և համարեա բթացած է, ո՛չ թէ այն պատճառով, որ նրանց հոտոտելեաց զգայութիւնն այնքան, գուցէ և աւելի, նուրբ չէ, ինչպէս չափահասներինը, այլ որովհետև նրանք

---

*) Հին պատմագիրները լի են այնպիսի տեսակէտներով, որոնցից կարելի էր օգտուել, եթէ նոյն իսկ այն իրողութիւնները, որոնց վրայ նրանք հիմնւում են, սխալ լինէին։ Բայց մենք չենք կարողանում պատմութիւնից խելապէս օգտուել. գիտնական քննադատութիւնն ամեն բան կլանում է. իրողութիւնն անպատճառ ճիշտ չպէտք է լինի, որպէս զի կարելի լինի նրանից օգտակար խրատ դուրս բերել։ Խոհական մարդիկ պատմութիւնը պէտք է նկատեն իբրև առակների հիւսուածք, որի բարոյականը համապատասխանում է մարդկային սրտին։

հոտոտելիքով ուրիշ մտապատկերներ չեն կապակցում և այդ պատճառով ուրախութեան և վշտի զգացմունքներով այնքան հեշտութեամբ չեն զգացւում և մեզ նման՝ հոտով չեն գրգռ-ւոյ դառնում կամ հրապուրւում: Ես կարծում եմ, կարելի էր առանց խնդրից դուրս գալու և երկու սեռի համեմատական անդամազննութեան խորհրդին դիմելու, հեշտութեամբ գտնել՝ թէ ինչու ընդհանրապէս կանայք հոտից աւելի կենդանի տպաւորութիւն են ստանում՝ քան տղամարդիկ:

302. Ասում են, որ Կանադացի վայրենիները պատանեկութիւնից արդէն այնպէս նրբացնում են իրենց հոտոտելիքը, որ իրենց ունեցած շները որսի համար չեն գործածում, այլ իրենք են շների ծառայութիւնն անում: Ես հասկանում եմ իսկապէս, որ եթէ մեր երեխաներին այնպէս կրթէին, որ նրանք իրենց ճաշը հոտոտելիքով գտնէին, ինչպէս որ շունը որջից հալածում է որսի կենդանուն, կարելի կլինէր նրանց հոտոտելիքը նոյնպէս կատարելագործել. բայց չեմ հասկանում իսկապէս, թէ ինչպէս կարելի է երեխաների հոտոտելիքից առանձին օգուտ քաղել. բացի այն հանգամանքից, որ նրանց կարելի է սովորեցնել հոտոտելիքի ճաշակելիքի հետ ունեցած յարաբերութիւնը: Բնութիւնն արդէն հոգացել է, որ այդ յարաբերութիւնների մասին ինքներս պարզ գաղափար կազմենք: Բնութիւնն այս երկու զգայարանների գործունէութիւնն անբաժան է դարձրել՝ դրանց գործարաններն իրար կողքի դնելով և բերանում անմիջական կապ հաստատելով դրանց մէջ, այնպէս որ առանց հոտ քաշելու ոչինչ չենք ճաշակում: Միայն թէ, իմ կարծիքով, այս բնական յարաբերութիւնները չպէտքէ խանգարել՝ երեխային խաբելով—օրինակ մի դեղի դառը համը հաճելի հոտով ծածկելով—որովհետև երկու զգայարանների հակառակութիւնն այնքան մեծ է, որ կարելի չէ խաբել. աւելի ազդեցիկ զգայարանը յետ կմղէ միւսի ներգործութիւնը և այդ պատճառով երեխան աւելի փոքր դժկամակութեամբ չի ընդունի դեղը: Այս դժկամակութիւնը տարածւում է այն բոլոր զգայութիւնների վրայ, որ միաժամանակ են տեղի ունենում. եթէ միայն աւելի թոյլն է առաջանում, երևակայութիւնը միւսին էլ է առաջ բերում. շատ հաճելի բուրմունքը նրա համար միայն զզուելի հոտ է և այս եղանակով մեր անշնորհք հնարները շատացնում են անհաճոյ տպաւորութիւնների թիւը՝ ի հաշիւ հաճելի տպաւորութիւնների:

303. Ինձ մնում է հետևեալ գրքերի մէջ խօսել նաև վեցերորդ զգայարանի խնամքի մասին. այս զգայարանը կոչւում է ընդհանուր զգայարան ոչ թէ նրա համար, որ ընդհանուր է բոլոր մարդկանց համար, այլ որովհետև միւս զգայարանների լաւ կանոնաւորուած գործածութեան հետևանքն է և որովհետև իրերի բոլոր երևոյթների միատեղ հանդիպման շնորհիւ՝ սովորեցնում է մեզ նրա էութիւնը: Այդ պատճառով և այս վեցերորդ զգայարանը սեպհական գործարան չունի. նա զետեղուած է միայն ուղեղի մէջ և նրա զգայութիւնները, որ զուտ ներքին են, կոչւում են ըմբռնումներ կամ գաղափարներ-ֆիգէաններ: Գաղափարների թւով է չափւում մեր ճանաչողութիւնների ծաւալը. դրանց որոշ լինելուն ու պարզութեամբ է պայմանաւորւում մտքի ճշտութիւնը. դրանց միմեանց հետ համեմատելու արուեստը կոչւում է մարդկային խոհականութիւն. Ինչ որ ես զգայարանական խոհականութիւն կամ մանկական խոհականութիւն եմ անուանել, ոչ այլ ինչ է, եթէ ոչ պարզ գաղափարների կազմութիւնը՝ բազմաթիւ զգայութիւնների կապակցման շնորհիւ, իսկ ինչ որ ես ոգեկան խոհականութիւն կամ մարդկային խոհականութիւն եմ անուանում՝ բարդ գաղափարների կազմութիւնն է՝ բազմաթիւ պարզ գաղափարների կապակցման շնորհիւ:

304. Ուրեմն այն ենթադրութեամբ, որ իմ մեթօդը բնութեան մեթօդն է և որ ես դրա գործադրութեան մէջ խաբուած չեմ, մեր սանիկին զգայարանական ըմբռնումների շրջանների միջով առաջնորդեցինք մինչև մանկական խոհականութեան սահմանը. դրանից դուրս մեր արած առաջին քայլը պէտք է չափահասի քայլ լինի: Այս նոր ճանապարհի վրայ ոտք դնելուց առաջ, մի վայրկեան յետ նայենք մեր անցած շաւղի վրայ: Ամեն հասակ, կեանքի ամեն մի յարաբերութիւն իւր համապատասխան գագաթնակէտն ունի, իրեն յատուկ տեսակն ու հասունութիւնը: Մենք յաճախ լսել ենք կատարեալ մարդու մասին խօսելիս, մի անգամ էլ մի կատարեալ երեխայ դիտողութեան առնենք. մեզ համար այս մի նոր տեսարան կլինի և գուցէ ոչ պակաս բաւականութիւն պատճառող:

305. Մահկանացու էակի գոյութիւնն այնպէս աղքատ ու սահմանափակ է, որ եթէ միայն այն տեսնենք, ինչ որ մեր աչքի առաջն է, երբէք չենք յուզուի: Միայն ցնորքներն են գեղեցկացնում իսկական եղածը և եթէ մեզ վրայ տպաւորութիւն թողնող իրերին երևակայութիւնը ոչ մի հրապոյր չէ աւելացնում, մեր զգացած չնչին զուարճութիւնը սահմանափակ-

ւում է զգայարանով և սիրտը միշտ սառն է թողնում։ Երկիրը զարդարուած աշնան գանձերով՝ տարածում է իւր հարստութիւնը սքանչացող աչքերի առաջ. բայց այս սքանչացումը մեզ չէ գրաւում և առաջ է գալիս աւելի անդրադարձ խորհրդածութիւնից, քան զգացմունքից։ Գարնանը համարեա մերկ դաշտօրայքը դեռ ծածկուած չէ, անտառները դեռ ստուեր չեն տալիս, նոր է սկսում կանաչել, բայց և այնպէս այս տեսարանը մարդու սիրտն է շարժում։ Երբ մենք բնութիւնն այսպէս վերակենդանացած ենք տեսնում, մենք էլ մեր մէջ նոր կեանք ենք զգում. ուրախութեան պատկերն է մեզ շրջապատում. ուրախութեան ուղեկիցները, այն քաղցր արտօսրները, որ միշտ պատրաստ են ամեն մի բերկրալից զգացմունքի հետ ընկերանալու, արդէն մեր արտեւանունքների եզրերին են կանգնած. դրա հակառակ՝ խաղողաքաղի տեսարանը որչափ էլ գրաւիչ, սրտաշարժ և կենդանի լինի, միշտ ցամաք աչքերով ենք դիտում։

306. Ինչի՞ց է առաջանում այս տարբերութիւնը։ Գարնան տեսարանին ընկերանում է այն եղանակների երևակայութիւնը, որ պէտք է դեռ հետևեն նրան։ Փնքոյշ կոկոնին, որ տեսնում է մեր աչքը, երևակայութիւնն աւելացնում է ծաղիկ, պտուղ, ստուերոտ կանաչ և երբեմն էլ գաղտնիքներ, որ կարող են նրա տակ թագնուել։ Այն ժամանակները, որ միմեանց պէտք է հետևեն, մեր երևակայութիւնը միացնում է մի կէտում և առարկաները տեսնում ո՛չ այնքան այնպէս, ինչպէս որ պէտք է լինեն, որքան այնպէս, ինչպէս որ ինքն է ցանկանում, որովհետև նրանից է կախուած՝ ընտրութիւն անելը։ Իսկ ընդհակառակն աշնանը կարելի է տեսնել միայն այն, ինչ որ կայ։ Եթէ ուզում ենք գարնանը հասնել, ձմեռն է մեզ յետ պահում և սառած երևակայութիւնը մեռնում է ձիւնի ու եղեամի վրայ։

307. Այստեղից է առաջանում և այն հրապոյրը, որ գեղեցիկ մանկութիւնը դիտելիս աւելի ենք զգում, քան թէ լիակատար այրական հասունութիւնը տեսնելիս։ Մարդուն երբ ենք դիտում իսկական հաճութեամբ։ Երբ նրա գործածների յիշողութիւնը մի առիթ է տալիս մեզ հայեացք ձգելու նրա կեանքի վրայ և այսպէս ասած, մեր աչքերի առաջ երիտասարդացնում է նրան։ Երբ մենք դիտում ենք նրան, ինչպէս որ է նա, կամ նրան մտածում ենք այնպէս, ինչպէս որ կլինի իւր հասակում, նուազող բնութեան մտապատկերը ջնջում է մեր բոլոր զուարճութիւնը։ Ուրախալի բան չէ երբ տեսնում ենք, որ մի մարդ մեծ քայլերով դէպի գերեզման է շտապում. մահուան պատկերն ամեն բան լափում է։

308. Բայց երբ ես պատկերացնում եմ տասը, տասներկու տարեկան երեխայ՝ առողջ, ուժեղ և լաւ զարգացած իւր հասակի համեմատ, այդ չի կարող ոչ մի մտապատկեր արթնացնել իմ մէջ, որ հաճելի չլինի՝ լինի այդ ներկայի, թէ ապագայի համար. եռանդուն, աշխոյժ, շարժողութեամբ լի, առանց կրծող վշտի, առանց երկար ու թախծալի նախազգուշութեան—այսպէս է կանգնած նա աչքիս առաջ՝ բոլորովին իւր ներկային նուիրուած, կեանքի լիութիւնը վայելելով, որ կարծես ուզում է նրա էութեան սահմաններից անցնել։ Ես նրան հոգով տեսնում եմ ուրիշ հասակում, իւր զգայարանները, խելքը և իւր օրէց-օր աճող ուժերը վարժեցնելիս, որից նա այն վայրկեանին նոր փորձեր է անում. ես դիտում եմ նրան իբրև երեխայ և ուրախանում եմ նրանով. ես մտածում եմ նրան իբրև տղամարդ և աւելի ես ուրախանում. նրա ջերմ արիւնը կարծես իմ արեանն էլ կրկին ջերմութիւն է շնորհում. ես կարծես նրա կեանքով եմ ապրում, նրա աշխուժութիւնն երիտասարդացնում է ինձ։

309. Ժամը զարկում է, ինչպիսի փոփոխութիւն։ Մի վայրկեանում նրա աչքը պղտորւում է, աշխուժութիւնը հանգչում. հեռու են փախչում ուրախութիւնն ու ազատ խաղերը։ Մի խիստ, քրթմնջող մարդ բռնում է նրա ձեռքը և ասում լրջօրէն. հետս արի—և տանում է նրան հետը։ Այն սենեակում, ուր նրանք մտնում են, գրքեր են նկատում։ Գրքե՜ր, ինչ տխուր կահ-կարասիք նրա հասակի համար։ Խեղճ երեխան թոյլ է տալիս, որ իրեն տանեն, թախծալի հայեացք է ձգում այն իրերի վրայ, որ շրջապատում են նրան և համրանում ու գնում է՝ աչքերն ուռած արտասուքից, որ չէ համարձակւում թափել. նրա սիրտը լի է հառաչանքներով, որ նա երկիւղով զսպում է։

310. Սակայն դու, որ այդպիսի բաներից երկիւղ չունես, դու, որի համար կեանքի ոչ մի ժամանակը ճնշման և ձանձրութեան ժամանակ չէ, դու, որ ցերեկուայ գալուն առանց հոգսերի, իսկ գիշերուայ հասնելուն առանց անհամբերութեան ես դիմաւորում և ժամերը միայն քո զուարճութեան համեմատ ես համարում, արի ինձ մօտ, իմ երջանիկ, սիրարժան սան, այն դժբաղդի հեռանալու առթիւ մխիթարիր ինձ քո ներկայութեամբ, արի....։ Նա այստեղ է և նրա գալուն պէս ուրախութեան յուզմունք եմ զգում, որ նա մասնատրում է ինձ։ Նա մօտենում է իւր բարեկամին, իւր ուղեկցին, իւր խաղընկերին. երբ տեսնում է ինձ, արդէն վստահ է, որ երկար ժամանակ առանց զուարճութեան չի մնայ. թէև մենք միմեանցից կախումն չունենք. բայց միշտ հասկանում ենք իրար և ոչ

ոքի մօտ մեզ այնպէս լաւ չենք զգում, ինչպէս միմեանց մօտ։

311. Նրա դէմքը, նրա կեցուածքը, նրա ամբողջ էութիւնը ցոյց են տալիս հանգստութիւն և գոհունակութիւն. առողջութիւն է կաթում նրա դէմքից. Նրա հաստատուն քայլուածքը ուժի արտայայտութիւն է տալիս նրան. Նրա դեռ քնքոյշ, բայց ոչ թարշամած երեսի գոյնը՝ կանացի փափկութիւն չէ արտայայտում. օդն ու արևն արդէն տպաւորել են նրա սեռին յատուկ պատուաւոր նշանը. Նրա դեռ ևս կլոր մկանները սկսել են ցոյց տալ զարգացող դէմքի արտայայտութեան մի քանի գծերը. Նրա դեռ ևս զգացմունքի կրակից չվառուած աչքերը, գոնէ իրենց բնական զուարթութիւնն ունին. երկարատև թախիծը դեռ ևս չէ պղտորել նրանց, անվերջ արցունքները դեռ նրա այտերը չեն ակօսել։ Նրա արագ, բայց հաստատուն շարժողութիւններից նկատւում է նրա հասակի աշխուժութիւնը, անկախ մարդու վստահութիւնը, փորձառութիւնը՝ բազմակողմանի մարմնական գործունէութեան մէջ։ Նա մի բացսիրտ և ազատ, բայց ոչ յանդուգն և ոչ էլ սնափառ էութիւն է. Նրա դէմքը, որ գրքերի վրայ չեն սևեռած, նրա կրծքի վրայ չէ կախւում, կարիք չկայ նրան ասելու. գլուխդ բարձր պահիր—ոչ ամօթը, ոչ էլ երկիւղն երբէք նրան չեն ճնշել։

312. Թող նա ներս գայ ժողովի մէջ։ Քննեցէք նրան, բարեկամներս, առանց որև է կասկածանքի հարցրէք նրան. մի վախենաք, նա ոչ անզգոյշ կլինի, ոչ շաղակրատ, ոչ էլ անպատշաճ հարցեր կտայ։ Մի վախենաք, թէ նա կարող է ձեզ վրայ իշխող հանդիսանալ, թէ կկամենայ միայն իրենով զբաղեցնել ձեզ և թէ չէք կարող այլ ևս նրանից ազատուել։

313. Մի սպասէք նրանից նաև հաճելի ճառեր, մի սպասէք, որ նա ձեզ կասէ այն, ինչ որ ես եմ նրան հաղորդել. Նրանից սպասեցէք միայն հասարակ, անպաճոյճ ճշմարտութիւնը, առանց զարդարանքի, առանց պճրանքի, առանց սնապարծութեան։ Եթէ նա մի չար բան է արել կամ թէ չար բան մտածել, նա նոյնպէս ազատ կարտայայտի, ինչպէս որ բարին, առանց այն տպաւորութիւնից չփոթուելու, որ նրա խօսքերն անում են ձեզ վրայ. Նա բառը գործ կդնի իւր սկզբնական նշանակութեան ամբողջ պարզութեամբ։

314. Մենք սիրում ենք երեխաների համար երջանիկ ապագայ նախագուշակել, միշտ բարկանում ենք այն յիմարութիւնների հեղեղի վրայ, որ համարեա միշտ յոյսերն ի դերև է հանում և գոհ ենք, երբ մի որև է երջանիկ դիպուած պատահաբար լաւ բան է արտայայտել տալիս։ Երբ իմ սանն այսպիսի յոյսերի

առիթ չէ տալիս, այն բարկութեան առաջն առած կլինի, որովհետև նա երբէք անօգուտ խօսքեր չէ ասում և իւր ուժերը չէ սպառում շատախօսելով, երբ ինչպէս ինքն էլ գիտէ, ոչ ոք չէ լսում նրան։ Նրա գաղափարներն իրար նման են, բայց պարզ. եթէ նա ոչինչ չգիտէ բերանացի, դրա փոխարէն շատ բան գիտէ փորձից։ Եթէ նա ուրիշ երեխաների նման լաւ չէ կարդում մեր գրքերը, դրա փոխարէն լաւ է կարդում բնութեան գիրքը. Նրա միտքն իւր լեզուի վրայ չէ գտնւում, այլ գլխում. աւելի քիչ յիշողութիւն ունի, քան դատողութիւն. Նա միայն մի լեզուով է խօսում, բայց հասկանում է իւր ասածը և եթէ ուրիշների նման լաւ չէ խօսում, դրա փոխարէն ամեն բան նրանցից աւելի լաւ է անում։

315. Նա չգիտէ թէ ինչ է հմտութիւնը, կիրառութիւնը, և սովորութիւնը. ինչ որ երէկ է արել, այսօր այլևս ազդեցութիւն չունի նրա արածների վրայ *). Նա երբէք ձևականութեան չէ հետևում, ոչ մի հեղինակութեան առաջ չէ տեղի տալիս, ոչ մէկի օրինակին չէ հետևում և գործում ու խօսում է այնպէս, ինչպէս յարմար է գտնում։ Ուրեմն նրանից մի սպասէք թելադրած ճառեր կամ անգիր արած ձևեր, այլ միայն իւր մտքերի ճիշտ արտայայտութիւնը և վարմունք, որ միայն նրա հակումներից է առաջանում։

316. Դուք նրա մօտ կգտնէք փոքր թուով բարոյական գաղափարներ, որ վերաբերում են նրա իսկական դրութեանը, իսկ մարդու դրութեանը և փոխադարձ յարաբերութիւններին վերաբերեալ գաղափարներ նա բոլորովին չունի. և ինչի՞ էին պէտք նրան այդ գաղափարները, քանի որ նա դեռ հասարակութեան

*) Սովորութեան հրապոյրն առաջանում է մարդու բնական ծուլութիւնից և ծուլութիւնն հետզհետէ աւելանում է, եթէ տեղի ենք տալիս. ինչ որ արել ենք, աւելի հեշտութեամբ ենք նորից անում. եթէ ճանապարհը մի անգամ արդէն հարթուած է, մանգաղն աւելի յարմար է լինում։ Կարելի է նկատել նոյնպէս, որ սովորութեան իշխանութիւնն ծեր և եռանդից զուրկ մարդկանց մօտ շատ մեծ է, իսկ երիտասարդների և շատ աշխոյժ մարդկանց մօտ շատ փոքր։ Այսպիսի կեանքը միայն թոյլ հոգիների համար է լաւ և օրէցօր աւելի է թուլացնում նրանց։ Երեխաների միակ օգտակար սովորութիւնն է, առանց ջանքի իրերի ստիպմունքին ենթարկուել. իսկ չափահասների միակ օգտակար սովորութիւնը՝ առանց ջանքի խոհականութեան հպատակուելը։ Մնացած բոլոր սովորութիւնները թերակատար են։

գործող անդամ չէ։ Խօսեցէք նրա հետ ազատութեան, սեպհականութեան, նոյն իսկ դաշնադրութեան մասին նրա գիտութիւնը միայն մինչև այստեղ է հասնում. նա գիտէ՝ թէ ինչո՞ւ իւր սեպհականութիւնն իրեն է պատկանում և թէ ինչո՞ւ օտարինն իւր սեպհականութիւնը չէ։ Սրանից աւելի էլ ոչինչ չգիտէ. խօսեցէք նրա հետ պարտականութեան և հնազանդութեան մասին, նա բոլորովին չի հասկանայ՝ թէ ինչ էք ուզում ասել. հրամայեցէք նրան մի բան, նա ձեզ չի հասկանայ, բայց ասացէք նրան. եթէ դու իմ այս կամ այն հաճոյքը կատարես, յարմար միջոցին փոխարէնը կհատուցանեմ. Նա իսկոյն կշտապի ձեր հաճոյքը կատարել, որովհետև նրա ձգտումն է՝ իւր շրջանն ընդարձակել և ձեր վերաբերմամբ իրաւունքներ ձեռք բերել, որոնց անբռնաբարելիութիւնը նա գիտէ։ Գուցէ հենց իրեն համար էլ լաւ է այնպիսի դիրք բռնել, որ իրեն էլ մի բանի տեղ դնեն. բայց եթէ նա այս վերջին դրդման հետևի, արդէն դուրս եկած կլինի բնութիւնից և դու նախապէս լաւ խցած չես լինի սնափառութեան բոլոր դռները։

317. Եթէ նա իւր կողմից կարօտ է օգնութեան, անկասկած առաջին պատահողին կդիմէ՝ լինի նա թագաւոր, թէ իւր սպասաւորը. Նրա աչքում բոլոր մարդիկ էլ հաւասար են։ Նրա խնդրելու եղանակից տեսնում էք, որ նա զգում է, որ նրան պարտական չեն։ Նա գիտէ, որ իւր խնդրածը մի շնորհ է. նա գիտէ նոյնպէս, որ այդ անում են մարդասիրութիւնից դրդուած։ Նրա արտայայտութիւնները պարզ և լակոնական են։ Նրա ձայնը, հայեացքը, շարժուածքը ցոյց են տալիս, որ նա սովոր է թէ շնորհելուն և թէ մերժելուն։ Նա ոչ սողացող, ստրկական հպատակութիւն է ցոյց տալիս և ոչ էլ իշխանական հրամայող դիրք է բռնում. Նա խելացի կերպով հաւատ է ընծայում իւր նմաններին. Նա ազատ մարդու ազնիւ, սրտի հետ խօսող հեզութիւն ունի, բայց և զգայուն ու թոյլ էութեան, որ ազատ, բայց ուժեղ և բարեգործ էութեան օգնութիւնն է խնդրում։ Եթէ դուք կատարէք նրա խնդրածը, նա շնորհակալութիւն չի յայտնի ձեզ, բայց կզգայ, որ պարտք ունի կատարելու։ Եթէ մերժէք նրա խնդրածը, նա չի գանգատուի, անզգոյշ չի լինի, նա գիտէ, որ իզուր կլինի այդ. Նա չի ասի. «խնդիրս մերժեցին» — այլ «չէր կարող լինել», իսկ կարևոր ճանաչուած կարիքը հարկաւ, ինչպէս արդէն ասացի, չպէտքէ մերժել։

318. Թողէք նրան մենակ լիովին ազատ, տեսէք թէ ինչպէս է գործում, առանց նրան մի խօսք ասելու. դիտեցէք՝ թէ ինչ է անում և ինչպէս է պահում իրեն։ Նա կարիք չունի ապացուցանելու, որ ինքն ազատ է, այդ պատճառով ոչինչ չէ անում շտա-

պով և միայն նրա համար, որ իւր լիակատար ինքնիշխանութիւնը ցոյց տայ. մի՞թէ նա չգիտէ, որ ինքը միշտ իւր գլխի տէրն է։ Նա կայտառ, դիւրաշարժ և պատրաստակամ է. Նրա շարժուածքները ներկայացնում են իւր հասակի ամբողջ աշխուժութիւնը. բայց երբէք չէք տեսնի, որ նա աննպատակ շարժողութիւն անի։ Ինչ էլ որ անելու լինի, երբէք այնպիսի բան չէ ձեռնարկում, որ իւր ուժերից բարձր լինի. որովհետև նա լաւ փորձել է և գիտէ իւր ուժերը. Նրա ձեռք արած միջոցները միշտ համապատասխանում են նրա դիտաւորութիւններին և շատ հազիւ կպատահի, որ նա գործէ առանց վստահ լինելու հետևանքի մասին։ Նա ճիշտ և թափանցող աչք կունենայ. Նա պարզամիտ աշխարհ չի մտնի և իւր բոլոր տեսածների մասին ուրիշներին հարցնի, այլ ինքն անձամբ կքննէ և կաշխատէ անձամբ գտնել, ինչոր կամենում է իմանալ՝ հարցնելուց առաջ։ Եթէ չնախատեսնուած վարանքների մէջ ընկնի, աւելի քիչ կշփոթուի, քան ուրիշը. եթէ վտանգ վրայ հասնի, նա նոյնպէս ուրիշից աւելի քիչ կվախենայ։ Եւ որովհետև նրա երևակայութիւնը դեռ ևս չէ գործում և ոչինչ տեղի չէ ունեցել հոգեկան այդ ոյժն արծարծելու, նա տեսնում է միայն իսկապէս եղածը, վտանգներն աւելի մեծ է համարում, քան են իրապէս և միշտ պահպանում է իւր սառնարիւնութիւնը. հարկաւորութիւնը շատ յաճախ է ճնշում նրան, նախ քան կարողանար նրան հակառակել. Նա իւր ծնուելու օրից կրում է հարկաւորութեան լուծը. Նա բաւականաչափ սովոր է դրան և միշտ պատրաստ է ամեն բանի համար։

319. Թէ զբաղմունքը և թէ հանգստութիւնը նրա համար միևնոյն է. Նրա խաղերը նրա զբաղմունքն են, նա այդ երկուսի մէջ տարբերութիւն չէ գտնում։ Իւր արած ամեն բանի համար նա այնպիսի հետաքրքրութիւն է ցոյց տալիս, որ ծիծաղ է յարուցանում և այնպիսի ազատութիւն, որ գրաւում է մեզ և միևնոյն ժամանակ ցոյց է տալիս նրա հոգու ուղղութիւնը և նրա ճանաչողութիւնների ծաւալը։ Հիանալի ու սիրելի տեսարան է, տեսնել մի սիրուն երեխայ, աշխոյժ և զուարթ աչքերով, գոհունակ և ուրախ դէմքով, բաց և ծիծաղկոտ երեսով, որ իւր զբաղմունքի համար ամենալուրջ բաներն է անում կամ թէ անմիտ ժամավաճառութիւնների մէջ լուրջ կերպով խորասուզւում է։

320. Ուզում էք նրան համեմատելով դատել։ Տարէք նրան ուրիշ երեխաների մօտ և թողէք. շուտով կտեսնէք, թէ ո՞վ է ամենից շատ իսկական զարգացումն ցոյց տալիս, թէ ո՞վ աւելի մօտ է, իւր հասակի համեմատ, կատարելութեան։ Քաղաքացի երեխաների մէջ ոչ մէկը նրա նման խելացի ու ճարտար չէ, բայց նա

ամենից ուժեղն է։ Գիւղացի երեխաների դիմաց նա նոյնպէս ուժեղ է, բայց գերազանցում է նրանց իւր դիւրաշարժութեամբ։ Ամեն բանում, ինչ որ մանկութեան համար ըմբռնելի է, նա աւելի լաւ դատողութիւն է ցոյց տալիս, աւելի լաւ խելամտութիւն և կանխատեսութիւն, քան նրանք բոլորը։ Եթէ խնդիրը վերաբերում է գործելուն, վազելուն, թռչելուն, իրերը տեղից շարժելուն, ծանրութիւններ բարձրացնելուն, հեռաւորութիւններ գնահատելուն, խաղեր հնարելուն և մրցանակների արժանանալուն, կարծես թէ բնութիւնն է օգնում նրան, այնպէս հեշտութեամբ է նա ամեն բան իւր կամքի համեմատ անում։ Նա ստեղծուած է իւր խաղընկերներին առաջնորդելու համար. նրա ընդունակութիւնն ու փորձառութիւնն իրաւունքի և ձեռնհասութեան տեղն են բռնում։ Ինչպիսի զգեստ կամ անուն էլ տան նրան, միևնոյն է՝ նա ամեն տեղ առաջինը, ամեն տեղ բոլորի գլխաւորը կլինի. նրանք միշտ կզգան նրա գերազանցութիւնը։ Առանց հրամայել կամենալու նա իշխող կլինի և նրանք կլսեն՝ նրան՝ առանց գիտենալու։

321. Նա մանկութեան հասունութեան է հասել, ապրել է երեխայի կեանքով և իւր կատարելութիւնը չէ գնել ի հաշիւ իւր երջանկութեան. ընդհակառակը, դրանք փոխադարձաբար իրար առաջ են քաշել։ Մինչ նա իւր հասակի ամբողջ հոգեկան հասունութիւնն էր ձեռք բերում, երջանիկ ու ազատ էր, ինչքան որ նրա բնութիւնը թոյլ էր տալիս։ Եթէ ճակատագիրը նրան մահացնելով՝ մեր յոյսերի ծաղիկը հնձէ, մենք ոչ նրա կեանքը և ոչ մահը միաժամանակ չենք սգայ. մենք մեր վիշտն աւելի չենք դառնացնի՝ յիշելով այն ցաւերը, որ մենք պատճառել ենք նրան. մենք կասենք մեզ—նա գոնէ իւր մանկութիւնը վայելեց. մենք նրան ոչ մի բանի համար չենք խաբել, ինչ որ բնութիւնը տուել էր նրան։

322. Այս սկզբնական դաստիարակութեան մեծ ձախողութիւնը նրանումն է կայանում, որ միայն պարզ մտածող գլուխների համար է բացայայտ և սովորական աչքերն այսպիսի մեծ հոգացողութեամբ դաստիարակուած երեխային միայն փողոցային տղայ են նկատում։ Տնային ուսուցիչն աւելի իւր օգուտն ի նկատի ունի, քան իւր սանինը. նրա նպատակն է ապացուցանել, որ ինքը ժամանակ չէ կորցնում և իւր ստացած վճարը իրաւացի կերպով է ստանում. ինչ որ նա տալիս է իւր սանին, պէտք է հեշտութեամբ հրապարակ հանէ, պէտք է կարողանայ ցոյց տալ ուրիշներին՝ ցանկացած դէպքում. բայց թէ արդեօք նրա սովորեցրածը օգտակար է, թէ չէ՝ այդ երկրորդական բան է, միայն թէ հեշտութեամբ աչքի ընկնի. հարիւրաւոր սնոտի է ժողովում նրա յիշողութեան մէջ առանց ընտրութեան և անխտիր։ Եթէ երեխային ուզում են քննել, նա հրապարակ է հանում իւր վաճառքը. այդ գոհունակութիւն է պատճառում և խնդիրը փակւում է. իմ սանն այդպէս հարուստ չէ, նա ոչինչ չունի իտես դնելու, ոչինչ չունի հրապարակով ցոյց տալու, բացի իրենից։ Բայց ինչպէս հասարակաւորին, այնպէս էլ երեխայի հոգին չի կարելի մի վայրկեանում թափանցել։ Ուր են այն դիտողները, որ առաջին հայեացքից կարողանան այն դիմագծերն ըմբռնել, որոնք նրա էութիւնն են կազմում։ Կան այդպիսիները, բայց շատ քիչ և հարիւր հազար հայրերի մէջ հազիւ թէ մէկը գտնուի։

323. Մեծ քանակութեամբ հարցերն ամենքի համար էլ տաղտկալի և վանիչ են. ևս աւելի երեխաների համար։ Մի քանի րոպէ անցնելուց յետոյ նրանց ուշադրութիւնը յոգնում է, այլ ևս չեն լսում յամառ հարցնողի խօսքերը և պատասխանում են միայն անխորհրդաբար։ Այս ձևով նրանց հարցաքննելը անպտուղ և վարժապետական է. յաճախ թռուցիկ կերպով ասուած խօսքն աւելի լաւ է ներկայացնում նրանց միտքն ու ոգին քան երկար ճառերը. բայց պէտքէ այնպէս անել, որ այս խօսքը նրանց բերանը չդրուի կամ միայն պատահական կերպով երևան գայ։ Մենք ինքներս պէտքէ շատ դատողութիւն ունենանք, որպէս զի կարողանանք մի երեխայի դատողութեան յարգը ճանաչել։

324. Հանգուցեալ միլօրդ Հիդէն պատմում էր, որ իւր բարեկամներից մէկը երեք տարի Իտալիայում մնալուց յետոյ վերադառնալով տուն՝ ուզում էր իւր իննը—տաս տարեկան զաւակի առաջադիմութիւնը քննութեան ենթարկել։ Նրանք մի երեկոյ երեխայի և նրա դաստիարակի հետ գնում են այն դաշտը զբօսնելու, որտեղ աշակերտները զուարճանում էին փքրաններ թողնելով։ Անցնելու ժամանակ հայրն ասում է որդուն. «ո՞ւր է այն փքրանը, որ այստեղ ստուեր է ձգել»։ Առանց վարանելու, առանց գլուխը բարձրացնելու երեխան պատասխանում է. «խճուղու վրայ։» Եւ իսկապէս, կցեց լօրդ Հիդին, խճուղին մեր և արևի մէջ տեղն էր։ Հայրն այս պատասխանը լսելով գրկում է որդուն, վերջացնում է հարցաքննութիւնը և ճանապարհը շարունակում, առանց մի խօսք ասելու։ Հետևեալ օրը նա դաստիարակին ցմահ թոշակ է նշանակում, բացի տուած ռոճկից։

325. Ի՞նչպիսի մարդ է այս հայրը. և ի՞նչպիսի զաւակ կլինի այդ որդին։ Այս հարցը ճշտիւ պատասխանում է հասակին. պատասխանը բաւականին պարզ է. միայն պէտք է նկատել, թէ մանկան դատողութեամբ ինչպիսի պարզութիւն է ենթադրում այդ։ Այդպէս սանձահարեց Արիստոտէլի սանը այն հռչակաւոր պատերազմական ձին, որ ոչ մի հմուտ ձիավար չէր կարողացել սանձահարել։

...Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
...С.Р.А. Публичная Библиотека
7/II-1922

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ
БИБЛІОТЕКА

147
61
86 | 93

2013
<< Ազգային գրադարան
17894
NL0051100
<< Ազգային գրադարան
17893
NL0051099